Արտաշես Քալանթարյան

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սիրով նվիրում են Ջուլիետային
Հեղինակ

Քալանթարյան Ա. Փ.
Ք 141 Կատակերգություններ. - Եր.: Սովետ, գրող, 1982. - 224 էջ:

Արտաշես Քալանթարյանի կատակերգությունները, որ տեղ են գտել այս ժողովածուի մեջ, հնչել են ռադիոյով և բեմադրվել Հայաստանի ու եղբայրական հանրապետությունների մի շարք թատրոններում: Դրանք մեր առօրյան արտացոլող սրամիտ և ուրախ պատմություններ են, որոնք ընթերցողին ստիպում են ոչ միայն անհոգ ծիծաղել, այլև խորհել, զայրանալ ու ծառանալ այն ամենի դեմ, ինչ խանգարում է մարդկանց հանգիստ կյանքին:

«Սովետական գրող» հրատարակչություն, 1982

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԲՈՒՄԵՐԱՆԳ

Գործող Անձինք

Սահակ - 45 տարեկան, սրբագրիչ
Նազելի - 43 տարեկան, տնային տնտեսուհի, Սահակի կինը
Սոնա - Նրանց դուստրը, կոնսերվատորիայի ուսանողուհի
Մկրտիչ - Նրանց որդին, բանասիրական ֆակուլտետի ուսանող
Հրաչյա - Սոնայի փեսացուն, ասպիրանտ-միջատաբան
Գուրգեն - Հրաչյայի հայրը: Երկրորդ ջութակ
Աննա - Հրաչյայի մայրը
Նոնա
Ջոնի Սոնայի և Մկրտիչի ընկերները
Վիգեն
Հսկիչ
Հարևանուհի
Անծանոթ կին

Գործողությունը տեղի է ունենում մեր օրերում, Երևանում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը տեղի է ունենում նախաբեմում, վարագույրի առջև: Փողոց: Դեպի վեր բարձրացող սալահատակի բազրիք: Հեռվից կիթառի ձայն է լսվում: Լապտերի տակ հայտնվում է Վիգենը՝ նա նվագում ու արտասանում է.

Վիգեն -

Եվ գիշերային աղջամուղջի մեջ
Մեր ստվերներն են հառնում մեղմաբար,
Թափառում անթև...
Ինչպես փյունիկը մոխիրների մեջ,
Ու հաստատվում է այս հին աշխարհի
Անվախճանության օրենքը դեղին...

(Մոտենում են Նոնան, Ջոնին ու Մկրտիչը):

Նոնա - Իսկ ինչո՞ւ դեղին:

Ջոնի - Հարցն իմ կարծիքով ճիշտ էր ու տեղին: Պահ, փառահեղ հանգ էր, Վիգ: Համահեղինակ ընդունիր: Դեղին և տեղին:

Նոնա - Չէ, բայց ինչո՞ւ դեղին:

Միկի - Ինչու... ընկերը դեղին է տեսնում, ասում է դեղին, ի՞նչ ես ուզում, Նոնա…

Նոնա - Ինձ թվում է, թե մրսում եմ, տղաներ...

Միկի - Այս վայրկյանին, մեմ*... (Գրպանից շիշ է հանում):*

(Բոլորը զարմացած են):

Վիգեն - Վայ, էս որտեղի՞ց է:

Ջոնի - Մեր սեղանի կիսատ շի՞շն է:

Նոնա - Մերսի, ապ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - Իսկ ի՞նչ կա։ Վճարե՞լ ենք, վճարել ենք։ Ես ինչո՞ւ պետք է թույլ տամ, որ սրճարանի տարրական կրթությամբ մի աշխատող խաբի ինձ՝ համալսարանի ուսանողիս՝ վաղը նույն իմ շիշն ինձ վաճառելով։

Ջոնի - Իսկ ինչո՞ւ քոնը, երբ ես եմ վճարել։

Միկի - Ինչպես թե, ես տվեցի դրամը։

Ջոնի - Լսիր, հարբած հո չե՞ս, ես սկզբից եմ տվել։

Միկի - Իսկ երբ դուք դուրս եկաք, ինձնից ուզեց։

Վիգեն - Հասկանալի է, պարոնայք, էլ ի՞նչ բուֆետապան, որ երկու ուսանողի չխաբի։ Դուք ավելի բախտավոր եք, ձեզանից շատ առաջ մի մուժիկ երկու գեներալի է խաբել։ Տե՛ս Նեկրասով, Հատընտիր, 1954 թ...

Նոնա - Այդ իմանալուց հետո գինին ավելի թնդացավ։

Վիգեն - Իհարկե, որովհետև օղի է...

Նոնա – Օղի՞, բա ինչո՞ւ չէիք ասում, ես օղի չեմ սիրում...

(Բոլորը ծիծաղում են)։

Ջոնի - Հարգելի բարեկամներ, թույլ տվեք այս փոքրիկ բաժակով, բայց մեծ սրտով… խմել…

(Ուզում է խմել)։

Նոնա - Չէ, չէ, կենաց ասա, այնքան եմ սիրում...

Ջոնի - Սիրով, քո կենացը, Նոնա...

Միկի - Իսկ ես նստել մտածում եմ, թե ես երկրագնդի վրա ապրող չորս միլիարդ մարդկանցից որերորդն եմ։ Ասենք՝ շարք կանգնեցնեին հասակի կարգով։ Ահավոր բան կլիներ, եթե ես լինեի, օրինակ, երեք միլիարդ վեց հարյուր քսանինը միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր հիսունյոթերորդը... Ես դրան չէի դիմանա... և գնում եմ տուն։

Վիգեն - Սպասիր, երեքով ենք մնում, իսկ ո՞ւմ հայտնի չէ, որ երրորդն ավելորդ է։

Ջոնի - Ճիշտ է, և ինձ թվում է, թե հենց դու ես ավելորդը։

Նոնա - Իսկ գուցե ե՞ս եմ։

Միկի - Իմ կարծիքով բոլորս էլ ավելորդ ենք... մինչև առավոտ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

(Լավ կահավորված ճաշասենյակ: Անկյունում, գրասեղանի մոտ նստած է Սահակը և աշխատում է՝ գիրք է սրբագրում):

Սահակ - *(Կարդում է):* «Հա, հա, հա, - ծիծաղեց անծանոթը, - և դու կարծում ես, թե շատ մտածելը ճիշտ մտածե՞լ է նշանակում»: Հարցականն այստեղ չպետք է լինի*: (Ուղղում է):* «-Այդ դեպքում կխոսեն մեր սրերը, - որոտաց…»:

(Հեռախոսի զանգ: Սահակը նայում է հեռախոսին, կրկին գրքին, սպասում է, թե որևէ մեկը կվերցնի... ի վերջո մոտենում է սարքին, վերցնում է լսափողը):

Այո՞, Միկիի՞ն... *(Նայում է փակ դռան կողմը):* Մկրտիչ քեզ են ուզում...

Միկի - *(Փակ դռան ետևից):* Ասա թող հետո զանգ տան...

Սահակ - *(Հեգնելով):* Մկրտիչ-Միկին գիշերն աշխատել է, հանգստանում է, բարի եղեք քիչ ուշ զանգահարել: *(Նորից մոտենում է գրասեղանին, նստում, կարդում է):* Որտե՞ղ կանգ առանք: Ահա «...որոտաց ասպետը: - Դե ուրեմն հարձակվիր, վախկոտ, - ծիծաղեց անծանոթը»: Անծանոթ, բա չէ՞, այստեղ կդնենք մի խոշոր «ծ»... *(Նորից զանգ: Նորից նույն պատմությունը):* Այո՞, Միկիին: Այ տղա, նորից քեզ են ուզում...

Միկի - *(Դրսից):* Ես քնած եմ... Տո իսկի քնած էլ չեմ... Ասա տանը չի... ասա...

Սահակ - *(Զայրացած մոտենում է փակ դռանը):* Լսիր, ես քեզ համար կոմուտատո՞ր եմ, ինչ է, թե քարտուղարուհի, առավոտից զանգ, հա զանգ, չեն թողնում աշխատեմ: Ինքդ մոտեցիր, ասա, որ քնած ես, որ տանը չես...

Միկի - *(Հայտնվում է մազախռիվ ու կիսամերկ):* ...Ատե՞ց, ոնց որ բարկանում ես, հա՞... *(Կողքը քորելով վերցնում է լսափողը):* Հելլո... Ջոնի... խաշի հաշիվ կա՞... Բա էս ժամին ինչի՞ ես վիստուպատ ըլնում... ինչ... *(Դառնում է հորը):* Ժամը քանի՞սն է, ատեց...

Սահակ - *(Ծաղրելով):* Տասնմեկը, ձերդ պայծառափայլություն...

Միկի - *(Լսափողում):* Դե, լավ, լավ, կյանքդ մի պատմի, պրիվ...հա, հա, խնդալուց մեռանք... *(Լսափողը ցած դնելով):* Ատե՞ց... Էլի քջո՞ւջ ես անում... Էսօր քանի՞ տառասխալ ես գտել, հա, երեկ հարցրի, չասացիր, քո գործը գործարքայի՞ն է, քանի տառասխալ գտնես, էնքան փո՞ղ ես ստանում...

Սահակ - Իհարկե: Որ քո շարադրությունները սրբագրեի, միլիոնատեր կդառնայի... Մկրտիչ, ես ուզում եմ քեզ հետ լուրջ խոսել:

Միկի - Լո՞ւրջ:

Սահակ - Լուրջ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - *(Սարսափած):* Իսկ հնարավոր չէ՞ լուրջ չխոսել... Այն էլ մերկ ու անլվա մարդու հետ, թայմ-աութ, հիմա գալիս եմ։

(Դուրս է վազում):

Սահակ - *(Հուսահատ տարածում է ձեռքերը, զայրացած նայում է փակ դռանը, նորից վերադառնում է սեղանի մոտ, կարդում է մեքենայաբար, անկիրք):*

« - Վախկոտ, հա, հա, հա, - քրքջաց ասպետը՝ սուրը մերկացնելով»։

Բութ սուրը... *(Դնում է բութը)...*

(Ներս է մտնում Նազելին՝ զամբյուղով, շուկայից):

Նազելի - Իսկ սուրն ինչո՞ւ է բութ, Սահակ... բարի լույս։

Սահակ - Բարի լույս, շարելիս կուլ են տվել բութ նշանը։ Բայց այդտեղ ոչինչ։ Բութին ամենաշատն ուշադրություն է դարձնում մեր հանդեսի խմբագիրը։ Վերջում միշտ մեծ հաճույքով կարդում է՝ խմբագիր բութ Սիսակյան։ Տասն անգամ բացատրել եմ, թե բութն այդտեղ պետք չէ, որովհետև ինքնըստինքյան հասկանալի է։ Բայց ոչ մի արդյունք։

Նազելի - Ինչո՞ւ, արդյունքը հայտնի է։ Ամբողջ կյանքում սրբագրիչ մնացիր։

Սահակ - Անիծյա՛լ գրագիտություն... Ահա թե ինչն է մեղավորը։ Ախր խմբագիր լինելու համար գրագիտությունը պարտադիր չէ։

Նազելի - Լավ ապրելու համար առավել ևս...

Սահակ - Այո, դժբախտաբար...

Նազելի - Ոչինչ, Սահակ ջան, փոխարենը եթե տեսնես, թե այդ անգրագետ հարուստները ինչպես են տանջվում շուկայում... Ոնց են հրմշտելով, հևասպառ այս ու այն կողմ ընկնում, ամենաընտիր մթերքներն ու մրգերը գնում առանց սակարկելու... որովհետև անգրագետ են։ Եթե տեսնես ոնց են ծանր-ծանր զամբյուղները քրտնամխած քարշ տալիս դեպի իրենց ավտոմեքենաները... ծիծաղդ կգա... Անձամբ ես ծիծաղից լաց էի լինում... Տեղն է նրանց, թող տանջվեն... Իսկ ինձ ի՞նչ, պստիկ ցանցազամբյուղս թեթև-թեթև թռցնելով վերադարձա տուն... Ահա...

Սահակ - *(Խեթ-խեթ նայելով):* Եվ ի՞նչ ես բերել...

Նազելի - Հոգեկան հանգստություն... ինչ որ դու միշտ ուզեցել ես...

Սահակ - Չէր խանգարի, որ մի քիչ էլ մարմնական լիներ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Կրկին հեռախոսի զանգ: Վերցնում է Նազելին):

Նազելի - Դա, Միկի՞ն *(Սահակին):* Միկին արթնացե՞լ է, բալիկս ուշ է քնել: *(Բարձր):* Միկի, Միկի...

Միկի - Հելլո, Նոնա, բեսամթ մերսի, ախպեր... Դավայ, կայֆ էր, կայֆ: Պոկվեք, պոկվեք եկեք... Ի՞նչ, որ գաս, եքա փոստ կլինի...

(Այդ խոսակցության ժամանակ Սահակը բռունցքները սեղմած Մկրտիչին է նայում, մեկ էլ կնոջը ու տարուբերում է գլուխը):

Չէ, չէ, դրան ցրեք... Սպասիր, քուր ջան, ժամը քանի՞սն ա, ախպեր... Լսիր, Նոնա, դու կյանքիս տոռմուզն ես դառել, հա՞, դե, դավայ, դավայ...

Սահակ - Մկրտիչ...

Միկի - Մա, որ մեկ էլ գրադարանս խառնել ես... ձեռ մի տա, էլի...

Նազելի - Ինչպե՞ս թե խառնել եմ... Ես դասավորել եմ, Միկի...

Միկի - Դե քո դասավորելն էլ խառնել է, էլի... Մինչև Կաֆկան գտա, հոգիս դուրս եկավ...

Սահակ - Ի՞նչ գրադարան...

Միկի - Զուգարանիս գրադարանը, ատեց... դու էլ որ ձեռք չտաս, սխալ չի լինի... Արի կլինի...

Նազելի - Միկի...

Սահակ - Խելագարվել կարելի է... զուգարանի գրադարանը... Հակառակը լսել էինք... Լսիր, այ տղա, դու այդ ինչ լեզվով ես խոսում...

Միկի - Մա, պապային ասա վրես չֆռռա…

Սահակ - Ե՞ս եմ ֆռռում... Այսինքն ինչպե՞ս թե ֆռռում եմ... Ի՞նչ է նշանակում ֆռռալ... Ձեր համալսարանը հիմա նոր բառարա՞ն է ստեղծել...

Նազելի - Սահակ ջան, այդքան երկար մի խոսիր, սիրտդ կվատանա...

Սահակ - Բավական է: Իմ սիրտը չխոսելուց է վատացել: Ամբողջ կյանքում ոչ ոք չի թողել, որ խոսեմ... Բայց մի օր ես պետք է խոսեմ և այնպես կխոսեմ...

Միկի - Ո՞ր օրը, ատեց...

Նազելի - Խելոք մնա, Միկի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - Ինչի՞, մամ, իմանանք, որ ցվրվենք տնից...

Սահակ - Լսիր, Մկրտիչ...

(Ներս է մտնում Սոնան: Նա հագնված է վառ, խայտաբղետ, այսպես կոչված՝ ժամանակակից):

Սոնա - Մամ, էս գիշեր ես տուն չեմ գալու...

Նազելի - Ինչո՞ւ:

Սոնա - Հավաքվելու ենք Կառայենց տանը՝ դիսկեր լսելու:

Սահակ - Կառան ո՞վ է:

Նազելի - Կարինեն է, դու նրան տեսել ես... *(Սեղմում է շրթունքները):*

Սահակ - Ա՜խ, նա, հա՞, դու ոչ մի տեղ էլ չես գնա...

Նազելի - Իսկ գիշե՞րն ինչու եք լսում: Ցերեկը դիսկերը չե՞ն պտտվում:

Սահակ - Այդ ի՞նչ դիսկեր են... Դիսկն ի՞նչ է...

Նազելի - Ձայնասկավառակ...

Սահակ - Ի՜նչ ես ասում, շնորհավորում եմ... Ուրեմն դու է՞լ ես սկսել նրանց լեզվով խոսել... Շատ հետաքրքիր է, ուղղակի...

Միկի - Խոխմա...

Սահակ - Ի՞նչ...

Նազելի - Խոխմա... ուզում է ասել՝ զվարճալի է...

Սահակ - Խոխմա՞...

Սոնա - Մամ, դե ես գնացի...

Նազելի - Սահակ...

Սահակ - Ես ասել եմ՝ նա ոչ մի տեղ էլ չի գնա:

Սոնա - Ցնդելու բան է, մա, չլսեմ, կմեռնեմ, Հուգո Ֆորսթի է, իսկական, մի ամիս էր հերթի էինք, էս գիշեր լսելու ենք, ուզում եմ գրել...

Միկի - Իմ մազին ձեռք չտաս...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ - Նազելի, այս ի՞նչ է կատարվում մեր տանը։

Նազելի -...

Սահակ - Ես քեզ եմ հարցնում՝ այս ի՞նչ է կատարվում մեր տանը։

Նազելի - Ուրեմն, մեղավորը էլի ե՞ս եմ։

Սահակ - Իսկ, ի՞նչ է, ե՞ս եմ...

Նազելի - Քանի անգամ եմ ասել երեխաները ձեռքից գնում են...

Սահակ - Ո՞ւմ ես ասել։

Նազելի - Քեզ եմ ասել, բայց դու ինձ լսո՞ւմ ես։

Սահակ - Չէ, եկ պարզենք...

Նազելի - Եկ...

Միկի - Դե դուք պարզեք, ես ցվրվեցի... *(Կամացուկ ուզում է իր սենյակը քաշվել)։*

Սահակ - Մկրտի՛չ...

Միկի - Այ հեր, անհարմար է, որ մենք կանգնենք լսենք, թե դուք ոնց եք կռվում... Ձեզանից ի՞նչ պետք է սովորենք...

Նազելի - Միկի, մի աշխատիր ցույց տալ, թե դու ավելի վատն ես, քան կաս իրականում։

Սահակ - Չէ, դրա լկտիությունը սահման չունի...

(Սոնան փորձում է անաղմուկ դուրս գալ)։

Նազելի - Սոնա, հայրիկիդ հարցրու, նոր գնա։

Սոնա - Պապ, խոսք եմ տվել, պապ ջան, մեր ամբողջ կուրսը հավաքվելու է։ Հուգո Ֆորսթի է, պապ ջան... Գիտե՞ս ինչ դիսկ է... Ես չունեմ, ի՞նչ անեմ...

Սահակ - Ի՞նչ անես, գնիր քեզ համար...

Սոնա - Ո՞նց գնեմ, փող կտա՞ս...

Սահակ - Ինչո՞ւ չեմ տա...

Միկի - Խնդալուց մեռանք...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ - Քի՞չ եմ տվել... Երկու օր առաջ չէ՞ր, որ քսանչորս ռուբլիանոց կոշիկներ բերեցի քեզ համար... Հա, ինչո՞ւ չես հագել, ինչո՞ւ ես էլի այդ անճոռնի հին կոշիկները զցել ոտքերդ...

Միկի - Դա մեզ պետք ա՞...

Սոնա - Պապ ջան, ախր հիմա ո՞վ է այդ տեսակ կոշիկներ հագնում: Դրանք հազար տարի առաջ էին հագնում.. Ասա էլի, մամ...

Նազելի - Հա, Սահակ ջան, հիմա չեն հագնում...

Սահակ - Ո՞վ չի հագնում... Ուրեմն ո՞ւմ համար են արտադրում... Ուրեմն ես փողերը քամու՞ն եմ տալիս...

Միկի - Մի նեղացիր, ատեց, ռաբիս բան էր...

Նազելի - Ոչինչ, ոչինչ, Սահակ, ես կհագնեմ, դու մի հուզվիր:

Սահակ - *(Ձեռքը գրպանն է տանում, մի տասը ռուբլիանոց է հանում, հետո տեղն է դնում, մի հնգանոց է հանում, դա էլ է տեղը դնում, մի երեքանոց է հանում, մեկնում է աղջկան):* Դե, վերցրու, վերցրու, գնա գնիր այդ սկավառակը, անհարմար է, ջահել աղջիկը գիշերն ուրիշի տանը չի մնա:

Սոնա - Մամ...

Մկրտիչ - Վա՛խ, վա՛խ...

Սոնա - Պետք չէ, պապ...

Սահակ - Վերցրու, վերցրու, բալիկ ջան, ավելի լավ է մի քիչ նեղվենք, քան թե կասկածի տակ դնենք մեր պատիվը...

Սոնա - *(Հուզված է):* Պետք չէ, պետք չէ, պապ ջան: Լավ, ես ոչ մի տեղ էլ չեմ գնա, չեմ ուզում, չեմ ուզում...

Սահակ - Ինչո՞ւ չես ուզում, վերցրու, վերցրու, աղջիկս...

Նազելի - Դե վերցրու, որ հայրդ տալիս է...

Միկի - *(Հորը):* Իսկ դու գիտե՞ս, թե ինչ արժե այդ դիսկը...

Սահակ - Ավելի թա՞նկ: *(Հնգանոց է մեկնում):* Սա վերցրու, ես հո չեմ ափսոսում:

Միկի - Հարյուր ռուբլի…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նազելի - Ի՞նչ...

Սահակ - Մի դի՞սկը... այսինքն՝ ձայնասկավառակը... խելագարվե՞լ եք, ինչ է:

Սոնա - *(Արցունքի միջից):* Չէ՛, Ջոնին ութսուն ռուբլով է գտել...

Սահակ - Գտե՞լ... Դրա՞մը, թե սկավառակը... Ութսուն ռուբլի՞... նա... նա ո՞վ է, Գյուլպենկյանն է, թե՞ Ֆորդը:

Միկի - Մսի ժառանգն է, ատեց:

Սահակ - Մսի՞, ի՞նչ միս...

Նազելի - Հայրը կաթի-մսի պահեստապետ է...

Սահակ - Հետո՞ ինչ... Բեթհովե՞ն է, Չայկո՞վսկի, թե՞ Վերդի...

Միկի - Դրանք հենց երեք ռուբլի արժեն:

Սահակ - Դե, իհարկե, Կոմիտասն էլ ձեզ համար մի ռուբլի կարժենա, Բախն էլ հիսուն կոպեկ... Իսկ կանացի ձայնով ծվծվացող Դեմիս Ռուսոսը՝ հազար, իսկ անլվա, մորուքավոր լակոտները՝ միլիոն...

Սոնա - *(Նախատինքով):* Պապա, պապա...

Սահակ - Ի՞նչ պապա, նախ ես հայրիկ եմ, հայրիկ, հասկանո՞ւմ ես... Այսինքն ես ի՞նչ հայրիկ եմ, ես հենց պապա եմ, որ կամ... Դժբախտ պապա:

Նազելի - Դե լավ, վերջ տվեք, գնանք նախաճաշելու, Սահակ:

Սահակ - Չէ, գիտես ինչ, ես Մկրտիչի համար չեմ ասում, նա էլ այդ անլվա լակոտներից մեկն է: Ես Սոնայի վրա եմ զարմանում, Սոնայի, Կոմիտասի անվան կոնսերվատորիայում է սովորում, երեք տարի ուսանող է, դաշնամուր է նվագում: Դրանից առաջ տասնմեկ տարի երաժշտական դպրոցում է սովորել, պրոֆեսիոնալ է, մեր տանը խնջույք ենք ունենում, աղաչում-պաղատում ենք, որ մի պար նվագի, կամ մի երգ, չի նվագի, ինչպե՞ս կարելի է, մատները կփչանան, կծռվեն... Իսկ խելքը ծռել է այդ... այդ խռպոտած մոլագարների վրա... ութսուն ռուբլի... Հայկական կոնսերվատորիայի ուսանողուհի է... մի անգամ չտեսա Կոմիտաս նվագեր կամ Եկմալյան, կամ Կարա-Մուրզա, կամ Կանաչյան...

Սոնա - Ինչո՞ւ, պապ, ես իմ դասերը չե՞մ նվագում...

Սահակ - Դա նվա՞գ է... Դու մորթում ես՝ քեզ էլ, նրանց էլ... Ե՞րբ ես դու նրանցով այդպես տարվել, այդ ո՞ր գիշերը չես քնել, ստացածդ էլ մի կերպ երեք չէ՞...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նազելի - Սահակ ջան, դե դու էլ գիտես, թե կոնսերվատորիայում ինչ դժվար է...

Սահակ - Իսկ նրանց համար դժվար չէ՞, որ դափնեկիրներ են դառնում, որ Ժնև են հասնում ու Մոսկվա, որ Դրեզդենում են նվագում ու Փարիզում... որ համերգներ են տալիս մեր սիմֆոնիկ նվագախմբի հետ... Կարոտ մնացի, որ մի օր աղջկաս անունը որևէ ազդագրում կարդամ... կարո՛տ...

Միկի - Ինչ ըսիր, լավ ըսիր...

Սահակ - Գիշերները դիսկ պետք է պտտեցնի... դիսկ...

Նազելի - Դե լավ, լավ, գնանք նախաճաշելու... Հետո կխոսենք...

Սահակ - Չեմ ուզում, ես կուշտ եմ, կուշտ, ես աշխատանք ունեմ...

Սոնա - Չգիտեմ, ինչ ուզում եք արեք, բայց ես պետք է գնամ... Մամ, ա՛յ, գնալու եմ... Ի՞նչ է, ես ազատություն չունե՞մ...

Նազելի - Դե լավ, լավ, հիմա ձայնդ կտրիր, հետո կհամոզենք... Օհ, կրակն եմ ընկել ձեր ձեռքը...

Սահակ - *(Դեռ բարկացած քայլում է):* Չէ, բայց հո այսպես ապրել չի՞ կարելի։ Ութսուն ռուբլի։ Դիսկ, ո՞նց էր... խոխմա... Ես ձեզ ցույց կտամ... խոխմա... ազատություն... Չէ, պետք է մի բան մտածել... Հանդարտ, հանդարտ, Սահակ, տաքարյունություն պետք չէ, մտածիր... թե չէ իսկապես զավակներդ ձեռքից գնում են...

(Մոտենում է, նստում է սեղանի մոտ, քարացած կարդում է):

«Դե, դե, մոտ եկ, էլի, և ես կտեսնեմ, թե ինչ գույն ունի քո արյունը։ Ահա...

- Վրիպեցիր, - ծիծաղեց ասպետը, - նորից, նորից, մի քաշվիր, արյո՞ւն ես ուզում տեսնել, կտեսնես...

Սրերը կրկին փայլատակեցին, օդը լցվեց շառաչով։ Ներկաները սոսկումով հռաչեցին»...

Ի՞նչ, հռաչե՞լ, հառաչել, ընկեր լինոտիպիստ, հառաչել... Ես հո գիտեմ, թե ինչ բան է գա... Խոխմա՛...

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Խոհանոցը: Սոնան ու Մկրտիչը նախաճաշում են: Նազելին նորանոր ուտելիքներ է հանում գազօջախից ու սառնարանից: Մկրտիչը սկսում է թոցնել մեկ այս, մեկ այն ափսեից):

Նազելի - Համբերիր, հիմա կլցնեմ, բալիկ ջան:

Միկի - *(Թոցնում է):* Հա՞, սպասում եմ, սպասում եմ...

Նազելի - Սպասիր, այ աղա, սպասիր դասավորեմ նոր:

Միկի - Ի՞նչ տարբերություն, գումարելիների տեղերը փոխելով գումարը չի փոխվում:

Նազելի - Շնորհքով կեր, Միկի, Սոնայից օրինակ վերցրու...

Միկի - Ուզում ես սովից մեռնե՞մ...

Սոնա - Մամ, ես միայն սուրճ կխմեմ...

Նազելի - Ձվածեղ կուտես, նոր սուրճ կխմես թխվածքով:

Սոնա - Չէ՜ մի, թխվածք...

Նազելի - Դու ինձ մի ջղայնացրու, Սոնա, մեկ էլ չգիտեմ երբ ես ուտելու:

Սոնա - Ախորժակ չունեմ, ի՞նչ անեմ...

Միկի - *(Շտապ - շտապ ուտելով):* Որ ախորժակ չունենք, մեղավո՞ր ենք:

Սոնա - *(Պատառաքաղով փորփրելով ձվածեղը):* Այնքան էլ յուղ ես լցնում...

Նազելի - Մի կտոր հաց վերցրու...

Սոնա - *(Սարսափած):* Հա՞ց...

Նազելի - Ի՞նչ ես վեր թոչում, թույն չեմ ասում, ասում եմ հաց, հաց, կրակն եմ ընկել ձեր ձեռքը...

Միկի - Բա կարծում էիք հե՞շտ բան է երեխա ունենալը:

Նազելի - Հաց... մի կտոր հաց... պատերազմի ժամանակ ասում էի՝ տեր աստված, երբևէ մի օր կլինի , որ սեղանից վեր կենանք ու էլի հաց մնա սեղանին, թեկուզ մի կտոր....

Միկի - Ի՜նչ ֆիգուր պահելու ժամանակներ են եղել, չէ՞, Սոն...

Նազելի - Շա՜տ, ամբողջ երկիրը ֆիգուր էր պահում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոնա - Մամ...

Նազելի - Ինձ չեք խղճում, կարգին կերեք, ձեր հորը խղճացեք: Գիշեր ու ցերեկ աշխատում է ձեզ համար: Ինքներդ եք տեսնում՝ հիմնարկից գործ է բերում, որ տանն էլ աշխատի:

Միկի - *(Մեղանին դրված փոքրիկ ընդունիչից ինչ-որ աղմկաձայն երաժշտություն է լսում):* Մամ, մի քիչ կամաց, խանգարում ես:

Սոնա - Իմ ընկերուհիները ծնողներ չունե՞ն: Ուր ուզում են գնում են, ինչ ուզում են, անում են:

Նազելի - Ուրեմն չունեն, կեր:

Սոնա - Շատ լավ էլ ունեն: Ուղղակի ժամանակակից մարդիկ են: Նոնայի պապան, օրինակ...

Միկի - Օ՜հ, Նոնա, Նոնա:

Սոնա - Նոնային ասում է, դո՛ւ էլ անձնագիր ունես, ե՛ս էլ, ուրեմն մենք հավասար, իրարից անկախ մարդիկ ենք, ես պատասխանատու չեմ քեզ համար և ոչ էլ դու ինձ համար, ապրիր՝ ինչպես ուզում ես...

Նազելի - Իսկ մա՞յրն ինչ է ասում:

Սոնա - Մայրը բաժանված է, ուրիշի հետ է ամուսնացել...

Նազելի - Ահա, տեսնո՞ւմ ես...

Սոնա - Ի՞նչ եմ տեսնում, հոգնել են իրարից ու բաժանվել են, հո առանց սիրո մինչև կյանքի վերջը միասին չէի՞ն ապրելու:

Միկի - Նախնադա՜ր...

Սոնա - Հայրն ասել է՝ սիրելիս, ես զգում եմ, որ դու առաջվա պես ինձ չես սիրում, միայն մի հարց՝ ե՞ս հեռանամ տնից, թե՞ դու, ինքդ որոշիր... Իսկ մայրն ասում է՝ - Սիրելի, ում մոտ որ գնում եմ՝ նա բնակարան ունի, այնպես որ ձեզ բնակարանը ավելի պետք է...

Միկի - Կայֆ...

Սոնա - Եվ այդպես հեշտ ու սիրով բաժանվել են...

Նազելի - Իսկ Նոնա՞ն...

Սոնա - Նոնան ի՞նչ, ուսանողուհի է, ապրում է իր համար, ինքն էլ, պապան էլ առանձին բանալիներ ունեն: Իրար չեն խանգարում...

Նազելի - Իդեալական հարաբերություններ են:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոնա - Իհարկե, ձեզ համար ձեզանից դուրս ամեն ինչ նողկալի է: Ուղղակի դուք ապրել չգիտեք և չեք էլ ուզում սովորել...

Նազելի - Ո՞վ է ասում, թե չենք ուզում, պարզապես սովորեցնող չկա: Գուցե դո՞ւք սովորեցնեք...

Սոնա - Մի ծաղրիր, մամ, ես ամաչում եմ, երբ դասի եմ գնում: Գիտե՞ս մեզ մոտ ինչպես են հագնվում՝ էլ մուշտակներ, էլ երկարաճիտ արտասահմանյան կոշիկներ, վոդոլազկա, ծաղկավոր տաբատ... իսկ ես, իսկ ես...

Միկի - Մենք սխալ կհագնեինք...

Սոնա - Հագնվում են միայն կոմիսիոն խանութի կամ արտասահմանյան ծանրոցների միջից հանած հագուստներ... ընտիր, շիկ...

Միկի - Ա՜խ, ինչ ջինսեր կան...

Նազելի - Իսկ քո զգեստները ինչո՞վ են վատ...

Սոնա - Նրանով, որ ամբողջ քաղաքը հագնում է... Ուր գնում եմ՝ նույն վերարկուն, նույն կոշիկը, նույն բլուզը, նույն գուլպան... նույն գորշությունը...

Նազելի - Ուրեմն, այնուամենայնիվ, ամբողջ քաղաքը հագնում է, և աշխարհը շուռ չի գալիս...

Միկի - Ախ, մամ, իսկ եթե ամեն մարդ իր սիրած հագուստը ունենա, աշխարհը շու՞ռ կգա...

Նազելի - Դե ուրեմն ստեղծեք այդ աշխարհը, մենք դե՞մ ենք: Այս մի կտորն էլ կեր, Միկի, կեր, բալիկս... Մենք կարողացել ենք այսքանն անել... Մեր ծնողները տրեխներ են հագել, մենք կոշիկներ ենք հագնում, դուք ուզում եք...

Միկի - Տրեխնե՞ր, այսինքն մոկասիներ, իբր վատ բան է եղել ... Սպասիր, դրա մոդան էլ նորից կգա...

Նազելի - Հա, իհարկե, իմ պապը մոդայի համար էր տրեխ հագնում, թե չէ որ ուզենար... Եվ հայրդ էլ մոդայի համար է, որ հինգ տարի շարունակ միակ կոստյումն է հագնում, միակ վերարկուն և նույնիսկ միակ գլխարկը...

Միկի - Որովհետև նորը չի ուզում, թե չէ... *(Սոնային, ակնարկելով երաժշտությունը):* Տես, տես ինչ են անում...

Սոնա - Ջոնին դրա դիսկն էլ ունի... *(Մորը):* Որ ուզենար, նոր վերարկու չէ՞ր առնի, կամ նոր կոստյում...

Նազելի - Ինչո՞ւ չէր գնի... բայց նա ձեր մասին է մտածում, ուզում է, որ դուք լավ հագնվեք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - Դրանից չէ, մամ, սովորությունից է... հավատա... Ու հետո դուք ամեն նոր բանից վախենում եք։ «Վոկրուգ սվետա»-ում կարդացի, որ Մելբուռնում ու Սիդնեյում մարդիկ ոտաբոբիկ են քայլում։ Հասկանո՞ւմ ես, վերխը հիանալի հագնում են, իսկ կոշիկներ չեն հագնում։ Ինչո՞ւ։ Որովհետև չեն վախենում, թե իրենց վրա կծիծաղեն։ Որովհետև ոնց որ ուզում են, այնպես էլ ապրում են։ Ազատ մտածողություն ունեն... Ոչ թե ձեզ նման, վա՛յ, ամոթ է, վա՛յ, նայում են, վա՛յ, ինչ կասեն...

Նազելի - Ճիշտ է, այդ մտածողությունն ինձ էլ է դուր գալիս։

Սոնա - Ճի՞շտ, մամ...

Նազելի - Հատկապես այն, որ երբ երեխաները դպրոցն ավարտում են, ծնողներն ասում են. «Հիմա դուք ազատ եք, ապրեք ինչպես ուզում եք»։

Միկի - Այսինքն ո՞նց...

Նազելի - Այսինքն ուզում եք աշխատեք, ուզում եք՝ շարունակեք ուսումը... Դուք արդեն հասուն մարդիկ եք...

Սոնա - Իսկը Նոնայի պապան...

Նազելի - Այո, միայն թե Նոնայի պապայի նման չեն շարունակում պահել իրենց զավակին։ Թե՞յ, թե սուրճ։

Սոնա - Թեյ, մամ...

Միկի - Բա ինչպե՞ս են շարունակում ուսումը։

Նազելի - Աշխատում և սովորում են։

Միկի - *(Սուլում է):* Ռաբիս... մեզ ձեռ չտվեց...

(Հեռախոսի զանգ է հնչում, Սահակը վերցնում է լսափողը և թեթևակի լսվում է, թե ինչպես է պատասխանում զարմացած. «Ինչպե՞ս, չի կարող պատահել, ե՞րբ, բայց ինչի՞ համար»):

Միկի - Մամ, խոհանոցից մենք թաքուն ելք չունե՞նք։

Նազելի - Ի՞նչ ելք... որտեղի՞ց... երրորդ հարկի՞ց...

Միկի - Հիմա ինձ շատ պետք կգար...

Սահակի ձայնը - Մկրտի՛չ...

Միկի - Ինձ տարան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Արագ դուրս է գալիս):

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

(*Սահակն ու Մկրտիչը):*

Սահակ - Մկրտի՛չ:

Միկի - Լսում եմ, հայրիկ:

Սահակ - Հայրի՞կ: Հըմ: Լսիր, մինչև հիմա ես գիտեի, որ դու ծույլ ես, անբան ես, զազրախոս ես, ինչպես են ասում հա, ստիլյագ ես…

Միկի - Ի՞նչ հարկ կա իմ համեստ ընդունակությունները թվարկելու, հայրիկ:

Սահակ - Բայց ես չգիտեի, որ դու նաև խուլիգան ես, խուլիգան, այո՛…

Միկի - Առաջին անգամ եմ լսում:

Սահակ - Լսիր, անմեղ տեսք մի ընդունիր: Երեկ դու Բագրատին չե՞ս ծեծել:

Միկի - Ծեծել եմ:

Սահակ - Ապրես…

Միկի - Շնորհակալություն, հայրիկ:

Սահակ - Այսինքն՝ ապրես, որ խոստովանում ես: Դա էլ մեծ բան է: Ինչո՞ւ ես ծեծել, այ տղա…

Միկի - Հիմար-հիմար բաներ էր ասում:

Սահակ - Պահ, պահ, պահ, իբր թե քո ասած բաները փիլիսոփայական տրակտատներ են: Լսիր, ես քեզ ինչպե՞ս հասկացնեմ, որ դու արդեն մեծացել ես, դու տասնինը տարեկան ես, հասկանո՞ւմ ես, Մկրտիչ: Քո տարիքում ես վեց տարվա աշխատանքային ստաժ ունեի: Ես արդեն տուն էի պահում:

Միկի - Ինձ էլ թողնեիր աշխատեի:

Սահակ - Իսկ ո՞վ է ձեռքդ բռնում: Աշխատեի՛… ամռանը մի ամիս գնացիր շինարարություն, ինչքան տնական շոր ունեի, տարար ու ետ չբերեցիր… Ու… աշխատավարձդ էլ չտեսանք…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - Տվեցի՞ն, որ տեսնեիք։

Սահակ - Իսկ դու այնտե՛ղ կռվեիր։ Տանն առյուծ ես, ամեն ինչին մի պատասխան գտնում ես։ Իսկ դրսում կատու ես դառնում։ Ինչո՞ւ ես ծեծել Բագրատին։

Միկի - Որովհետև դրսում կատու եմ դառնում։

Սահակ - Լավ, ես՝ քեզ հետ ի՞նչ լեզվով խոսեմ։ Մկրտիչ ջան, տղա ջան, ախպեր ջան։ Չե՞ս զգում, որ սխալ ես ապրում։ Սխալ, սխալ, սխալ։ Համալսարանի երրորդ կուրսում ես, ի՞նչ ես արել մինչև հիմա։ Ֆուտբոլիստների ու պոպ երգիչների կենսագրությունից բացի, ի՞նչ գիտես,

Միկի - Իսկ դա քիչ է, հա՞։

Սահակ - Ախր դու նույնիսկ հայերեն չգիտես։ Այդ ի՞նչ լեզվով ես խոսում։ Եթե ձայնագրեմ, ու դու լսես քեզ ինքնասպանություն կգործես։ *(Ծաղրելով)։* Լա՛վ պոչտա էր, չէ՞…

Միկի - Փոստ...

Սահակ - Ի՞նչ... Զարմանալի սերունդ եք։ Նայում եմ ձեզ ու չեմ հասկանում...

Միկի - *(Պաթետիկ)։* Մեզ հասկանալը դժվա՛ր է, դժվա՛ր...

Սահակ - Դուք ոչ սիրել գիտեք, ոչ խանդել գիտեք, ոչ տղամարդկային արժանապատվություն ունեք...

Միկի - Ախր դու ի՞նչ գիտես, ատեց...

Սահակ - Է, տեսնում ենք, չէ՞... Բա տղամարդն ուզենա կնոջը նմանվել։ Նայեք ձեր մազերին, նայեք ձեր ծաղկավոր բլուզներին, ձեր բարձրակրունկ կոշիկներին, ձեր նեղիրան վերարկուներին։ Նայեք ձեր շարժումներին... ախր դուք արդեն կնոջ նման եք քայլում։ Ուշադրություն դարձրե՞լ եք, ձեր սիրած երգիչները կանացի ձայնով են երգում, իսկ երգչուհիները տղամարդու ձայնով։

Միկի - Իսկ դրա մեջ ի՞նչ վատ բան կա...

Սահակ - Այլասերություն կա։ Իսկ դա ամենասոսկալին է։ Հակառակ ձեզ՝ կանայք էլ լրիվ տղամարդ են խաղում։ Նստում են դիմացդ, ոտքը ոտքին գցած, սիգարետը բերաններին, օղի են խմում, խոսում են խռպոտած ձայնով, և այնպես են խոսում, որ տղամարդը կարմրում է։ Մազերը ներկված են, աչքերը ներկված են, ոտքերը ներկված են, հոգին ներկված է... Մի ամբողջ քիմիական արդյունաբերություն։ Ամուսնանալ չեն ուզում, ընտանիք չեն ուզում, երեխա չեն ուզում, ծնող չեն ուզում...

Միկի - Է, քե՞զ ինչ, ատեց, քո ի՞նչ գործն է։ Ինչպես որ իրենց հարմար է, այնպես էլ ապրում են։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ - Բայց ես էլ աղջիկ ունեմ, ես էլ տղա ունեմ։ Եվ ինձ համար բոլորովին էլ միևնույնը չէ, թե ինչպես են ապրում նրանց ընկերներն ու ընկերուհիները։

Միկի - Իսկ ձեր աղջիկն ու տղա՞ն։

Սահակ - Իմ աղջիկն ու տղան ի՞նչ։

Միկի - Հարցրե՞լ ես, թե նրանք ինչպես են ուզում ապրել։

Սահակ - Ես ուզում եմ, որ նրանք ապրեն այնպես, ինչպես իրենց ծնողները։

Միկի - Քո ուզենալը դեռ քիչ է, իսկ նրանք ուզո՞ւմ են։

Սահակ - Նրանք պարտավոր են։

Միկի - Ինչո՞ւ։

Սահակ - Որովհետև նրանք իմ տանն են ապրում։ Որովհետև նրանք իմ հացն են ուտում։ Որովհետև նրանք ինձնից են հագուստ ուզում... Քի՞չ է։

Միկի - Քիչ է։ Դա ընդամենը տնտեսական կախվածություն է։

Սահակ - Մկրտիչ, ինձ համբերությունից մի հանիր։ Ի՞նչն է քիչ։ Է՞լ ինչ եք ուզում...

Միկի - Չեմ ուզում, որ համբերությունից դուրս գաս։

Սահակ - Ու հենց դրանով էլ հանում ես։

Միկի - Մի հարց եմ ուզում տալ։

Սահակ - Հարյուրը տուր։ Հազարը։ Խոսիր։ Ես ուզում եմ հասկանալ ձեզ... Խոսիր, խոսիր, մարդ աստծո...

Միկի - Մեր զրույցը... քեզ ոչինչ չի՞ հիշեցնում։

Սահակ - Իսկ ի՞նչ պետք է հիշեցնի։

Միկի - Նման մի զրույց... Քո և քո հոր միջև։

Սահակ - Իմ և իմ հո՞ր... Եվ քո կարծիքով ես կարող էի քեզ նման... լկտիորեն խոսել իմ հոր հե՞տ։

Միկի - Հիշիր, ատեց, հիշիր։

Սահակ - Ես հիշելու բան չունեմ, գրողը տանի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - Ուրեմն ե՛ս կհիշեցնեմ: Թեկուզ այն առիթով, որ առաջին անգամ գիշերը տուն չես եկել: Ու մեկ էլ մամայի առիթով... Հիշո՞ւմ ես, որ տեսել են ձեզ փողոցում, թևանցուկ...

Սահակ - Հետո՞...

Միկի - Ու մեկ էլ, որ առաջին անգամ մամային տուն ես բերել, ու շրթունքները ներկված են եղել...

Սահակ - Հետո՞...

Միկի - Ու մեկ էլ, որ մամային ռեստորան ես տարել, երբ դեռ մամա չէր, և ծախսել ութ ռուբլի... Նման բաները, սիրելի ատեց, միտք չունի պատմել ընկերներին... երեխաների ներկայությամբ: Եթե, իհարկե, ուզում եք սրբերի շարքը դասվել:

Սահակ - Հը՛մ... Բայց դրանք բոլորովին ուրիշ բաներ են...

Միկի - Դրանք միշտ էլ ուրիշ են լինում: Եվ հիմա էլ են ուրիշ և վաղն էլ են լինելու ուրիշ... այ, այստեղ պետք է ավելացնել լավ փոստ էր, չէ՞... Տեղը կհիշե՞ս...

Սահակ - *(Ծիծաղը գալիս է, բայց զսպում է իրեն):* Բան չունեմ ասելու, մեծ-մեծ խոսելը հիանալի սովորել ես, տղաս... Բայց տան մասին մտածել չես սովորել: Դուք բոլորդ էլ հրաշալի գիտեք ձեր իրավունքները: Պարտականությունների մասին չեք հիշում: Իսկ ամեն մարդ իր պարտականություններն ունի թե ընտանիքում, թե հասարակության մեջ:

Միկի - Բովանդակալից զեկուցման համար՝ մերսի: Ինչքան քիչ լինեն, այնքան լավ:

Սահակ - Պարտականությունն՞երը:

Միկի - Շղթաները:

Սահակ - Ձեզ համար դրանք միևնո՞ւյնն են:

Միկի - Դրանք միշտ էլ նույնն են եղել:

Սահակ - Եվ դուք մտադիր եք ազատվել պարտականություն-շղթաներից:

Միկի - Մենք պայքարում ենք...

Սահակ - Եղավ, տղաս, համարիր, որ մարտահրավերն ընդունված է:

Միկի - Բեսամթ մերսի, ախպեր...

Սահակ - Այս օրը կհիշես, Մկրտիչ-Միկի, այս օրը կհիշես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - Առանց սպառնալիքի, ատեց: Ուժի դիրքերը հիմա հարգի չեն:

Սահակ - Հա, Բագրատին ինչո՞ւ ես ծեծել: Հայրն էր զանգահարում: Ի՞նչ պատասխան պիտի տամ ես նրան... Ինչպե՞ս չես ամաչում, ա՛յ տղա...

Միկի - Հիմար բաներ էր ասում...

Սահակ - Հիմար բաներ ասելու համար թե ծեծելը ելք լիներ, մարմնիդ վրա առողջ տեղ չէր մնա, Մկրտիչ տղա… Եվ ոչ միայն քո... աշխարհի կեսը պիտի ծեծ ուտեր: Դու պետք է Բագրատից ներողություն խնդրես... Ինչպես ես նրա հորից եմ խնդրելու:

(Ներս է մտնում Սոնան և լսում է):

Միկի - Ներողությո՞ւն: Դու նրա հորից ներողությո՞ւն ես խնդրելու: Էհ*... (Դուրս է նետվում):*

Սոնա - Միկին մեղք չունի: Եթե իմանաս, պապա, թե Բագրատի այդ հայրը ինչեր է ասել քո մասին, որը նրա պիժոն տղան համարձակվել է կրկնել Միկիի մոտ, ոչ թե ներողություն կխնդրես, այլ մենամարտի կկանչես նրան:

Սահակ - Մենամարտի՞... Քերոբ Մարկիչի հե՞տ... Նա դրան միայն անստորագիր նամակներով կպատասխանի: Չէ աղջիկս, ես ձեռքերս լվանում եմ...

(Ներս է մտնում Նազելին՝ լսում է միայն վերջին բառերը):

Նազելի - Մաքուր սրբիչ վերցրու...

(Սահակն ու Սոնան փոթկում են: Նազելին զարմացած նայում է նրանց: Ծիծաղն ավելի է սաստկանում):

Նազելի - Չե՞զ ինչ պատահեց...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Հնչում է դռան զանգը: Մկրտիչը նետվում է դեպի դուռը, և քիչ անց ներս են մտնում Նոնան, Ջոնին և Վիգենը: Նրանք զինված են տրանզիստորներով, կիթառներով, ձայնապնակներով: Գալիս ու անցնում են առանց բարևելու ծնողներին, աղմուկով լցվում են կողքի սենյակ: Այնտեղից անմիջապես խառնիխուռն ձայներ և երաժշտություն է լսվում):

Սահակ - *(Հուսահատ տարածում է, ձեռքերը):* Տեսնո՞ւմ ես, նույնիսկ չեն բարևում...

Նազելի - Չէ, Վիգենը կարծես թե գլխով արեց:

Սահակ - Նրանք բոլորն էլ տմբտմբացնում են գլուխները, պարելիս չե՞ս տեսել: (Ներս է նետվում Մկրտիչը):

Մկրտիչ - Մամ, մի քիչ կորմ... *(Դուրս է թռչում):*

Սահակ - Ի՞նչ:

Նազելի - Ուտելիք է ուզում: Հիմա կբերեմ, Միկի...

(Դուրս է գնում):

Սահակ - *(Ծաղրելով):* Հիմա կբերեմ... կո՛րմ... ինչ ճիշտ է, ճիշտ է, կո՛րմ... Նրանց հենց կեր է պետք...

ՏԵՍԱՐԱՆ

(Ընդարձակ նախասրահ: Այստեղ ու այնտեղ դինամիկներ են, մագնիտոֆոն, նվագարկիչ: Պատերին երգի աստղերի դիմանկարներ են՝ տարբեր դիրքերով: Լայն թախտ, որի վրա այժմ կիսապառկած նստած են Վիգենը և Ջոնին: Մկրտիչն ու Նոնան պարում են: Որպեսզի նրանց խոսակցությունը լսելի լինի, պարողները հեռանում են, հետո մոտենում նվագի հետ):

Վիգեն - Նոր եմ հասկանում, թե ինչու ազգային ու դասական պարերը թողած, բոլորը հիմա մեյդ ին Աֆրիկա պարերն են պարում:

Ջոնի - Ինչո՞ւ:

Վիգեն - Որովհետև լավն ու վատը չի երևում: Միայն թե ռիթմը տեղը լինի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ջոնի - Ասածիդ հավատացի՞ր, ախպեր։

Վիգեն - Հաստատ։ Դե թող դրանք հիմա փորձեն շալախո պարել կամ թե նազպար։ Սիրտդ կխառնի։

Ջոնի - Իսկ պարն ի՞նչ նշանակություն ունի։ Հիմա էլ է խառնում, երբ վատ են պարում։ Քեզ ուրիշ բան ասեմ, երբ ռեստորանում տեսնում եմ, թե ոնց են լակոտները առանց հասկանալու, առանց ապրելու վեր-վեր թռչում, ափսոսում եմ, որ ծեծը քրեապես հետապնդելի արարք է, և ծեծողը դատապարտվում է ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածով։

Վիգեն - Քննությա՞ն ես պատրաստվում։

Ջոնի - Այդ էլ կա։

Վիգեն – Է՛, ձեզ ինչ կա, լավ տրամաբանություն ունեցար, ուրեմն իրավաբան ես, էլի։

Ջոնի - Ու նաև կիբեռնետիկ։

Վիգեն - Օհ, օհ, հայե՛ր, հասեք, համեմատելու բան գտար։

Ջոնի - Մի ծիծաղիր, կկտրեմ։

Վիգեն - Ի՞նձ, ինչպե՞ս։

Ջոնի - Մի խնդիր եմ տալիս։

Վիգեն - Խնդի՞ր։ Խնդրեմ։

Ջոնի - Ֆերմայի ձիապան Բալաբեկի հանցավոր արարքի հետևանքով սատկել է կոլտնտեսության անվանի ձիերից մեկը՝ Արաբը։

Վիգեն - Իսկ այդ Բալաբեկը ի՞նչ է արել։

Ջոնի - Հենց բանն էլ այն է, որ ոչինչ չի արել։ Տեսել է, որ Արաբը առվույտի արտն է մտել ու փոխանակ ձիուն հեռացնելու, նստել թոռան համար շարադրություն է գրել։ Իսկ ձին կերել է առվույտը։ Կերել ու տրաքել է։

Վիգեն - Ձիու արժեքը պետք է գանձել Բալաբեկից։

Ջոնի - Իսկ ձին գյուղի պարծանքն էր, հանրապետության վազքի չեմպիոնը, ՍՍՀՄ ժողովրդական նվաճումների ցուցահանդեսի քառակի դափնեկիրը, բոլոր զամբիկների սիրելին ու հովանավորը։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Վիգեն - *(Չվախեցած):* Տոհմակա՞ն ձի էր: Ուրեմն Բալաբեկին պետք է պատժել անփութության համար:

Ջոնի - Նա թոռն էր այն նշանավոր Արաբ նժույգի, որն աչքի էր ընկել կոլեկտիվացման շրջանում բանդիտների դեմ մղվող կռիվների ժամանակ: Երկու անգամ նա կրակի տակից փրկում, դուրս է բերում կոլտնտեսության առաջին նախագահին: Իսկ Արաբի հայրը...

Վիգեն - Դարձյա՞լ Արաբ էր:

Ջոնի - Այո՛, Արաբ երկրորդի կրծքի վրա այլևս մեդալների տեղ չկար: Նրա բրոնզե քանդակը այսօր զարդարում է շրջանի ձիաբուծարանի մուտքը:

Վիգեն - Հըմ... Կորավ Բալաբեկը:

Ջոնի - Ավելին... Քննությունից պարզվում է, որ Բալաբեկի հայրը հենց այն բանդիտներից մեկն է եղել, որը կրակել է կոլտնտեսության նախագահի վրա:

Վիգեն - Ուրեմն ի՞նչ... գնդակահարությո՞ւն... իբրև չարամիտ...

Ջոնի - Իհարկե, և գնդակահարվողը դու ես... *(Ծիծաղում է):* Տրամաբանող... Որովհետև ինչ ուզում է լինի՝ ձին միայն ձի է... և ուրիշ ոչինչ...

Միկի - *(Նվագի հետ Նոնային ներս բերելով):* Ջոնի, գնացինք...

Վիգեն - Պրովոկատոր...

(Ջոնին ծիծաղելով նետվում է պարողների մեջ, սրանք կողքի սենյակն են գնում: Ներս է մտնում Նոնան):

Նոնա - *(Հովհարելով իրեն):* Օհ, հոգնեցի... Ինչո՞ւ չես պարում, Վիգ...

Վիգեն - Լարվում եմ...

Նոնա - *(Ուշադրությամբ դիտում է տղային: Մեկուսի):* Չէ, գեղեցիկ է: Աչքերը խոշոր են, պոչավոր... քիթը ուղիղ, հունական... ականջները... Ա՛յ քեզ բան, նոր եմ նկատում, որ Վիգենի ականջներն այդքան մեծ են... Բայց դե ինչ արած, պետք է տանենք:

Վիգեն - Այդ ի՞նչ ես մրմնջում, ի՞նչը պետք է տանես, Նոն...

Նոնա - Ականջները… Ը՜ը, ոչ, ոչ, ուղղակի հիշեցի մեկին...

Վիգեն - Իսկ ինձ ինչո՞ւ ես այդպես ուշադիր նայում... ասես թե մեր թվարկությունից առաջ ութերորդ դարի կճուճ լինեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նոնա - *(Ծիծաղում է):* Իրավունք չունե՞մ նայելու:

Վիգեն - *(Ուսերն է թոթվում):* Նայիր...

Նոնա - Վիգեն...

Վիգեն - Լսում եմ...

Նոնա - Ոչ, ոչ...

Վիգեն - *(Ուսերն է թոթվում):*

Նոնա - Վիգ:

Վիգեն - Այո՞...

Նոնա - Ես ուզում եմ քեզ հետ առանձին խոսել:

Վիգեն - Առանձի՞ն: Իսկ հիմա մենք, ինչ է, ՄԱԿ-ի ասամբլեայի նիստո՞ւմ ենք:

Նոնա - Ըհը: Կգա՞ս ինձ հետ ռեստորան:

Վիգեն - Ի՞նչ: Ռեստորա՞ն: Երկու տարի առաջ խնդրեցի, որ միասին կինո գնանք, մերժեցիր: Հիմա ռեստորա՞ն:

Նոնա - Ըհը՛, գիտես, երկու տարվա մեջ շատ բան կարող է փոխվել: Մեր դարը արագության դար է: Ճիշտ չէ՞: Դու էիր ասում: Ը՛ը, ես քեզ դո՞ւր եմ գալիս:

Վիգեն - Ի՞նչ, այս աղջկա հետ ինչ-որ բան է պատահել:

Նոնա - Չէ, չէ, ասա, ես քեզ դո՞ւր եմ գալիս:

Վիգեն - Միշտ... Օհ, Նոնա, կայֆ, ինչպես արտահայտվում է Միկին:

Նոնա - Լավ, ինչ ուզում ես մտածիր, բայց ես քո նկատմամբ անտարբեր չեմ:

Վիգեն - Ի՞նչ... լսիր, հո չե՞ս ծաղրում, երկու տարի առաջ...

Նոնա - Դու էլ ի՞նչ ես՝ երկու տարի առաջ հա երկու տարի առաջ... Երկու տարի առաջ ես դեռ երկրորդ կուրսում էի, իսկ հիմա ավարտում եմ ինստիտուտը...

Վիգեն - *(Ապշած նայում է Նոնային):*

Նոնա - Դու ոչինչ չե՞ս ասում, Վիգ: Ուրեմն դու իմ նկատմամբ անտարբեր ես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Վիգեն - Դա՞ ինչ հիմար խոսք է՝ անտարբեր չեմ, անտարբեր եմ... Մարդն ինչպե՞ս կարող է մարդու նկատմամբ անտարբեր լինել: Մարդը կարող է խմիչքի նկատմամբ անտարբեր լինել, որսորդության, ակվարիումի փոստանիշերի և նույնիսկ ֆուտբոլի նկատմամբ կարող է անտարբեր լինել, բայց...

Նոնա - Ուրեմն ասա, ուրեմն ասա, որ...

Վիգեն - Ես ուրիշի եմ սիրում, Նոնա:

Նոնա - Օյ... Իսկ այդ ո՞վ է, նա՞, որ լիմոնի գույնի անձրևանոց է հագնում, մազերն էսպես... ու կարմիր սաբոներ ունի...

Վիգեն - Նա է, նա է…

Նոնա - Բայց նա շատ փոքր է:

Վիգեն - Ինչո՞ւ է փոքր, երկրորդ կուրսի ուսանողուհի է:

Նոնա - Տեսնո՞ւմ ես, նա երկրորդ կուրսում է, իսկ ես ավարտում եմ արդեն:

Վիգեն - Նոնա, դա արդեն առնվազն ծիծաղելի է: Ես հո դիպլոմի հետ չեմ ամուսնանալու: Եթե այդպես լիներ… որքան գիտեմ, նույնիսկ ակադեմիկոս կանայք կան...

Նոնա - Հա, բայց նա դեռ երեք տարի ունի, կարող է ուզած ընտրությունը կատարել, իսկ իմ տրամադրության տակ ընդամենը երեք օր է մնացել: Ի՞նչ անեմ:

Վիգեն - Ինչպե՞ս թե երեք օր, ի՞նչ երեք օր:

Նոնա - Երեք օր հետո նշանակումներն են: Եթե ես ամուսնության վկայական ցույց չտամ, ինձ շրջան կուղարկեն,

Վիգեն - Ի՞նչ ես ասում: Եվ դու վճռեցիր ամուսնանա՞լ ինձ հետ:

Նոնա - Հա, հետո մամաս էլ խորհուրդ տվեց: Ասաց՝ էլի ամենահարմարը Վիգենն է:

Վիգեն - Օ՜, շատ շոյված եմ, Նոնա: Ջերմ ողջույններս մայրիկիդ:

Նոնա - Շնորհակալություն, Վիգ ջան, ուրեմն հնարավո՞ր է:

Վիգեն - Ինչո՞ւ չէ: Իսկ ի՞նչ կլինի, եթե գրանցվենք զագսում, վկայականը ինստիտուտ տանես ու անմիջապես էլ բաժանվենք: Ինչ ուզում ես ասա, բայց խոսք եմ տվել այն աղջկան:

Նոնա - Հրաշալի կլինի, թե չէ, պատկերացնո՞ւմ ես, ստիպված պետք է շրջան մեկնեի: Քաղաքի աղջիկ և հանկարծ գյուղացի երեխաների ուսուցչուհի... Ծիծաղս գալիս է: Դու փաստորեն փրկում ես իմ կյանքը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Վիգեն - Դատարկ բան է: Բայց սպասիր, ես ավելի խելոք բան մտածեցի: Եթե հարցը երեք օրին է վերաբերում, ապա Մուշեղ քեռին էլ քեզ հետ կամուսնանա:

Նոնա - Ի՞նչ Մուշեղ քեռի:

Վիգեն - Մեր հարևանը:

Նոնա - Նա՞: Նա յոթանասուն տարեկան կլինի:

Վիգեն - Իսկ քեզ համար ի՞նչ նշանակություն ունի: Ավելի հարմար չէ՞: Հնարավոր է, որ նույնիսկ ժամկետից շուտ մեռնի ու բնակարանը քեզ մնա: Պատկերացնո՞ւմ ես, ինչ հաջողություն:

Նոնա - Էո՞ւրջ... տեսնեմ մամաս ինչ է ասում:

Վիգեն - Երաշխավորում եմ, որ մայրիկդ շատ կուրախանա...

(Պարելով ներս են գալիս Միկին, Սոնան, Ջոնին, պարի են կանչում Նոնային ու Վիգենին):

Նոնա - Ասում ես՝ չի՞ մերժի...

Վիգեն - Ո՞ւմ, քե՞զ... Օ՜հ, Նոնա, Նոնա...

Միկի - Կա՛յֆ...

ՏԵՍԱՐԱՆ

Սահակ - *(Դիտում է, թե ինչպես են պարում ինքնամոռաց):* Բայց սպասիր, այս ի՞նչ է կատարվում ինձ հետ: Իմ զավակների յուրաքանչյուր արարքը նյարդայնացնում է ինձ: Ինչո՞ւ: Մի՞թե ես դադարել եմ սիրել նրանց: Ի՜նչ հիմարություն: Կյանքս կտամ նրանց համար: Առանց տատանվելու: Ինչպես պատերազմում: Չէ, պարզապես հանկարծ սկսել եմ չհասկանալ նրանց: Այո, հանկարծ: Որովհետև մինչև հիմա կարծես ամեն ինչ լավ էր: Երբ ուրիշները տրտնջում էին իրենց զավակներից, ես ժպտում էի, իսկ իմ երեխանե՛րը... Ահա և քո երեխաները... Մեկը խոսում է մի այնպիսի բառապաշարով, որ քառասուն բառանոց լեզվային ֆոնդով վայրենիները նրան դուրս կվռնդեն իրենց համայնքից՝ իբրև կիսագրագետի: Իսկ մյուսն էլ որոշել է գիշերը տուն չգալ: Դիսկ է պտտելու: Գիտենք, թե ինչ դիսկեր են: Մենք էլ ենք ժամանակին պտտել: Թե՞... Երբեմն էլ բռնում եմ ինձ, որ ես նրանց նախանձում եմ: Գուցե այն բառը չէ, բայց նախանձում եմ... Նրա համար, որ անհոգ են, լավ են հագնվում, կուշտ են... Եվ պարադոքսն ինչ է. մենք ամեն ինչ անում ենք, որ նրանք անհոգ լինեն, լավ հագնվեն, կուշտ լինեն... Եվ տալիս ենք անզուսպ, խելահեղ, ագահորեն, ասես վրեժ լուծելով պատերազմական մեր խեղճ ու սոված մանկության համար, մեր չապրած պատանեկության համար: Մեզ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

զրկում ենք ու նրանց տալիս: Տալիս ենք ու նախանձում, տալիս ենք ու չարանում, տալիս ենք ու հետն էլ երեսներին շպրտում, թե տեսեք, մենք ձեզ ինչքան ենք տալիս, թե գիտեք, որ մենք չենք ունեցել, որ մենք քաղցած ենք եղել, որ հիմա էլ զրկում ենք մեզ... Երևի չպետք է ասենք: Իհարկե:

(Այտեղից, որտեղ պարում են, սեղան են դուրս բերում Ջոնին ու Մկրտիչը):

Ջոնի - *(Սեղանը դեմ է առել դռանը)*: Արա, էս ո՞վ ա...

Միկի - Արի կլինի շուռ տանք:

Ջոնի - Ի՞նչ ձև...

Միկի - Ամեն ձև, ոչ մի ձև...

Ջոնի - Եքաա...

Միկի - *(Հորը):* Ատեց, մամը թող կորմը ըստեղ դնի... Մենք ցատկոտում ենք, սեղանը խանգարում է... Այսինքն դու էլ ես խանգարում... ժողով-մողով չունե՞ք…

Ջոնի - Ահ, Նոնա, Նոնա:

(Պարելով դուրս են գալիս):

Սահակ - Չէ, բայց սա հո նորմալ բան չէ: Հենց պետք է ասենք: Մի՞թե կարելի է այսպես ապրել: Մինչև ե՞րբ: Փոխանակ նրանք ամաչեն, մենք ենք ամաչում: Մտքումս հազար անգամ ասում եմ, որ հիմա պետք է վճռական քայլերով մոտենալ նրանց ու գոռալ. - Լսեք, էյ, դուրս կորեք այստեղից... Ու հազար անգամ էլ մնում եմ տեղումս կանգնած: Կամ գուցե պետք չէ բղավել: Գուցե անհրաժեշտ է ներս մտնել և մեղմ ու լուրջ խոսել նրանց հետ: Հա, այդ ցատկոտողներն էլ կլսեն քեզ, իսկի չեն էլ նկատի, կամ կկարծեն, թե պարել ես ուզում, կցատկոտեն չորս կողմդ: Ուրեմն ի՞նչ, մենք հնացե՞լ ենք... Բայց ե՞րբ էինք նոր, որ հիմա հնացել ենք... Մեր նորն ո՞ւր գնաց: Եվ այդ ի՞նչն է հնացել բարեկրթությունը, ամոթխածությունը, արժանապատվությունը, պարտքի զգացողությո՞ւնը... Նրանց համար մենք հին ենք, սխալ ենք ապրում : Սխալ է, որ պահում ենք իրենց, որ զրկում ենք մեզ, որ հոգում ենք նրանց ապագայի մասին... Սխալ է... Սխալ է, բա ի՞նչ…

(Ներս է մտնում Նազելին՝ հրելով սկուտեղներով լի սայլակը):

Նազելի - Այդ ո՞ւմ հետ ես խոսում, Սահակ:

Սահակ - *(Մռայլ):* Մենախոսություն է:

Նազելի - Լինել, թե չլինե՞լ:

Սահակ - Չէ, ավելի բարդ, ինչպես լինել...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նազելի - Սահակ, Սոնայի մասին պետք է լուրջ մտածել...

Սահակ - Լո՞ւրջ, իսկ ինքն ուզո՞ւմ է: *(Ցույց է տալիս սենյակը):* Տես, տես ինչպես է գալարվում, տես ինչ թռիչքներ է գործում... մի պարի մեջ նրանք ՊԱՊ համալիրի տասը նորմա են հանձնում... Այնինչ հոգիս հանեց, մինչև թուղթ ճարեցի, որ ֆիզկուլտուրայի դասերից ազատվի...

Նազելի - Սահակ, Սոնան դասի չի գնում:

Սահակ - Ի՞նչ... *(Թուլացած ընկնում է աթոռին):*

Նազելի - Ի՞նչ ասեմ, քանի օր է թաքցնում էի քեզանից, մտածում էի, թե ինքս կկարգավորեմ...

Սահակ - Սպասիր, բա ո՞ւր է գնում...

Նազելի - Չէ, անհանգստանալու բան չկա, ուղղակի դասերից փախչում են ու կոկտեյլանոց են գնում երաժշտություն լսելու: Բուֆետապանը ճարպիկ գործարար է: Հաճախորդ գրավելու համար ինչ-որ տեղից արտառոց երաժշտություն է գտնում ու պտտեցնում իր մագնիտաֆոնով: Դե, ջահելներն էլ հավաքվում են:

Սահակ - Եվ դու ասում ես՝ անհանգստանալու բան չկա՞: Ես հիմա կսպանեմ նրան:

Նազելի - Այ, դրա համար էլ թաքցնում էի քեզանից: Դու կամ բոլորովին չես ուզում հետաքրքրվել երեխաներով, կամ էլ ողբերգություն ես սարքում: Ի՞նչ է պատահել: Դու դասերից չե՞ս փախել, էլ ի՞նչ ուսանող... Ինքդ ես քանի անգամ պատմել երեխաների մոտ... Մենք հիանալի երեխաներ ունենք, Սահակ: Ուղղակի ջահել են, մի քիչ քամի կա գլուխներում...

Սահակ - Փոթորիկ...

Նազելի - Չէ, թույլից չափավոր: Կանցնի, Սահակ ջան, կարևորն այն է, որ նրանք մաքուր, ազնիվ երեխաներ են: Ուղղակի կյանքում դեռ ոչինչ չեն կորցրել, որ ափսոսեն, գնահատեն: Ուրիշները մեզ երանի են տալիս; Սոնան... Սոնան գիտե՞ս ինչ հոգի ունի: Մեր դիմացի հարևան Թագուշ մորաքույրը հիվանդացել էր, մի շաբաթ դուրս չեկավ նրա տնից...

Սահակ - Կանչեմ ճակատը համբուրե՞մ:

Նազելի - Ո՞ւմ:

Սահակ - Թագուշ մորաքրոջ... Սոնայի, էլ ո՞ւմ...

Նազելի - Ինչո՞ւ ես այդպես խոսում, Սահակ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ - Բա ինչպե՞ս խոսեմ, տիկին Նազելի... Ինքդ օրակարգն առաջարկում ես, ինքդ հաստատում ես, ինքդ էլ հանդես ես գալիս զեկուցումով, իսկ երբ ես ուզում եմ արտահայտվել, չես թողնում։

Նազելի - Ախր ես գիտեմ քո արտահայտվելը։

Սահակ - Գիտե՞ս։ Դե որ գիտես, ասա, ի՞նչ անեմ։ (Ցույց է տալիս ձեռքին բռնած գրքույկը)։ Տղայիդ ուսանողական գրքույկն է, սեղանին ընկած էր։ Նայիր, նայիր ու պարծեցիր... Ամոթից գետինը կարելի է մտնել։ Խնդրեմ... Հայ գրականություն՝ երեք, գրաբար՝ երեք... Սրանք գրաբար է՞լ են անցնում, պատմություն՝ երեք...

Նազելի - Պահիր, պահիր...

Սահակ - Պահե՜մ, բա ինչ անեմ, թանգարանում պետք է պահել...

Նազելի - Դա քո ուսանողական գրքույկն է, Սահակ ջան, հանկարծ ձեռքս ընկավ...

Սահակ - Ի՞նչ, ի՞մ... նրանք տեսե՞լ են... *(Շտապ գրպանն է դնում)։*

Նազելի - Չէ...

Սահակ - Լավ, հիմա ինձնից ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ ես հոգիս պղտորում, ինչո՞ւ ես նրանց մասին պատմում ինձ...

Նազելի - Բա ո՞ւմ պատմեմ, սիրտս լցվում է, ում հետ գնամ կիսվեմ... Ես մայր եմ, չէ՞... *(Լաց է լինում)։*

Սահակ - Համոզեցիր... Քեզ համարիր կիսված, Նազիկ ջան։

Նազելի - Բա ո՞ւմ գնամ ասեմ, որ այն միջատաբանը Սոնային առաջարկություն է արել։

Սահակ - Ո՞վ, Հրաչյա՞ն...

Նազելի - Հա...

Սահակ - Խե՜ղճ տղա...

Նազելի - Ու վաղն էլ ծնողներին բերելու է, որ ծանոթանան մեզ հետ։

Սահակ - Խե՜ղճ ծնողներ...

Նազելի - Քեզ շատ չկա, դու նրանց մոտ էլ նույնը կասես։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ - Կասկած չունենաս... Ասելու եմ՝ հարգելի բարեկամներ, ես երջանիկ եմ, որ այսօրվանից թոկը հանում եմ իմ վզից ու ձեր վիզն եմ զցում: Վայելեք: Ի՞նչ, գալո՞ւ են: *(Հրճվանքով):* Ուրեմն գալո՞ւ են:

(Սենյակի դուռը շրխկոցով բացվում է: Հայտնվում է Մկրտիչը՝ պարելով աղմուկի տակ):

Միկի - Մամ, սենդվիչ...

Սահակ - Ի՞նչ... Վերջ, ոչ մի բան...

Միկի - Մամ, հիշո՞ւմ ես, հարցնում էիր ժաժքը որն է... Տես ինչ են անում, ա՛յ, ժաժքը դա է...

Սահակ - Ի՞նչը... ժա՞ժքը... Դու դեռ չես տեսել, թե ինչ է ժաժքը, Մկրտիչ տղա, վաղը դու և քույրդ կիմանաք, թե ինչ բան է ժաժքը: Այո, մենամարտը շարունակվում է: Այո՛...

Նազելի - Քեզ ի՞նչ է պատահել, Սահակ...

Սահակ - *(Սկսում է ցատկոտել տղաների պես):* Ոչ մի բան... Հանկարծ հասկացա, որ սխալ ենք ապրել մինչև հիմա, Նազիկ... Ես իմ զավակներին ազատություն եմ տալիս...

Միկի - Մալադեց, ատեց...

Սահակ - Այս րոպեից, չէ, հենց այս վայրկյանից դուք ազատ եք, ապրեք ոնց ուզում եք, ժաժք արեք մինչև առավոտ... Դուք ճիշտ եք, մենք սխալ ենք, մենք էլ պիտի ձեզ պես ապրենք:

Նազելի - Խելագարվեցի՞ր, այ մարդ...

Սահակ - Խելոքացա, գնացինք, Նազիկ: Կեցցե՛ ազատությունը... Ես էլ մտածում էի, թե ո՞րն է ելքը, ո՞րն է ելքը...

Միկի - *(Դուռը ցույց տալով):* Սա է, ատեց...

Սահակ - Սա՞ է... Այո, այո, շնորհակալություն, հենց դա է... Մինչև նոր հանդիպում, բարեկամներ... *(Նազելիի թևը բռնած՝ դուրս է գնում):*

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

(Դեռ վարագույրը չբացված, լսվում է, հեռախոսի զանգը՝ համառ, միօրինակ: Նույն սենյակը: Ոչ ոք չկա: Ամեն ինչ թափված է: Ներսի սենյակներից լսվում են Մկրտիչի և Սոնայի ձայները):

Միկի - Մամա՛...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոնա - Մամա՜...

Միկի - Մա՜մա...

Սոնա - Մա՜մա...

Միկի, Սոնա - *(Միասին):* Մա՜մա...

Սոնա - Մա՜մա... Լսիր, ուրեմն մերոնք գիշերը չեն եկել... Դե գոնե դու վերցրու։

Միկի - Ինչի՞, դու սխա՞լ կվերցնես։

Սոնա - Միկի, ես հագնված չեմ։

Միկի - Իսկ ես հագնվա՞ծ եմ։ Դե, վերցրու, ներվերս քայքայվեցին... Գիտես, որ քեզ են ուզում, էլի...

Սոնա - Իսկ ես ոչ մեկին էլ չեմ ուզում։ Ես քնել եմ ուզում։ Մա՜մա...

(Մկրտիչը դուրս է գալիս կիսամերկ, վերցնում է լսափողը):

Միկի - Լսում եմ։ Ի՞նչ, ի՞նչ, չէ, չէ, սա առաջ էր խորովածանոց, հիմա գժանոց է։ Գիժը դու ես, որ առավոտ գիշերով խորոված ես ուտում։ Աննորմալ, խա՞շ է, ինչ է...

Սոնա - *(Հայտնվում է գիշերանոցով):* Լա՜վ առավոտ է... Ժամը տասներկուսն է...

Միկի - Ի՞նչ... Ես սեմինար ունեի... այ քեզ խոխմա... Կորանք... Լավ, մաման ինչու չի արթնացրել...

Սոնա - Ասում եմ գիշերը չեն եկել...

Միկի - Այ քեզ փոստ... Ուրեմն հայրիկը դրա համար էր քաղաքական լոզունգներ հրապարակում... Կեցցե ազատությունը... Բա որտե՞ղ կլինեն։

Սոնա - *(Թոթվելով ուսերը):* Գոնե հավաքեին նոր գնային... Այս ի՞նչ եք արել, բարձրագույն կրթությամբ խոզեր...

Միկի - Թերի, Սոնա, թերի... Բայց ի՜նչ ժաժք էր... Շալվարս ո՞ւր է...

Սոնա - Սա չի՞...

Միկի - Հա, բայց ո՞վ է դաշնամուրից կախել։ Բա կոշիկնե՞րս որտեղ կլինեն։ *(Մտնում է սենյակ):*

Սոնա - Բա ես ի՞նչ անեմ, մաման չի արդուկել զգեստս։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - *(Մենյակից):* Չի՛ արդուկել... Եքա աղջիկ ես, ինքդ արդուկիր ու հետն էլ իմ բլուզը... Այ էստեղ դու պիտի ասեիր բեսամթ մերսի, ախպեր...

Սոնա - Է, հիմա սա ո՞նց պիտի հավաքենք…

Միկի - Ո՞վ պիտի հավաքի...

Սոնա - Սպասենք մաման գա...

Միկի - Չէ, հայրիկը որ ասում էր՝ «Կեցցե ազատությունը», ուրեմն մաման չի գա։

Սոնա - Ինչպե՞ս թե չի գա։ Բա մենք ո՞նց պիտի ապրենք։

Միկի - Մենք էլ ամեն օր կհավաքվենք ու...

(Դռան զանգ):

Սոնա - Մամա՛ն... (Նետվում է դեպի դուռը։ Նրան ինչ-որ բան են հարցնում, շրջվում է դեպի Մկրտիչը)։ Միկի, փլավքամիչը բեր...

Միկի - Ինչը՞...

Սոնա - Փլավքամիչը...

Միկի - *(Կուչ ու ձիգ անելով):* Փլավքամիչն ի՞նչ է, որտե՞ղ է...

Սոնա - *(Նյարդային շարժումով մտնում է խոհանոց):* Կարծում ես ե՞ս գիտեմ։ *(Մոտենում է դռանը):* Մենք փլավքամիչ չունենք։ Ինչպե՞ս, որտե՞ղ, հա, դա՞... *(արագ մտնում է խոհանոց, բերում է փլավքամիչը հանձնում):* Սա՞... վերցրեք խնդրեմ...

Միկի - *(Ծիծաղում է):* Խնդալուց մեռանք... Հարևանը տեղը գիտեր, իսկ դու...

Սոնա - Դու գիտեիր, հա՞... *(Ծաղրում է):* Փլավքամիչն ի՞նչ է... չամիչ է... Գնա հաց բեր։

Միկի - Ե՞ս։ Ատեցը չի՞ առել։ Ախ, հա... Դո՛ւ գնա, հա՞, Սոն ջան...

Սոնա - Ես քեզ համար եմ ասում։ Չգիտե՞ս, որ ես հաց չեմ ուտում...

Միկի - Ես էլ չեմ ուտում... Բա ի՞նչ պիտի ուտենք...

Սոնա - *(Լացակումած):* Այս բոլորի մեղավորը դու ես, դու... Քո մեծամիտ խոսելով... Առաջ որ մաման, պապան մի օրով տեղ էին գնում, մաման երեք օրվա ճաշ էր պատրաստում մեզ համար։ Միայն ճա՞շ, էլ զանազան սալաթներ...

Միկի - Ա՛խ, մի հատ մյասնոյ լիներ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոնա - Էլ թխվածքներ, էլ թթվաշոռի բլիթներ՝ սերուցքով...

Միկի - Լսիր, Սոնա, դա սադիզմ է... ես մեռնում եմ... Ես մամային եմ ուզում։

Սոնա - Ո՞վ չի ուզում։ Իսկ հիմա գնացել է ու ոչինչ չի թողել... Քո պատճառով...

Միկի - Դու էլ մի պտուղը չես... Դիսկի մասին ե՞ս ասացի...

Սոնա - Դո՛ւ հայրիկին ջղայնացրիր...

Միկի - Դե ձենդ կտրի, թե չէ...

Սոնա - Ի՞նչ պիտի անես...

Միկի - Քիթ ու մռութդ կջարդեմ...

Սոնա - Բա որ հայրիկը եկավ...

Միկի - Ախ, ուր էր գար...

(Զանգի ձայն)։

Սոնա, մերոնք...

(Բացվում է, դուռը, ներս է մտնում մի կին)։

Կինը - Բարև ձեզ...

Սոնա - Բարև ձեզ, համեցեք, նստեք...

Կինը - Մայրիկդ տանը չի՞։

Սոնա - Ոչ, դուրս է եկել... Երևի հիմա կգա։

Կինը - Հա... *(ձեռքը մեկնում է Սոնային)։* Դուք ողջ լինեք...

(Ձեռքը մեկնում է Միկիին)։ Դուք ողջ լինեք... Ի՞նչ ասեմ՝ աշխարհի օրենքն է։

Միկի - Ը, այո... բայց...

Կինը - Երեկ իմացա, ոնց որ աշխարհը գլխիս շուռ գար, ախր լեզուս էլ չի պտտվում, հանգուցյալի հետ շատ մոտիկ էինք։

Միկի - Այո, բայց...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Կինը - Ախր քաղաքը ապրելու տեղ չի, ապրելու տեղ, կողքիդ մարդ է մեռնում, չես իմանում։ Գյուղը ափսոս չէ՞ր. բոլորը ոնց որ մի տան նման ապրեին, մեկի ուրախությունը ամենքինն էր, մեկի ցավը ամենքինը։ Էս անտեր քաղաքում չես իմանում, թե կողքիդ ով է ապրում, երեսուն տարվա հարևանները իրար չեն ճանաչում, մի շենքում էս մի տան մեջ քելեխ է, էն մի տան մեջ հարսանիք...

Միկի - *(Սոնային):* Լսիր, դու որևէ բան հասկանո՞ւմ ես։

Սոնա - *(Թոթվում է ուսերը):* Ներեցեք, մորաքույր...

Կինը - Է, բա ինչ կլինի, թափված կլինի, բա ի՞նչ... հե՞շտ է... լեզուս էլ չի պտտվում, հանգուցյալի հետ միասին ենք մեծացել, բա, աղջիկ ջան, լեզուս էլ չի պտտվում, երե՞կ վերցրին...

Միկի - Ո՞ւմ վերցրին...

Կինը - Լեզուս էլ չի պտտվում՝ հանգուցյալին... ախր, հեռու ձեզանից՝ հիմիկվա երեխաներն էլ երեխաներ չեն, տղիս ասում եմ, բա ամոթ չի, բարեկամ մարդ է, ինչու չեք գնում, ասում է՝ դե գնալ-գալ չենք ունեցել ու իրար մոռացել ենք, էգուց փողոցում տեսնենք, չենք ճանաչի երեխեքին։ Ամոթ է, չէ՞... Մարդս մարդով է մարդ, մարդս օտարի հետ բարեկամ է դառնում, բարեկամիդ ինչո՞ւ ես կորցնում... Բայց դե հիմիկվա երեխաները մարդու լսո՞ւմ են... Բա, Մարիամ ջան, անունդ Մարիամ է, չէ՞...

Սոնա - Սոնա է։

Կինը - Տեսնո՞ւմ ես, անունդ էլ եմ մոռացել։ Դե որ գնալ-գալ չունենանք, ի՞նչ կլինի, սա էլ Կարոն է, չէ՞։

Սոնա - Չէ, Մկրտիչն է։

Կինը - Վայ, ինչի՞...

Միկի - Ստացվեց, էլի... Ահա, եղավ, եղավ, մեզանից մի հարկ ներքև են ապրում, շփոթել եք։

Սոնա - Ի՞նչ ես խոսում, ներքևում ի՞նչ Կարո կա։ Կարոն վերևում է ապրում։

Միկի - Վայ, վերևում Մարիա՞մ կա, Մարիամը ներքևն է շեկ կին չի՞…

Կինը - Կարծես թե... Հիմա մազերով կնի՞կ կճանաչես...

Սոնա - Բա Կարոն ո՞վ է։

Միկի - Շատ գիտեմ։

Կինը - Ուրեմն սա, լեզուս էլ չի պտտվում, հանգուցյալ Սաղաթելի տունը չի՞։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոնա - Չէ, հորաքույր, մի հարկ ցած իջեք...

Միկի - Դե հա, էլի, կարծեմ նրանց տանն է մարդ մահացել... Ահագին շշեր էին բերում...

Կինը - Դա կլինի, լեզուս էլ չի պտտվում, հանգուցյալը խմիչքի հետ շատ սեր ուներ... Վայ, կներեք, աղջիկ ջան, տղա ջան, շատ կներեք... Ձեր քաղաքն էլ էս է, էլի...

Միկի - Ոչինչ, ոչինչ, մայրիկ, ը՛ը, դուք ողջ լինեք...

(Լուրջ սեղմում է ձեռքը: Կինը հեռանում է):

Միկի - Վայ, քիչ էր մնում լեզվիցս թռներ՝ հիշում եմ, որ նման հանդիսավոր պահերին մի բան էլ են ասում ու քիչ էր մնում ասեի, վա՛յ...

Սոնա - *(Ծիծաղելով):* Ի՞նչ ասեիր...

Միկի - Քիչ էր մնում ասեի՝ տարոսը ձեզ...

Սոնա - Ինչի՞, տարոսը ո՞վ է...

(Դռան զանգ):

Միկի - *(Ծիծաղելով):* Տարո՞սը, դա կլինի...

(Ներս է մանում հսկիչը):

Հսկիչ - Բարև ձեզ...

Միկի - Լեզուս էլ չի պտտվում՝ հանգուցյալը ներքևի հարկում է ապրում...

Հսկիչ - Ի՞նչ հանգուցյալ...

Միկի - Իսկ դուք ո՞ր հանգուցյալին էիք ուզում:

Հսկիչ - Ես ոչ մի հանգուցյալ էլ չեմ ուզում, հանգուցյալն ի՞նչ մի ուզելու բան է, երիտասարդ... տեղափոխվո՞ւմ եք:

Միկի - Ոչ...

Հսկիչ - Վերանորոգո՞ւմ եք:

Միկի - Ոչ, ոչ:

Հսկիչ - *(Շարունակելով զննել շրջապատը, իրերը):* Բարի, բարի... բերեք գրքույկը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոնա - Գրքույկը՞...

Հսկիչ - Էլեկտրականության...

Միկի - Ի՞նչ գրքույկ...

Հսկիչ - Էլեկտրական վարձի վճարումների գրքույկը:

Միկի - Հա, Սոնա, բեր...

Սոնա - Որտեղի՞ց...

Միկի - *(Թոթվում է ուսերը):* Էլեկտրականությանն ի՞նչ գրքույկ: Ուսանո՞ղ է, ինչ է...

Հսկիչ - Լսեք, դուք այստեղ վարձո՞վ եք ապրում:

Սոնա - *(Ուրախացած):* Այո, այո...

Հսկիչ - Ուսանողնե՞ր եք:

Միկի - Իսկույն երևո՞ւմ է...

Հսկիչ - Իսկ ինչքա՞ն վարձ եք տալիս:

Սոնա - Վա՞րձ: Ո՞ւմ:

Հսկիչ - Տանտերերին:

Միկի - Տանտերերի՞ն:

Հսկիչ - Մի վախեցեք, մի վախեցեք, ես էլ եմ ուսանողներ պահում, հետաքրքիր է... Սնունդն իրե՞նք են տալիս, աղջիկ ջան:

Սոնա - Ովքե՞ր:

Հսկիչ - Տանտերերը:

Սոնա - Այո, իհարկե:

Հսկիչ - Իսկ ինչքա՞ն եք վճարում:

Միկի - *(Ջղային):* Ոչ մի կոպեկ...

Հսկիչ - *(Հեգնելով):* Էդ ինչի՞... բարեգործական ընկերությո՞ւն է, ինչ է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - Լսեք, քեռի, մեզանից ի՞նչ եք ուզում, ոչ մի կոպեկ էլ չենք վճարում, պրծա՞նք:

Հսկիչ - Չէ, դու կարծում ես, թե ես ֆինբաժնի՞ց եմ... հարկի համա՞ր եմ ասում: Չէ, չէ, քավ լիցի, ես էլցանցից եմ, ես լույսի մարդն եմ... լույսի մարդը...

Միկի - Իսկ կի՞նն ով է:

Հսկիչ - Ի՞նչ կին:

Միկի - Լույսի կինը:

Հսկիչ - Էհ, օյինբազ... դե լավ, բա գրքույկը ո՞նց տեսնեմ:

Սոնա - Վաղն անցեք, մայրիկը տանը կլինի...

Հսկիչ - Մայրիկը՞... ուրեմն դուք տնվորներ չե՞ք:

Սոնա - Ոչ, քեռի, ներեցեք, խնդրում եմ, կատակում էինք...

Հսկիչ - Հա... Դե, իհարկե, ինչո՞ւ պետք է վարձ տաք, իհարկե... Գրքույկի տեղն ինչո՞ւ պետք է իմանաք, իհարկե...

Միկի - Իհարկե, ցտեսություն... իհարկե... բարևեք ձեր տնվորներին... իհարկե...

(Մարդը հեռանում է):

Սոնա - Հիմար բան դուրս եկավ:

Միկի - Դե լավ... ուտելու մի բան տուր, Սոնա...

Սոնա - Ի՞նչ տամ, է՛... Այսինքն եթե ձու լինի, ես կարող եմ խաշել... *(Մտնում է խոհանոց, ձայնում է):* Չկա...

Միկի - Բայց էս մամայի արածը... Լավ, սա ի՞նչ կատակ է: Լավ, հայրիկ ջան, սա ի՞նչ մենամարտ է: Մա սպանություն է օրը ցերեկով: Ըստ որում, ինչպես Ջոնին կասեր՝ կանխամտածված սպանություն՝ վայրագ մեթոդներով:

(Հեռախոսը զնգում է):

Սոնա - Մաման... *(Վերցնում է):* Այո, այո, քեզ են ուզում...

Միկի - Հելլո, Ջոնի... Եքա էր... Դեռ հորիզոնակա՞ն ես... - Ի՞նչ Սելիմ Սիմբո... Նոնա՞ն է ճարել... Օ՛հ, Նոնա, Նոնա... Մեզ մո՞տ... Արի կլինի... Երեկվա մեր ավերակները դեռ ծխում են... *(Սոնային):* Սոն... Սելիմ Սիմբո... Հը՞... *(Սոնան թափ է տալիս ձեռքը):* Չէ, չէ,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

սոված փորին ի՞նչ Սելիմ Սիմբո... Հա, գրողի ծոցը... Ջոնի: Ինձ համար մեկ է, որ գրողի... Մենակ թե կին վիպասան չլինի... Չէ, ես փաս եմ... բայ-բայ…

Սոնա - Ախր էս ի՞նչ է, է՛... Ոչ մի բան իր տեղում չէ... Ջուն գտա, հիմա էլ թաս չեմ գտնում, որ խաշեմ... Որտե՞ղ է դնում մաման, ոչ աղը կա, ոչ հացը կա, ոչ լուցկի կա...

Միկի - Դու ջուր էլ չես գտնի:

Սոնա - Լավ, բայց մերոնք որտե՞ղ պետք է լինեն՝ կամ հորաքրոջ տանը, կամ մորաքրոջ տանը: Ախր մամային էլ ասացի՝ մամ ջան, Հրաչիկի ծնողները գալու են... ախր ո՞նց կարող էր թողնել ու գնալ: Հիմա որ գան, ես ի՞նչ եմ ասելու: Թե զանգեմ ասեմ՝ չգան, ամոթ է: Ես ի՞նչ անեմ, ես ի՞նչ անեմ...

Միկի - Հենց որ գան, երգիր՝ «Ասում են, ուռին, աղջիկ էր ինձ պես»: Խնամին էլ կնվագակցի... երկրորդ ջութակ է, չէ՞... Սոն, միշտ ասում են, թե առաջին ջութակ պետք է ծնվել... Իսկ երկրորդ պետք չէ՞... Ես այսօր կհարցնեմ խնամուն...

Սոնա - *(Հավաքում է համարը):* Գոհար մորաքույր, բարև ձեզ... մաման ձեր տանը չէ՞... Չէ... մտածեցի որ... Չէ, չէ, հենց այնպես... ներեցեք... *(կախում է):* Լուսիկ մորաքույր, բարև ձեզ, Սոնան է... ի՞նչ... ես, ես մամային եմ ուզում *(Մկրտիչին):* Բռնեցի, Միկի…

Միկի - *(Լսափողը խլելով):* Մամ, մամ, էս ի՞նչ ես անում, մամ... սոված մեռնում եմ... Սոնա՞ն, Սոնան խոհանոցի տեղն էլ չի գտնում: Ո՞նց թե քո գործը չի... Մամ, մամ, էդ դո՞ւ ես... Միկին է, մամ, բա ո՞նց թե քո գործը չի... *(Սոնային):* Բան չեմ հասկանում, Սոն, սա մաման չի…

Սոնա - *(Վերցնում է լսափողը):* Մամ, մամ ջան... ինչո՞ւ տուն չեք գալիս: Հայրի՞կը... հայրիկը ի՞նչ... մեզ ազատությո՞ւն է տալիս... Մե՞զ... մեզ էլ, ձե՞զ էլ... Մամ, դիտմա՞մբ եք անում: Բա էսօր Հրաչյայի մաման ու պապան գալու են, ասել եմ, չէ... Չէ, լաց չեմ լինում, բայց այդպես ո՞նց կլինի... Հա, լաց եմ լինում... Չէ, ես ազատություն չեմ ուզում... Դուք եք ուզո՞ւմ... Մամ ջան, հայրիկին ասա՝ այսօր եկեք, հետո ինչ ուզում եք արեք... Հա՞, մամ ջան, կգա՞ք... հետո էլի կգնա՞ք...

(Տրամադրությունների փոփոխություն):

Միկի - Ասա, ի՞նչ ուտենք...

Սոնա - Հիմա գալի՞ս եք... Չորսին - հինգի՞ն...

Միկի - Ասա, ի՞նչ ուտենք... *(Լսափողի մեջ):* Բա ի՞նչ ուտենք:

Սոնա - Ասում է պահարանում դրամ կա, վերցրեք ինչ ուզում եք արեք...

Միկի - Դրամն ի՞նչ անենք...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոնա - Անջատեց։

Միկի - Հայրիկ... դե լավ, ատեց... *(Շշերից մեկից լցնում է բաժակը՝ խմում, նորից է լցնում, խմում):*

Սոնա - Գժվեցի՞ր, ինչ է...

Միկի - Հա *(միացնում է մագնիտաֆոնը):* Հու... Հուզո Ֆորսթի... հու, հու, հու, հու, Հուզո Ֆորսթի... *(Սկսում է պարել, Սոնային էլ է քաշքշում, ստիպում պարել)* Հու, Հուզո Ֆորսթի...

Սոնա - Բաց թող, գլուխս պտտվում է...

Միկի - Սովից է, Սոն ջան, իմն էլ... ու մեկ էլ անտերությունից... Ա՜խ, ատեց, ատեց...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

(Նույն սենյակը, նույն պատկերը: Ոչինչ չի փոխվել):

Սոնա - Միկի, ախպեր ջան, ելք չկա, եկ դասավորենք:

Միկի - Ինչ անե՞նք: Սպասիր, հիմա մերոնք կգան:

Սոնա - Վախենում եմ նրանք ավելի շուտ գան: Օգնիր, Միկի ջան, գոնե սեղանը հավաքենք:

Միկի - Օ՜, ժամանակներ, օ՜, բարքեր... Տեսեք, թե ինչով են զբաղված ապագա անվանի դաշնակահարուհի ու մեծահռչակ բանաստերը: Բա սա տղամարդու գո՞րծ է:

Սոնա - Ես որ անում եմ, դու սուս մնա, հանկարծ մատս որ ցավեց, կորած եմ, շուտով փակ երեկո եմ նվագելու:

Միկի - Լսիր ինչո՞ւ եք փակ նվագում, ամաչո՞ւմ եք մարդկանց առաջ ելույթ ունենալ:

(Զանգ):

Սոնա - Ախ, սա հաստատ մաման է:

Միկի - *(Բացում է դուռը):* Այո, բայց մերը չէ, համեցեք:

Սոնա - Վայ... *(Փախչում է իր սենյակը):*

(Ներս են մտնում Հրաչյան և նրա ծնողները):

Հրաչյա - Բարև, Միկի:

Աննա - Օ՜, եղբա՞յրն է, ինչ հաճելի տղա է:

Գուրգեն - Գուրգեն:

Միկի - Բարև ձեզ, համեցեք, կներեք, երեկոյան ժա… միջոցառում ունեինք, չենք հասցրել հավաքել: Նստեք, խնդրեմ... Ա... ոչ, այդտեղ դիսկեր են... ը... ժամացույցն ի՞նչ գործ ունի այդտեղ... ը...

Հրաչյա - Դե լավ, լավ, հիմա կհավաքենք... Սոնան ո՞ւր է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - *(Գլխով ցույց է տալիս):* Պարապում է...

Աննա - Իսկ ձեր հարգարժան ծնողները տանը չե՞ն...

Միկի - *(Մեկուսի):* Հարգարժան... Հիմա ուր որ է կգան...

Սոնա - Բարև ձեզ... Ներեցեք...

(Տղաների հետ շտապ-շտապ, բայց ճարպկորեն և վստահ հավաքում է սենյակը):

Աննա - Օ՜, Սոնան սովոր ձեռք ունի... Տեսնո՞ւմ ես, Գուրգեն…

Միկի - Չտեսնված...

Գուրգեն - *(կամացուկ):* Ավելի լավ կլիներ չտեսնեինք...

Աննա - Էլի՞ սկսեցիր...

Գուրգեն - Իսկ դու ինչ է, չե՞ս տեսնում: Այստեղ մեզ ոչ ոք էլ չէր սպասում: Մերժման ավելի գեղեցիկ ձև ես չէի տեսել...

Աննա - Վերջ տուր: Ոչ մի տարօրինակ բան չկա: Ընդհակառակը, արդեն մեզ ես հարազատներ են համարում... դրա համար էլ ձևականությունների ետևից չեն ընկնում...

Գուրգեն - Բայց հո կարելի՞ էր հավաքել տունը:

Աննա - Մեր տունն էլ կարելի է հավաքել... երբ ես տանը չեմ...

Գուրգեն - Դե գիտես ինչ...

Աննա - Գիտեմ, վերջ տուր... Եվ ժպտա... ժպիտը քեզ սազում է...

Միկի - *(Սոնային):* Սոն, ես պոկվեցի...

Սոնա - Ո՞ւր...

Միկի - Ցվրվում եմ...

Սոնա - Միկի, ախպեր ջան, ինձ մենակ մի թող...

Միկի - Ռաբիս-ռաբիս մի խոսա... Դու հարազատներիդ շրջապատում ես...

Սոնա - Մի գնա, Միկի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - Գործեր կան...

Սոնա - Ստոր...

Միկի - Հաջողություն...

Սոնա - Տականք...

Միկի - Երջանկություն եմ ցանկանում...

Սոնա - Ճիվաղ...

Միկի - Մի բարձի ծերանաք...

(Դուրս է թռչում):

Սոնա - *(Սաստիկ հուզված է, բայց տիրապետում է իրեն):* Ներեցեք ինձ, խնդրում եմ: Ես ձեզ համար իսկույն թեյ կբերեմ:

Գուրգեն - Թերևս հարկ չկա, հավանաբար մեկ ուրիշ...

Աննա - Բեր, աղջիկս... Հրաչյա, օգնիր Սոնային...

(Հեռանում են):

Գուրգեն - Աննա, ըստ երևույթին, ես հակառակը պիտի ասեի, որպեսզի դու իմ ասածն անեիր: Ճիշտ չե՞մ:

Աննա - Իսկ դու փորձիր թեկուզ մի անգամ...

Գուրգեն - Քո դիրքն այս հարցում ինձ պարզապես զարմացնում է: Ի՞նչ է, ես իրավունք չունե՞մ...

Աննա - Սիրելիս, իմացիր, որ դու տանը միշտ էլ առաջին ջութակ ես, աշխատիր նվագախմբում նույնը լինել... Այնինչ քսան տարի է, ինչ երկրորդ ջութակ ես, միայն երկրորդ, աստված իմ:

Գուրգեն - Ե՞ս եմ առաջին ջութակ: Ե՞ս: Ես մեր տանը իսկի շվի էլ չեմ: Այո, այո, շվի... Առաջին ջութա՛կ... Ես ավելի շուտ թմբուկ եմ, որին ուզած ժամանակ հարվածում եք դու և քո տղան:

Աննա - Ինչքան ես սիրում ինքնանվաստանալ: Դու դրանից ուղղակի հաճույք ես զգում...

Գուրգեն - Ճիշտ չե՞մ: Այդ դեպքում ինչո՞ւ ենք այստեղ նստել-մնացել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աննա - Քեզ համար:

Գուրգեն - Ինձ համա՞ր:

Աննա - Քեզ համար:

Գուրգեն - Եթե այդպես է, ես գնում եմ: Մի բոպե անգամ չեմ մնա: Ես ինձ ստորացված եմ զգում: Գալիս ենք, իսկ մեզ դիմավորող չկա: Տունն այնպես թափթփված է, ասես մեծ լվացք են սկսում կամ էլ քիչ առաջ սրսկել են ժանտախտի դեմ... Ես Սոնայի դեմ ոչինչ չունեմ, բայց որտե՞ղ են նրա ծնողները... Նրա հայրը կարծեմ...

Աննա - Ժուռնալիստ է...

Գուրգեն - Բա չէ... սովորական սրբագրիչ է, տեխնիկական աշխատող... և հարկ չի համարում ընդունել մեզ: Ինչո՞ւ: Թե՞ Հրաչյան է արատավոր... Նոր եմ հասկանում, թե որքան իրավացի էր հայրս, երբ ասում էր. «Մեղուս լինի, մեղրը Բաղդադից էլ կբերի»:

Աննա - Եվ մեղուն դու էիր, հա՞...

Գուրգեն - Ես էի...

Աննա - Հիշում եմ, ամբողջ օրը տզզում էիր...

Գուրգեն - Աննա, վերջ տուր, խնդրում եմ, գնանք, ինչի՞ համար ենք նստել...

Աննա - Քեզ համար:

Գուրգեն - Ինձ համա՞ր:

Աննա - Քեզ համար:

Գուրգեն - Ցնդել կարելի է:

Աննա - *(Հուզված, լիրիկական);* Գյուղից եկած ջահել, սիրուն տղա էիր: Նոր էիր ընդունվել կոնսերվատորիա: Հիշո՞ւմ ես: Ասում էիր. «Քուր ջան, քեզի մեկ օր չտեսնիմ՝ մահ է»:

Գուրգեն - Այո, այսպես թե այնպես կյանք չէ:

Աննա - Ասում էիր՝ մեկ անգամ թուշդ պագնեմ նե, աշխարհես բան չեմ ուզե: Ուր որ երթաս՝ կուգամ ետևեդ մինչև աշխարհքիս վերջը:

Գուրգեն - Այո, տեղ հասանք... վաղուց իջնելուս ժամանակն է:

Աննա - Ինքդ էլ բոյով, սիրուն, հոնքերդ սև, ծիծեռնակի պոչ... աչքերդ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գուրգեն - Հա մի, սիրո՛ւն...

Աննա - Դու հիմա էլ սիրուն ես, թե չէ ինչո՞ւ պետք է միկրոբիոլոգին թողած, երկրորդ ջութակի հետ ամուսնանայի: Ընկերուհիներս ո՛նց էին նախանձում...

Գուրգեն - Հա՛ մի, նախանձում...

Աննա - Հիմա էլ են նախանձում... Եվ ո՛նց էիր սիրում... Սիրտս այնպես էր ցավում, որ մերոնք քեզ չէին ընդունում, չէին ուզում, որ մենք ամուսնանանք:

Գուրգեն - Ափսո՛ս, սկզբունքային չեղան...

Աննա - Քանի անգամ հայրիկը քեզ տնից դուրս արեց:

Գուրգեն - Ողորմի իրեն, իմաստուն մարդ էր...

Աննա - Բայց դու չէիր հեռանում: Ու կանգնում էիր ժամերով, անթարթ նայելով մեր պատուհանին: Ես թաքուն ձեռքով էի անում, ասում էի՝ գնա, գնա, Գուրգեն ջան, բայց դու ժպտում էիր թախծոտ ու մնում կանգնած: Մինչև որ այլևս չէի դիմանում, որևէ առիթով դուրս էի թռչում տնից ու գալիս քեզ մոտ: Գուրգեն ջան...

Գուրգեն - Հըմ, հըմ... *(Ակամա հուզվում է):*

Աննա - *(Մոտենում, գրկում է նրան, գլուխը կրծքին է դնում ու հին տանգո է պարում հետը և շշնջում է):* Ահա թե ինչու եմ ասում՝ քեզ համար ենք մնում: Որովհետև Հրաչյաս էլ է քեզ նման սիրում: Ու որովհետև սիրում է, ես այստեղից ոչ մի տեղ էլ չեմ գնա: Ուզում են ընդունեն, ուզում են՝ չէ, ես Սոնային իմ ձեռով կառնեմ ու մեր տուն կտանեմ: Կասկած չունենաս...

Գուրգեն - Ե՞ս, կասկածե՞մ... Ե՞ս...

(Դռան զանգ):

(Անմիջապես Աննան պոկվում է Գուրգենից ու լուրջ իր տեղը նստում: Սոնան վազելով գալիս-բացում է դուռը: Մկրտիչն է փաթեթներով):

Միկի - Մերոնք չկա՞ն: Վերցրու, մրգեր և ուտելիք է: Շուտ սեղան պատրաստիր:

Սոնա - Վայ, ախպեր ջան...

Միկի - Ստոր...

Սոնա - Ախր դու իմ միակ, անուշ ախպերն ես:

Միկի - Տականք...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոնա - Ոնց էլ մտածել ես, ախր ես գարմացա...

Միկի - Ճիվաղ: Քվիտ: Դե վազիր միջատաբանիդ մոտ;

Սոնա - Շնորհակալություն, Մկրտիչ ջան...

Միկի - Դե, բավական է, առանց այն էլ ես իմ արածից այնքան հուզված եմ, որ ուզում եմ թերթի համար նյութ գրել «Ազնիվ արարք» վերնագրով:

(Սոնան ծիծաղելով հեռանում է: Մկրտիչը նստում, նայում է հյուրերին. նրանք էլ նրան են նայում, լռում են):

Միկի - Ներեցեք, ես ձեզ ինչո՞վ կարող եմ զբաղեցնել, գիտեմ, որ դաստիարակված զավակները պարտավոր են հյուրերին զբաղեցնել, բայց չգիտեմ, թե ինչպես: Կուզե՞ք երաժշտություն լսել...

Գուրգեն - Ձե՞րը... ի սեր աստծո, տղաս...

Միկի - Բա ի՞նչ անեմ... Հա, Գուրգեն քեռի, կուզեք համարեք հիմար, ես չեմ նեղանա, բայց մի հարց եմ ուզում տալ: Շատ եմ ցանկացել իմանալ բայց չեմ ուզեցել օտար մարդկանց հարցնել...

Գուրգեն - Հըմ, հըմ, օտա՞ր: Խնդրեմ, խնդրեմ...

Միկի - Դուք բոլորդ համերգի ձեր նվագը անգիր գիտեք, չէ՞: Չէ՞ որ անընդհատ փորձում եք:

Գուրգեն - Ըստ երևույթին, այո, իհարկե...

Միկի - Ուրեմն նոտաները ձևի՞ համար եք դնում ձեր առջև: Իսկ եթե ոչ դիրիժորը ձեր ինչի՞ն է պետք: Չէ, գիտեք, որովհետև շատ եմ տեսել դուք նոտաներին եք նայում ու նվագում, իսկ դիրիժորն էլ իր համար ինքնամոռաց չափ է տալիս:

Աննա - *(Ծիծաղում է):* Ազնիվ խոսք, ես էլ եմ մտածել... Գուգ, հը՞, հատկապես երբ կվարտետը քառասուն տարի նոտաներով «Հաբրբան» է նվագում:

Գուրգեն - Գի - գիտեք, գուցե դուք ծիծաղեք, բայց ես դրա մասին չեմ մտածել:

(Բոլորը ծիծաղում են):

Կհիշեմ: Տեսնեմ ո՞նց ենք անում:

(Ներս են մտնում Հրաչյան ու Սոնան ու սկսում են զարդարել սեղանը, տեղավորել ուտելիքները, միրգը ու շամպայնի շշերը, սուրճի բաժակներ):

Աննա - Օհո՛... շամպայն… ես պարելու եմ, Գուգ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գուրգեն - Ա՜ննա...

ՏԵՍԱՐԱՆ

Միկի - Հրաչ, ուրեմն ավարտո՞ւմ ես, երանի քեզ:

Հրաչյա - Ավարտում եմ, Մկրտիչ:

Միկի - Եվ շրջա՞ն պիտի գնաս:

Հրաչյա - Իհարկե:

Միկի - Ո՞ր շրջան:

Հրաչյա - Սպանդարյանի:

Միկի - Ի՞նչ: Երևանի... Կատակո՞ւմ ես:

Հրաչյա - Իհարկե: Բայց նույնը լուրջ ասաց մեր տղաներից մեկը:

Միկի - Խոխմա... Սոնային էլ հե՞տդ ես տանելու:

Հրաչյա - Բա հո հեռակա չենք ամուսնանալու:

Միկի - Դու հանգիստ կարող էիր մնալ քաղաքում:

Հրաչյա - Ինչպե՞ս:

Միկի - Քո բնագավառը մանր-մունր կենդանիները չե՞ն:

Հրաչյա - Հետո՞:

Միկի - Էլ ի՞նչ հետո, շրջանում որտե՞ղ ես գտնելու: Իսկ Երևանը հիմա ճանճերով ու մոծակներով, մկներով ու զանազան պարազիտներով լիքն է: Մնա և դիսերտացիա գրիր:

Հրաչյա - Ինչ ճիշտն է ճիշտը, արժեր քեզ նման պարազիտներով զբաղվել:

Միկի - Փեսա՞, բա քեզ սազե՞ց: Այն էլ նշանադրության օրը:

Հրաչյա - Լավ նշանադրություն եք սարքել իմ գլխին:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Միկի - Հա, իմիջիայլոց, պարազիտների մասին: Ես ձեր փոխարեն ամաչում եմ, բա ձեր ինստիտուտում գոնե օրինակի համար մի բանասեր-լեզվաբան չկա՞:

Հրաչյա - Ինչի՞ համար:

Միկի - Ձեր անմահ հոգու փրկության համար: Որպեսզի կարգի բերի ցուցատախտակները: Ա՛յ թե ինչի համար: Թե չէ չես իմանում խնդաս, թե լաս: Այն օրը քեզ մոտ էի եկել, մինչև դասամիջոցի զանգը տալը, բոլոր ցուցատախտակները կարդացի:

Հրաչյա - Եվ ի՞նչ:

Միկի - Եվ ոչինչ: Բայց հո չի՞ կարելի ինքնաքննադատությունը այդ մակարդակի հասցնել: Մի դռան վրա կարդում եմ՝ «Պարազիտների ամբիոն», մյուսների վրա՝ «Խոշոր եղջերավորների ամբիոն», «Մանր եղջերավորների ամբիոն», «Սմբակավորների ամբիոն»... Իսկ դռները բացում եմ սովորական մարդիկ են նստած, առանց սմբակների և եղջյուրների... կամ գոնե չեն երևում:

Հրաչյա - *(Ընկնում է ետևից):* Ախ դու, պարազիտ...

Միկի - *(Խուսափում է):* Մակաբույծ:

Հրաչյա - Ի՞նչ:

Միկի - Թարգմանում եմ:

(Սոնան ներս է գալիս):

Սոնա - Վայ, ձեզ ի՞նչ պատահեց:

Միկի - Բռնիր նրան, քուր ջան, այսինքն արդեն լավ էլ բռնել ես: Բաց չթողնես: *(Փախչում է):*

Հրաչյա - Ես չեմ թողնի, ես... *(Համբուրում է):*

Սոնա - *(Շուրջը նայելով):* Ի՞նչ ես անում, հանկարծ կտեսնեն...

Հրաչյա - Տեսնում են, թող տեսնեն: Բայց մենք էլ հետաքրքիր ենք, չէ՞: Փողոցում համբուրվում ենք: Թատրոնում համբուրվում ենք: Ուրիշ օտար մարդկանց մոտ ազատ գրկում ու համբուրվում ենք և ամաչում ենք հարազատներից:

Սոնա - Բաց թող, Հրաչ ջան:

Հրաչյա - Իսկը Սուսանի նման:

Սոնա - Սուսանն ո՞վ է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հրաչյա - Մեր դիմացի շենքում է ապրում: Իբր թե ամաչելով, իբր թե որպեսզի ծնողները չտեսնեն, ամեն առավոտ պատշգամբ է դուրս գալիս ու հագնվում ողջ հասարակության առաջ:

Սոնա - Եվ այդ ստրիպտիզն իհարկե քեզ համար է:

Հրաչյա - Նախ դա ոչ թե ստրիպտիզ է, այլ հակառակը, անտիստրիպտիզ: Եվ երկրորդը՝ ես ոչ ոքի չեմ ուզում տեսնել, բացի քեզանից, հասկանո՞ւմ ես:

Սոնա - Բաց թող, ասում եմ:

Հրաչյա - Բաց չեմ թողնի, թեկուզ աշխարհն էլ հավաքվի...

Սոնա -– Վա՜յ, պապաս...

Հրաչյա - Ո՞ւր է... *(բաց է թողնում վախեցած):*

Սոնա - *(Ծիծաղում է):* Թեկուզ աշխա՜րհն էլ հավաքվի...

Հրաչյա - Հա, բայց հայրդ... Ի դեպ որտե՞ղ են ծնողներդ:

Սոնա - Ը՛ը, դե, գիտես ինչ, ժամի համար չէինք պայմանավորվել... Երևի նրանք էլ ձերոնց լավ դիմավորելու նպատակով վարսավիրանոց են գնացել: Հիմա ուր որ է կգան:

Հրաչյա - Ուրեմն խաբելու համար որպես պատիժ... *(փորձում է կրկին գրկել Սոնային):*

Սոնա - Վայ, պապադ...

Հրաչյա - *(Կրկին վախեցած):* Ո՞ւր է: *(Նկատում են ներս մտնող Գուրգենին ու Աննային և դուրս են փախչում):*

ՏԵՍԱՐԱՆ

Գուրգեն - *(Շարունակելով խոսակցությունը):* Ես նրան հենց այդպես էլ ասացի՝ ասացի ամեն ինչ չափ ու սահման ունի: Ես այլևս չեմ հանդուրժի ձեր կամայականությունները: Դուք փաստորեն անկիրթ և գռեհիկ մարդ եք:

Աննա - Աստված իմ, հենց այդպես էլ ասացի՞ր:

Գուրգեն - Իսկ, ի՞նչ է, պետք է խնայեի՞: Հետո՞ ինչ, որ նա դիրեկտոր է:

Աննա - Խելագարվել էիր, ի՞նչ է, իսկ նա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գուրգեն -Նա ինչ, նա մարդու լսո՞ւմ է, հազիվ էի բերանս բացել թողեց ու դուրս եկավ...

(Դռան զանգ):

Աննա - Օհո, նրանք են: Ի՞նչ անեմ, ե՞ս բացեմ:

Գուրգեն - Իսկ դրա մեջ ի՞նչ կա:

(Բացում է դուռը: Ներս է մտնում հսկիչը):

ՏԵՍԱՐԱՆ

Հսկիչ - Վերջապես: Բարև ձեզ: Բարև ձեզ: Ներեցեք:

Գուրգեն - Բարև ձեզ: Մի տեսակ տարօրինակ ստացվեց, բայց թույլ տվեք ներկայանալ: Գուրգեն՝ օպերայի նվագախմբի արտիստ, Աննա՝ իմ կինը:

Հսկիչ - Բարսեղ, այսպես ասած՝ լույսի մարդ:

Գուրգեն - 0, շատ սրամիտ էր, լսո՞ւմ ես, Աննա, ասում է լույսի մարդ: Դե իհարկե, մամուլը ոչ միայն կոլեկտիվ ագիտատոր է և կոլեկտիվ կազմակերպիչ, այլև կոլեկտիվ լուսատու...

Աննա - Շատ-շատ ուրախ եմ, մենք վաղուց էինք փափագում ծանոթանալ ձեզ հետ:

Հսկիչ - *(Մեկուսի):* Որ սրանք այսպես քաղցր-մաղցր են ընդունում, ուրեմն հաշվիչն անջատված է: *(Բարձր):* Շնորհակալություն, ես ևս ուրախ եմ:

Գուրգեն -Ներեցեք, իսկ ձեր տիկինն ո՞ւր է:

Հսկիչ - Իմ տիկինը տանը պետք է լինի:

Աննա -Ուրեմն դուք միասին չէի՞ք:

Հսկիչ - Ընդմիջմանը միասին էինք... Բայց դուք իմ կնոջը որտեղի՞ց եք ճանաչում:

Գուրգեն - Հարցն էլ այն է, որ չենք ճանաչում, բայց շատ ենք ուզում տեսնել:

Հսկիչ - *(Մեկուսի):* Չէ, սրանց հաշվիչը հաստատ անջատված է: Ի՞նչ անեմ, ակտ կազմեմ, թե յոլա տանեմ: Ասենք, սա ինտելիգենտ մարդ է, սրան փող որտեղի՞ց, որ տա: *(Բարձր):* Կարծում եմ նա էլ ուրախ կլինի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աննա - Մենք այնքան ենք լսել ձեր կնոջ մասին և ձեր մասին, և այնպիսի գովեստներ ենք լսել... թեև, կներեք, բայց ես ձեզ մի փոքր այլ կերպ էի պատկերացնում... ինչպես ասեմ՝ շատ խիստ...

Հսկիչ - Նայած ում նկատմամբ, տիկին Աննա, նայած ում նկատմամբ... *(Գուրգենին):* Անջատվա՞ծ է: *(Աչքով է անում):*

Գուրգեն - Ո՞վ *(փոթկում է):* Համա թե ասացիք, խնամի... Սուս, ի սեր աստծո, հանկարծ կինս չլսի...

Հսկիչ - *(Դավադիրի պես):* Ինչի՞, ինքը չգիտի՞... *(աչքով է անում):*

Գուրգեն - Եղբայր, ո՞ր կինը գիտի, ի՞նչ է, ձերը գիտի՞...

Հսկիչ - Այո, որովհետև մերը ձրի է:

Գուրգեն - *(Փոթկում է):* Ինչպես թե ձրի է... ձեր կի՞նը:

Հսկիչ - Ի՞նչ, կին:

Գուրգեն - Բա ի՞նչ ձրի:

Հսկիչ - Եղբայր, ի վերջո ես ինքս կարող եմ ստուգել՝ անջատված է, թե ոչ: Դա հենց իմ պարտականությունն է: Տիկին, խնդրում եմ...

Գուրգեն - Դե, դե, դա արդեն... չափն անցնում եք, խնամի:

Աննա - Ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց...

Գուրգեն - Դուք իմ կնոջը ձեռք չտաք:

Աննա - Գուրգեն, խելագարվեցի՞ր, ինչ է:

Հսկիչ - Սա, սա ի՞նչ բան է:

Գուրգեն - Հասկանո՞ւմ ես, Աննա, չգիտես ինչու նա ենթադրում է, թե դու մի քիչ անջատված ես: Ասում եմ, դուք իմ կնոջը ձեռք չտաք:

Աննա - Սա, սա ի՞նչ բան է:

Հսկիչ - Եղբայր, սա ինչ պրովոկացիա է: Ես ձեր կնոջ հետ ի՞նչ գործ ունեմ:

Գուրգեն - Սպասեք, դուք չասացի՞ք, որ անջատված է, խնամի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հսկիչ - Եղբայր, ի՞նչ խնամի, ի՞նչ խնամի, շառ հո չե՞ք, ես իմ պաշտոնական պարտականություններն եմ կատարում։ Իսկ դուք խանգարում եք։

Գուրգեն - Հիմա դա կոչվում է պաշտոնական պարտականությունն՝ե՞ր։ Ահա թե ում հետ ենք ուզում բարեկամ դառնալ։

Հսկիչ - Եղբայր, ե՞ս եմ ուզում, դուք եք ուզում։ Քիչ առաջ դուք չէի՞ք ինձ ու կնոջս գովում։

Աննա - Այո, հանուն երեխաների։

Հսկիչ - Եղբայր, երեխաներն ի՞նչ կապ ունեն։ Որտե՞ղ է ձեր հաշվիչը։

Գուրգեն - Եվ եթե կուզեք իմանալ անջատվածը հենց դուք եք։ Հաշվիչը ի՞նչ կապ ունի։

Աննա - *(Հանկարծ կռահելով):* Սպասեք, սպասեք, դուք ո՞վ եք։

Հսկիչ - Ինչպե՞ս թե ով եմ, չասացի՞, որ լույսի մարդն եմ։

Աննա - Ուրեմն դուք Սոնայի հայրը չե՞ք։

Հսկիչ - Ի՞նչ Սոնա, այ քույրիկ, իբր թե իմ երեխաները քի՞չ են։ Երեխաների անուն չտաք, ես դրանց հերն եմ անիծել՝ կյանքս կերել են, օր ու արև չունեմ ձեռքները։ Հիմա, ի՞նչ է, մի նոր երեխա է՞լ եք ավելացնում։ Բավական է։

Աննա - *(Սկսում է քրքջալ):* Վա՛յ, թուլացա, վա՛յ, սիրտս...

Գուրգեն - Վահ, սպասեք, ես գլխի եմ ընկնում, սպասեք, ես հիմա կպարզեմ... Սոնա... Մկրտիչ... *(Ներս են ընկնում Սոնան, Հրաչյան, Մկրտիչը):* Սոնա, այս... մարդը ձեր հայրը չէ...

Միկի - Ոչ, ինչ եք ասում։ Նորից դուք եք, բարև ձեզ, լույսի մարդ...

Հսկիչ - Տեսա՞ք, շառ են, լավ, լավ, ես հետո կգամ։ *(Արագ դուրս է գնում):*

Աննա - Վա՛յ, սիրտս, վա՛յ...

Սոնա - Բայց ի՞նչ է պատահել…

Հրաչյա - Բայց ի՞նչ է պատահել…

Գուրգեն - Այս մարդը հենց ներս մտավ, ես կռահեցի, որ նա Սոնայի հայրը չէ։ Մի առարկիր։ Աննա, տեսա՞ր, ճիշտ չէի՞։

Աննա - Միանգամայն, խնամի, միանգամայն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

(Հնչում է դռան զանգը: «Մամա» բղավելով Սոնան ու Մկրտիչը նետվում են դեպի դուռը: Դուռը բացվում է, ներս են մտնում Սահակն ու Նազելին: Նրանք պարիկներ ունեն գլխներին: Նազելիի հոնքերը, արտևանունքները, այտերը ներկված են, հագին մայկա է՝ բիթլների նկարով, ծաղկավոր շալվար, հաստ կոշիկներ: Սահակը նեղ կուրտկայով է, ծաղկավոր բլուզով, կարմիր շալվարով):

Սոնա - *(Ապշած):* Մամա՞...

Միկի - Ատե՞ց...

Նազելի - Հելո, Սոնա, հելո, Միկի, մենք կարծես թե հյուրեր ունենք: (Գուրգենն ու Աննան զարմացած ոտքի են կանգնել):

Սոնա - *(Կամացուկ, բայց խիստ):* Մամա, հո ցիրկ չե՞ս:

Նազելի - *(Բարձրաձայն):* Ֆու, ի՛նչ արտահայտություն է, Սոնա... ցի՛րկ... Իմ կարծիքով դու պարզապես նախանձում ես: Մի՞թե սա այն չէ, ինչ դու էիր ուզում: Ես, եթե կարելի է ասել, հենց քո դեղատոմսով էլ հագնվել եմ. էքստրա պոպ-բամ…

Սոնա - Այո, բայց տարիքը...

Նազելի - Կինը տարիք չունի, Սոնա: *(Գուրգենին):* Այնպես չէ՞, ազիզ...

Գուրգեն - *(Կակազելով):* Այո... ը-ըստ երևույթին...

Նազելի - Դուք էլ զուցե մամա՞ն եք, քուր ջան...

Աննա - *(Հպարտ):* Այո, ես Հրաչյայի մայրն եմ...

Նազելի - Բեսամթ մերսի... Սահակ, տեղավորի հյուրերին, էսօր մի հաշիվ կա...

Միկի - Վայ, պապ, էդ իմ շալվարն է, վայ... կպատռես...

Սահակ - Առանց վայվայի, ես եմ հագնելու, որովհետև ես եմ վճարել ութսուն ռուբլի... թեև ութսուն կոպեկ էլ չարժե՝ դու էլ մեջը:

Միկի - Բայց դե, ազնիվ խոսք, քո տարիքին...

Սահակ - Ի՞նչ եք դուք էլ տարի՛ք, տարի՛ք, մեծ-մեծ խոսելիս տարիք չես հարցնում, իմ հասակակիցների հետ գիշերները պոկեր ես խաղում: Տարի՛ք... թե՞ իմ մեղքն այն է, որ շուտ եմ ամուսնացել և արդեն քեզ նման որդի ունեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոնա - Մամա, մամա ջան, քե՞զ ինչ է պատահել: Այս ի՞նչ եք անում: Ո՞ւմ է պետք այս դիմակահանդեսը: Ինչո՞ւ եք ինձ խայտառակում...

Նազելի - Այսի՞նքն...

Սոնա - Այս ի՞նչ եք անում, մա:

Նազելի - Այդ բոլոր հարցերն առանձին-առանձին ես քեզ ու եղբորդ եմ տվել: Դուք էլ հասկացրել եք, որ դա մեր գործը չէ, որ մենք չպետք է խառնվենք ձեր գործերին: Որ մենք ձեզ չենք հասկանում: Որ դարն է այդպիսին: Հիմա ի՞նչ է պատահել: Դարը փոխվե՞ց: Մենք էլ այսպես ենք ուզում հագնվել ձեզ պես: Եվ խնդրում եմ չխառնվել իմ գործերին. թե չէ՝ դա դառնում է...

Սահակ - Կայֆ... այսինքն՝ խոխմա:

Գուրգեն - Ի դեպ, ըստ երևույթին, մոդայից անհնար է խուսափելը... այնպես չէ՞, Աննա...

Աննա - *(Սպանիչ հայացքով նայելով նրան):* Ուրեմն այսպես: Երևի ձեզ համար գաղտնիք չէ, որ Հրաչյան ու Սոնան համակրում են իրար և հանդիպում են... Եվ ահա մենք որոշեցինք օրինականացնել այդ կապը.... Ահա թե ինչու... ահա թե ինչու...

Սահակ - Ի՞նչ կարիք կա նման ձևականության: Ի՞նչ է պատահել: Ջահել տղա ու աղջիկ են, թող մի քիչ ման գան իրար հետ… ինչո՞ւ իրար կապել...

Նազելի - Գուցե մեկ-երկու տարի հետո այլևս իրար չեն հավանում...

Հրաչյա - Տիկին Նազելի... դուք ինձ լավ չեք ճանաչում...

Սահակ - Բայց հո մեր աղջկան ճանաչում ենք... նա հիմա արդեն մեզ էլ չի հավանում:

Նազելի - Հա, հա, Հրաչ ջան, չես ուզի, կբաժանվես... իսկ այսպես ինչ-որ պարտավորություններով շղթայվում ես... քեզ պետք ա՞ ...

Սոնա - Մայրիկ...

Նազելի - Կարճ ասած՝ դա մեզ չի վերաբերում՝ ուզում են ման գան, ուզում են՝ չէ: Դա նրանց անձնական գործն է: Առանց այն էլ մենք շատ ենք խանգարել խեղճ երեխաներին:

Գուրգեն - Սակայն, տիկին, ընտանիքի բարօրությունը ըստ երևույթին պահանջում է...

Սահակ - Տո ի՞նչ ընտանիք, ի՞նչ բան... ընտանիքը միայն կապանք ու շղթա է, ախպեր, և մեր երեխաները լավ են հասկացել դա: Ես քեզ հետ համաձայն եմ, Միկի, ես քեզ հետ համաձայն եմ, Սոնա: Սրանից հետո կապրեք ինչպես ուզում եք: Դու կարծեմ ուզում ես այս գիշեր տուն չգալ, չէ, խնդրեմ, աղջիկս, ազատ զգա քեզ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հրաչյա - Սոնա, Սոնա...

Սոնա - Ընկերուհուս տանը ձայնապնակ էինք լսելու...

Սահակ - Ի՞նչ կարիք կա բացատրության... Դա ոչ մեկին չի վերաբերում: (Սոնային, բայց բարձր): Բայց մայրիկը լավիկն է, հա՛... Սոնա - Ի - ի՞նչ...՝

Նազելի - Իզուր տեղը նյարդեր ենք քայքայել: Ա՛յս չի կարելի, ա՛յն չի կարելի: Ամեն ինչ էլ կարելի է: Էլ որտե՞ղ է մնում անհատի ազատությունը: Ուզում ես ներկել աչքերդ, ներկիր, ուզում ես մինի հագնել, հագիր, չե՞ս ուզում սովորել, մի սովորիր... չե՞ս ուզում տուն գալ, մի արի...

Աննա - Ներեցեք, բայց այդպես ինչպե՞ս կարելի է...

Նազելի - Իսկ ինչո՞ւ չի կարելի: Ժամանակի պահանջն է: Մեր երեխաները, օրինակ, զարհուրելի գռեհիկ լեզվով են խոսում: Խնդրում, սպառնում, համոզում ենք մաքուր լեզվով խոսել: Չեն անում: Սոնան աչքերն ու հոնքերը ներկում է: Հայրը հարյուր անգամ համոզել է, որ նա դրա կարիքը չունի... չի լսում, մատնացույց է անում ողջ աշխարհը: Եվ ճիշտ է անում: Մկրտիչը փախչում է դասերից, ինչ-որ դատարկաբան տղաների ու աղջիկների հետ ցատկոտում է ողջ օրը: Եվ ճիշտ է անում: Կյանքը միայն մեկ անգամ է տրվում մարդուն:

Գուրգեն - Բայց հենց դրա համար էլ պետք է ճիշտ ապրել...

Սահակ - Նրանք համարում են, որ ճիշտը իրենց ապրածն է, անկախ, անկաշկանդ, ազատ:

Գուրգեն - Եվ դուք համաձա՞յն եք նրանց հետ...

Սահակ - Լիովին... փորձեք և կտեսնեք, թե ինչ... ո՞նց էր...

Նազելի - Խոխմա... չէ, կայֆ...

Սահակ - Կայֆ է... Երեկվանից մենք այդ կայֆի մեջ ենք... Փողոցում բոլորը մեզ են նայում... Մտանք բար, նստեցինք բարձր աթոռներին ու կոկտեյլ խմեցինք... ու նույնիսկ ցատկոտեցինք մի քիչ... Սրանից հետո այդպես էլ ապրելու ենք... Ամեն մեկը թող իր մասին մտածի... Այսօր էլ ենք գնալու ցատկոտելու... Եվ պատկերացնո՞ւմ եք՝ ստացվում է: Կուզե՞ք սովորեցնեմ:

(Միացնում է մագնիտոֆոնը: Մոտենում է Աննային):

Աննա - Ոչ, ոչ, ի՞նչ եք ասում, ես չեմ պարում…

Սահակ - Այս պարին չեն հրավիրում, ուղղակի թևից քաշում են, այսպե՛ս...

Գուրգեն - Լսեք, ըստ երևույթին...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ - Այսպե՛ս *(պարում է, ծափ է զարկում, պտտվում է, հետո գրկում է շփոթված Աննային, պարում է ու հետն էլ շտապով, շշուկով ինչ-որ բան է բացատրում):*

Աննա - *(Ծիծաղում է ու սկսում է պարել):* Oh, oh, կա՛յֆ...

Գուրգեն - Վա՞յ...

Հրաչյա - Մայրի՞կ...

(Աննան և Սահակը պարելով հեռանում են):

Գուրգեն - Այ տղա, մի տես մայրիկիդ էդ ո՞ւր տարավ:

Նազելի - Ես էլ արդեն խոհարար ու լվացարար էի դարձել... բալիկներս լավ բացեցին աչքերս... Հիմա ամեն մեկը իր զգեստը կլվանա... ամեն մեկը իր ճաշը կեփի... Որքան իրավունք, այնքան էլ պարտականություն... *(Գուրգենին):* Ճիշտ չէ՞, ազիզ...

Գուրգեն - *(Ցնցվում է):* Ներեցեք, սա, սա ինձ համար արտառոց է... Աննա, գնանք, գնանք, Աննա... *(Բղավում է):* Որտե՞ղ ես, Աննա, գնանք:

(Աննան հայտնվում է պարելով):

Աննա - Ինչո՞ւ... այստեղ հիանալի է... Այստեղ իմ աչքերն էլ բացվեցին... կա՛յֆ, կա՛յֆ...

Հրաչյա - *(Մկրտիչին ու Սոնային):* Բայց սա, սա նողկալի է... մտքովս էլ չէր անցնի...

Սոնա - Չգիտեմ ինչ է պատահել, Հրաչյա ջան, ախր դու տեսել էիր իմ ծնողներին...

Հրաչյա - Հիմա էլ եմ տեսնում... Ես կուշտ եմ, կուշտ... Ես ոչինչ չեմ ուզում...

(Պարը վերջացել է):

Գուրգեն - Աննա, ուշքի եկ, հեռանանք այստեղից... Սրանք հետամնաց մարդիկ են...

Աննա - Ինչպե՞ս... ընդհակառակը... Դուք էլ մի բարի պտուղը չեք... Ամբողջ կյանքում դողացել, մեծացրել եմ Հրաչյայիս և ի՞նչ, երեք օր հիվանդ էի, մի ժամ կողքիս չմնաց, դուրս էր փախչում... իսկ դու... դու... պրեֆերանս էիր խաղում ընկերներիդ հետ...

Հրաչյա - Մամ, բայց դիսերտացիաս...

Աննա - Մե՞ր ինչ գործն է... մենք էլ մեր դիսերտացիան ենք պաշտպանում... Ամեն մեկն էլ իր դիսերտացիան ունի... ճիշտ չէ՞, կեցցե ազատությունը... Նորից միացրու, ախպեր...

Սահակ - *(Միացնում է, մոտենում է Աննային):*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գուրգեն - Լսեք, դուք իմ կնոջ հետ գործ չունեք... ըստ երևույթին...

Աննա - Նա գործ չունի, ես ունեմ, պարենք... Հա, ինչպե՞ս է կոչվում այս պարը...

Սահակ - Ժաժք...

Հրաչյա - Մայրիկ, բավական է... ես ամաչում եմ քո փոխարեն...

Սոնա - Հայրիկ, վերջ տուր, խնդրում եմ, դու-դու...

Նազելի - *(Հանկարծ բարձր):* Մկրտի՞չ, այդ ի՞նչ ես անում...

(Բոլորը կանգ են առնում, լռում են: Նայում են Մկրտիչին: Նա մի ծուռ փայտ է նետում: Փայտը կրկին վերադառնում է Մկրտիչի մոտ, նորից է նետում, նորից վերադառնում է):

Միկի - Այս փայտը կոչվում է բումերանգ: Պատրաստում են Ավստրալիայի աբորիգենները և այնպես վարպետորեն, որ երբ նետում ես, այն կրկին քեզ մոտ է վերադառնում: Նետում ես ուրիշի վրա, գալիս քեզ է դիպչում...

Գուրգեն - Հետաքրքիր է, բայց...

Միկի - Ես ձեզ հասկացա՞, հայրիկ, մայրիկ, Աննա մորաքույր...

Սահակ - *(Ծիծաղելով):* Հասկացել ես, տղաս, բայց պետք է, որ բոլորը հասկանան... Հայերը, ճիշտ է, բումերանգ չեն ունեցել, բայց փոխարենը բումերանգի ուժի ասացվածք ունեն. Ինչ որ ցանես, այն էլ կհնձես...

Նազելի - Եվ նույնիսկ գրաբարից եկող մի խումբ փայլուն ասացվածքներ, ինչպես օրինակ՝ ակն ընդ ական և ատամն ընդ ատաման... Որ ժամանակակից լեզվով նշանակում է՝ վերցրու այնքան, որ կարողանաս տանել...

Աննա - Ինձ թվում է, թե երեխաները հասկացան, տիկին Նազելի, խնայենք նրանց և հիշենք, որ ջահելությունը մի թերություն է, որը տարիների հետ անցնում է...

Սահակ - Եթե այդպես է, աղաչում եմ, վերադարձրեք իմ բոլոր թերությունները...

Միկի - Ու չարժե նաև ամեն փոքր բանից ողբերգություն սարքել, հայրիկ և մայրիկ, ինչպես հիշատակեցիք, այդ ասացվածքները դեռևս գրաբարից են գալիս: Իսկ շատ ավելի վաղ, եգիպտական արձանագրություններից մեկն ասում է՝ «Նոր սերունդը մեծամիտ է, անհնազանդ, երախտամոռ... Մոտ է աշխարհի կործանման օրը»: Այնինչ, ինչպես տեսնում եք, աշխարհը դեռ նոր-նոր կառուցվում է: Եղա՞վ, հայրիկ ջան:

Սահակ - Եղավ, ախպեր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գուրգեն - *(Հրճվանքով):* Ես գլխի եմ ընկնում... ես գլխի եմ ընկնում... Ուրեմն այս ամենը կատակ էր, չէ՞... Հենց որ խնամիները ներս մտան, ես իսկույն զգացի... Մի առարկիր, Աննա։ Տեսա՞ր... ճիշտ չէի՞...

Աննա - ճիշտ էիր, խնամի, ճիշտ էիր...

Սահակ - Դե ուրեմն հիմա մի իսկական, հայկական հարսանքապար...

(Հնչում է նվագը, ծիծաղ, ռեպլիկներ):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԻՐԻԿՆԱՅԻՆ ՀԵՔԻԱԹ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Շահեն Միրաքյան - 30 տարեկան, հեռուստատեսության հաղորդավար:
Նազիկ - Նրա հարևանուհին, 21 տարեկան:
Մանվել - Նազիկի սիրած տղան, 25 տարեկան:
Հովսեփ - Նազիկի հայրը, 50 տարեկան:
Հերթապահ բժշկուհի - 30 տարեկան:
Վաղարշակ Պետրովիչ - Շտապօգնության գլխավոր բժիշկը, 50 տարեկան:
Բարսեղյան - Շտապօգնության բժշկուհի, 45 տարեկան:
1-ին հիվանդ - 45 տարեկան:
2-րդ հիվանդ - 35 տարեկան:
3-րդ հիվանդ - 60 տարեկան:
1-ին պրոֆեսոր - 60 տարեկան:
2-րդ պրոֆեսոր - 60 տարեկան:
Պահակ - 65 տարեկան:
Բժիշկներ, սանիտարներ, հիվանդներ:

Գործողությունը տեղի է ունենում մեր օրերում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

(Շահեն Միրաքյանի բնակարանը: Շահենը նոր է եկել աշխատանքից, քաղցած է: Սուլելով մտնում է խոհանոց):

Շահեն - Հիմա մենք մի բան կմտածենք... Հիմա կմտածենք... Այսինքն եթե մեկն ու մեկը լիներ, նրա համար մի համով բան կպատրաստեի: Թեկուզ բիֆշտեքս... (Բացում է սառնարանի դուռը): Կարող էի նաև հավ եփել, այն էլ ֆրանսիական... խնդրեմ՝ մեյդ ին ֆրանս...Բայց քանի որ մարդ չկա... մենք կուտենք ձվածեղ... սոված մեռնում եմ: Բա էս առատության մեջ մարդ սոված մեռնի՞... Ֆրանսիական հավի ծիծաղն էլ կգա:

Ըհը... սա էլ յուղը. ըհը... հիմա ես ձեզ կուտեմ, ձվիկներ ջան... աղը, աղը չմոռանանք...

(Դռան զանգ):

Դուռը բաց է:

Նազիկ - Բարև, Շահեն ջան...

Շահեն - Օ, ողջույն, իմ չքնաղ հարևանուհի... Կուզե՞ս քեզ համար բիֆշտեքս տապակեմ... կամ ֆրանսիական...

Նազիկ - *(Լացակումած):* Ես ինձ կսպանեմ, Շահեն...

Շահեն - Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել, Նազիկ ջան:

Նազիկ - Նրան հարցրու...

Շահեն - Նստիր, նստիր... բիֆշտեքս... ջուր կուզե՞ս...

Նազիկ - Հա... *(Խմում է):*

Շահեն - Հանգիստ ասա... դե հիմա հանգիստ ասա... ո՞վ է նա:

Նազիկ - Հայրս:

Շահեն - Ուստա Հովսե՞փը: Իսկ ի՞նչ է ուզում:

Նազիկ - Չի թողնում Մանվելի հետ ամուսնանամ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Ինչո՞ւ: Մանվելը լավ տղա է:

Նազիկ - Նրան հարցրու...

Շահեն - Նրան ինչո՞ւ հարցնեմ, քեզ եմ հարցնում:

Նազիկ - Ասում է... ասում է... Մանվելի հայրը խմող է:

Շահեն - Հա՞յրը: Իսկ հայրն ի՞նչ կապ ունի:

Նազիկ - Նրան հարցրու:

Շահեն - Երկնային աստված...

Նազիկ - Ասում է... ասում է... որ հայրը խմող է, ինքն էլ կխմի...

Շահեն - Իսկ Մանվելը խմո՞ւմ է... կարծեմ չի խմում, չէ՞...

Նազիկ - Նրան հարցրու...

Շահեն - Ո՞ւմ...

Նազիկ - Ասում է... ասում է, հիմա չի խմում, հետո կխմի, գեների հարց կա...

Շահեն - Գեների՞... ուստա Հովսե՞փը... Նա՞ ինչ գիտի գեների մասին:

Նազիկ - Դու ես մեղավոր, դու...

Շահեն - Ե՞ս...

Նազիկ - Դու... Ինչու՞ ես նրան գիրք տվել: Հիսուն տարի ոչ մի գիրք չէր կարդացել: Հանգիստ ապրում էինք: Իսկ հիմա սկսել է կարդալ և ինչ կարդում է՝ հավատում է:

Շահեն - Ախ, հա՛, ժառանգականության մասին... Բայց ես չեմ տվել, ինքն ուզեց, Նազիկ ջան...

Նազիկ - Վառվում եմ, վառվում...

Շահեն - Ի՞նչ, այո, այո, վառվում է... վառվում...

(Նետվում է դեպի խոհանոց):

Նազիկ - Ո՞վ է վառվում...

Շահեն - *(Հեռվից):* Զվածեղը... չե՞ս ուզում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նազիկ - Չէ...

Շահեն - Դու նստիր, հա՞, Նազիկ ջան, մի րոպե... ուտեմ գամ, թեև ածուխ է դարձել: Իսկ գուցե... դու էլ ուտես...

Նազիկ - Ինչ եսասեր մարդ ես, Շահեն: Ես ուզում եմ ինքնասպանություն գործել, իսկ դու ձվածեղ ես ուտում:

Շահեն - ի դեպ, Նազիկ ջան, հետազոտությունները ցույց են տվել, որ ոչ մի մարդ քաղցած վիճակում ինքնասպան չի եղել: Բոլորն էլ կուշտ կերել են երկար ճանապարհորդությունից առաջ: Որովհետև մտածել են, թե ո՞վ գիտե, մեկ էլ երբ են ուտելու: Հոգեբանության հարց է:

(Հեռախոսի զանգ: Շահենը վերցնում է լսափողը):

Շահեն - Այո, խոսել եմ, հորաքույր, խոսել եմ, խոստացան, որ կգան, կվերանորոգեն: Ի՞նչ անեմ, հորաքույր ջան, ես հո քաղաքագլուխ չեմ: Ի՞նչ: Քաղաքագլխից էլ մե՞ծ մարդ եմ: Ես գիտեմ, գիտեմ, հորաքույր, նրանք չգիտեն: Հաջողություն: Գնացի՞ր, Նազիկ ջան...

Նազիկ - Հետաքրքիր մարդ ես, Շահեն: Ես ուզում եմ ինքնասպան լինել, իսկ դու ասում ես՝ գնացի՞ր, Նազիկ ջան...

Շահեն - Չեմ հասկանում, հենց այստե՞ղ ես ուզում ինքնասպան լինել, ի՞նչ է...

Նազիկ - Առանց Մանվելի ես կյանք չունեմ...

Շահեն - Մի խելոք խորհուրդ տա՞մ... Ամուսնացիր, Նազիկ:

Նազիկ - Բա ի՞նչ եմ ասում, հայրս չի թողնում:

Շահեն - Ինչո՞ւ... Չէ, չէ, ինչու չէ, որովհետև կասես. «նրան հարցրու»...

Նազիկ - Ես նրան ասում եմ՝ հայրիկ ջան, Մանվելը խելոք տղա է, չի խմում, չի ծխում...

Շահեն - Իսկ նա՞:

Նազիկ - Նրան հարցրու...

Շահեն - Տե՛ր աստված... Հիմա դու ի՞նչ ես ուզում ինձանից:

Նազիկ - Խոսիր հայրիկի հետ, Շահեն ջան, նա քեզ հավատում է՝ հերքիր գենները:

Շահեն - Գենե՞րը... Ինչպե՞ս հերքեմ, Նազիկ ջան: Աշխարհի ամենախոշոր գիտնականները հաստատում են... ես ինչպե՞ս հերքեմ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նազիկ - Ասա, ուստա Հովսեփ, հիշո՞ւմ ես, իմ պապը կաղ էր, բա ինչո՞ւ ես էլ կաղ չեմ։

Շահեն - Ո՞վ էր կաղ։

Նազիկ - Քո պապը։

Շահեն - Իմ պապը պատերազմում էր վիրավորվել, այ աղջիկ։ Գեներն ի՞նչ կապ ունեն։

(Հեռախոսի զանգ։ Շահենը վերցնում է լսափողը)։

Լսում եմ։ Եղավ, եղավ։ Ես դատախազի հետ խոսեցի։ Ասաց՝ կհետևեմ։ Իհարկե...

Նազիկ - Իհարկե, բոլորի հարցերը լուծում ես, միայն ինձ չես ուզում օգնել։ Բա ես ի՞նչ անեմ, ինքնասպան լինեմ...

Շահեն - Հա...

Նազիկ - Ինչպե՞ս թե... ինքնասպա՞ն լինեմ…

Շահեն - Չէ... Նազիկ ջան, սիրելիս, մեռնում եմ... թող մի կտոր հաց ուտեմ, հետո ինչ ուզես կանեմ...

Նազիկ - Հա՜ց ուտեմ... քեզ համար գլխավորը հացն է... իսկ հեռուստատեսությամբ ճառեր ես ասում՝ մարդասիրության մասին...

(Զայն է լսվում հեռվից)։

Զայն - Շահեն, Շահեն...

Շահեն - *(Գոռում է)*։ Լսում եմ, Միսակ քեռի։

Զայն - Իմ թոշակի հարցն ի՞նչ եղավ։

Շահեն - Կլինի, կլինի, Միսակ քեռի... Սոցապ մինիստրությունում քննելու են։

Զայն - Իսկ էն բաժնի վարիչը, էն օձի կծածը չի՞ խանգարի։

Շահեն - Չէ, ես մինիստրի տեղակալի հետ եմ խոսել։

Զայն - Ի՞նչ։

Շահեն - Ասում եմ՝ ես մինիստրի տեղակալի հետ եմ խոսել...

Զայն - էն օձի կծածը կխանգարի... Շունչը փչում ա, մաղձից դեղնել ա... բայց ոնց որ շունը խոտի դեզի վրա... ինքը չի կարում ուտի, ուրիշներին էլ չի թողնում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Կարիք չկա շենքով մեկ ավել-պակաս բաներ խոսելու, Միսակ քեռի...

Զայն - Պակա՞ս... Ես նոր դիմումիս մեջ կավելացնեմ, Շահեն ջան...

Շահեն - Լավ, լավ, Միսակ քեռի... Հիմա ի՞նչ անենք, Նազիկ...

Նազիկ - Խոսիր հայրիկի հետ, Շահեն շան...

Շահեն - Ախր գիտես, Նազ, մի տեսակ... խիստ մարդ է ուստա Հովսեփը... քաշվում եմ...

Նազիկ - Իսկ դու հեռուստատեսությամբ ասա...

Շահեն - Ի՞նչ, ես խոսում, այ աղջիկ։

Նազիկ - Իսկ ի՞նչ կա որ։ Իսկական «Մարդը և նրա պարտքը» հանդեսի նյութ է։ Հայրս ի՞նչ իրավունք ունի խորտակելու իմ երջանկությունը։ Ասա... «Ցավոք սրտի, մեր քաղաքում դեռևս կան ուստա Հովսեփի նման մարդիկ, որոնք...»։

Շահեն - Հետո՞, տուն չե՞մ գալու։

Նազիկ - Ուրեմն դու էլ ես վախենում, հա՞, ժողովրդի կողմից սիրված ու հարգված ընկեր Շահեն Միրաքյան...

Շահեն - Բայց ես ի՞նչ կարող եմ անել։ Ես ընդամենը մի սովորական հաղորդավար եմ։ Ուրիշները գրում են, ես էլ կարդում եմ։

Նազիկ - Մի անգամ էլ դու գրի։ Կամ ո՞վ գիտի, որ դու չես գրում։ Հայրիկս, օրինակ, համոզված է, որ «Մարդը և նրա պարտքը» հաղորդման բոլոր նյութերը քո գրածն են։ Նստում է, նայում ու ասում. «Բայց ի՛նչ գլուխ ունի մեր հարևան Շահենը»։

Շահեն - Հա, գլուխս ոչինչ, բայց ստամոքսս է վատ։

Նազիկ - Քո ստամոքսի՞ն ինչ է եղել։

Շահեն - Սոված եմ, սոված, ամբողջ օրը ոչինչ չեմ կերել...

Նազիկ - Օֆ, էլի սկսեց...

Շահեն - Գուցե ուրիշ բան կա։ Չեմ հասկանում, ուստա Հովսեփը ինչո՞ւ չպետք է հավանի Մանվելին...

Նազիկ - Նրան հարցրու։

Շահեն - Լավ, լավ, համոզեցիր... Ես կխոսեմ ուստա Հովսեփի հետ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նազիկ - Օ՛հ, Շահեն ջան, շնորհակալություն, շնորհակալություն... դու փրկում ես իմ կյանքը...

Շահեն - Սպասիր խոսեմ, նոր...

Նազիկ - Նա քեզ կլսի, Շահեն ջան, նա քեզ կլսի... Նա ձեր բոլոր հաղորդումները լսում է... Ինչպես կուրախանա Մանվելը, վազեմ նրա մոտ...

Շահեն - Օ՛ֆ, սիրտս... Վայ, էս ինչ ցավ է... սի՞րտս է, թե՞ ստամոքսս...

Նազիկ - Շահեն, ի՞նչ պատահեց, գույնդ գցեցիր...

Շահեն - Չեմ հասկանում... սոսկալի ցավում է... թևս էլ...

Նազիկ - Ինֆարկտ հո չի՞...

Շահեն - Գուցե շտապօգնությո՞ւն զանգես, Նազիկ...

Նազիկ - Շտապօգնությո՞ւն... Հայրիկի հետ խոսիր նոր, էլի, Շահեն շան...

Շահեն - Վատ եմ զգում, Նազիկ...

Նազիկ - Դե լավ, էլի... Վայ, ասենք դրանից էլ լավ հաջողություն... Հայրիկը հենց շտապօգնությունում է աշխատում, չէ՞:

Շահեն - Հա:

Նազիկ - Գուցե հենց իր ավտոն գա... ճանապարհին կխոսես, չէ՞, Շահեն ջան... Ասում են չկա չարիք առանց բարիքի...

Շահեն - Հա, սիրտս...

Նազիկ - Չէ, ասենք քիչ առաջ եկավ ճաշելու: Գուցե դեռ տանն է: Վազեմ կանչեմ...

(Հեռանում է):

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Շահեն - Օ՛հ, իսկապես, չլինի՞ ինֆարկտ է... Շատ է ցավում... Չէ, ավելի լավ է ես զանգահարեմ...

(Հավաքում է համարը):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ալո, օ՜հ, շտապօգնությո՞ւնն է...

(Բեմի մի անկյունը լուսավորվում է: Լսափողը ականջին նստած է հերթապահը):

Հերթապահ - Շտապօգնությունն է...

Շահեն - Խնդրում եմ բժիշկ ուղարկեք...

Հերթապահ - Հասցեն, անուն - ազգանունը...

Շահեն - Մայիսյան 6, երրորդ մուտք, երկրորդ հարկ, բնակարան 14։

Հերթապահ - Անուն - ազգանունը...

Շահեն - Շահեն Միրաքյան...

Հերթապահ - Ի՞նչ է պատահել...

Շահեն - Սիրտս ցավում է…

Հերթապահ - Քանի՞ տարեկան եք...

Շահեն - Որ չմեռնեմ, օգոստոսին կդառնամ երեսուն տարեկան։

Հերթապահ - Կատակի ժամանակ չունեմ... Որտե՞ղ եք աշխատում...

Շահեն - Հեռուստատեսությունում։

Հերթապահ - Հեռուստատեսությունո՞ւմ...

Շահեն - Հա... սիրտս...

Հերթապահ - Սպասեք, ձեր անուն - ազգանունն ի՞նչ էր... Շահեն Միրաքյա՞ն ։

Շահեն - Այո, ձեռքս ցավում է։ Մեռնում եմ...

Հերթապահ - Ինչ եք ասում, շատ ուրախ եմ... Ուրեմն դուք ա՞յն Շահեն Միրաքյանն եք։ Այ քեզ հաճելի անակնկալ։ Ասենք, իհարկե, ձեր ձայնն էլ... հենց սկզբից ինձ շատ ծանոթ թվաց... Անցյալ հաղորդումը ուղղակի հիանալի էր։ Ինձ հատկապես գիտե՞ք հանդեսի որ էջը դուր եկավ... Խուլիգանության դեմ ուղղվածը։ Հրաշալի ասացիք... «Թող հողն այրվի խուլիգանների ոտքի տակ»։ Շատ ազդեցիկ էր...

Շահեն - Սիրտս ցավում է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հերթապահ - Միանգամայն հասկանալի է... Ո՞ւմ սիրտը չի ցավի: Տասնվեց տարեկան տղաներ են, բայց արդեն բանտ են գնում: Մեզ մի հարևանի տղա ունենք, կատարյալ խուլիգան է: Վերևի հարկում են ապրում, երբ իջնում է, բոլոր դռների զանգերի կոճակները սեղմելով է իջնում, իսկ երբ բարձրանում է՝ բոլոր դռների մոտ սրբում է կոշիկները... Դրա ապագան ի՞նչ պետք է լինի: Օ՜, ինչ հաճելի է, որ լսեցի ձեր ձայնը: Այնքան կուզեի, որ հանդիպեինք, մեր աշխատողներն էլ շատ կուզենային... Ինչո՞ւ մի անգամ մեզ մոտ չեք գալիս...

Շահեն - Եթե ավտոմեքենա ուղարկեք, հիմա կգամ...

Հերթապահ - Իսկապե՞ս... Հիանալի կլինի... Անմիջապես կուղարկեմ... ձեր հասցեն ո՞րն է, ներեցեք...

Շահեն - Ախր դուք գրեցիք... Մայիսյան վեց, երկրորդ հարկ...

Հերթապահ - Սպասեցեք, ուրեմն դա ձերն էր, հա՞... ամեն ինչ խառնեցի իրար... Վա՞տ եք զգում, իսկ ի՞նչ է, պատահել...

Շահեն - Սիրտս... կարծես թե ինֆարկտ է...

Հերթապահ - Հենց հիմա մեքենա կուղարկեմ... Ի՜նչ ուրախություն... Հիմա մեր աշխատողներին կհայտնեմ... դիմավորեք ավտոմեքենան...

Շահեն - Բայց... ես չեմ կարող... Եթե ձեր վարորդ ուստա Հովսեփն այդտեղ է, նրան ուղարկեք, մեր հարևանն է…

Հերթապահ - Ինչ եք ասում, հենց նրան էլ կուղարկեմ... Դիմավորեք...

Շահեն - Չեմ կարող... ես մենակ եմ... միայնակ եմ...

Հերթապահ - Ուրեմն ճի՞շտ է, որ ամուսնացած չեք: Ապշելու բան է: Ախր այնքան լավ եք խոսում ընտանեկան խնդիրների մասին, այնքան լավ գիտեք կյանքը և մարդկանց փոխհարաբերությունները, ասես թե մի քանի անգամ ամուսնացած լինեք...Ալլո՞, համար 20 - 06 ավտոմեքենայի վարորդ, որտեղ էլ գտնվելիս լինեք, անմիջապես մեկնեք Մայիսյան վեց... ընկեր Շահեն Միրաքյան, այնքան անհամբեր եմ ձեզ տեսնելու... դիմավորեցեք ավտոմեքենան...

Շահեն - Բայց ես...

(Հերթապահն անջատում է հեռախոսը: Լսվում է շտապօգնության մեքենայի ազդանշանը):

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Ներս են մտնում ուստա Հովսեփը և շտապօգնության բժշկուհին):

Հովսեփ - Շահե՞ն, ի՞նչ է պատահել, Շահեն ջան...

Շահեն - Ուստա Հովսեփ, դուք բարի, մեծահոգի մարդ եք, օհ...

Բժշկուհի - Հանգիստ, հանգիստ, հիվանդ, հիմա մենք ձեզ կքննենք... Պառկեք... Այդպես... բարձրացրեք վերնաշապիկը...

Շահեն - Օհ...

Բժշկուհի - Չնեղանաք, ընկեր Շահեն Միրաքյան, բայց մի քիչ ծիծաղս գալիս է: Ախր, մտքովս չէր անցնի, որ ես ձեզ երբևէ կտեսնեմ կյանքում, այն էլ պառկած...

Շահեն - Ուստա Հովսեփ, ինձ համարեցեք ձեր որդին...

Հովսեփ - Դու իմ որդին ես, բա ի՞նչ ես, ես քեզ իմ զավակներից չեմ տարբերում, Շահեն ջան: Բնակկառավարիչին գտա՞ր...

Շահեն - Գտա, ուստա Հովսեփ, ասաց շիֆերի լիմիտը վերջացել է, բայց մի բան կանենք... Մինչև երկուշաբթի կապահովեմ...

Հովսեփ - Ապրես, Շահեն ջան, ապրես:

Բժշկուհի - Մի շնչեք, ընկեր Միրաքյան, ահա... մի շնչեք... այդպես... մի շնչեք... Իսկ, ընկեր Միրաքյան, իրոք այդքան նամակներ եք ստանում, թե՞...

Շահեն - *(Արտաշնչելով):* Իհարկե...

Բժշկուհի - Մի շնչեք... Ոմանք ասում են, թե նամակները դուք եք կազմակերպում... մի շնչեք... Իսկ ես ասում եմ՝ դա ի՞նչ նշանակություն ունի, կարևորը բարձրացված խնդիրներն են... դրանք այնպիսի հարցեր են, որ հուզում են բոլորին: Իմիջիայլոց, երևի սրանից ավելի հարմար առիթ չլինի, ուրեմն եղբորս աղջիկն ամուսնացել է և ամուսնու հետ ապրում են մոր բնակարանում: Եվ հիմա, ինչպես հաճախ է պատահում, եղբորս աղջիկն ու նրա սկեսուրը չեն հաշտվում իրար հետ: Երիտասարդները ուզում են բաժանվել, իսկ մայրը նրանց սենյակ չի տալիս: Ի՞նչ եք կարծում, նա իրավունք ունի՞: «Մարդը և նրա պարտքը» կարո՞ղ է անդրադառնալ այդ հարցին... Կանեք, չէ՞, շատ եմ խնդրում, արեք դա ինձ համար, ընկեր Միրաքյան...

Շահեն - Թույլ տվեք շնչել, բժշկուհի:

Բժշկուհի - Ինչպե՞ս թե, մինչև հիմա չէի՞ք շնչում: Հիանալի թոքեր ունեք: Ուրեմն կօգնե՞ք, խոստանո՞ւմ եք:

(Ներս է մտնում Նազիկը):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Այո... այո... Նազի՞կ... դու է՞լ եկար...

Նազիկ - Հա, ասացի իրեն, այնքան ուրախացավ... իսկ դու դեռ չե՞ս...

Բժշկուհի - Նստեք... շնչեք... խորը, ավելի խորը...

Շահեն - *(Շնչելու հետ):* Ուստա Հովսեփ, դուք բարի, մեծահոգի և ազնիվ մարդ եք...

Հովսեփ - Ե՞ս...

Բժշկուհի - Խորը, ավելի խորը...

Շահեն - *(Համարյա հառաչելով):* Ուստա Հովսեփ... դեմ մի եղեք Նազիկի ու... Մանվելի ամուսնությանը... Մանվելը հրաշալի տղա է... մեր աչքի առաջ է մեծացել...

Հովսեփ - Ի՞նչ, երբեք...

Շահեն - Բայց ինչո՞ւ...

Հովսեփ - Հայրը որ խմում է, տղան էլ կխմի, հա, գեները հո սուտ չեն:

Շահեն - Սուտ են, ուստա Հովսեփ. այդ գիրքը, որ ես ձեզ տվել էի, շրջանառությունից վաղուց դուրս է եկել... չի հաստատվում:

Հովսեփ - Ո՞նց թե...

Շահեն - Հա, հա, օրինակ, դուք ինձ պատմել եք, թե ձեր պապի հայրը հոգեկան խանգարում է ունեցել, իսկ դուք, տեսնո՞ւմ եք, առողջ մարդ եք...

Հովսեփ - Նրա գեները Նազիկին են անցել, գիժ չի, ի՞նչ է... Փիլիսոփայական գիտությունների թեկնածուից հրաժարվում է, մեխանիկ Մանվելին է ուզում...

Բժշկուհի - Հովսեփ, սիրելիս, եթե ձեր կինն էլ այդպես մտածեր, հիմա ո՞ր փիլիսոփայի կինը կլիներ...

Հովսեփ - Ի՞նչ... դուք է՞լ, բժշկուհի...

Շահեն - Ես չէի խառնվի, ուստա Հովսեփ, եթե Մանվելին լավ չճանաչեի: Հոյակապ մարդ է, լուրջ, կազմակերպված...

Նազիկ - Նրան հարցրու...

Հովսեփ - Նազի՞կ, հապա մի դուրս թռիր, շուտ... դրան տեսեք...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բժշկուհի - Վարպետ Հովսեփ, աղջկա բախտին քար մի գցեք, սիրելիս, սերը... սերը... երկնային պարգև է, սերը սրբագործում, ազնվացնում է մարդուն... Հիշո՞ւմ եք ինչ էր ասում ընկեր Շահեն Միրաքյանը անցյալ հաղորդման ժամանակ... «Սրբությունը հենց սերն է»։

Հովսեփ - Է, դե լավ, ճանապարհին կխոսենք, ախր շատ դժվար հարց է, է՜։

Շահեն - Շիֆերի հարցն էլ առանձնապես հեշտ չէր, ուստա Հովսեփ...

Հովսեփ - Ի՞նչ, ախ, Շահեն, Շահեն... Հիմա ո՞նց ես.,.

Շահեն - Ճիշտ, բժշկուհի, հիմա ո՞նց եմ...

Բժշկ ուհի - Օհ, լրիվ մոռացել էի... չեմ վախեցնի, ընկեր Միրաքյան, բայց և չեմ կարող հուսադրել... Հիմա մենք ձեզ կտանենք... Ձեզ հիվանդանոցային ռեժիմ է անհրաժեշտ... Նոր սարք ենք ստացել, կարդիոգրամմա կանենք, կպառկեք, կբուժվեք...

Շահեն - Իսկ հնարավոր չէ՞ տանը բուժվել...

Բժշկուհի - Ի՜նչ եք ասում, հիմա շտապօգնության և կից հիվանդանոցի ողջ կոլեկտիվը ձեզ է սպասում։

Շահեն - Ինչո՞ւ... օհ...

Բժշկուհի - Ինչպես թե ինչո՞ւ... Այսպիսի երջանիկ իրադարձությունը...

Շահեն - Բայց ես մեռնում եմ... Դա՞ եք համարում երջանիկ իրադարձություն... ա՜խ…

Բժշկուհի - Ա՜խ, ճիշտ որ... Ինչպե՞ս եք ձեզ զգում, ընկեր Շահեն Միրաքյան։

Շահեն - Սիրտս ցավում է, բժշկուհի...

Բժշկուհի - Կցավի, իհարկե կցավի... ձեր սիրտը մեր ամբողջ հասարակության համար է ցավում։ Դուք իմ խնդրանքը չե՞ք մոռանա...

Շահեն - Երբեք։

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

(Հիվանդանոցի մուտքը: երաժշտություն: Բժիշկներ, հիվանդներ: Ծափահարություններ, բացականչություններ):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մեկը - Բարի գալուստ, ընկեր Միրաքյան։

Մյուսը - Կեցցե մարդը և կեցցե նրա պարտքը։

Երրորդը - Ես քո ցավը տանեմ...

Չորրորդը - Բուժենք ընկեր Միրաքյանի սիրտը։ Նրա սիրտը մեր սիրտն է։

Հովսեփ - Էս ի՞նչ են անում, այ մարդ, էս ի՞նչ դիմավորում է։ Մեկ էլ մի անգամ եմ էսպիսի բան տեսել, երբ Անգոլայի պրեզիդենտն էր եկել... Պահ, գլխավոր բժիշկը։

(Ակորդեոնը նվագում է քայլերգ։ Բացականչություններ)։

Մեկը - Սանիտարները, որտե՞ղ են սանիտարները։

Գլխ. բժիշկ - Սանիտարներ պետք չեն, պատգարակը դուրս կբերեն բժիշկները։ Ղեկավարիր, ընկեր տեղկոմ...

Բարսեղյան - Ուշադրություն, զգուշությամբ դուրս բերել պատգարակը։ Կամաց, կամաց, ցեմենտ չեք տեղափոխում, ընկերներ։ Բարձրացրեք ուսերին, իսկ հիմա իջեցրեք պատվանդանի վրա։ Այդպես։ Մի կողմ քաշվեք, մի կողմ քաշվեք, մարդ չե՞ք տեսել, ինչ է, ձեզ թվում է հազվագյուտ կենդանի՞ է։ Կրկեսում չեք։ Մրտոյան, ի՞նչ եղան պիոներները, ես պիոներներ չեմ տեսնում ։

Մյուսը - Կգան, զանգահարել ենք, երևի ծաղիկների համար են ուշանում։

Գլխ. բժիշկ - Միջանցքի բոլոր ծաղկամաններից պոկեք ծաղիկները... անմիջապես։

Բարսեղյան - Վաղարշակ Պետրովիչ, վեցերորդ պալատի հիվանդը ծանր է...

Գլխ. բժիշկ - Քնաբեր տվեք։ Միջոցառումը ձախողե՞նք, ինչ է... ընկեր տեղկոմ, սկսեք։

Բարսեղյան - Լռություն, բարեկամներ, մեր պատվավոր հյուրին, հեռուստատեսության «Մարդը և նրա պարտքը» հանդեսի կազմակերպիչ և ոգեշնչող Շահեն Միրաքյանին ուղղված ողջույնի ջերմ խոսք ունի ասելու էնդոկրինոլոգների Երևանյան միջազգային սիմպոզիումի մասնակից, «Լինենք առողջ և ուրախ» հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ, հիվանդանոցի գլխավոր բժիշկ Վաղարշակ Պետրովիչ Մինասյանը։ Խնդրեմ, պրոֆեսոր...

Շահեն - Օհ, ձեռքս... չեմ կարողանում շարժել։ Օ՜հ, չեմ կարողանում շարժել ձեռքս...

Գլխ. բժիշկ - Պետք էլ չէ, մեր թանկագին բարեկամ, մենք ձեր գլխի շարժումն արդեն ընդունում ենք որպես ողջույնի նշան։ Պառկեք հանգիստ և անշարժ։ Թանկագին բարեկամներ, բժիշկներ, բուժքույրեր, մայրապետներ և հիվանդներ։ Այսօր մեզ երջանիկ բախտ է վիճակվել՝ մեր հյուրընկալ հարկի տակ ընդունելու ժողովրդի

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կողմից անսահմանորեն սիրված մի մարդու, բժշկության բնագավառի աշխատողների անդավաճան բարեկամ, կարմիր խաչի և կարմիր մահիկի անխոնջ ջատագով ընկեր Շահեն Միրաքյանին...

Բարսեղյան - Վաղարշակ Պետրովիչ, վեցերորդ պալատի հիվանդը վատ է զգում:

Գլխ. բժիշկ - Քնաբեր տվեք: Մենք երջանիկ ենք, որ Շահեն Միրաքյանը քաղաքի բոլոր հիվանդանոցներից հատկապես մեր հիվանդանոցն է գերադասել...

Հովսեփ - Ես իմ ավտոյով բերեցի, Վաղարշակ Պետրովիչ...

Գլխ. բժիշկ - Եվ համոզված ենք, որ նրա ներկայությունն անդամ մեծ խթան կհանդիսանա շտապօգնության և հիվանդանոցի հետագա ծաղկման ու բարգավաճման համար: Զեկուցում ենք ձեզ, թանկագին բարեկամ, որ մեր միավորումը սիստեմատիկաբար կատարում և գերակատարում է իր առաջադրանքները... Ահա մեր աշխատանքային գրաֆիկը: Խնդրում եմ ուշադրություն դարձնել կորագծին...

Շահեն - Ուստա Հովսեփ, ուստա Հովսեփ, էս ի՞նչ են անում, ես խելագարվում եմ...

Հովսեփ - Էսպիսի դիմավորումից ո՞վ չի խելագարվի: Շահեն ջան, եթե հարմար առիթ լինի, գլխավոր բժշկին ասա՝ թող ինձ նոր ավտո տա : Որ ասի չունենք՝ չհավատաս, պետպլանը ֆոնդ է իջեցրել...

Շահեն - Օհ, սիրտս: Ձեր ավտոն հի՞ն է, ինչ է...

Հովսեփ - Դե նորն ուրիշ է, Շահեն ջան... Ինչո՞ւ պետք է մեխանիկ փեսայիս հույսին ընկնեմ, ճիշտ չէ՞...

Շահեն - Ուրեմն, ուրեմն համաձա՞յն եք... ձեռքս...

Հովսեփ - Դե որ քեզ նման մեծ մարդը քավոր է կանգնում...

Շահեն - Քավո՞ր, ե՞ս, մեկը լինի ինձ քավոր կանգնի... ՉԷ, չէ, ինչ քավոր, թիկունքս, թիկունքս... պաշտպան, պաշտպան, մեռնում եմ, ուշադրություն, թող հողն այրվի խուլիգանների ոտքերի տակ, մարդ է ձեր առջև, մարդ է ձեր առջև...

Գլխ. բժիշկ - Այո, այո, մի խանգարեք, ուստա Հովսեփ, ինչպես իրավացիորեն նշեց ընկեր Շահեն Միրաքյանը, մարդ է ձեր առջև և ավելին, գլխավոր բժիշկ: Մեր մեծ միավորումը զարգացման մեծ ճանապարհ ունի, և մենք, ընկեր Շահեն Միրաքյանի օգնությամբ, կվերացնենք այդ ճանապարհի խութերն ու խոչընդոտները: Նայեցեք ձեր շուրջը, սիրելի բարեկամ, տեսեք, թե շինարարները ինչպիսի աղբ են թողել իրենցից հետո, նայեցեք ձեր շուրջը...

Բարսեղյան - Վաղարշակ Պետրովիչ, նրան շարժվել չի կարելի,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գլխ. բժիշկ - Շրջսովետի գործկոմը մեղքը գցում է շինարարական տրեստի, իսկ շինարարական տրեստն էլ՝ շրջսովետի գործկոմի վրա, և ինչպես դուք իմաստուն կերպով նկատեցիք ձեր նախավերջին հաղորդման ժամանակ՝ «Սայլը տեղից չի շարժվում»։ Ո՞վ պետք է պատասխան տա շրջապատի այս անբարեկարգ վիճակի համար։ Նայեցեք ձեր շուրջը, թանկագին բարեկամ...

Բարսեղյան - Վաղարշակ Պետրովիչ, նրան շարժվել չի կարելի։

Գլխ. բժիշկ - Պայմանականորեն եմ ասում։ Որտե՞ղ է մարդը և որտե՞ղ է նրա պարտքը...

Շահեն - *(Նվազ ձայնով)։* Ես այստեղ եմ...

Գլխ. բժիշկ - Այո, նա այստեղ է։ Եվ ամեն ինչ լավ կլինի, ընկերներ։ Հաջորդ հաղորդումների ժամանակ «Մարդը և նրա պարտքը» հանդեսը քննադատության շիկացած երկաթով կայրի շինարարական տրեստի կառավարիչ Չոբանյանին, շրջսովետի գործկոմի բարեկարգման վարչության պետ Ծաղիկյանին, իմ ներքևի հարևան Սողոյանին, որը բացում է բոլոր ծորակները, որպեսզի ջուրը մեզ չհասնի...

Բարսեղյան - Մեր պալատները կապահովվեն անհրաժեշտ կահույքով...

Գլխ. բժիշկ - Քնաբեր տվեք... Օհ, կարծեցի դարձյալ վեցերորդ պալատի հիվանդի մասին ես ասում։

Բարսեղյան - Նա... նա այլևս ոչ մի բանի կարիք չունի... Վաղարշակ Պետրովիչ։

Գլխ. բժիշկ - Հիանալի է։ Իսկ որտե՞ղ են պիոներները։ Ընկեր ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար, ես պիոներներ չեմ տեսնում։ Ընկեր ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար... բայց ես ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարին էլ չեմ տեսնում։

Բարսեղյան - Երևի գնացել է պիոներների ետևից...

Գլխ. բժիշկ - Ուրեմն Ի՞նչ անենք, սպասե՞նք, առանց պիոներական ողջույնի ինչպե՞ս կլինի։ Դուք ի՞նչ կարծիքի եք, ընկեր Շահեն Միրաքյան։

Հովսեփ - Կարծես թե ուշագնաց է, Վաղարշակ Պետրովիչ։ Մի հատ ապտակ չհասցնե՞մ...

Գլխ. բժիշկ - Ինչ ես խոսում... Իսլամական երկրո՞ւմ ես, ինչ է... դա՞ ինչ հիմարություն է... Ապտակ տալ այդպիսի մարդուն...

Հովսեփ - Դրա մեջ ի՞նչ կա։ Մեր հարևանն է, փոքր ժամանակ էնքան եմ տվել...

Գլխ. բժիշկ – Չի՞ շնչում։

Հովսեփ - Համարյա չի շնչում։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գլխ. բժիշկ - Գուցե Զեյթունի հիվանդանոց ուղարկենք: Չգիտեմ որտեղից են իմացել, անընդհատ զանգում են, թե այսօր հերթապահ հիվանդանոցը մենք ենք, ընկեր Շահեն Միրաքյանին մեզ ուղարկեք... Եթե չի շնչում, գուցե ուղարկենք պրծնենք:

Հովսեփ - Չէ, չէ, համարյա շնչում է...

Գլխ. բժիշկ - Եթե շնչում է, ուրեմն կպահենք... Նման հիվանդները փողոցներում թափված չեն: Կոլեգաներ, բարձրացրեք պատգարակը, զգույշ, հանդարտ, դրեք ուսերին, այդպես... տարեք վեցերորդ պալատ: Ինչպես հասկացա, այնտեղ տեղ է բացվել, այնպես չէ՞, բժշկուհի Բարսեղյան...

Բարսեղյան - Այո... իսկ գուցե կարմիր անկյո՞ւն տանենք...

Գլխ. բժիշկ - Ինչո՞ւ, արձան հո չէ: Տարեք վեցերորդ պալատ... շարժվեցինք, երեք, չորս...

(Ակորդեոնը սկսում է նվագել հանդիսավոր քայլեր):

Վերջացրեք, բժիշկ Զաքարյան... ինքնագործունեության համերգ չէ... գնացինք...

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Վեցերորդ հիվանդասենյակը: Չորս տեղանոց սենյակ: Երկու հիվանդ նստած են իրենց մահճակալներին: Երրորդին պառկած է մի ծերունի: Չորրորդի վրա պառկած է Շահեն Միրաքյանը):

1-ին - Սուս, թող քնի...

2-րդ - Ախր շատ հանգիստ է քնած: Ո՞վ գիտե, գուցե...

1-ին - Աստված հեռու պահի: Մի օրվա համար մեկը հերիք է:

2-րդ - Բայց բախտներս բերեց: Մեզ մոտ որ տեղ չազատվեր, ընկեր Շահեն Միրաքյանին բոլորովին ուրիշ տեղ կտանեին: Հետո ետևից խոսել չլինի, հանգուցյալը շատ էր խոռացնում:

1-ին - Այո, այո, զարմանալի օժտված մարդ էր, այդպիսի ձայնական հարուստ տվյալներով նա շատ առաջ կգնար... Հեռվից թվում էր, թե քառաձայն երգչախմբի և փողային նվագախմբի միացյալ փորձ է: Ես այդ գործերից լավ եմ հասկանում, խմբավար եմ եղել:

2-րդ - Ողորմի իրեն, ինչպես ասում են՝ իր երգը երգեց:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

3-րդ - *(Արթնանում է):* Ո՞վ է երգում... մի քիչ բարձրացրեք ռադիոն, ես չեմ լսում։

2-րդ - Քո տունը չքանդվի, դեռ ուզում ես լսել, արդեն ինը ժամ է քնած ես։

3-րդ - Ութ կլինի։

2-րդ - Ասում եմ՝ ինը։

3-րդ - Ա՛յ ախպեր, ինձ հետ մի վիճիր, էլի, որ ասում եմ ութ, ուրեմն ութ։ Ինձ ժամացույց - մամացույց ցույց մի տուր, ես տասը տարի է, ինչ յոգերի սիստեմով ներշնչելով քնում եմ ուղիղ ութ ժամ։

1-ին - Յոգերի սիստեմո՞վ։

3-րդ - Հա, ի՞նչ կա։

2-րդ - Եվ ուղիղ ութ ժա՞մ։

3-րդ - Իհարկե, եթե ինը ժամ քնեի, ինձ վաղուց հանել էին աշխատանքից։

1-ին - Ի՞նչ եք ասում։ Ձեր աշխատանքը քնելու հետ է կապված։

3-րդ - Հա, գիշերային պահակ եմ։ Յոգերի սիստեմով ինձ այնպես եմ ներշնչել, որ փոխարինողի գալուց ուղիղ մի ժամ առաջ վեր եմ թռչում։

2-րդ - Իսկ, ներեցեք, ձեր փոխարինողը յոգերի սիստեմին ծանոթ չէ՞։

3-րդ - Օգուտ չունի։ Ցերեկային պահակ է։ Վա՞յ, էս մեր Գերասիմին փոխել են։ Հը՞։ Էդ ե՞րբ տեղափոխեցին, որ ես չիմացա։

1-ին - Երբ որ քնած էիր յոգերի սիստեմով։

3-րդ - Չեմ հասկանում՝ լավացավ դո՞ւրս եկավ, թե ուրիշ պալատ են տարել։

2-րդ - Ուրիշ, ուրիշ տեղ տեղափոխեցին։

3-րդ - Բա սա ո՞վ է։ Վայ, ծանոթ է, ես սրան շատ եմ տեսել։ Երևի մեր մթերողներից է, կամ էլ շրջիկ դասախոս... Չէ, հա, մեր խնամիներից կլինի... Սպասիր, է, որտեղ եմ տեսել...

1-ին - Ձեզ շատ մի տանջեք, Եփրեմ քեռի, Շահեն Միրաքյանն է։

3-րդ - Ի՞նչ, ո՞վ է, չի կարող պատահել, Շահեն Միրաքյա՞նը։ Ընկեր Շահեն Միրաքյա՞նը։ Այ քեզ բան։ Ես նրան նամակ էի գրել։ Չլինի ինձ համար է եկել։ Վայ, ես քո ցավը տանեմ, ընկեր Շահեն Միրաքյան։ Սպասել, սպասել ու քնել է, հա ։ Ախր նա ուրիշ մարդ է, է՛, ուրիշ, ախր անցյալ հաղորդման ժամանակ հենց էդ մասին էր խոսում։ Ասում էր՝

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

«Լինենք հոգատար և ուշադիր, չմոռանանք, որ ամեն նամակի ետևում մարդ է կանգնած, կենդանի մարդ»։ Վայ, ես քո կենդանի ցավը տանեմ ։

2-րդ - Սուս մնա, Եփրեմ, հիվանդ է ընկեր Միրաքյանը։

3-րդ - Հիվա՞նդ, ի՞նչ է պատահել, ձեզ մատաղ։

1-ին - Դեռ չեն պարզել։ Բժիշկները խորհրդակցում են, Եփրեմ քեռի։

3-րդ - Պահո, հիվա՞նդ։ Էլ ուրիշ մարդ չկա՞ր։ Ախր ես ասում էի, է՛, շատ էր ցավում մարդկանց համար։ Որ խոսում էր, հոգոց հո չէր հանում, հոգոց հո չէր հանում, մարդու լաց էր գալիս։ Հատկապես երբ ասում էր՝ «Դժբախտաբար մեր շրջապատում, մեր շրջապատում դեռևս կան մարդիկ...»։ Ու հոգոց էր հանում...Սի՞րտ կդիմանա։ Սի՞րտն է։

1-ին - Դեռ պարզ չէ, խորհրդակցում են։

3-րդ - Որ խորհրդակցում են, ուրեմն սիրտն է։ Ուրիշ բան լիներ, արդեն խիրուրգները բացել տեսել էին…

2-րդ - Է, կընտրես, հա... Եփրեմ...

3-րդ - Հնարելու ի՞նչ կա։ Մեր գյուղացիներից մեկի մոտ ստամոքսի խոց էին կասկածել, բացել տեսել էին, որ հիանալի ստամոքս է։ Ինչ անեն, ինչ չանեն, վերջը հանել էին կույր աղիքը, որպեսզի խոսակցություն չլինի։ Հարևանս բողոքել էր վերահսկողության կոմիտե, մարդիկ քննել էին ու ապացուցել, որ էդ աղիքը իսկի կույր էլ չի եղել։ Բա՞…

2-րդ - Վայ, Եփրեմ, Եփրեմ... չմեռնես դու։

1 - ին - Լռեցեք, խնդրում եմ, բավական է, հենց այնպես տեղի, անտեղի խոսում-ծիծաղում եք, իսկ ես մտատանջությունների մեջ եմ։ Եթե ընկեր Շահեն Միրաքյանը այստեղ շարունակի պառկել, ո՞վ պետք է ղեկավարի «Մարդը և նրա պարտքը» հանդեսը, ո՞վ պետք է խոսի ժողովրդի հետ, հոգա նրա բազում ցավերը...

2-րդ - Ճիշտ որ, է՛, ուրեմն էլ «Մարդը և նրա պարտքը» չպետք է լինի։

3-րդ - Բա ես իմ նամակի պատասխանը ումի՞ց պիտի ստանամ։

1-ին - Լռեք, ի սեր աստծո, ես կարծես ինչ-որ ձայն լսեցի...

2-րդ - Ո՞վ էր, ի՞նչ էր ուզում...

3-րդ - Հը՞...

1-ին - Լռեցեք, ասում եմ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Լռություն):

Շահեն - *(Փակ աչքերով մրմնջում է):* Հաց...

2-րդ - Նա է, նա է, ի՞նչ ասաց...

1-ին - Կարծես թե ասաց՝ - «հաց»։

3-րդ - Հա՞ց, ասաց՝ հա՞ց։ Մեռնեմ արևին, գիտի, որ այս տարի երաշտ էր, դրա համար էլ հացի մասին է մտածում։ Հիվանդ ժամանակ էլ հանգիստ չունի։ Ապահով մնա, ընկեր Շահեն Միրաքյան շան, մեր շրջանը հացի լավ բերք է ստացել...

1-ին - Ոչ, ոչ, նրան անհանգստացնում է այն խնդիրը, որ որոշ մարդիկ անփույթ են հացի նկատմամբ, թափում և փչացնում են։ Հիշո՞ւմ եք ինչ ասաց նա նախավերջին հաղորդման ժամանակ, մինչև հիմա էլ, երբ հիշում եմ, մարմինս փշաքաղվում է։ Ասաց. «Հացը սրբություն է, ով հացն է ոտնահարում, նա սրբությունն է ոտնահարում»։

2-րդ - Բայց կարծեմ թե սիրո մասին այդպես ասաց։

1-ին - Ինչ եք ասում, հացի մասին էր...

3-րդ - Ի՞նչ հացի, բոքո՞ն...

1-ին - Ընդհանրապես, ընդհանրապես հացի։ Ե՛վ բոքոնի, և՛ մատնաքաշի, և՛ լավաշի մասին...

2-րդ - Բայց ես քավորիս տանն էի լսում, ասաց. «Սերը սրբություն է, ով սերն է ոտնահարում, նա սրբությունն է ոտնահարում»։

1-ին - Չվիճենք, խնդրում եմ, ես հիանալի լսողություն ունեմ։ Մի ժամանակ խմբավար եմ աշխատել։

2-րդ - Բայց ես քավորիս տանն էի լսում...

1-ին - Բարեկամ, թեկուզ ձեր զոքանչի տանը լսեիք, թեկուզ եղբոր, աներորդու, քեռու և փեսայի, դրանից էությունը չի փոխվում և չի փոխվում նաև «Մարդը և նրա պարտքը»։

2-րդ - Վայ քիչ է մնում հենց իրեն հարցնեմ... ընկեր Շահեն Միրաքյան...

3-րդ - Ի՞նչ ես անում, այ տղա։

2-րդ - Ընկեր Շահեն Միրաքյան, դուք հացի՞ մասին էիք ասում, թե՞ սիրո...

Շահեն - Հաց, մի կտոր հաց....

2-րդ - Տեսա՞ք...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

1-ին - Հիվանդ մարդուց ի՞նչ կուզեիք...

(Շահենն արթնանում է):

Շահեն - Այս որտե՞ղ եմ ես... որտե՞ղ եմ ես...

1-ին - Հանգիստ եղեք: Հիվանդանոցում եք, ընկեր Շահեն Միրաքյան...

Շահեն - Հիվանդանոցո՞ւմ... Ի՞նչ հիվանդանոց... Ինչո՞ւ... Ախ հա, հիշեցի... սիրտս... ձեռքս... թիկունքս... Իսկ, իսկ որտե՞ղ են պիոներները...

2-րդ - Խեղճ մարդ... Ի՞նչ պիոներներ:

Շահեն - Ախ, հա՛... Իսկ իմ վիճակը ծա՞նր է...

1-ին - Գիտե՞ք, դեռ չեն որոշել, բժիշկները խորհրդակցում են:

3-րդ - Ընկեր Շահեն Միրաքյան, շատ - շատ ներողություն, իմ նամակը ստացե՞լ եք: Եփրեմ Քոլոզյան, Ալավերդուց: Որպեսզի մեր գյուղացիները գլխի չընկնեն, ստորագրել էի. Սիմոն Պետրոսյան...

1-ին - Վերջ տվեք, Եփրեմ քեռի, մարդը հիվանդ է...

3-րդ - Վայ, մարդը հիվանդ է, հո օրենքն էլ հիվանդ չէ՞, ճիշտ չե՞մ ասում, ընկեր Շահեն Միրաքյան: Բա իմ հարևանն ինչ իրավունք ունի, որ իր արտաքնոցը բերել դրել է հենց իմ հողամասի կողքին:

Շահեն - Օհ, հենց ձեր հողամասի կողքի՞ն...

3-րդ - Երկու հազար մետր հող ունի, ուրիշ տեղ չգտա՞վ:

2-րդ - Եղբայր, հողամասն իրենը, արտաքնոցն իրենը, որտեղ կուզի՝ կդնի:

3-րդ - Եղա՞վ: Դե թող տանի իր ննջարանում դնի: Ճիշտ չե՞մ ասում, ընկեր Շահեն Միրաքյան: Ասում եմ՝ նրան ոնց որ պետք է ձեր հաղորդման մեջ մի լավ հուպ տաք... հը՞...

1-ին - Ծիծաղելի բան եք ասում, Եփրեմ քեռի, մասնավոր արտաքնոցը հանդեսի հա՞րց է: «Մարդը և նրա պարտքն» է որոշելու, թե որտեղ պետք է տեղադրել...

3-րդ - Այո, բա ո՞վ: Եթե ես իմ ծաղիկներից հոտ եմ քաշում և բոլորովին ուրիշ հոտ եմ առնում, օրենքն ինձ չպիտի՞ պաշտպանի: Ճիշտ չե՞մ ասում, ընկեր Շահեն Միրաքյան: Բա դա եղավ մարդկությո՞ւն:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Օհ... այ, այդտեղից էլ պետք է սկսել, Եփրեմ քեռի... դա ավելի շատ մարդկության, մարդկայնության հարց է: Բարոյական խնդիր է: Ձեր շրջսովետի գործկոմի նախագահը Բեգլոյանը չէ՞...

3-րդ - Բեգլոյանն է, ընկեր Շահեն Միրաքյան... Մի երկու ամիս առաջ հեռուստացույցով հետը խոսում էիք...

Շահեն - Այո, այո, ես մի երկտող կգրեմ, նրան կտաք... Իմ կարծիքով նա կկարողանա այդ հարցը լուծել... Հիմա ձեռքիս գրիչ չկա... Օհ, գլուխս պտտվում է:

3-րդ - Գրի՞չ... Ես միշտ պահում եմ, ըհը, ընկեր Շահեն Միրաքյան ջան, ըհը, գրի... Եփրեմ Քոլոզյան... ճիշտ է, հա, ես Սիմոն Պետրոսյան էի գրել, բայց դու գրի Եփրեմ Քոլոզյան...

Շահեն - Ախ, գլուխս, սիրտս... *(Գրում է):*

2-րդ - *(Առաջինին):* Ինչ աներես մարդ է, տո... մարդը հիվանդ մեռնում է, էլի էդ արանքում հաջողացրեց արտաքնոցի հարցը լուծել... Իսկ ես անհարմար եմ զգում իմ հեռախոսի համար խոսել: Մարդ ենք, չէ՞, թեև հերթի մեջ վաղուց առաջինն եմ... *(Բարձր):* Հաստատ գիտեմ, որ ընկեր Շահեն Միրաքյանը մի րոպեում կլուծի իմ հեռախոսի հարցը, բայց այս վիճակում ինչպե՞ս դիմեմ նրան, մարդ ենք, չէ՞...

Շահեն - Հերթում առաջինն եք և հեռախոս չե՞ն տալիս, ինչո՞ւ... գուցե համա՞ր չկա... Ահ, թիկունքս, թիկունքս... հիմա այն չէ...

2-րդ - Ինչո՞ւ, ձեզ է՞լ է թիկունք հարկավոր... Վայ, հազար ներողություն, չէի ուզում ձեզ անհանգստացնել, ո՞նց լսեցիք, ընկեր Շահեն Միրաքյան… Ոնց էլ իմաստուն ձևով իմացաք, որ թիկունքի հարց է: Որ թիկունք ունենայի՝ վաղուց էին դրել... Ախ, եթե դուք ինձ թիկունք դառնաք.,, ,

Շահեն - Իսկ ո՞ր կայանն է, ընկեր...

2-րդ - Սուքիասյան: 55-ը:

Շահեն - 55-ը՞: Նոր կայան է, համար կունենան... եթե ողջ մնամ, սիրելի ընկեր...

2-րդ - Սուքիասյան...

Շահեն - Ձեզ համար կխնդրեմ մինիստրի տեղակալին...

2-րդ - Ողջ կմնաք, դա՞ ինչ խոսք է, ընկեր Շահեն Միրաքյան, որ դուք մեռնեք, բա մենք ի՞նչ անենք... Վայ, պատահաբար մոտս համ գրիչ կա, համ թուղթ: Հիմա կգրե՞ք...

Շահեն - Ի՞նչ եղան պիոներները... օհ, այսինքն բժիշկները... Տվեք, տվե՛ք, գրեմ...

(երկտող է գրում):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

1-ին - *(Մեկուսի):* Ահավոր անտակտ մարդիկ են... Նողկալի է նայելը: Բայց ինչպես իմաստուններից մեկն է ասել «Անբարոյական մարդկանց շրջապատում բարոյական լինելը անբարոյականություն է»: (Բարձր): Սիրելի Շահեն Միրաքյան, ես ևս մի խնդրանք ունեմ ձեզ...

Շահեն - Եվ դու՞ք... լսում եմ... ասեք, ասեք՝ քանի դեռ լսում եմ...

1-ին - Այն հարցերի համեմատությամբ, որ բարձրացնում և լուծում եք դուք, սա դատարկ բան է... կհամաձայնվեք տեղ հասցնել իմ խնդրանքը...

Շահեն - Չէ, լավ չեմ, լավ չեմ... ինչպես մեր կուրսեցի Տիգրանն էր սրամտում՝ երևի Գաբրիել հրեշտակապետին ներկայանալու ժամս է... Իսկ ինչ հարց է, բարեկամս...

1-ին - Իմ հարցը, ազնիվ ընկեր, կապված է այն էակի հետ, որին դուք շուտով ներկայանալու եք...

Շահեն - *(Սարսափած):* Գաբրիել հրեշտակապետի՞ն...

1-ին - Ոչ, ոչ, նրան կոչում են Վաղարշակ Պետրովիչ...

Շահեն - Գլխավոր բժի՞շկը:

1-ին - Այո: Ներեցեք, թեև ես մասնագիտությամբ շեֆ - խոհարար եմ, բայց էությամբ, արյունով, ինչպես ասում են՝ մտավորական մարդ եմ և հիվանդանոցի ճաշերը չեմ մարսում...

Շահեն - ճա՞շ, ճաշ... ճաշ...

1-ին - Տեսնո՞ւմ եք, դեռ չկերած, ձեր սիրտն էլ է խառնում , որովհետև մենք մտավորական մարդ ենք: Եվ ահա գլխավոր բժիշկը հրաժարվում է մշտական անցաթուղթ տալ տեղակալիս, որպեսզի նա ամեն օր ռեստորանից ուտեստներ բերի ինձ: Եվ ամեն մի ճաշը տեղակալիս, այսինքն մեր ընդհանուր եկամուտի վրա, երեք ռուբլի է նստում, որովհետև այդքան է պահանջում հիվանդանոցի պահակը:

Շահեն - Բայց չէ՞ որ ժամը հինգից յոթը մուտքն ազատ է:

1-ին - Ճաշել հինգից հետո՞... Բայց չէ՞ որ մենք մտավորական ենք: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհում մտավորականությունը ճաշում է ժամը երկուսին և ոչ ուշ... Ես կարծում եմ, դուք լսել եք աշխարհի մեծագույն իմաստուններից մեկի խորհուրդը՝ նախաճաշը ինքդ կեր, ճաշդ կիսիր բարեկամիդ հետ, ընթրիքդ տուր թշնամուդ:

Շահեն - Ա՛խ, ես ոչ բարեկամ ունեմ, ոչ թշնամի...

1-ին - Ի՞նչ եք ասում, ամբողջ երկիրը ձեր բարեկամն է…

2-րդ, 3-րդ - Վայ, բա մենք ի՞նչ ենք, մենք ձեր բարեկամն ենք, ընկեր Շահեն Միրաքյան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

1-ին - Ուրեմն ի՞նչ, տեղ կհասցնե՞ք իմ խնդրանքը, սիրելի և մեծարգո ընկեր...

Շահեն - Այո, այո, իհարկե... Իսկ ձեր տեղակալը այսօր գալո՞ւ է... ճաշ բերելո՞ւ է…

1-ին - Եթե անցաթուղթ լինի, վաղը կբերի...

Շահեն - Վա՞ղը... Վաղը ուշ կլինի... ուշ կլինի...

1-ին - Ինչո՞ւ, ինչո՞ւ, ընկեր Շահեն Միրաքյան... ընկեր Շահեն Միրաքյան... ինչո՞ւ ուշ կլինի.

2-րդ - Ի՞նչ ես գոռում, մտավորական շեֆ -խոհարար, չե՞ս տեսնում, որ նորից ուշքը գնաց...

3-րդ - Սուս մնա, այ մարդ, սուս մնա...

1-ին - Իհարկե, սուս մնա, դուք ձեր արտաքնոցի ու հեռախոսի հարցերը լուծեցիք, իսկ ես սուս մնամ... Երբեք... սուս չեմ մնա: Եվ հենց հիմա կկանչեմ հերթապահ բժշկին:

(Մեղմում է զանգի կոճակը: Նորից է զանգում երկար ու համառ. ներս է մտնում Մանվելը, խալաթով):

Մանվել - Բարև ձեզ:

1-ին - Օ՜, հարգանքներս, նորաթուխ շրջանավարտ, լսողության կողմից ինչպե՞ս եք:

Մանվել - Ո-ոչինչ...

2-րդ - Բա դուք խիղճ չունե՞ք, կես ժամ է զանգ ենք տալիս, դա՞ են ձեզ սովորեցրել վեց տարի, հա՞...

1-ին - Մեծ-մեծ երդումներ են տալիս Հիպոկրատեսին:

Մանվել - Ոչ, ոչ, դուք երևի շփոթում կք, ես ոչ ոքի էլ երդում չեմ տվել:

1-ին - Ավելի վատ: Արդեն երդում էլ չեն տալիս... ծնողներն են երդում և ոչ միայն երդում տալիս ընդունվելիս էլ, ավարտելիս էլ... 3-րդ - Երանի մեզ... Սա էլ մեզ պիտի փրկի... Տղա ջան, կույր աղիքի տեղը գիտե՞ս:

Մանվել - Կույր աղիքի՞... Չէ, իսկ ի՞նչ կա...

3-րդ - Երանի մեզ...

2-րդ - Իսկ սրտի տե՞ղը:

Մանվել - Ինչո՞ւ չգիտեմ, սա չէ՞ :

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

2-րդ - Փառք աստծո... մոտավորապես իմացավ: Այդ կողմերում է:

1-ին - Երիտասարդ բարեկամ, իսկ եթե հանկարծ անհրաժեշտություն լինի վիրահատություն կատարելու, կարո՞ղ եք:

Մանվել - Վիրահատությո՞ւն... Ինչպե՞ս կարող եմ, ես հո վիրաբույժ չեմ:

1-ին - Օ՜, ուրեմն թերապևտ եք...

Մանվել - Ոչ, ինչ եք ասում:

2-րդ - Այ տղա, բա ի՞նչ ես, ռենտգենոլոգ ես, օնկոլոգ ես, էլ ի՞նչ կա: Թե՞ ուրոլոգ...

Մանվել - Մեխանիկ...

3-րդ - Ինչ ե՞ս...

Մանվել - Ավտոմեխանիկ:

2-րդ - Վայ, մեզ ձե՞ռ ես առնում, այ տղա, դու բժիշկ չե՞ս:

Մանվել - Չէ, ինչ եք ասում...

1-ին - Ուրեմն ինչո՞ւ ներս մտաք...

Մանվել - Ես Շահենին... Եղբորս մոտ եմ եկել, այստեղ չէ՞:

(Հիվանդները մի կողմ են քաշվում):

Վա՞յ, այստեղ է: Քնա՞ծ է: Շահեն, Շահեն ջան... Շահեն...

Բոլորը - Եղբա՞յրն եք... Մենք երևի դուրս գանք: Հա...

Մանվել - Չէր խանգարի, գիտե՞ք: Շահեն ջան, ախպեր ջան...

(Հիվանդները հեռանում են):

Շահեն - *(Մրմնջում է):* Մանվել... ո՞նց ես, Մանվել ջան...

Մանվել - Ես լավ եմ, քեզ ի՞նչ է եղել, մեծ ախպեր...

Շահեն - Ուստա Հովսեփին տեսա՞ր...

Մանվել - Հա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Որ մեկ էլ տեսնես, ասա գլխավոր բժշկի հետ խոսեցի, նոր ավտոն նրան կտան…

Մանվել - Դե, գիտես ինչ, նրա հերն էլ... հիմա ասել էի, հա...

Շահեն - Մի ասա, Մանվել ջան, լավ մարդ է ուստա Հովսեփը... դե աղջիկ ամուսնացնելը հեշտ բան հո չի, մարդ է, հայր է, անհանգստանում է...

Մանվել - Մենակ թե դու շուտ լավացիր, Շահեն ջան, ամեն ինչ լավ կլինի... կարևորն այն է, որ ես ու Նազիկը սիրում ենք իրար: Նազիկն էլ չհասկանալով, որ իսկական հիվանդ ես, հիմար-հիմար դուրս է տվել քեզ մոտ... անհանգստացրել է քեզ...

Շահեն - Չէ, ոչինչ, ոչինչ, բա հարևանը ո՞ր օրվա համար է... Մանվել ջան:

Մանվել - Մի լավ ջղայնացա վրան, հիմա պատի տակ կանգնած լաց է լինում:

Շահեն - Իզուր, իզուր, Մանվել... Կգնաս ու ներողություն կխնդրես: Ինչպե՞ս կարելի է: Գիտե՞ս, մի անգամ հեռուստատեսությամբ մի նյութ կարդացի մեր հանդեսում: Նշանավոր հոգեբաններից մեկը գրել էր, թե «Ուժգին սերը որոշ դեպքերում ուժգին լույսի պես մարդկանց շլացնում է, խանգարում սթափ նայել շրջապատին, մարդկանց և իրականությանը»: Երևի դա հենց այդ դեպքն է: Ուրախացիր, որ Նազիկը այդպես սիրում է քեզ,

Մանվել - Հա, Շահեն ջան... Մի բան եմ ուզում ասել...

Շահեն - Ասա... գուցե որևէ երկտո՞ղ է պետք քեզ, Մանվել:

Մանվել - Ի՞նչ, երկտողն ի՞նչ եմ անում... Ինձ երկտողը չի փրկի...

Շահեն - Հա՞, ներիր, ներիր, եղբայր, ի՞նչ էիր ուզում ասել...

Մանվել - Գիտես ինչ, շատ մտածեցի... դե առաջին օրն է, չիմացա, թե ինչ կարելի է, ինչ չի կարելի... Մի խոսքով որոշեցի... Մի խոսքով քեզ համար լավաշի մեջ փաթաթած տաք-տաք քյաբաբ եմ բերել: Կարո՞ղ է ուտես...

Շահեն - Ի՞նչ... քյաբա՞բ...

Մանվել - Ըհը... չի կարելի, հա՞...

Շահեն - Ո՞ւր է, ո՞ւր է, Մանվել ջան, ինչպե՞ս թե չի կարելի... իմ բարեկամ, իմ թշնամի, իմ ախպեր... Ո՞ւր է քյաբաբը... Դու շրջվիր, հա՞, շրջվիր, խնդրում եմ...

Մանվել - Վայ, քեզ ի՞նչ պատահեց...

Շահեն - Թող... հանգիստ... ուտեմ... Մի նայի, հա՞... երկու օր է հաց չեմ կերել... այ հիմի... որ մեռնեմ… իսկի պետքս էլ չէ... Քանի՞ բաժին է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մանվել - Երկու, երկու բաժին է... ասացի տաք - տաք...

Շահեն - Խաբել են շան որդիք... բա սա... երկու բաժի՞ն է... հարկավոր է անզիջում... պայքար... սկսել այդ... այդ քյաբաբչիների դեմ... Թող հողն այրվի նրանց ոտքերի տակ...

Մանվել - *(Ծիծաղում է):* Այդքան զգացմունքով դեռ ելույթ ունեցած չկայիր, Շահեն ջան... Անուշ արա, էլի կբերեմ...

Շահեն - Վա՞յ... այս ի՞նչ պատահեց, Մանվել, Մանվել...

Մանվել - Ի՞նչ պատահեց...

Շահեն - Չի ցավում: Ոչ սիրտս է ցավում, ոչ թևս է ցավում, ոչ թիկունքս է ցավում... Մենակ ստամոքսս է ցավում, էլի քյաբաբ է ուզում...

Մանվել - Չնեղանաս, Շահեն ջան, գուցե ընդհանրապես ստամոքսդ է ցավացել սովից, կարծել ես թե սիրտդ է, հը՞... .

Շահեն - Ո՞վ գիտե... Հենց այդպես էլ եղած կլինի... Ախ, ինչ հրաշալի բան է կուշտ լինելը: Այո, չի սխալվել աշխարհի մեծագույն իմաստուններից մեկը, երբ ասել է, թե ավելի լավ է կուշտ լինել, քան քաղցած: Ես հիմա կդառնամ առողջ և առույգ, եթե ուտեմ նաև այս վերջին մոհիկանը... այսինքն քյաբաբը...

Մանվել - Հերիք է, մի բան պիտի խնդրեմ, Շահեն ջան:

Շահեն - Ի՞նչ... *(Մեկուսի):* Սուտ բան է, այս աշխարհում անշահախնդիր սեր չկա: Եվ ամեն ինչի համար պետք է վճարել, առավել ևս քյաբաբի համար:

Մանվել - Դու ինձ հետ պետք է գաս:

Շահեն - Ինչպե՞ս, այս շորերո՞վ, ինձ ո՞վ կթողնի, սիրելի Մանվել:

Մանվել - Եթե սիրում ես Նազիկին ու ինձ, եթե ուզում ես տեսնել մեր բախտավորությունը, պիտի դուրս գաս, Շահեն...

Շահեն - Էլի ի՞նչ է պատահել: Ուստա Հովսեփը նոր ավտոմեքենա էլ ստացավ, է՞լ ինչ է ուզում...

Մանվել - Ասում է, ասում է՝ ես քո հոր ու մոր երեսը տեսնել չեմ ուզում: Թե Շահենը կգա Նազիկին ուզելու, կտամ, թե չի գա՝ դու իմ աղջկա երեսը չես տեսնի:

Շահեն - Կներես, բայց դա արդեն ագահություն է, Մանվել: Ուշադրություն չե՞ս դարձրել բոլոր հեքիաթներում ու լեգենդներում չար ոգիները, կախարդ պառավներն ու վիշապները իրենց զոհերի առաջ միայն երեք պայման են դնում: Ընդամենը երեք պայման: Թե կատարեցիր՝ կփրկվես, թե չկատարեցիր՝ կզոհվես: Ես քո և Նազիկի երջանկության

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

համար նրա տան շիֆերների հարցը լուծեցի, արտասահմանյան նոր լվացարան գտա նրա համար, բաժանորդագրեցի հայկական հանրագիտարանին, միջնորդեցի, որ նոր ավտոմեքենա ստանա… է՞լ ինչ է ուզում այդ մարդը: Սա քեզ մի հին հեքիաթ չի՞ հիշեցնում: Հիմա էլ ոսկե ձկնիկի՞ն է ուզում իրեն ծառա ունենալ...

Մանվել - ի՞նչ անեմ, Շահեն ջան, ձեռքն եմ ընկել... Սիրում եմ, ի՞նչ անեմ: Ուզում եմ ամուսնանալ, ի՞նչ անեմ... Դու չե՞ս սիրել, ի՞նչ է...

Շահեն - Ե՞ս... ես... Ինչո՞ւ ես այդ հարցը տալիս, Մանվել: Ես, այո, չեմ թաքցնի, սիրել եմ...

Մանվել - ճի՞շտ: Բա ինչո՞ւ չամուսնացար:

Շահեն - Մերժեց, մերժեց, Մանվել...

Մանվել - Ինչպես թե: Ո՞վ կարող էր մերժել քեզ... Աչքովս էլ տեսնեմ, չեմ հավատա, ո՞վ կարող է մերժել Շահեն Միրաքյանին...

Շահեն - Նա, այն աղջիկը, որ նման էր հրեշտակի...

Մանվել - Եթե նա հրեշտակի նման էր, դու աստծո նման ես, Շահեն ջան: Նա քեզ չէ՞ր ճանաչում, ինչ է... հեռուստացույց չէ՞ր նայում:

Շահեն - Այն ժամանակ ես հեռուստատեսությունում չէի, եղբայր... Եվ նա ոչ թե հեռուստացույց էր նայում, այլ իմ շալվարին, իսկ շալվարիս աջ ծունկը կարկատած էր... համարյա նույն գույնի թելով, գիտե՞ս, բայց երևում էր: Եվ նա ասաց... ասաց... այս կարկատած շալվարո՞վ ես ինձ պահելու...

Մանվել - Նա քեզ արժանի չի եղել, Շահեն ջան, մի ափսոսա... Եվ դու նրան չասացի՞ ր, որ կարևորը մարդն է, որ շալվարը միշտ էլ կարելի է փոխել...

Շահեն - Այն ժամանակ ես փոխել չէի կարող, եղբայր...

Մանվել - Հետո՞ ինչ, բայց հո կարո՞ղ էիր ասել...

Շահեն - Ասել էլ չէի կարող, սիրելի Մանվել, ամեն ինչի համար պետք է իրավունք ունենալ...

Մանվել - Շատ հետաքրքիր մարդ ես, Շահեն, ամբողջ աշխարհի հարցերը լուծում ես, բոլոր մարդկանց օգնում, իսկ երբ հերթը քեզ է հասնում...

Շահեն - Ախր նրանք հավատում են ինձ, ի՞նչ անեմ:

Մանվել - Ես ու Նազիկն էլ ենք հավատում քեզ, մեծ ախպեր, օգնիր մեզ, Շահեն ջան, հանուն մեզ, հանուն քո սիրո... Չէ՞ որ դու սիրել ես: Դու գիտես, թե ինչ է սերը... Հրեն սպասում է պատի տակ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Սե՞րը...

Մանվել - Նազիկը...

Շահեն - Հա, բայց ես ինչպե՞ս դուրս գամ, Մանվել, դա բացառված է...

Մանվել - Պատուհանից...

Շահեն - Ինչի՞ց։ Պատուհանի՞ց։ Խելագարվե՞լ ես, ինչ է...

Մանվել - Եթե չգաս՝ կխելագարվեմ...

Շահեն - Բայց ինչպե՞ս ցատկեմ... երկու հարկ է... ես հո կասկադյոր չե՞մ...

Մանվել - Սավաններով։

Շահեն - Ինչո՞վ... դու ինձ Կամոյի տե՞ղն ես դրել, ես իսկի աստիճաններով չեմ կարողանում իջնել...

Մանվել - Որ այդպես է, ես առանց սավանների ինձ կզցեմ պատուհանից...

Շահեն - Սպասիր, սպասիր, խենթ մարդ... Բեր սավանները, հավանաբար սրանցից մեկի մեջ փաթաթած էլ կթաղեք ինձ։ Բեր... գոնե դրանք իրար հանգուցել գիտե՞ս...

Մանվել - Ես ռազմածովային նավատորմում եմ ծառայել...

Շահեն - Ի՞նչ է, այնտեղ սավաննե՞ր էիք կապում իրար...

Մանվել - Չէ, պարանների հետ գործ ունեինք...

Շահեն - Կամաց, այ տղա, կպատռես, ի՞նչ պատասխան եմ տալու հարևաններիս։

Մանվել - Կախվիր, կախվիր, Շահեն...

Շահեն - Այո, երևի միակ փրկությունը կախվելն է... *(Պարանոցին է փաթաթում)։*

Մանվել - Ի՞նչ ես անում, իջիր, շուտ, հիմա կգան...

Շահեն - Գոնե, գոնե էս քյաբաբն էլ ուտեի, նոր...

Մանվել - Քյաբաբն ի՞նչ է, Շահեն ջան, հիմա ուստա Հովեփենց տանը քյուֆթա էլ կլինի, տոլմա էլ, խաշլամա էլ, խորոված էլ...

Շահեն - Ես գնացի... օ՛ֆ, ինչ խավար է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մանվել - Գնա, Շահեն շան, ես մի քանի րոպեից հետո դոնից դուրս կգամ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

(Հիվանդանոցի բակը: Շահենը տնքալով ցած է իջնում : Սավանե պարանը կարճ է, թրմփալով ցած է ընկնում):

Շահեն - Վախ, ոտքս...

Պահակ - Կանգ առ, ձեռքերդ վեր...

Շահեն - Ինչո՞ւ... ոտքս...

Պահակ - Ո՞նց թե ինչու... Գողություն ես անում ու հարցնում ես՝ ինչո՞ւ... էս անտերն ինչո՞ւ չի վառվում...

Շահեն - Ես՝ գո՞ղ, ինչ եք ասում...

Պահակ - Բա որ գող չլինես, պատուհանից կիջնե՞ս... Վայ, էս ի՞նչ պատահեց, էս ինչի՞ չի վառվում էս անտերը...

Շահեն - Իսկ դա ի՞նչ է, լուցկի՞ է, թե՞ ձեռքի լապտեր...

Պահակ - Ձեռքի լապտեր է անտերը...

Շահեն - Մարտկոցը հո նստած չի՞...

Պահակ - Երեկ եմ փոխել, մի օրում նստե՞ց...

Շահեն - Տվեք տեսնեմ...

Պահակ - Հա, որ սա էլ տանես...

Շահեն - Ի՞նչ եք ասում, ընկեր... տվեք, տվեք... Ահա, հիմա ես կքանդեմ:

Պահակ - Բայց քո ձայնը շատ ծանոթ է, ո՞վ ես, հո մեր բժիշկներից չե՞ս:

Շահեն - Իսկ ձեր բժիշկներն, ի՞նչ է, սովորաբար պատուհանի՞ց են իջնում: Ահա, հիմա կվառենք... տեսա՞ք... Իսկ դուք ո՞վ եք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պահակ - Պահակն եմ, ով եմ... տուր տեսնեմ... Իսկ դո՞ւ ով ես... Վայ, ընկեր Շահեն Միրաքյան... Աչքերիս հավատա՞մ... Ախր ձեզ ցերեկն էին բերել, ասում էին ծանր եք, էս ո՞ւր եք փախչում...

Շահեն - Հասկանում եք, մի կարևոր գործ կա, խոսք եմ տվել... պետք է գնամ... կներեք...

Պահակ - Իսկ ի՞նչ է, խիրուրգի հետ լեզու չգտա՞ր...

Շահեն - Ի՞նչ վիրաբույժ, ի՞նչ եք ասում...

Պահակ - Ինձնից ինչի՞ եք թաքցնում, ընկեր Միրաքյան, ես չգիտե՞մ, ինչ է, դու հո առաջինը չես... Բա կարծում ես մեզ հենց էնպե՞ս են էստեղ կանգնեցրել... Բոլորն էլ օպերացիայից հետո ուզում են փախչել: Էդպես է, ճար չեն ունենում, սկզբում խոսք են տալիս, հերթն առաջ են գցում, իսկ հետո, կներես, ծլկում են...

Շահեն - Ոչ, ոչ, ի սեր աստծո...

Պահակ - Սպասիր, սպասիր, էսօր հերթապահ խիրուրգն ո՞վ է... Հա, Ավանեսովը... հասկացա... Հաստատ կփախչես... էն օրն էլ սիսիանցի մի պառավի բռնեցի՝ անձրևի ջրի խողովակով էր իջնում... Մեր էդ Ավանեսովը ամիս ու կես առաջ հանել էր նրա երիկամներից մեկը ու էլ բաց չէր թողնում:

Շահեն - Ինչու, մյուսն է՞լ էր ուզում հանել:

Պահակ - Չէ, ուրիշ հարց կար... Խեղճ կինը աղաչում - պաղատում էր, թե թող տուն գնամ, չէր թողնում: Ամեն անգամ հարցնում էր, թե՝ մայրի՛կ, քո հարազատները որտե՞ղ են, ինչի՞ չեն գալիս քո ետևից: Էդ ո՞նց էր, որ բերելուց քառասուն հոգով եկել էին...

Շահեն - Ուրեմն սկզբում ինչ - որ բան էին խոստացել, Հա՞...

Պահակ - Բա իհարկե: Դրա համար էլ բժիշկ Ավանեսովը փրփրել էր… Անամոթ մարդիկ են, ասում էր, կարդալ չգիտե՞ն, ինչ է, չէ՞ որ հիվանդանոցի պատին մեծ - մեծ տառերով գրված է՝ «Պարտավորվել ես՝ կատարիր»...

Շահեն - Հըմ... Սակայն իմն իրոք ուրիշ դեպք է... Ես կարևոր գործ ունեմ... Կներեք, ցտեսություն...

Պահակ - Այսինքն ո՞նց թե ցտեսություն... Բա խալա՞թը...

Շահեն - Ի՞նչ խալաթ... ախ, սա...

Պահակ - Այո, դա... պետական գույք է, չէ , տես, տասը տեղ կնքված է: Որ ամեն փախչող մի խալաթ տանի, ո՞ւր կհասնի... Էս երկիրն անխալա՞թ մնա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Ես կբերեմ, հավատացնում եմ, հորեղբայր, դուք հո չե՞ք թողնի, որ ես շապիկ - վարտիքով փողոց դուրս գամ... Վաղն առավոտյան կուղարկեմ, հավատացնում եմ, այնպիսի գործ է, որ... Ես պետք է օգնեմ մեկին, մի ընտանիքի:

Պահակ - Օգնե՞ս: Բա էլ ո՞ւր ես հեռու գնում:

Շահեն - Հեռու չէ, հեռու չէ, հրապարակի մոտ է... Այսինքն՝ ի՞նչ իմաստով եք ասում...

Պահակ - Էն իմաստով, ընկեր ՇաՀեն Միրաքյան, որ ինձնից շատ օգնության կարիք էս աշխարհում ոչ ոք չունի:

Շահեն - Խնդրեմ, խնդրեմ, գրեք խմբագրությանը, մենք կզբաղվենք...

Պահակ - Ի՞նչ գրեմ, երբ հրես քեզ արդեն բռնել եմ...

Շահեն - Օհ, տեր աստված, ի՞նչ եք ուզում, հորեղբայր...

Պահակ - Ասեմ, ասեմ, ընկեր Միրաքյան ջան... Խնդրում եմ խոսես, որ ինձ ցերեկային պահակ նշանակեն...

Շահեն - Իսկ ի՞նչ նշանակություն ունի ցերեկը, թե գիշերը...

Պահակ - Բա եղա՞վ: Բա քեզ սազե՞ց: Ամբողջ աշխարհին խորհուրդներ ես տալիս ու էդ հասարակ բանը չե՞ս հասկանում... Գիշերվա աշխատանքն ի՞նչ է... Մարդ չգիտի էլ ոնց ասի... Դե ասենք հիվանդանոցից փախչողներից ի՞նչ օգուտ, եթե միջոցներ ունենային, չէին փախչի, էլի... Պահակների օգուտը հիվանդներին տեսնելու եկողներից է գալիս... Հասկացա՞ր... Մեկն, օրինակ, գալիս է, թե թող գնամ իմ հիվանդին տեսնեմ: Ասում ես՝ չեմ կարող, պրոֆեսորն էստեղ է... նա էլ ասում է...

Շահեն - Պարզ է... Բայց ես չեմ կարող նման խնդրանքով դիմել, ես իրավունք չունեմ...

Պահակ - Խալաթը հանիր...

Շահեն - Ինչպե՞ս...

Պահակ - Ինչպես ուզում ես՝ հանիր... ես էլ իրավունք չունեմ թողնելու, որ դու պետական գույքը տանես... Էդպես է...

Շահեն - Համոզեցիք... Կխոսեմ... Միայն թե թողեք խալաթով գնամ, անհարմար է...

Պահակ - Տար, տար: Էդ խալաթներն առանց էդ էլ դուրս են գրված: Մենակ թե տղամարդու խոսք, հա՞...

Մանվելի ձայնը - Շահեն, որտե՞ղ ես, Շահեն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Եկա, եկա, ա՛խ, ոտքս...

Պահակ - Չմոռանաս, հա՛ ...

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

(Ուստա Հովսեփի տունը: Սովորական սենյակ: Դատարկ սեղան: Ներս են մտնում Նազիկը, Մանվելը և Շահենը) :

Շահեն - Մանվե՞լ,

Մանվել - Հա, Շահեն ջան...

Շահեն - Իսկ որտե՞ղ են... խաշլաման, խորոված... ուստա Հովսեփը...

Մանվել - Նազի՞կ…

Նազիկ - Ես ի՞նչ եմ հասկանում, է՛, կարծես թե մի քանի անգամ ամուսնացել եմ...

Մանվել - Չէ, ես եմ ամուսնացել մի քանի անգամ...

Նազիկ - Չէ, ես եմ ամուսնացել...

Շահեն - Այ Մանվել, քանի անգամ ասացի՝ էն քյաբաբը ուտեմ...

Նազիկ - Շահեն ջան, քեզ ի՞նչ է պատահել, առավոտվանից անընդհատ ուտելու մասին ես խոսում: Բավական է, էլի: Ուտեմ, հա ուտեմ, ուտեմ, հա ուտեմ... Արդեն կեսգիշեր է: Մինչև հիմա չկշտացա՞ր...

Շահեն - Ե՞ս... ե՞ս...

Նազիկ - Չէ, ես... հեռուստատեսությամբ երբ ելույթ ես ունենում, բոլորը կարծում են, թե թևեր ունես, հրեշտակ ես, թե դու սովորական մարդ չես, ինչպես փոքր ժամանակ մենք մեր ուսուցիչներին էինք համարում: Թե դու ոչ հաց ես ուտում, ոչ ջուր ես խմում, ոչ էլ սովորական մարդկանց նման կարող ես փռշտալ կամ քորել թիկունքդ...

Մանվել - Նազիկ... Նազիկ...

Նազիկ - Իսկ դու առավոտվանից սկսած միայն ուտելու մասին ես խոսում: Կներես, բայց դու տարրական որկրամոլ ես և էգոիստ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մանվել - Նազիկ... ամեն չափ ու սահման անցար... Եթե դու մեզ հետ այդ տոնով ես խոսելու, հենց հիմա ետ եմ դառնում...

Նազիկ - Խնդրեմ:

Մանվել - Կզղջաս՝ ուշ կլինի...

Նազիկ - Ես արդեն զղջում եմ, որ կյանքս քեզ հետ եմ կապելու...

Մանվել - Վայ, քեզ ի՞նչ պատահեց, դրսում ուրիշ բաներ էիր ասում... Ասենք, հա՛, դաշտը հիմա քոնն է… ուստա Հովսեփի դաշտից ես խոսում...

Շահեն - Վերջ տվեք: Անհարմար է: Մենք պաշտոնական պատվիրակություն ենք, Մանվել: Եվ պետք է արժանապատվությամբ պահենք մեզ: Կանչիր հորդ, Նազիկ:

Նազիկ - Այ դա ուրիշ հարց է: Հիմա, Շահեն ջան...

(Բացում է դուռը):

Հայրիկ, հայրիկ...

(Ներս է մտնում Հովսեփը):

Հովսեփ - Վահ, բարև ձեզ... բարև, Շահեն...

Շահեն - Բարև, ուստա Հովսեփ...

Հովսեփ - *(Մռայլ):* Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ եք եկել...

Շահեն - Ինչպե՞ս թե, դուք չգիտե՞ք, ուստա Հովսեփ: Մանվե՞լ...

Մանվել - Նազի՞կ...

Նազիկ - Հայրի՞կ...

Հովսեփ - Հապա դու մի դուրս գնա: Դո՞ւ ինչ գործ ունես այստեղ:

Նազիկ - Հայրիկ, բայց չէ՞ որ...

Հովսեփ - Դուրս, անմիջապես...

Նազիկ -Սակայն սահմանադրությամբ... «Մարդը և նրա պարտքը» հանդեսից բոլորին էլ հայտնի է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հովսեփ - Այս տունն էլ իր սահմանադրությունն ունի: Եվ տան տերն էլ ես եմ: Անմիջապես՝ ննջարան:

Նազիկ - *(Հեկեկում է):* Լավ, ես կգնամ...

(Դուրս է գնում):

Շահեն - Ուստա Հովսեփ, բայց դուք իրո՞ք չգիտեք, թե մենք ինչի համար ենք եկել:

Հովսեփ - Գիտեմ, Շահեն, բայց կարգն այդպես է... ես պիտի զարմանամ...

Շահեն - Ախ, հա, ուրեմն կարգն է այդպես... լավ... է, ինչպե՞ս եք, ուստա Հովսեփ...

Մանվել - *(Շշուկով):* Առաջ անցիր, Շահեն ջան...

Շահեն - Ահա թե ինչ, ուստա Հովսեփ, քանի որ մենք էլ գիտենք, դուք էլ գիտեք, թե ինչի համար ենք եկել այստեղ, եկեք ավելորդ ձևականությունների ետևից չընկնենք... մի բաժակ բան տվեք, խմենք, մի կտոր հաց տվեք՝ ուտենք և համարենք, որ...

Հովսեփ - Չէի սպասում, Շահեն, ուրեմն էլ ո՞ւր մնացին մեր պապերի սովորությունները, ոնց որ դու էիր ասում հեռուստացույցով մի ամիս առաջ, դարերից եկող մեր սովորությունները: Դու դրանք ավելորդ ձևականությունն՞ր ես համարում... Իսկ ես էդպես չեմ մտածում:

Շահեն - Չէ, բայց դե, եթե, ասենք, սեղանը զցված լիներ, ինչի՞ն կխանգարեր...

Հովսեփ - Ոչ մի դեպքում, այդպիսի կարգ չկա:

Շահեն - Մանվե՞լ:

Մանվել - Առաջ անցիր, առաջ անցիր, Շահեն...

Շահեն - Առաջ անցնեմ, ի՞նչ անեմ, չե՞ս տեսնում, որ ոչ մի հեռանկար չկա...

Մանվել - Շահեն ջան...

Շահեն - *(Հառաչելով):* Լավ: Ուստա Հովսեփ, խոսենք, ինչպես կարգն է, Մանվելը...

Հովսեփ - Մանվելն ո՞վ է...

Շահեն - Ինչպե՞ս թե ով է, մեր Մանվելը...

Հովսեփ - Հասկացանք, ասա տեսնեմ, ո՞վ է...

Շահեն - Ախ, կարգն է այդպես, հա՞...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հովսեփ - Հա...

Շահեն - Ուրեմն մեր Մանվելը, այսինքն՝ Մանվել Ասատուրի Բեգլարյանը, ծնված Երևանում, 1958 թվականին, ավարտել է ավտոտեխնիկումը և աշխատում է որպես ավտոմեխանիկ: Կոմերիտական է... Արտասահմանում կամ բանտարկված ազգականներ չունի... Ուրիշ հարցեր... հարցեր չկա՞ն...

Հովսեփ - Իսկ հայրն ո՞վ է:

Շահեն - Քո հարևան Ասատուրն է: Ախ, հա, ի տարբերություն իր հոր, Մանվել Բեգլարյանը չի ծխում, չի խմում...

Մանվել - Առաջ անցիր, Շահեն...

Շահեն - Չի խմում և չի ծխում և խնդրում է ձեր աղջկա ձեռքը...

Մանվել - Այո...

Հովսեփ - Չեմ հասկանում, ի՞նչ աղջիկ, մեր տանը ամուսնացնելու աղջիկ չկա:

Մանվել - Ոնց թե չկա, բա Նազիկն ի՞նչ է...

Շահեն - Սուս, Մանվել: Երևի կարգն է այդպես...

Հովսեփ - Նազի՞կը... Նազիկը դեռ երեխա է, նրա ամուսնանալու ժամանակը չի...

Նազիկ - *(Ներս է մտնում):* Ո՞վ է երեխա, իսկի էլ երեխա չեմ...

Հովսեփ - Երեխա ես, հեռացիր աչքիցս...

Նազիկ - Ուզում եմ հեռանամ, չես թողնում...

Հովսեփ - Գնա, ասում եմ, խոսքը մեկ անգամ կասեն... մեծ աղջիկ ես...

Շահեն - Ձեր տեքստի մեջ հակասություն կա, ուստա Հովսեփ, մեկ ասում եք՝ երեխա է, մեկ էլ՝ թե մեծ աղջիկ է...

Հովսեփ - Իմ աղջիկն է, ինչ ուզեմ՝ կասեմ: Մի խոսքով՝ հիմա մենք մտադիր չենք ամուսնացնելու մեր աղջկան...

Շահեն - Ուրեմն սեղան չե՞ք բացելու...

Մանվել - Ուստա Հովսեփ, այնպես արեք, որ հետո մեկ - մեկ թողնեմ մեր տուն գաք՝ ձեր աղջկան տեսնելու...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Մանվելն իրավացի է, ուստա Հովսեփ, զուր տեղը հարաբերությունները մի սրեք։ Խաշլաման բերեք...

Հովսեփ - Ի՞նչ խաշլամա...

Շահեն - Խաշլաման եմ ասում, ներեցեք, բերեք այսպես անենք։ Մանվելը թող մատանի նվիրի Նազիկին, իսկ խորոված...

Հովսեփ - Ի՞նչ խորոված...

Շահեն - Խորոված եմ ասում, ներեցեք, իսկ հարսանիքի մասին հետո կպայմանավորվենք։ Մանվել, տուր մատանին...

Նազիկ - *(Գլուխը դուրս հանելով)։* Մատանին իմ մատին է…

Շահեն - Տեսնո՞ւմ եք, ուստա Հովսեփ...

Հովսեփ - Ոչ մի դեպքում։ Էդպիսի կարգ չկա։ Ո՞վ է տեսել, որ մի անգամ ուզելով նշանեն աղջկան... Էս անգամ կմերժենք, մի անգամ էլ կգաք՝ կմերժենք, իսկ հետո կհամաձայնվենք, ինչպես որ մեր պապերի սովորությունն է...

Մանվել - Վերջ, այլևս համբերություն չկա, չնեղանաք, ուստա Հովսեփ, բայց ես այս բոլորի մասին գրելու եմ «Մարդը և նրա պարտքը» հանդեսին…

Հովսեփ - Ինչ ես անելո՞ւ…

Մանվել - Գրելու եմ։ Սա ի՞նչ բյուրոկրատական վերաբերմունք է սիրող սրտերի նկատմամբ, ինչո՞ւ եք արհեստականորեն ձգձգում մեր երջանկությունը, ինչո՞ւ չեք թողնում ընտանիք կազմենք։ Էնգելսն ասել է, թե ընտանիքը պետության հիմքն է։ Դուք, դուք փաստորեն խարխլում եք պետության հիմքերը, ուստա Հովսեփ...

Շահեն - Ապրես, Մանվել, հիանալի էր... դու կգրես, ես էլ կկարդամ։

Հովսեփ - Վայ, այ տղա, դու որտեղացի ես...

Մանվել - Երևանից...

Հովսեփ - Ծնողներդ, ծնողներդ...

Մանվել - Ձեր գյուղից...

Հովսեփ - Ամեն ինչ պարզ է։ Ձեզանից ամեն ինչ կարելի է սպասել։ Լավ, ես էլ մարդ եմ, ես էլ սիրտ ունեմ, մյուս անգամ որ գաք՝ գուցե թե համաձայնվեմ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Ուռա, մի առարկիր, Մանվել, հարգենք մեր պապերին: Վաղը կգանք, ինչպես հարկն է: Իսկ հիմա, ուստա Հովսեփ, արժե սեղանի շուրջը նստել և նշել, որ մեր առաջին պաշտոնական բանակցություններն անցան ջերմ, բարեկամական մթնոլորտում, այդպես չէ՞... Բերեք, բերեք սեղանը...

Հովսեփ - Ի՞նչ սեղան:

Շահեն - Մանվել... խաշլաման, քյուֆթան, խորովածը...

Հովսեփ - Վերջացրեք, եղբայր, ըստ մեր պապերի ավանդության...

Շահեն - Ուրեմն եղա՞վ... Ի՞նչ տգետ և հետամնաց մարդիկ են եղել մեր պապերը... ես չեմ ուզում… անձամբ ես հրաժարվում եմ իմ պապից...

(Ուշագնաց է լինում):

Մանվել - Ի՞նչ պատահեց, Շահեն, Շահեն...

Հովսեփ - Վայ, շտապօգնություն զանգահարի, այ տղա... թյո՛ւ, ինչ եմ ասում, բռնիր, բռնիր, տանենք ավտոմեքենայի մեջ դնենք... Սրան ի՞նչ պատահեց, այ մարդ...

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

(Հիվանդանոցի նույն մուտքի մոտ: Հովսեփն ու Մանվելը պատգարակով իջեցնում են Շահենին: Նազիկը ուղղում է Շահենի ծածկոցը):

Հովսեփ - Հերթապահ բժշկին ձայն տամ... *(Գնում է):*

Նազիկ - Շահեն, Շահեն, մի բառ ասա, խնդրում եմ, մի սպանիր մեզ: Բացիր աչքերդ, խոսիր, մի բառ ասա, անգութ...

Շահեն - Ի՞նչ բառ...

Նազիկ - Նա խոսեց, խոսեց...

Մանվել - Շահեն ջան, անցա՞վ, փառք աստծո, ո՞նց ես, Շահեն ջան...

Շահեն - Դու չխոսես, դու, դու... ստախոս… խաշլամա...

Մանվել - Ես ի՞նչ անեմ, է՛, որ նրանց պապերի սովորությունը այդպես է:

Շահեն - Գոնե քյաբաբը տեսնես պալատում մնացած կլինի՞...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նազիկ - էլի ուտելու մասին սկսեց...

(Հայտնվում են Հովսեփն ու Բարսեղյանը):

Բարսեղյան - Ընկեր Հովսեփ, բայց ի՞նչ նշանակություն ունի նրան տեսնելը: Մեզ մոտ տեղ չկա: Տարեք Զեյթունի հիվանդանոց, տարեք Մարաշ, Մալաթիա, հանրապետական... Ըստ որում ձեզ էլ պետք է հայտնի լինի, որ հատկապես վերջին տարիներին աննախընթաց վերելք է ապրել առողջապահական օբյեկտների շինարարությունը... Կառուցվել և կառուցվում են նոր հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, առողջարաններ և պանսիոնատներ... Մահճակալների թիվը աճել է երեք հարյուրով...

Նազիկ - Ո՞ր թվականի համեմատությա՞մբ… ընկեր տեղկոմի նախագահ...

Բարսեղյան - Կարծեմ անցյալ տարվա համեմատությամբ...

Հովսեփ - Բա որ էդքան աճել է, հիմա էս մարդու համար մի տեղ չկա՞:

Բարսեղյան - Ոչ: Տեսությունը մի խառնեք պրակտիկայի հետ: Հո միայն մահճակալները չե՞ն աճում... Եվ մի մոռացեք, որ մեզ մոտ բուժումը ձրի է... Իսկ ձրի բանից ո՞վ կհրաժարվի... նույնիսկ որոշ մարդիկ չեն կարողանում հրաժարվել և իրենց մայրիկներին, հայրիկներին, եղբայրներին, զոքանչներին ու աներներին իրենց կանանց թելադրանքով ցմահ տեղավորում են հիվանդանոցներում: Հասկանալի՞ է, ուստա Հովսեփ, կանանց դա շատ է դուր գալիս: Այնպես որ ոչ մի ձրի, այսինքն, ազատ մահճակալ չկա:

Մանվել - Ես կվճարեմ:

Բարսեղյան - Ի՞նչ եք ասում, երիտասարդ, մեզ մոտ բժշկությունը ձրի է: Ուստա Հովսեփ, իմացեք, թե ո՞րն է հերթապահ հիվանդանոցը և ուղիղ այնտեղ տարեք:

Հովսեփ - Բա որ ճանապարհին մի բան պատահի, բժշկուհի...

Բարսեղյան - Եթե պատահելու է, ուստա Հովսեփ, թող հենց ճանապարհին էլ պատահի... Իսկ եթե մենք ընդունենք ու մեզ մո՞տ պատահի... Մտածե՞լ ես... Այդ ժամանակ, մնաս բարո՛վ, պարզևատրություն, մնաս բարով, տասներեքերորդ աշխատավարձ...

Մանվել - Ներեցեք, բայց ամեն հիմնարկ - ձեռնարկություն բնական կորուստների թույլատրելի չափ ունի... ձեզ մոտ չկա՞, ինչ է... Կոնյակի գործարանում, օրինակ... կամ ասենք դատարկ շշերի բազայում...

Բարսեղյան - Մենք մեր բնական կորուստների պլանը գերակատարել ենք, երիտասարդ... Մեզ մոտ բոլոր ցուցանիշները գերակատարված են...

Հովսեփ - Բա հիմա ի՞նչ անեմ... Ախր մեղք է, շատ լավ հիվանդ է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բարսեղյան - Օհ, ուստա Հովսեփ, որտեղի՞ց գտաք ձեր այդ լավ հիվանդին...

Հովսեփ - Փողոցում ընկած էր, բժշկուհի...

Բարսեղյան - Գուցե հարբա՞ծ է...

Հովսեփ - Չէ, հոտ քաշեցի... Ու որ հոտ քաշեցի, մոտիկից նայեցի երեսին և մեկ էլ տեսնեմ զարմանք մի բան։ Այնքան նման է հեռուստատեսության մեր հաղորդավար Շահեն Միրաքյանին...

Բարսեղյան - Ո՞ւմ...

Հովսեփ - Շահեն Միրաքյանին...

Բարսեղյան - Երևի շատ եք հոգնել, ուստա Հովսեփ, Շահեն Միրաքյանին առավոտյան կարծեմ դուք բերեցիք հիվանդանոց ձեր ավտոմեքենայով...

Հովսեփ - Ինչը ճիշտն է ճիշտը, բժշկուհի, բայց ոնց որ սա էլ է Շահեն Միրաքյանը... Մոտ եկեք, տեսեք, էլի, մոտ եկեք, վայ, չի կծի...

Բարսեղյան - Շփոթել եք, շփոթել եք, դա անհնարին է...

Հովսեփ - Եկեք, եկեք, տեսեք...

Բարսեղյան - Ընկեր Հովսեփ, տեսնեմ էլ, չեմ հավատա, ես ձեզ հայերեն եմ ասում, ընկեր Շահեն Միրաքյանը պառկած է վեցերորդ պալատում։

Հովսեփ - Դե ո՞նց ասեմ, երևի պառկած է եղել, բայց հիմա հրեն պատգարակին է պառկած...

Բարսեղյան - Ծիծաղելի բաներ եք ասում, ընկեր Հովսեփ, ուրեմն ձեր կարծիքով աշխարհում երկո՞ւ Շահեն Միրաքյան կա։ Շատ չի՞ լինի... Տարեք Զեյթունի հիվանդանոց, մեզ մոտ տեղ չկա...

Հովսեփ - Ասում եմ՝ Շահեն Միրաքյանն է... տեսեք, էլի...

Բարսեղյան - Սա ինձ կխելագարեցնի։ Լսեք, ուստա Հովսեփ, Շահեն Միրաքյանը վեցերորդ պալատում է... Ես հենց հիմա գնում եմ նրա ետևից, որպեսզի բժշկական կոնսիլիում տանեմ, նրան սպասում են... Հիմա մենք պետք է լրիվ մաքրենք նրա ստամոքսը, որովհետև կասկածներ կան, թե...

Շահեն - Ոչ մի դեպքում, խնայեցեք ինձ։ Հանուն ձեր բոլոր սրբությունների, իմ ստամոքսին ձեռք չտաք, իմ ստամոքսի ի՞նչն եք ուզում մաքրել, փողոցները մաքրեք, ձեր բակը մաքրեք, իմ ստամոքսը լցնել է պետք...

Բարսեղյան - Այ քեզ բան, նրա ձայնն է, նրա ձայնն է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Հովսեփ - Բա որ ասում էի...

Բարսեղյան - Ընկեր Շահեն Միրաքյան... Դուք եք, իսկապե՞ս դուք եք... Ինչպե՞ս եք դրսում հայտնվել... Որտեղի՞ց գտաք նրան, ուստա Հովսեփ... Դե, արագ, առանց ժամանակ կորցնելու դեպի գլխավոր բժշկի առանձնասենյակը...

Շահեն - Ոչ, ոչ, նախ մեր պալատը... Մի բոպեով... Քյաբաբը...

Բարսեղյան - Դեպի գլխավոր բժշկի առանձնասենյակը, ուստա Հովսեփ...

Շահեն - Ի սեր աստծո, բժշկուհի, եթե այդպես է՝ թողեք տուն գնամ... Ես առողջ եմ։ Շնորհակալություն, բժշկուհի, մնաք բարով, իմ կողմից բարևեք ձեր գլխավոր բժշկին, բժիշկներին, քույրերին և եղբայրներին... այսինքն մայրապետներին...

Բարսեղյան - Այդ ո՞ւր, ընկեր Շահեն Միրաքյան...

Շահեն - Տուն, տուն...

Բարսեղյան - Ի՞նչ եք ասում, ձեզ շարժվել չի կարելի։ Ձեր վիճակը դեռևս պարզ չէ։ Ձեզ է սպասում բժիշկների գլխավոր խորհուրդը։

Շահեն - Պետք չէ, խնդրում եմ...

Մանվել - Բժշկուհի, նա մեր բարեկամն է, ես կամաց-կամաց կտանեմ...

Բարսեղյան - Նա մեր ամբողջ ժողովրդի բարեկամն է։

(Բացում է դուռը)։

Պատգարակը ներս բերել։

(Դուրս են գալիս նույն չորս բժիշկները։ Շահենին պառկեցնում են պատգարակի վրա։ Նա դիմադրում է, բայց անօգուտ։ Շահենը լաց է լինում)։

Մանվել - Ոչինչ, ախպեր ջան, դիմացիր, բժշկությունը շատ լուրջ գործ է։

Բարսեղյան - Ընկեր Շահեն Միրաքյան, մի հուզվեք, ձեզ հուզվել չի կարելի։ Հիմա ձեր յուրաքանչյուր հուզումը անմիջապես ազդում է սրտի վրա։ Այո։ Թեև չէի ասի, թե տեղն առանձնապես հարմար է, բայց ես մի խնդրանք ունեմ ձեզ։ Կարելի՞ է...

Շահեն - *(Արցունքները սրբելով)։* Լսում եմ...

Բարսեղյան - «Արմենիա» ռեստորանի դիրեկտորը պատահաբար ձեզ ծանոթ չէ՞։

Շահեն - Մաշիկյա՞նը, ծանոթ է, ի՞նչ կա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Բարսեղյան - Գիտե՞ք ինչ, ընկեր Շահեն Միրաքյան, տղաս թեկնածուական է պաշտպանելու, ուզում ենք բանկետը երկնագույն սրահում անել...

Շահեն - Ինչ եք ասում, իսկ ի՞նչ թեմա է...

Բարսեղյան - Ծիրանի հյութի բարերար ազդեցությունը աղեստամոքսային տրակտի որոշ խանգարումների դեպքում...

Շահեն - Ծիրանը լավ բան է, եթե այստեղից ողջ դուրս գամ՝ կխոսեմ։

Բարսեղյան - Դուրս գալու հարկ չկա, ընկեր Շահեն Միրաքյան, գլխավոր բժշկի կաբինետում քաղաքային հեռախոս կա...

Շահեն - Իրո՞ք։ Ուրեմն ամեն ինչ հիանալի է...

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

(Գլխավոր բժշկի առանձնասենյակը: Նստած են գլխավոր բժիշկն ու երկու պրոֆեսորներ, նրանցից մեկը միոտանի է):

Գլխ. բժիշկ - Կրկին ու կրկին հիշեցնում եմ, կոլեգաներ, բացառիկ ուշադրություն։ Մեր կենտրոնական խնդիրը պետք է լինի ստույգ ախտորոշումը։

1-ին պրոֆ. - Կենտրոնական ասացիք, հիշեցի, Վաղարշակ Պետրովիչ, այսօր կենտրոնում ո՞վ է խաղալու՝ Նավասարդյա՞նը, թե՞ Ղասաբօղլյանը։

2-րդ պրոֆ. - Աշոտ Խաչատրյանը...

1-ին պրոֆ. - Աշոտ Խաչատրյանը կենտրոնում ի՞նչ գործ ունի, կոլեգա, նա ձախ թևում է։

2-րդ պրոֆ. - Քո ասածը Անդրանիկ Խաչատրյանն է...

1-ին պրոֆ. - Բա եղա՞վ, կոլեգա, Վաղարշակ Պետրովիչ, ձեր հեղինակավոր կարծիքը...

Գլխ. բժիշկ - Ինձ թվում է, թե երկուսդ էլ շփոթում եք, ընկերներ, կենտրոնում խաղում է Հովիվյանը։

1-ին պրոֆ. - Ո՞Վ... *(Փոթկացնում է):* Վայ, Պետրովիչ, վայ…

2-րդ պրոֆ. - Քո տունը չքանդվի, վերջին անգամ ե՞րբ ես ֆուտբոլ տեսել...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գլխ. բժիշկ - Ինչպե՞ս թե, Հովիվյանը չի՞... ճիշտն ասած, ես խաղերը նայում եմ մեր հիվանդանոցի տանիքից... Իսկ այնտեղից դեմքերը չեն երևում... Եվ հետո դա ի՞նչ կարևոր է, թե կոնկրետ ով է, հիմա անհատականություններ չկան... Ֆուտբոլը, բարեկամներ, կոլեկտիվ խաղ է... թերթում էր գրված։

1-ին պրոֆ. - *(Վեր է թռչում):* Ո՞նց թե…

2-րդպրոֆ. - Եթե անհատականություններ չկան, ես գնում եմ։

Գլխ. բժիշկ - Ո՞ւր, ո՞ւր, պրոֆեսոր, դուք մեզ մոտ կես դրույք եք ստանում...

2-րդ պրոֆ. - Այո, կես դրույք եմ ստանում և դրա համար էլ կես խոսք կասեմ. իմ ոտքը մեկ էլ ձեր խորհրդում չի լինի... Ասում է՝ կոլեկտիվ խաղ է...

1-ին պրոֆ. - *(Նայում է ընկերոջ միակ ոտին):* Իմ ոտքերն էլ, կոլեգա... Իսկ դու իմ տեղը Հովիվյանին կանչիր... Կոլեկտիվ... գյոզալական ֆուտբոլը դարձրին լոտո... Կոլեկտիվ խաղը լոտոն է, այո, կոլեգա։

2-րդ պրոֆ. - Եվ տաման, հա...

Գլխ. բժիշկ - Սպասեք, ընկերներ, սպասեք...

(Պատգարակով ներս են բերում Շահենին):

Ահա ամենահեղինակավոր կարծիքը։ Մեծարգո ընկեր Շահեն Միրաքյան, խնդրում եմ ինչպես միշտ անաչառ չինել և լուծել մեր դատը։ Ասացեք խնդրեմ՝ ֆուտբոլը կոլեկտի՞վ խաղ է, թե՞ անհատական...

Շահեն - Ֆուտբո՞լը... ֆուտբոլը կոլեկտիվ խաղ է...

Գլխ. Բժիշկ - Ահա ճշմարտությունը…

Շահեն - Զուգակցված վառ անհատական խաղի հետ…

1–ին և 2–րդ պրոֆեսորներ - Տեսա՞ր, ահա ճշմարտությունը։

Շահեն - Կարելի է իջնել…

Գլխ. բժիշկ - Իջեցրեք, կոլեգաներ, շնորհակալություն…

(Բժիշկները դուրս են գնում):

Շահեն - Կարելի՞ է իջնել…*(իջնում է պատգարակից):*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գլխ. բժիշկ - Ահա մեր հիվանդանոցը, բարեկամներ, մի քանի ժամվա ընթացքում ոտքի կանգնեցրինք մարդուն:

1–ին պրոֆ. - Ապշեցուցիչ է:

2–րդ պրոֆ. - Այդպիսի դեպքեր իմ պրակտիկայում էլ են եղել:

1–ին պրոֆ. - Երբ հիվանդն առողջացե՞լ է…

2–րդ պրոֆ. - Այո կոլեգա… Անհավատալի՞ է…

Գլխ. բժիշկ - Բարեկամներ, բարեկամներ, թույլ տվեք սկսել խորհուրդը: Բարեպատեհ առիթը մեզ մոտ է բերել մեր ժողովրդի սիրելի, ճանաչված և մեծարված ընկեր Շահեն Միրաքյանին… Եվ թեև, անկեղծորեն ասած, այդ օրը հերթապահ Զեյթունի հիվանդանոցն էր, բայց…

1–ին պրոֆ. - Զեյթուն ասացիք, հիշեցի, ընկեր Շահեն Միրաքյան, զեյթունի յուղ որտեղի՞ց կարելի է գտնել…

Շահեն - Իսկ ձեզ շա՞տ է պետք… այսինքն ուզում եմ ասել՝ ձմեռվա պաշար բաղրիջան պատրաստելու համա՞ր եք ուզում, թե խմելու…

1–ին պրոֆ. - Խմելու, խմելու… Երկու շիշ…

Շահեն - Երկու շի՞շ… Այդ դեպքում կգնաք դիետիկ մթերքների խանութի վարիչի մոտ, Աբելյան է ազգանունը, իմ անունից կասեք՝ կտա…

1–ին պրոֆ. - Շատ, շատ շնորհակալ եմ… Ներեցեք, շարունակեք, Վաղարշակ Պետրովիչ…

Գլխ. բժիշկ - Այո… Մի խոսքով՝ մենք երջանիկ ենք, որ ընկեր Շահեն Միրաքյանը մեզ մոտ է, մեր հյուրն է թանկագին, և անկեղծորեն պետք է ասել, որ մենք արդեն վայելում ենք նրա ներկայության պտուղները… Համապատասխան կազմակերպությունները, տեղեկանալով, որ նա մեզ մոտ է, շտապեցին իրենց վերաբերմունքը ցույց տալ: Այսօր պտուղբանջարեղենի բազան, առաջին անգամ հիվանդանոցի պատմության մեջ, մեր ճաշարանի հասցեով ուղարկել է թարմ պոմիդոր և վարունգ, նույնպես առաջին անգամ մեր հիվանդները ստացել են դիետիկ հաց և դիետիկ երշիկ: Դեղատնային վարչությունը, միջնորդ գրասենյակի միջոցով, վերջապես մեր կարիքների համար դուրս է գրել անալգին, ասպիրին, ասկոֆեն, կրասնուշկա, վալերիանի կաթիլներ և այլ հազվագյուտ, մոռացված կաթիլներ ու հաբեր: Իսկ շինարարական տրեստը մի գիշերվա մեջ բարեկարգել է հիվանդանոցի շրջակայքը և տնկել ծառեր: Նայեցեք պատուհանից, ահա...

2-րդ պրոֆ. - Ներեցեք, Վաղարշակ Պետրովիչ, պատուհան ասացիք, հիշեցի, ընկեր Շահեն Միրաքյան, չէի՞ք ասի, թե որտեղից կարող եմ ձեռք բերել մի զույգ ֆրանսիական կոշիկներ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Քանի որ դուք անընդհատ իմ կոշիկներին էիք նայում, պրոֆեսոր, ես հարկ համարեցի նախապես պատրաստել երկտողը: Խնդրեմ: Կայարանի մոտ մի խանութ կա, կոշիկի բաժնի վարիչի անունը Գարեգին է: Այս երկտողը կտաք նրան և հաստատ կստանաք երկու հատ աջ ոտքի կոշիկ... Այնտեղ միշտ խառնում են: Ինձ, օրինակ, միշտ ձախերն են տալիս:

2–րդ պրոֆ. - Օ՜, դուք իսկապես մեծ մարդ եք և մեծ հոգեբան, թանկագին ընկեր Շահեն Միրաքյան... Ես ուղղակի քիչ է մնում ցնցվեմ...

Գլխ. բժիշկ - Իսկ հիմա նայեք պատուհանից և ցնցվեք...

1–ին պրոֆ. - Սա ֆանտազիա է

2-րդպրոֆ. - Ես ցնցված եմ...

Գլխ. բժիշկ - Ահա թե ինչ կարող է անել մարդը, երբ հասկանում է իր պարտքը: Տեսնո՞ւմ եք, ընկեր Շահեն Միրաքյան, հարազատս...

Շահեն - Այո, այո՜, տեսնում եմ. Նազիկ, Մանվել, վերև նայեք, վերև: Գնացեք տուն, ես շուտով կգամ...

Գլխ. բժիշկ - *(Փակում է պատուհանը):* Ինչպե՞ս թե կգնաք... դա անհնար է:

Շահեն - Բայց ես առողջ եմ, Վաղարշակ Պետրովիչ, ես ինձ հիանալի եմ զգում: Ես լիովին առողջ եմ...

Գլխ. բժիշկ - Դա անհնարին է. ինչպե՞ս կարող է մարդը լիովին առողջ լինել, սիրելի բարեկամ: Դա բացառված է: Դա անհեթեթություն է:

1–ին պրոֆ. - Մարդը կարող է ուղղակի չիմանալ, որ հիվանդ է...

2-րդ պրոֆ. - Որքան մարդ, այնքան հիվանդություն:

Շահեն - Բայց ես ոչ մի հիվանդություն չունեմ...

Գլխ. բժիշկ - Մեր կոչումն էլ հենց հիվանդություններ հայտնաբերելն է, այ, հիմա կզննենք, կգտնենք:

(Պրոֆեսորներին):

Նրան ոչ մի դեպքում բաց թողնել չի կարելի: Նման հիվանդները փողոցներում թափված չեն: Նա մեր ոսկե աքաղաղն է, ոսկե ձկնիկը, անձամբ ես մինչև ակադեմիայի թղթակից - անդամ չդառնամ, նա իր տան երեսը չի տեսնի: Հիմա՞ր եմ, ի՞նչ է...

1–ին պրոֆ. - Ես էլ եմ թղթակից - անդամ ուզում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

2–րդ պրոֆ. – Չէ, ես նախ բնակարան եմ ուզում, հետո...

Գլխ. բժիշկ - Դե, ձեզ տեսնեմ... *(Բարձր):* Դե, ի՞նչ կասեք, կոլեգաներ, ձայնը ձեզ է տրվում, պրոֆեսոր:

1 - ին պրոֆ. - Վաղո՞ւց է, ինչ աչքերի հիվանդություն ունեք, հիվանդ...

Շահեն - Ե՞ս, երբեք...

1-ին պրոֆ. - Երբ շատ եք կարդում, ասենք, ամբողջ գիշերը, ձեր աչքերը չե՞ն ցավում:

Շահեն - Ցավում են:

(Պրոֆեսորը հաղթական նայում է կոլեգաներին):

1-ին պրոֆ. - Իսկ երբ ամբողջ օրը քաղցած եք մնում, ստամոքսի շրջանում ցավեր, կծկումներ չե՞ք զգում...

Շահեն - Զգում եմ, զգում եմ, պրոֆեսոր, ինչպե՞ս կռահեցիք... Երբ քաղցած եմ մնում, ստամոքսս էլ է ցավում, սիրտս էլ, ձեռքս էլ, թիկունքս էլ...

(Պրոֆեսորը հաղթական նայում է կոլեգաներին):

1-ին պրոֆ. - Ստացիոնար բուժում և խստագույն դիետա: Ես հանձն եմ առնում օգնել նրան, եթե նա էլ իր հերթին օգնի բժշկությանը, ինչպես նկատել է մեծ Հիպոկրատը: Ութսուն տոկոսի երաշխիք եմ տալիս:

Գլխ. բժիշկ - Ձեր կարծի՞քը, պրոֆեսոր...

2-րդ պրոֆ. - Հիվանդ, շաքար ունե՞ք:

Շահեն - Հիմա՞:

2-րդ պրոֆ. - Այո...

Շահեն - Հիմա չունեմ:

2-րդ պրոֆ. - Իսկ առա՞ջ:

Շահեն - Ե՞րբ առաջ...

2-րդ պրոֆ. - Ասենք՝ անցյալ տարի:

Շահեն - Իհարկե, տարվա վերջին միանգամից տասը կիլոգրամ գնեցի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Պրոֆեսորները ծիծաղում են):

2 - րդ պրոֆ. - Իմ հարցը, հիվանդ, արյան մեջ շաքարի տոկոսին է վերաբերում: Ձեր արյան մեջ շաքար կա՞:

Շահեն - Բայց ես ի՞նչ գիտեմ, թե իմ արյան մեջ ինչ կա: Ձեր արյան մեջ կա՞:

2 - րդ պրոֆ. - Դա՛… Իսկ աղերի կուտակո՞ւմ...

Շահեն - Ա՞ղն ինչու եմ կուտակում, երբ պետք է լինում՝ տուփով գնում եմ: Խանութները լիքն են:

2 - րդ պրոֆ. - Դա՛... Իսկ ինչպե՞ս է ձեր ինքնազգացողությունը:

Շահեն - Լավ է:

2 - րդ պրոֆ. - Որևէ բողոք չունե՞ք, ոչինչ ձեզ չի՞ անհանգստացնում, գիշերները հանգիստ քնո՞ւմ եք... գո՞հ եք ձեր կյանքից... Կարո՞ղ եք պնդել, որ ձեզ երջանիկ եք զգում...

Շահեն - Այո, այո և այո...

2 - րդ պրոֆ. - Ստացիոնար բուժում: Գերադասելի է մեկուսարանը: Ծանր դեպք է: Ես հանձն եմ առնում նրան բուժել ժամանակակից բժշկական գիտության մեծագույն նվաճումներից մեկով՝ սովահարությամբ...

Շահեն - Ի՞նչ, միայն ոչ սովահարությամբ, աղաչում եմ ձեզ, ես քաղցին չեմ դիմանում... Ես սովոր չեմ...

2-րդ պրոֆ. - Կսովորեք... Կարծում եք ուրիշների համար դիմանալը հե՞շտ է: Եթե պահանջվում է քաղցած մնալ, ուրեմն քաղցած կմնաք...

Շահեն - Բայց, հարգելի պրոֆեսորներ, թանկագին բարեկամներ, դա նշանակում է կործանել ինձ... Ճիշտ է, այսուհետև թերևս ես ձեզ պետք չգամ, բայց պետք եմ ձեր երեխաներին, թոռներին... Կտեսնեք, ես նրանց համար շատ օգտակար կլինեմ...

1-ին պրոֆ. - Մանկամսուրի հարցո՞վ...

Շահեն - Ոչ, ոչ, ավելին...

2-րդ պրոֆ. - Աա՛, մանկապարտեզի հարցով, կռահեցի՞...

Շահեն - Ոչ, ոչ, հարցն այն է, որ ինձ առաջ են քաշել և «Մարդը և նրա պարտքը» հանդեսի խմբագրությունից տեղափոխել են մանկական հաղորդումների խմբագրություն:

Գլխ. բժիշկ - Ի՞նչ, և դա կոչվում է առաջքաշո՞ւմ, ընկեր Շահեն Միրաքյան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Շահեն - Այո, այո, դա ինձ համար մեծ նվաճում է: Ես պետք է «Բարի գիշեր» ասեմ փոքրիկներին, հեքիաթներ պատմեմ նրանց համար, աշխարհի ամենաիմաստուն, ամենաազնիվ, ամենաբարի հեքիաթները...

2-րդ պրոֆ. - Ես իրավացի չէի՞... միայն մեկուսարան...

1-ին պրոֆ. - Թերևս, թերևս... ցավալի է... նույնիսկ վրաս կատաղություն է գալիս՝ այդքան էլ գո՞հ լինել կյանքից...

Գլխ. բժիշկ - Հարգելի ընկեր Շահեն Միրաքյան, բարեկամս, մենք կարծես ձեզ առիթ չտվեցինք կատակելու, խաղալու, ինչպես ասում են, մեր հոգու հետ: Ինչպե՞ս կարող էիք դուք հրաժարվել այդ պաշտոնից, այդ համընդհանուր մեծարանքից ու ակնածանքից, մարդկանց վրա ունեցած ձեր գրեթե աստվածային ազդեցությունից և բարի գիշեր ասել երեխաներին: Դուք փաստորեն խորամանկությամբ մեզ եք ուզում բարի գիշեր ասել: Դա առնվազն ծիծաղելի է. ասացեք, որ կատակում եք: Ասացեք, որ դա ձեր սովորական հումորն է:

Շահեն - Ի՜նչ եք ասում, Վաղարշակ Պետրովիչ, գիտե՞ք, թե որքան եմ պարապել, չարչարվել ու տառապել, մինչև որ իրավունք եմ ստացել վարելու այդ հիանալի հաղորդումը: Դուք չեք պատկերացնի, թե ինչ երանություն է խոսել երեխաների հետ նրանց լեզվով, նրանց համար... Երևի մեր փոքրիկները ոչ մեկին այնքան չեն տեսնի երազում, որքան ինձ: Մի՞թե դա երջանկություն չէ...

Գլխ. բժիշկ - Իսկապե՞ս այդպես եք կարծում, Միրաքյան:

Շահեն - Օ, այո, համոզված եմ: Այսինքն, հենց հիմա, այստեղ, կարող եմ համոզել նաև ձեզ: Ես արդեն պատրաստել եմ իմ առաջին ելույթը: (Գրպանից մի նապաստակի խամաճիկ է հանում): Ահա իմ կոլեգան, ինչպես սրամտորեն ձեզ էր դիմում հարգարժան պրոֆեսորը:

(Գլուխ է տալիս):

Եվ այսպես՝ սկսում ենք...

«Բարի երեկո, սիրելի փոքրիկներ, այսօր դուք կլսեք «Իսկական բարեկամը» հեքիաթը»:

Սկսե՞նք, սիրելի նապաստակ...

- Սկսենք, սկսենք...Ուրեմն մի թավ անտառում գտնվող փոքրիկ ու կանաչ բացատում ապրում էր շլդիկ նապաստակը:

-Ես շլդիկ չեմ, ես շլդիկ չեմ:

-Այո, այո, ներողություն, սիրելի նապաստակ: Շլդիկ նապաստակը ուրիշ հեքիաթում էր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Եվ ահա մի օր տապալված ծառի վրա ցատկոտելու ժամանակ, նապաստակը անզգուշաբար գլորվում է ու սկսում լաց լինել։

-Օֆ, օֆ, օֆ, ոտիկս, ոտիկս փուշ է մտել, ցավում է, օֆ, օֆ...

Նրա ձայնի վրա հայտնվում է խոզուկը։

-Խըրթ - խըրթ, ի՞նչ է պատահել, նապաստակ։

-Ոտիկս, ոտիկս ցավում է։

-Իսկ ես մրսում եմ, - ասում է խոզուկը, - մի քիչ ցախ տանեմ, վառեմ տաքանամ, հետո կգամ, քո ոտիկից կհանեմ փուշը։

Խոզուկը վերցնում է ցախը, գնում ու մոռանում է խեղճ նապաստակին։

-Օֆ, օֆ, ոտիկս, ոտիկս, - լալիս է նապաստակը։

-Ճըստ, ճըստ, ի՞նչ է պատահել, նապաստակ, - հայտնվում է սկյուռիկը։

Նապաստակը պատմում է իր վիշտը, խնդրում է օգնել...

-Ճըստ - ճըստ, բայց ես շատ քաղցած եմ, դու նախ ինձ գազար ու կաղամբ տուր՝ կշտանամ, հետո կմտածեմ քո մասին։

Վերցնում է սկյուռիկը նապաստակի հավաքած գազարն ու կաղամբը և գնում-կորչում է ծառերի սաղարթների մեջ։

Ու նորից մենակ հեծկլտում է նապաստակը։

Նրա ձայնը լսելով գալիս են մկնիկը, աղվեսիկը, արջուկը, ագռավիկը, բայց նապաստակին օգնելու փոխարեն կամ իրենք են նրանից որևէ բան խնդրում, կամ էլ հեռանում են անտարբեր... Եվ տխրում է նապաստակը, տխրում է ոչ միայն նրա համար, որ ցավում է ոտիկը, այլև նրա համար, որ անտառում ոչ մի կարեկից, բարի հոգի չկա։

Եվ հանկարծ նրա գլխավերևում սևանում է երկինքը...

-Բըզզ-բըզզ, ոտիկդ շա՞տ է ցավում, սիրելի նապաստակ, - բզզում են մեղուները։

-Այո, - ասում է նապաստակը, - ես վիրավոր եմ, մենակ եմ...

-Դու մենակ չես, - բզզում են մեղուները, - մենք լսեցինք քո ձայնը, ծաղկից ծաղիկ անցնելով բուժիչ նեկտար հավաքեցինք քո ոտիկի համար։ Բայց նախ և առաջ մենք կհանենք փուշը... Մեղուները բռնում են իրար պոչից և միացյալ ուժերով քաշում - հանում են փուշը։ Իսկ հետո նեկտար են քսում նապաստակի ոտիկի վրա և ամուր ծածկում

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

մոմով: Եվ հանկարծ նապաստակն զգում է, որ ոտիկն այլևս չի ցավում: Նա ճչում է երջանկությունից, գրկում է մեղուներին, և նրանք ուրախ երգում ու պարում են անտառի բացատում...

-Ես մենա՛կ չեմ, ես մենա՛կ չեմ, - ամենից բարձր հնչում է նապաստակի զվարթ ձայնը:

Այսպես է ավարտվում հեքիաթը:

Իսկ հիմա գնացեք քնելու, սիրելի փոքրիկներ: Բարի գիշեր ձեզ: Իսկ դո՞ւ ինչ պիտի ասես, նապաստակ:

- Բարի գիշեր ձեզ, սիրելի երեխաներ...

(Կերպարանափոխվում է):

Ահա: Ինչպե՞ս էր, անկեղծորեն...

2-րդ պրոֆ. - Ըմմ... Երեխաներին անշուշտ հաճելի կլինի…

1-ին պրոֆ. - Լավ է, լավ է, երիտասարդ... *(Ընկերոջը):* Քանի դեռ այդ խանութի վարիչը չգիտի, որ Միրաքյանին տեղափոխել են, գնամ ստանամ զեյթունի յուղը:

2-րդ պրոֆ. - Ինչ լավ հիշեցրիր, կոլեգա... շտապեմ կոշիկի խանութ... Հարգանքներս:

Գլխ. բժիշկ - Լսիր, Շահեն, գուցե իսկապե՞ս մնայիր մի քանի օր... քննեինք, զննեինք...

Շահեն - Չեմ կարող, չեմ կարող, ախր երեխաները սպասում են ինձ... Ես նրանց բարի գիշեր պետք է ասեմ...

Գլխ. բժիշկ - Դե, ինչպես ասում են նման դեպքերում, այ տղա, չեմ համարձակվում քեզ պահել:

Շահեն - Շնորհակալություն, Վաղարշակ Պետրովիչ, երբեմն լսեք մեր հեքիաթները, դրանց մեջ մեծերի համար էլ շատ արժեքավոր բաներ են լինում:

(Մոտենում է պատուհանին, բացում է, նայում է դուրս):

Մանվե՞լ, Նազի՞կ, այ անպիտաններ, դեռ սպասո՞ւմ եք: Գալիս եմ, գալիս եմ... Գալի՛ս եմ...

(Դուրս է գնում):

Վարագույր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՔԱՆԻ ԴԵՌ ԿԱՄ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Վահրամ Արամյան - Ժողովրդական դերասան, 60 տարեկան
Նունե - Նրա դուստրը, 27 տարեկան
Բաբկեն Մայիլյան - Միլիցիայի գնդապետ, թոշակառու, 52 տարեկան
Պետրոս Պետրոսյան - Թոշակառու բանվոր, 65 տարեկան
Սահակ Գնունի - Ճարտարապետ, 30 տարեկան
Նազար Խելունց - Շենքի լիազոր, 45 տարեկան
Ադա - Խելունցի կինը, անորոշ տարիքի
Գևորգ Ծատինյան - Հանրախանութի դիրեկտոր, 55 տարեկան
Տաթևիկ - Մայիլյանի թոռնիկը, 5-6 տարեկան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

(Գործողությունը տեղի է ունենում բնակելի շենքում և բակում: Բոլոր գործող անձինք հարևաններ են: Լսվում է աղբատար ավտոմեքենայի զանգը: Շենքը արթնանում է):

Վարդուշ - *(Խաչակնքում է):* Մեղա աստծո, մեղա աստծո:

Անիկ - Անուշ մայրիկ, աղբը եկավ:

Ադա - Նազար, ձմերուկը մոռացար:

Խելունց - Թող մնա, կուտենք, էլի:

Ադա - Մի կողմը լրիվ փափկած է:

Խելունց - Էն մյուս կողմը կուտենք: Ոնց որ բերում եմ, էնպես էլ թափում եմ, բա դրանք արժանի՞ են:

Նոնա - Էլ մի ասեք, հիմիկվա երեխաները... ուժաս...

Լիդա - Ընկեր Ծատինյան, սպիտակ կոշիկներ չստացա՞ք: Ցավդ տանեմ, ախր տղայիս ամուսնացնում եմ:

Ծատինյան - Տեսնենք, մայրիկ:

Լիդա - Մի բան արա, ցավդ տանեմ, հո չեմ ասում իրա գնով, ոնց որ ամբողջ աշխարհը, էնպես էլ մենք: Ախր հարսս տանը մնաց:

Ծատինյան - Տեսնենք, տեսնենք, մի տեղից խոստացել են:

Ռազմիկ - Մացակ Սեմյոնիչ, գուցե այսօր ընդունեիք, հը՞:

Մացակ - Չեմ կարող, կոնֆերանս ունենք, հարևան:

Ռազմիկ - Ուրեմն վաղը գամ, հը՞:

Մացակ - Վաղը... վաղը չեմ կարող, սիմպոզիում է:

Էմմա - Ուրեմն թողնենք երկուշաբթի:

Մացակ - Երկուշաբթի... երկուշաբթի չեմ կարող, թռուցկաժողով է:

Ռազմիկ - Բա ի՞նչ անենք:

Մացակ - Չգիտեմ, չգիտեմ, հարևան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նունե - Բարի լույս, Սահակ, Լուսիկն ինչպե՞ս է:

Սահակ - Լավ է, բժշկուհի, շնորհակալություն, բարի լույս: Տվեք, ես կթափեմ... Տվեք, տվեք, խնդրում եմ...

(Բակը խաղաղվում է: Մայիլյանն ու Պետրոսը բակում ծուլորեն նարդի են խաղում: Պատշգամբում հուզված ետ ու առաջ է անում Արամյանը):

Նունե - Հայրիկ:

Արամյան - Ի՞նչ է, հեռախո՞սն է:

Նունե - Ի՞նչ հեռախոս, հայրիկ, նախաճաշն է պատրաստ, ներս եկ:

Արամյան - Հիմա, հիմա...

Նունե - Իսկ ի՞նչ է, դու զանգի՞ ես սպասում:

Արամյան - Զանգի՞, չէ, ի՞նչ ես ասում: Նունե, ես թոռնիկ եմ ուզում, լսո՞ւմ ես, թոռնիկ:

Նունե - Մինչև ասպիրանտուրան չավարտեմ, չեմ ամուսնանա:

Արամյան - Ավարտելուց հետո քեզ հետ ո՞վ կամուսնանա: Նունե, իսկ ովքե՞ր են այս մարդիկ, կարծես թե ծանոթ դեմքեր են:

Նունե - Ինչպե՞ս կարող են ծանոթ լինել, երբ ընդամենը քսան տարի է, ինչ նույն շենքում ենք ապրում:

Արամյան - Իսկապե՞ս: Պարա՞պ են, ինչ է, առավոտ շուտ ինչո՞ւ են նարդի խաղում:

Նունե - Ազատ մարդիկ են, հայրիկ, երբ ուզենան կխաղան:

Արամյան - Այսինքն ինչպե՞ս թե ազատ:

Նունե - Թոշակառուներ են: Պետրոս քեռին քառասուն տարի բանվոր է եղել գործարանում, իսկ ընկեր Մայիլյանը մեր շրջանի նախկին միլպետն է:

Արամյան - Եվ միլպետը բանվորի հետ նարդի է խաղում: Հետո էլ ասում են՝ հավասարություն չկա:

Նունե - Ո՞վ է ասում: Միշտ էլ ազատությունից հետո հավասարություն է նախատեսված: Դե արի, արի, թեյը սառչում է:

Արամյան - Հիմա, հիմա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պետրոս - Տարվեցիր, ընկեր Մայիլյան։

Մայիլյան - Ինչո՞ւ, զույգը օգնում է։

Պետրոս - Ի՞նչ, հափ ե՞կ։ Բռնեցիր, հաստատ բռնեցիր։

Մայիլյան - Ամաչիր, Պետրոս։

Պետրոս - Ե՞ս ամաչեմ։ Աչքովս տեսա, մեկը գցեցիր, մեկն էլ սղղացրիր տախտակի վրա։

Մայիլյան - Ե՞ս... դե գիտես ինչ, ամոթ է, մեծ մարդ ես ու սուտ ես ասում։

Պետրոս - Աչքերիս չհավատամ, հա՞... ուրեմն պատահաբար իրար ետևից երեք զույգ եկավ, հա՞...

Մայիլյան - Տեր աստված, դու ինձ համբերություն տուր… Իմ խելքն ասա, որ քեզ հետ նարդի եմ խաղում։ Հարյուր անդամ ասել եմ։ Վերջ։ Ամոթ ինձ, թե մեկ էլ քեզ հետ նարդի խաղամ։ Ես մեղավո՞ր եմ, որ երեք անգամ զառը զույգ եկավ։

Պետրոս - Հա, իրեն - իրեն էլ եկավ... Նստիր, այ մարդ, նստիր։

Մայիլյան - Չեմ ուզում։

Պետրոս - Վերջ տուր, ընկեր Մայիլյան, քեզ չի սազում... Նարդի է, էլի, տաքանալու ի՞նչ կա։ Նստիր, նստիր։

Մայիլյան - Չեմ ուզում... կրակն եմ ընկել ձեր ձեռքը, կյանքումս թշնամի չեմ ունեցել, էս անտեր նարդու պատճառով աշխարհն ինձ թշնամի դարձրի... Ես մեղավո՞ր եմ, որ բոլորին տանում եմ։

Պետրոս - Տո ո՞ւմ ես տանում, դե հլա նստիր, նստիր...

Մայիլյան - Ասացի չեմ ուզում, էլի, զոռով խաղա՞լ կլինի... Ըհը...

Պետրոս - Ապրես, այ էդպես գցիր, էլի։ Հեր օրհնած։

Մայիլյան - Էս էլ բռնեցի, հա՞։

Պետրոս - *(Զայրացած):* Ես բան ասացի՞։

Նունե - Հայրիկ... Չե՞ս լսում, հայրիկ։

Արամյան - Զա՞նգն է։ Եկա։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նունե - Զանգը չի, թեյը սառեց... այսօր քեզ ի՞նչ է պատահել, նախաճաշիր, ախր ուշանում ես փորձից։

Արամյան - Նունե, ես թոռնիկ եմ ուզում։

Նունե - Լսիր, դու ինձնից ի՞նչ ես ուզում։

Արամյան - Թոռնիկ։ Եվ անպայման աղջիկ։ Փոքրիկ հյուսերով, կարճ փեշով, այնպես որ պստիկ վարտիքն անպայման երևա։ Մի անպետք աղջիկ, քեզ նման, որ բռնեմ ձեռքից ու գնամ, գնամ...

Նունե - Ո՞ւր, թատրո՞ն... դու թոռնիկ պահո՞ղ ես... օր ու գիշեր թատրոնից տուն չես գալիս։

Արամյան - Իսկ հիմա օր ու գիշեր տանն եմ լինելու։

Նունե - Ինչպե՞ս թե, ինչո՞ւ։

Արամյան - Ես այլևս թատրոն չեմ գնալու։

Նունե - Ոչինչ չեմ հասկանում։

Արամյան - Ես այնտեղ պետք չեմ։

Նունե - Այ քեզ նորություն։

Արամյան - Հա, հա... Երեկ հավաքվել էինք փորձից հետո... անտրամադիր էի ու հենց այնպես, գիտե՞ս, նեղսրտությունից ասացի, որ հոգնել, եմ, ուզում եմ թոշակի անցնել... վստահ էի, որ կհուզվեն, կվրդովվեն, կաշխատ են ետ համոզել։

Նունե - Հետո՞...

Արամյան - Ոչ մի ձայն... Նունե, ոչ մեկը ձայն չհանեց... իմ ընկերները։ Ես էլ դիմում գրեցի ու դուրս եկա։

Նունե - Այ քեզ բան... Դե լավ, սրտիդ մոտ մի ընդունիր, հայրիկ, քեզ անպայման ետ կկանչեն։

(Հեռախոսի զանգ)։

Արամյան - Եթե թատրոնից է, ասա...

Նունե - Սխալ էին հավաքել համարը...

Արամյան - Լավ... Կգնամ ձուկ բռնելու։ Փոքր ժամանակ բռնել եմ, գիտե՞ս։

Նունե - Քեզ չի սազում, հայրիկ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արամյան - Ինչո՞ւ, կամ կգնամ շրջելու։ Ախր ես Հայաստանը մի կարգին չեմ էլ տեսել։ Որ շրջանի մասին խոսում են, միայն ակումբներն եմ հիշում։

Նունե - Ուրեմն երազում էիր հրաժեշտի երեկո անցկացնել։

Արամյան - Հրաժեշտի երեկո՞։ Չի լինի, աղջիկս, տանել չեմ կարողանում, երբ ողջ-առողջ մարդուն նստեցնում են ու կողքին վերամբարձ ոճով մահախոսականներ կարդում։ Նունե, ես թոռնիկ եմ ուզում...Նունե, զանգն է, եթե թատրոնից լինի, ասա...

Նունե - Դե արի նախաճաշիր, հայրիկ, ախր քաղցած ես։

Արամյան - Լավ, աղջիկս, եղավ։ Ուրեմն լսիր, եթե ինձ զանգահարեն թատրոնից, ընկերներս, կասես, որ ես իմ հարևանների հետ նարդի եմ խաղում։

Նունե - Դու նարդի՞։

Արամյան - Հա, հա, հենց նարդի եմ խաղում... Նարդի։

Պետրոս - Էս անգամ հաստատ տարվեցիր։

Մայիլյան - Ինչո՞ւ, զույգը օգնում է։

Պետրոս - Քանի՞ անգամ զույգ։

Մայիլյան - Պետրոս տղա, հիմա մի այնպիսի ջուր սե եմ բերելու, մոկտացնելու եմ։

Պետրոս - Չի գա։

Մայիլյան - Ո՞նց չի գա։ Վազելով կգա։ Դե արի, զառ ջան։ Արի, քաղցրս, արի, անուշ ջան։

Պետրոս - Հազար անգամ ասել եմ՝ Անուշիս անունը չհոլովես։

Մայիլյան - Լավ, կրա՞կն ընկանք, որ քո կնոջ անունը Անուշ է։ Էս տարիքին էլ մարդ խանդի՞ իր կնոջը։ Լավ, չշեղվենք բուն նյութից։ Հիմա մի այնպիսի ջուր սե եմ բերելու... Դե տես։

Պետրոս - Բռնեցիր, հաստատ բռնեցիր։

Մայիլյան - Ամաչիր, Պետրոս։

Պետրոս - Այ մարդ, դու զառ բռնես, ես ամաչե՞մ։

Մայիլյան - Վայ, էս մարդն ինձ կխելագարեցնի։

Պետրոս - Թե մեկ էլ քեզ հետ նարդի խաղամ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արամյան - Բարև ձեզ, հարևաններ:

Մայիլյան - Հարգանքներս, նստեք, խնդրեմ, ընկեր Արամյան:

Պետրոս - Համեցեք, խնդրեմ, մեր հարգելի դերասան, ընկեր արտիստ:

Արամյան - Ո՞ւմ հետ եմ խաղում... Դե մեկն ու մեկդ նստեք:

Մայիլյան - Խաղանք, վարպետ:

Արամյան - Ուրեմն ընդունո՞ւմ եք:

Մայիլյան - Ի՞նչը:

Արամյան - Որ վարպետ եմ... Երկու և չորս...

Պետրոս - *(Ծիծաղում է)*:

Մայիլյան - Փանջ ու ջհար...

Արամյան - Երկու անգամ վեց... Ինչո՞ւ եք ծիծաղում...

Պետրոս - Ձեր գործի մեջ վարպետ եք ու վարպետ, բայց նարդու մեջ...

Արամյան - Վերջ: Դերասանությունը ավարտեցինք:

Մայիլյան - Ինչպե՞ս թե:

Արամյան - Երեկվանից թոշակի եմ անցել:

Պետրոս - Թոշակի՞: Ինչի՞, դերասաններն էլ են թոշակի գնո՞ւմ:

Մայիլյան - Պետրոս:

Արամյան - Այո, չգիտես ինչու, մեզ էլ են աշխատավոր համարում:

Պետրոս - Դե չէ, վարպետ, ես էդ մտքով չասացի: Չկարծես թե, որ բանվոր ենք, ուրեմն աշխարհից բան չենք հասկանում: Բայց դե դերասանի թոշակի անցնելը ո՞րն է:

Մայիլյան - Միամիտ բաներ ես ասում, Պետրոս:

Պետրոս - Դե դու էլ ինչ ես, Պետրոս հա Պետրոս: Սո՞ւտ եմ ասում: Դերասանի ջահելն ու ահելը ո՞րն է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մայիլյան - Հետաքրքիր մարդ ես, իսկ բանվորի ջահելն ու ահե՞լը որն է: Դո՞ւ ինչի թոշակի գնացիր:

Պետրոս - Այ շատ ապրես, ընկեր Մայիլյան: Համեմատեցիր, հա: Ես թոշակի գնացի, որովհետև պակասել էր ուժս, երկաթը չէի կարողանում բարձրացնել դնել դազգահի վրա, հասկացա՞ր: Աչքերս լավ չէին տեսնում ու ձեռքերս էլ դողում էին: Հասկացա՞ր: Չէի կարողանում դետալը ճիշտ մշակել, խոտան էր դուրս գալիս: Հասկացա՞ր: Իսկ դերասանի ուժը հո ձեռքերի մեջ չի: Ախր ջահելի դեր էլ կա, ծերի դեր էլ, չէ՞:

Մայիլյան - Այո:

Պետրոս - Այո ու ջան... Ջահելը ջահելի դեր պիտի խաղա, ծերն էլ ծերի, չէ՞:

Մայիլյան - Այո:

Պետրոս - Այ տղա, դե հա ասա, որ ասեմ հա ու ջան, ի՞նչ ես անընդհատ այո, այո ասում:

Մայիլյան - Հա, Պետրոս...

Պետրոս - Հա ու ջան... Մի խոսքով անարդար բան է:

Մայիլյան - Իսկապես, գիտե՞ք... Ջահելը ուժ ունի, ծերը՝ փորձ: Հենց փորձ ես ձեռք բերում, մեկ էլ պարզվում է, որ դու ավելորդ ես:

Պետրոս - Է, քոնը նույնը չէ՞ր, ընկեր Մայիլյան:

Մայիլյան - Ես իմ մասին չեմ ասում, Պետրոս:

Պետրոս - Իսկ ես քո մասին եմ ասում:

Մայիլյան - Պետրոս... *(Շրջվում է, տեսնում Տաթևիկին, որը ավազի հետ խաղ է անում):* Տաթևի՞կ, էդ ե՞րբ եկար:

Տաթևիկ - Վաղուց:

Մայիլյան - Ինչո՞ւ ես փախել մանկապարտեզից:

Տաթևիկ - Պապի ջան, էնտեղ ավազ չկա, էստեղ կա... Ի՞նչ տարբերություն, խաղում եմ, էլի:

Պետրոս - Ախր դուք չգիտեք, ընկեր Արամյան: Ընկեր Մայիլյանը ինչ աչք է բացել, միլիցիայում է աշխատել: Իսկ էս վերջին տարիներն էլ մեր շրջանի միլպետն էր: Շատ ծանր գործ է: Ընկեր Մայիլյանը ինձ ամեն ինչ պատմել է:

Մայիլյան - Պետրոս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պետրոս - Բա հե՞շտ է ամեն օր գող ու ավազակի հետ գործ ունենալ։ Մարդը նոր էր սկսել կարգավորել գործերը, մաքրել բաժինը, կարգին աշխատողներ հավաքել, նոր էր սկսել, ոնց որ ասում են՝ իր գործի վարպետը դառնալ և ըհը... հիմա նստել զառ է բռնում։

Արամյան - Բայց դուք շատ ջահել եք երևում։ Քանի՞ տարեկան եք։

Պետրոս - Հիսուներկու։

Արամյան - Հիսուներկո՞ւ։ Հիսուներկու տարեկան հասակում ինչպե՞ս են թոշակի ուղարկում։ Այդպիսի կարգ չկա։ .

Պետրոս - Միլիցիայում էդպես է։ Եթե 25 տարվա աշխատանքային ստաժ ունես և 50 տարեկան ես, կարող են հանգիստ քեզ հանգստի ուղարկել։

Արամյան - Ուրեմն դուք 25 տարվա աշխատանքային ստա՞ժ ունեք։

Պետրոս - Ի՞նչ 25 տարի, 37 տարվա ստաժ ունի... 37 տարի՞... սպասիր, դու ինձ ո՞նց ես ասել 37 տարի... էդ քանի տարեկանից ես սկսել աշխատել... տասներեք...

Մայիլյան - Չորս տարի ռազմաճակատում եմ եղել։

Պետրոս - Էդ գիտեմ։

Մայիլյան - Յուրաքանչյուր տարին միլիցիայում 3 տարի է հաշվվում։

Պետրոս - Բա ինչի՞ էդ մեկը ինձ չէիր ասել։

Մայիլյան - Ներողություն։

Արամյան - Եվ այդպիսի փորձառու աշխատողին երիտասարդ հասակում հանգստի՞ են ուղարկում։

Մայիլյան - Իմ հարցը մի քիչ ուրիշ է։ Շրջկոմի նոր քարտուղար էր եկել։ Տեղափոխել էին մի ուրիշ շրջանից։ Դե նա էլ իր միլպետին էր հետը բերել։

Արամյան - Սպասեք, սպասեք միլպետը նրա վերարկո՞ւն էր թե մեդալը... Եվ դուք չբողոքեցի՞ք։

Պետրոս - Բա չի՞ բողոքել։

Արամյան - Եվ ի՞նչ։

Մայիլյան - Առաջարկեցին հանգստի անցնել։

Պետրոս - Հը... հր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մայիլյան - Էհ, Պետրոս...

Պետրոս - Հը... հը...

Տաթևիկ - Պետրոս պապիկ, արի խաղանք։

Պետրոս - Հետո, հետո, Տաթևիկ...

Տաթևիկ - Պապի, արի խաղանք։

Մայիլյան - Տրամադրություն չունեմ, Տաթևիկ։

Տաթևիկ - Է, բա ես ի՞նչ անեմ, ամբողջ շենքով մի երեխա չեք կարողանում պահել։

(Ծիծաղում են):

Պետրոս - *(Դեպի իրենց դուռը):* Անուշ ջան, երեք բաժակ սուրճ դիր։ Գնանք սուրճ խմենք։

Մայիլյան - Ես հաճույքով։

Պետրոս - Գնանք, ընկեր Արամյան։

Արամյան - Շնորհակալություն։ Ես առավոտյան խմել եմ։

Պետրոս - Ուրեմն եթե մենք բանվոր ենք...

Մայիլյան - Դեմագոգիան սկսվեց։ *(Ծիծաղում են, ներս են գնում):*

(Գևորգ, Ադա):

Ադա - *(Իրենց պատշգամբից):* Բարև, Գևորգ։

Գևորգ - Հարգանքներս, տիկին Ադելաիդա... Նազարն ինչպե՞ս է... Հաղորդեք նրան իմ հարգանքները։

Ադա - Շնորհակալություն... Գործերդ ո՞նց են։

Գևորգ - Լավ են, փառք աստծո։

Ադա - Էդ ինչե՞ր են...

Գևորգ - Հեչ, մանր-մունր բաներ են... Վաղը եկեք մեզ մոտ։ Հետաքրքիր բաներ ենք ստացել, նայեք, ընտրեք...

Ադա - Ուրեմն եթե ես քեզ չտեսնեի, չէի՞ր ասելու։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գևորգ - Եղա՞վ, տիկին Ադելաիդա։

Ադա - ինչո՞ւ չեղավ։ Ուրեմն ես պիտի գամ, հա՞... Ինձանից լավ գիտես ապրանքի լավն ու վատը։ Ինքդ էլ ուղարկիր... Մարզպետի հետ։

Գևորգ - Շատ լավ, եղավ։

Ադա - Գևորգ։

Գևորգ - Լսում եմ։

Ադա - Ձայն չես հանում, Ազիզյանը օգնե՞ց...

Գևորգ - Փրկեց, ուղղակի փրկեց։

Ադա - Փրկեց... Էնպես արա, որ էլի փրկի։

Գևորգ - Մտածում եմ, շատ եմ մտածում։

Ադա - Էնքան մտածի, որ գլուխդ չցավի։

Գևորգ - Կմտածեմ... հարգանքներս։ *(Գնում են)։*

(Արամյան, Պետրոս, Մայիլյան)։

Պետրոս - Ընկեր Արամյան, մի հատ խաղանք։

Արամյան - Խնդրեմ։

(Գալիս է Խելունցը)։

Խելունց - Հետո՞... ձեզ եմ հարցնում, հետո՞...

Մայիլյան - Խելունց։

Խելունց - Ես ձեզ հարցնում եմ, հետո՞։

Արամյան - Իսկ ի՞նչ է պատահել։

Պետրոս - Լսիր, այ Նազար, դու էլ բան ու գործ չունե՞ս։

Խելունց - Ես ձեզ քանի անգամ պետք է զգուշացնեմ, որ բակում նարդի խաղալ չի կարելի, աղմկել չի կարելի։

Պետրոս - Իսկ ո՞ւմ ենք խանգարում։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խելունց - Բնակիչներին... Ախր տրտնջում են, բողոքում են, գրում են, գրող են, մոտս են գալիս... Ես էլ մարմին եմ, չէ՞,

Մայիլյան - Խելունց:

Խելունց - Ընկեր Մայիլյան, ախր գոնե դուք, որպես օրգանի նախկին աշխատող, մի խախտեք սոցիալական համակեցության կանոնները:

Մայիլյան - Սոցիալիստական համակեցության, Խելունց:

Խելունց - Գիտեմ... բայց նարդի մի խաղացեք... Վայ, ընկեր Արամյա՞ն... բայց մի խաղացեք... մարմին եմ, չէ՞, *(Գնում է):*

Պետրոս - Խաղացեք, ընկեր Արամյան, խաղացեք:

Արամյան - Ոչ, այլևս չեմ ուզում:

Պետրոս - Այ մարդ, խաղացեք, էդ Խելունցի հերն էլ անիծած:

Արամյան - Ոչ, ոչ դրա համար... շոգ է...

Մայիլյան - Շատ շոգ է: Ուզում եմ գյուղ գնալ, բայց գյուղում էլ շոգ է:

Արամյան - Ես էլ եմ ուզում օգտվել իմ ազատությունից ու գնալ շրջել Հայաստանում:

Պետրոս - Ճիշտ եք անում, քաղաքն ապրելու տեղ չի… Ծուխը, մուխը, էդ Նազարը... Ախպեր, խղճի՞ բան է, չեն թողնում նարդի խաղաս... չէ, մի օր էլ չեմ մնա: Կգնամ, կարգի կգցեմ հորս տունը, մի փոքր հողամաս ունենք, ծառեր կտնկեմ, պոմիդոր կաճեցնեմ, շատ սիրուն է լինում:

Մայիլյան - Էլի սկսեցիր, տասը տարի է գնում ես:

Պետրոս - Բա որ իմ ձեռքին լիներ, մի օր կմնայի: Ախր, ընկեր Արամյան, ես Անուշիս հետ մի տարով էի քաղաք եկել: Դե հետո երեխաներ ունեցանք, դպրոցի, բանի հարց կար, ինստիտուտի հարց կար: Վերջը ասացի, թող երեխաներս կրթություն ստանան, կթողնեմ, կգնամ: Ու էսպես...

Մայիլյան - Ջրի պես գնում ես, ավազի պես՝ մնում:

Պետրոս - Ասացի մի օր էլ չեմ մնա... մենակ թե... դե մի գործ կա, էլի... կանեմ ու կգնամ:

Մայիլյան - Սամսոնի գործը, հա՞... էհ, ուրեմն գյուղ գնալդ մոռացիր, Պետրոս... Ինչպես տեսնում եմ, դա լուծվելու բան չէ:

Պետրոս - Ո՞նց թե...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մայիլյան - Ախր էլ տեղ չմնաց, որ չդիմեցիր։

Պետրոս - Ի՞նչ անեմ... սուտ բան է, վերևից զանգող պիտի լինի, վերևից։

Արամյան - Ներեցեք, եթե գաղտնիք չէ, այդ ի՞նչ գործ է, որ չի լուծվում։

Մայիլյան - Բնակարանի հարց է, ընկեր Արամյան։

Պետրոս - Եթե կուզեք իմանալ, ոչ մի բնակարանի հարց էլ չի։ Հիմա արդեն մարդկության հարց է, խղճի, պատվի, ապրելու ու մեռնելու հարց է։

Արամյան - Ոչինչ չհասկացա։

Պետրոս - Ընկեր Արամյան։ Ես մի ընկեր ունեի։ Դարբին։ Սամսոն էր անունը։ 40 տարի գործարանում իրար հետ էինք աշխատում։ Հոգի մարդ էր։ Մեր գործարանում բոլորի տան հարցը լուծվեց, նրանը չլուծվեց։ Մի 25 տարի առաջ նրան երկու փոքրիկ սենյակ էին տվել։ Այնինչ յոթ երեխա ուներ, տեղ չէին անում, տնից դուրս էին թափվում։ Վերջը շատ բողոքեցինք, որոշեցին Սամսոնի ընտանիքին չորս սենյականոց բնակարան տալ։ Հերթը արդեն իրեն էր հասել, ուրախանում էինք, բայց դե մարդ ի՞նչ գիտի, թե իր գլխին ինչ է գալու։ Հանկարծամահ եղավ Սամսոնը։ Հանկարծ, գիտե՞ք, գիշերը ժամը երեքին վեր է կացնում կնոջը, թե՝ Նարգիզ ջան, շորերս փոխիր, ես մեռնում եմ։

Արամյան - Այ քեզ բան...

Պետրոս - Հա, էդպես պատահեց։

Արամյան - Եվ ի՞նչ, ընտանիքին բնակարան չե՞ն տվել։

Պետրոս - Չեն տալիս։ Ասում են՝ երեխաներն արդեն մեծ են, թող իրենց համար բնակարան ստանան։

Արամյան - Ո՞վ է ասում։

Պետրոս - Դիրեկտորը, Սիրավյանը։ Ասում է՝ մենք մենակ մեր աշխատողներին ենք բնակարան տալիս։

Մայիլյան - Այդպիսի օրենք չկա։ Իրավունք չունի։

Պետրոս - Իրավունք հարցնողն ո՞վ է, այ բալամ։ Եվ հետո, ո՞վ է գնացողի մասին մտածողը։ Գնաց պրծավ։ Բա հանձնաժողովը որոշում հանի, դիրեկտորը չստորագրի՞... Ախր դուք չեք իմանում, մեր էդ դիրեկտորը, հեռու ձեզանից, շատ չար ու անհոգի մարդ է, համ էլ վախկոտ, իր կաշվի համար դողացող... ու որ չար ու անհոգի է, դա էլ է վախից։ Վերևից որ ասող լինի, տեղն ու տեղը կանի։ Ես գիտեմ, չէ՞։

Մայիլյան - Ի՞նչ անեմ, եթե գոնե միլիցիայի բաժնում լինեի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արամյան - Լսեք, իսկ ի՞նչ կլինի, եթե ես խոսեմ նրա հետ։

Մայիլյան - Դո՞ւք։

Արամյան - Ես։

Պետրոս - Կներես, ընկեր Արամյան, բայց վախենում եմ քեզ չլսի։ Նրան պիտի վերևից զանգող լինի, վերևից։

Մայիլյան - Դու էլ ի՞նչ ես վերևից, հա վերևից։ Չի լսի, ինչպե՞ս թե չի լսի։ Ընկեր Արամյանը հարգված ու ճանաչված մարդ է, դերասան է։

Պետրոս - Բան չեմ ասում...

Արամյան - Իսկ այդ ինչպե՞ս էր, հա, Սիրավյանի հեռախոսի համարը ունե՞ք, վարպետ Պետրոս։

Պետրոս - Բա չունե՞մ։ Ծոցումս եմ պահում։ Կտրվի դրա հեռախոսը։

Արամյան - Ինչպե՞ս էր ձեր ընկերոջ անուն-ազգանունը։

Պետրոս - Սամսոն Կարաքեշիշյան։

Արամյան - *(Հավաքում է համարը)։* Ընկեր Սիրավյանին եմ խնդրում։ Սիրելի աղջիկ, ասացեք, որ Վահրամ Արամյանն է անհանգստացնում։

Պետրոս - Գոհարն է, քարտուղարուհին։

Արամյան - Ճանաչեց։

Պետրոս - Էդ էր պակաս չճանաչեր։

Արամյան - Ընկեր Սիրավյան։ Բարև ձեզ, Վահրամ Արամյանն է թատրոնից։ Ինչպե՞ս եք։ Մի... փաստորեն անձնական հարցով եմ դիմում ձեզ։ Այո, այո... ավելի ստույգ, ես այդ գործը իմ անձնականն եմ համարում, իբրև քաղաքացի։ Ես լավ ծանոթ եմ մի ընտանիքի, որը ողբերգական դրության մեջ է։ Խոսքս վերաբերում է... ինչպե՞ս… լավ, կսպասեմ...

(Շրջում է դեպի ընկերները)։

Կառավարական հեռախոսով է խոսում։

Պետրոս - Աստված, դու մի հաջողություն տաս։

Մայիլյան - Հանգիստ, Պետրոս, հանգիստ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արամյան - Այո, այո, բարեկամս, խոսքը վերաբերում է նախկին բանվոր Սամսոն...

Պետրոս - Կարաքեշիշյանին։

Արամյան - Կարաքեշիշյանի ընտանիքին։ Նրանց բնակարանի հարցը... ինչպե՞ս, չհասկացա... ահա թե ինչ։ Բնակարանների բաշխման հարցով դուք չե՞ք զբաղվում։ Սակայն... Ինձ թվում էր... ես կարծում էի... ըստ իս մարդասիրությունը... մեր պարտքը... չէ որ խղճի ձայնը... Անջատվեց... անջատվեց...

Պետրոս - Բա որ ասում էի մարդ չի... Իզուր էլ զանգ տվեցիք։ Նա ո՞վ է, որ... չէ, նրան պիտի վերևից զանգող լինի, վերևից։

Արամյան - Սպասեք։ Գուցե ես նորի՞ց զանգահարեմ... ըստ երևույթին անջատվեց։

Պետրոս - Չէ, պետք չի, ընկեր Արամյան... էդքանն էլ հերիք էր... ի՞նչ, գալիս եմ, Անուշ ջան։

Մայիլյան - Ես էլ գնամ թոռնիկիս տուն բերեմ... Ներողություն, ընկեր Արամյան, ցտեսություն։

Նունե - Հայրիկ, չե՞ս գալիս ճաշելու։

(Բոլորը հեռանում են: Բակ է մտնում Սահակը, տաշտը դնում և սկսում է լվանալ երեխայի շորերը):

Նունե - Բարև ձեզ, Սահակ, Լուսիկն ինչպե՞ս է։

Սահակ - Շնորհակալություն, բժշկուհի։ Հիմա անհամեմատ լավ է, դեմքին գույն է եկել, ծիծաղում է, խաղում է... բարև ձեզ։

Նունե - Բոլոր դեպքերում պետք է ստուգել։ Ջերմություն ունի՞, թե...

Սահակ - Ունի, ունի, ամեն ինչ ունի։ Նեղություն մի քաշեք, բժշկուհի, ես ամեն ինչ առել եմ։

Նունե - Առե՞լ եք։ Դե լավ է, լավ է, Սահա՛կ։

Սահակ - Լսում եմ, բժշկուհի։

Նունե - Դուք իմ անունը չե՞ք հիշում։

Սահակ - Ինչպե՞ս թե չեմ հիշում, բժշկուհի։

Նունե - Ուրեմն ինչո՞ւ եք անընդհատ բժշկուհի ասում։ Ինչո՞ւ անունս չեք տալիս։ Ի վերջո նույն բակում ենք մեծացել։

Սահակ - Սովորություն է, գիտեք, մի տեսակ չի ստացվում։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նունե - Երբ ազատ եք լինում, փորձեք, գուցե ստացվի։

Սահակ - Եղավ, Նունե... Գալիս եմ, Լուսինե։ Լուսիկն արթնացավ, ներողություն, ես գնամ, բժշկուհի։

Նունե - Էլի բժշկուհի։ Դե լավ, լավ, գնացեք, ճարտարապետ։

(Սահակը տուն է մտնում։ Վերևից իջնում է Նունեն։ Արագ-արագ լվանում է Սահակի դուրս բերած շորերը, փռում և բարձրանում է վեր։ Գալիս է Սահակը)։

Սահակ - Շնորհակալություն, Անուշ մայրիկ, ես կանեի, էլի, շատ շնորհակալ եմ... Դուք լավ գիտեք ինչի համար։

(Նունեն ծիծաղում է։ Սահակը տանում է տաշտակը)։

Արամյան - Վարպետ Պետրոս։ *(Զանգը սեղմում է)։*

Պետրոս - *(Դուրս գալով)։* Ի՞նչ կա, ընկեր Արամյան։

Արամյան - Մայիլյանի տունը ո՞րն է... Կանչեք։

Պետրոս - Ի՞նչ է պատահել։

Արամյան - Կանչեք, վարպետ։

Պետրոս - Ըհը, ինքը եկավ։

Մայիլյան - Ի՞նչ է պատահել։

Արամյան - Ուրեմն ասում եք վերևից, հա՞... *(Ներս է մտնում, տանից դուրս է բերում հեռախոսը։ Պետրոսին)։* Հեռախոսի համարը։

Պետրոս - Ո՞ւմ...

Արամյան - Սիրավյանի։ *(Պետրոսը հավաքում է համարը)։*

Արամյան - *(Զայնը կեղծելով)։* Լսեք, ընկեր Սիրավյան, դա ի՞նչ բան է, այդ ինչո՞ւ եք վիրավորել ժողովրդական դերասան Վահրամ Արամյանին։ Դա ի՞նչ վարվեցողություն է։ Ինչպես թե ո՞վ։ Ես եմ, Ամյանը... վիճաբանական գլխավոր հանձնաժողովի նախագահը։

Պետրոս - Այ մարդ, էս ի՞նչ է անում։

Մայիլյան - Սո՛ւս։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արամյան - Բարի եղեք անմիջապես կատարել նրա խնդրանքը։ Ինչպե՞ս։ Ես կուրսի մեջ եմ։ Այդ է պահանջում օրենքը և երկրորդ կարծիք լինել չի կարող։

Պետրոս - Էդպես է, ցավդ տանեմ։

Արամյան - Վերջացնենք։ Սա համարենք թյուրիմացություն։ Եվ իմ անկեղծ խորհուրդը ձեզ։ Այսուհետև զգույշ եղեք։ Մեծ բեռ չե՞ք վերցնում արդյոք ձեր ուսերին։ Ես համոզված էի, որ դուք էլ նույն կարծիքին կլինեք։

Պետրոս - Ինքն էլ է էդ կարծիքի՞ն... Վայ ես քո հերն եմ անիծել, հա։

Մայիլյան - Սուս, մի խանգարի, Պետրոս։

Արամյան - Բարի, բարի։ *(Ցած է դնում լսափողը)։* Սրիկա, մորթապաշտ, ի՞նչը փոխվեց... նույն մարդը չէի՞։ Ընդամենը ազգանունիցս երկու տառ հանեցի և արդեն բարակե՞ց ձայնդ։ Սրիկա... Բնակարանների բաշխման հարցով ես չեմ զբաղվում... ապիկար...

Պետրոս - Ընկեր Արամյան, ուրեմն չեղավ, հա՞։

Արամյան - Ինչը՞ չեղավ... Նա հենց հիմա հաստատեց բնակ-հանձնաժողովի որոշումը։

Մայիլյան - Այ քեզ բան, ուրեմն հաստատե՞ց։

Արամյան - Այո, այո, ուրեմն եղավ։

Մայիլյան - Պետրոս, հիմա Սամսոնի երեխաները բնակարան կստանան... Դուք իսկական դերասան եք, ընկեր Արամյան։

Արամյան - Ուրեմն մինչև հիմա կասկածո՞ւմ էիք։

Պետրոս - Ես թռա։

Մայիլյան - Ո՞ւր, այ մարդ։

Պետրոս - Սամսոնենց տուն, ասեմ, թող ուրախանան... ես էլ ուրախանամ։ Ուզում եմ ուրախություն տեսնել։

Մայիլյան - Ոչ մի դեպքում։ Ի՞նչ պիտի ասես, որտեղի՞ց գիտես։ Գործ չունես, Պետրոս։

Արամյան - Այո, այո, միտք չունի, բարեկամս։

Պետրոս - Ուրեմն տես, է, մի զանգով։

(Անցնում է Սահակը)։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ, Սահակ, Սամսոնի երեխաները բնակարան կստանան։

Սահակ - Շատ ուրախ եմ։

Պետրոս - Սահակ, Սահակ... դու գնա, գնա... Ընկեր Արամյան, աներես մարդ չհամարեք, բայց մի բան էլ եմ ուզում ասել։

Արամյան - Ես ձեզ լսում եմ։

Մայիլյան - Պետրոս, է՞լ ինչ ես ուզում ասել։ Բավական չէ՞։ Եթե չեմ սխալվում, դու արդեն հանգիստ կարող ես գյուղ գնալ, կարգի գցել հայրական տունդ, ծառեր տնկել ու... պոմիդոր...

Պետրոս - Բա դա ծաղրելո՞ւ բան է, ընկեր Մայիլյան, կարծում ես չե՞մ գնալու։ Ասել եմ, մի օր էլ չեմ մնա... Բա սա ապրելո՞ւ տեղ է։

Արամյան - Ի՞նչ էիք ասում, սիրելի Պետրոս։

Պետրոս - Է, թողնում են, որ...

Մայիլյան - Դե լավ, կատակ արեցի, Պետրոս ջան։ Ի՞նչ է, ես չգիտե՞մ, որ գնալու ես... կատակ արեցի, ազնիվ խոսք։

Պետրոս - Մեր Սահակի համար էի ուզում ասել։

Արամյան - Իսկ ո՞վ է Սահակը։

Մայիլյան - Մեր հարևանն է... ճարտարապետը։

Պետրոս - Լավ տղա է։ Ափսոս, մի քանի ամիս առաջ մեռավ կինը, երեխան մնաց ձեռքին։ Լրիվ կորցրել է գլուխը։ Ձեր Նունեն շատ է օգնում նրան... Հենց երեխան հիվանդանում է, Նունեն է հասնում նրան։

Արամյան - Այո, այո, հիշեցի... Եվ ինչ, ուրիշ մարդ չկա՞ տանը։ Երեխային հետևող չկա։

Մայիլյան - Չէ, վարպետ, միայնակ է։

Արամյան - Բայց մենք ինչո՞վ կարող ենք օգնել նրան։

Պետրոս - Դե նրա փոքրիկ երեխային պահող չկա։

Արամյան – Եվ ինչ։ Դուք կարծում եք, թե մենք կարո՞ղ ենք պահել։

Պետրոս - Չէ, ինչ եք ասում, ընկեր Արամյան։ Երեխային մանկամսուր պետք է ընդունել։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արամյան - Իսկ այդ Սահակը չի՞ ուզում, ինչ է:

Պետրոս - Ոնց չի ուզում, բայց դե նրա ուզենալով երեխա՞ կընդունեն:

Արամյան - Իսկ ինչո՞ւ չեն ընդունի:

Պետրոս - Գնացք նստած կա՞ք, ընկեր Արամյան:

Արամյան - Իհարկե, բայց ի՞նչ կապ ունի:

Պետրոս - Երկու ամիս առաջ Թիֆլիս էի գնում, թոռանս տեսնելու, բանակում է: Երեք օր գնացի, եկա, թե ամսի տասներկուսի համար տոմս չկա: Խնդրեցի, աղաչեցի, չկա ու չկա: Վերջը տոմսավաճառին հինգ ռուբլի ավել փող տվեցի, ու իմ ու Անուշի տոմսերը եղան:

Արամյան - Հետո՞:

Պետրոս - Հետո էն, ընկեր Արամյան, որ վագոնում մենակ ես ու Անուշս էինք: Ամբողջ գիշեր չքնեցինք... վախից:

Մայիլյան - Վայ, Պետրոս, վայ, դու պիտի գրող ծնվեիր, գրող... Հո երևակայություն չունես:

Պետրոս - Վայ, Անուշիս հարցրու:

Արամյան - Ուրեմն դուք ենթադրում եք, որ մանկամսուրում ազատ տեղեր կան, բայց չեն տալիս ինչ-որ շահի՞ համար: Ուրեմն դարձյա՞լ զանգ է պետք, վերևից:

Պետրոս - Էդ էլ որ անեք, է...

Արամյան - Խնդրեմ, դրա մեջ ի՞նչ կա: Կանչեք Սահակին:

Պետրոս - Սահակ, Սահակ, ի՞նչ ես կողքերդ նայում... Ես եմ, հա, վերև բարձրացիր: Հիմա կգա:

Նունե - *(Դուրս է գալիս):* Հայրիկ, դե ես գնացի հերթապահության...

Սահակ - Ներողություն, բժշկուհի, ինձ կանչեցին, շատ եմ խնդրում, հինգ րոպե, ընդամենը հինգ րոպե:

Նունե - Հինգ րոպե ի՞նչ:

Սահակ - Հինգ րոպե մնացեք Լուսիկի մոտ, հա՞, բժշկուհի...

Նունե - Չեմ մնա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ - Ինչո՞ւ... դե լավ, կներեք, բժշկուհի։

Նունե - Այ հենց բժշկուհի ասելու համար... լավ, ինչո՞ւ ինձ չեք ասում Նունե։

Սահակ - Ինձ մոտ չի ստացվում, իսկ Լուսիկի մոտ ստացվում է։

Նունե - Ի՞նչն է ստացվում։

Սահակ - Նա ասում է՝ Նունե։

Նունե - Ճի՞շտ, ե՞րբ է ասել։

Սահակ - Անցյալ գիշեր ճպճպացնում էր շրթունքները, ծարավ էր։ Հենց քնած-քնած ջուր տվեցի, խմեց, հառաչեց ու հանկարծ ասաց՝ «Խմեցի, Նունե»։

Պետրոս - Սահակ...

Սահակ - Գալիս եմ...

Նունե - Խեղճ Լուսիկ, երևի կարծել է, թե դարձյալ դեղ եմ խմեցնում։ Ինչպես ասա՞ց։

Սահակ - Ասաց՝ խմեցի, Նունե...

Նունե - Ապրես։ Տեսնո՞ւմ ես, քեզ մոտ էլ հիանալի ստացվում է։ Ուրեմն սրանից հետո ինձ ինչպե՞ս ես դիմելու...

Պետրոս - Սահակ...

Սահակ - Սահակ... էհ... Նունե, Նունե...

Նունե - Հրաշալի է, այսօրվա համար բավական է... Գնացի...

Սահակ - Բարև ձեզ։

Արամյան - Բարև, Սահակ... Ինչպե՞ս է փոքրիկը։

Սահակ - Հիմա լավ է, ընկեր Արամյան, շնորհիվ բժշկուհու։

Արամյան - Իսկ հիմա ո՞ւմ մոտ թողեցիք։

Սահակ - Բժշկուհին մոտը մնաց։

Արամյան - Ուզում եք մանկամսո՞ւր ընդունել։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ - Դիմել եմ... Գիտեք, չեմ կարողանում կարգին աշխատել... հետո խիղճս տանջում է, հո չի կարելի մեկ բժշկուհուն անհանգստացնել, մեկ Անուշ մայրիկին: Նրա թոռներն էլ քիչ չեն:

Պետրոս - Անուշս շատ է սիրում Լուսիկին... էդ մասին չխոսես, Սահակ:

Սահակ - Խոստացել են, բայց ձգձգում են անընդհատ: Նորից եմ դիմել, տեսնենք... Ներեցեք, դա իմ ցավոտ տեղն է... ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել:

Մայիլյան - Մենք ենք ուզում քեզ օգնել, որ Լուսիկին մանկամսուր ընդունեն:

Սահակ - Ինչպես... Մի՞թե դա հնարավոր է, ընկեր Մայիլյան:

Պետրոս - Հըմ, հիմի ընկեր Արամյանը կխոսի վերևի ձենով... *(Նրան լռեցնում են):*

Արամյան - Քաղսովետի նախագահը իմ մտերիմն է: Ինձ թվում է, որ անմիջապես կլուծի այդ հարցը:

Սահակ - Ախ, եթե ստացվեր...

Մայիլյան - Իսկ ո՞ր մանկամսուրն էիր ուզում ընդունել, Սահակ:

Սահակ - Երրորդը, հենց մեր բակում է, հեշտ կլիներ:

Մայիլյան - Վարիչի ազգանունը գիտե՞ս:

Սահակ - Ազգանունն էլ, անունն էլ, հայրանունն էլ, ծննդյան թիվն էլ, հասցեն էլ, ամուսնու աշխատանքի վայրն էլ, երեխաների թիվն էլ...

Արամյան - Ինչպե՞ս է ազգանունը:

Սահակ - Մանուկովա Աշխեն Սմբատովնա, նախկինում Շահմուրադովա:

Արամյան - Բավական է, դու գնա, տղաս:

Սահակ - Եթե միայն ստացվեր:

Արամյան - Կաշխատեմ, կաշխատեմ:

Մայիլյան - Գնա, Սահակ:

Սահակ - Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել:

Երեքը միասին - Գնա.... Սահակ, հեռախոսի համարը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ - 44 - 66 - 66...

Բժշկուհի։

Նունե - Սուս... Ներս չմտնես... քնեց։

Սահակ - Պետրոս հայրիկ, քանի երեխան քնած է, ես մեքենայով ինձ գցեմ պետպլան ու ետ գամ։ Անուշ մայրիկին ասեք թող մեկ-մեկ նայի։

Պետրոս - Դա էլ խո՞սք է, Սահակ։

Նունե - Հայրիկ, դե ես գնացի... ուշանում եմ։ Քեզ ոչ մի բան պետք չէ։

Արամյան - Չէ, աղջիկս, գնա։

Մայիլյան - Սահակ, Նունեին չե՞ս կարող աշխատանքի հասցնել։

Սահակ - Իհարկե, իհարկե, բժշկուհի։

Նունե - Պետք չէ, պետք չէ, մեր հիվանդանոցը հեռու է։

Սահակ - Բժշկուհի... ինչ եք ասում... իհարկե... բոլորովին... ինչ կա որ... Նունե...

Նունե - Համոզեց... գնացինք։

Պետրոս - Խեղճ տղա, ոնց կոտրվեց կյանքը։

Արամյան - Անցնենք գործի։

Պետրոս - Զանգահարեք, վարպետ։ Ու էլի էնպես, էն ձենով։

Արամյան - Վերնի՞ց... Հիմա, ափսոս, քարտուղարուհի էր պետք։

Մայիլյան - Գուցե Նունեն զանգահարեր։

Արամյան - Նունե՞ն... ի սեր աստծո, փորձանքի մեջ կընկնենք... Ես ինքս։ (Հավաքում է հեռախոսի համարը, կանացի ձայնով)։ Ալլո, համար երեք մանկամսո՞ւրն է։ Վարիչին եմ խնդրում։ Դո՞ւք եք։ Ձեզ հետ ուզում է խոսել վիճաբանական գլխավոր հանձնաժողովի նախագահ ընկեր Ամյանը։ Միացնում եմ։

Պետրոս - Այ մարդ, դե իսկական դերասան է, էլի... Վայ քո տունը չքանդվի։

Մայիլյան - Վերջացրու ելույթդ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արամյան - *(Թալ ձայնով):* Ընկեր Մանուկովա... այդ ինչպե՞ս է պատահում, որ նշանավոր ճարտարապետի դուստրը տեղ չի գտնում ձեզ մոտ։ Ես չեմ կարծում, թե ձեր բոլոր սաները մայրեր չունեն։ Ուրեմն նրան պետք է ընդունել առաջին հերթին։ Վերջացնենք։ Ազգանունը... Դուք գիտե՞ք... բարի, բարի։

Պետրոս - Ի՞նչ ասաց, ընկեր Ամյան…

Մայիլյան - Ի՞նչ Ամյան, Պետրոս, Արամյան...

Արամյան - Իսկ ի՞նչ պետք է ասեր, երբ նրա հետ վիճաբանական գլխավոր հանձնաժողովի նախագահն է խոսում։ Լսեք, ես իմ աչքին քանի գնում բարձրանում եմ։

Պետրոս - Այ մարդ, մի զանգ է, է՛, մի զանգ... Փրկվեց Սահակը։

Մայիլյան - Ես գիտեի, որ այդպես կարող է լինել, Վարպետ, բայց այս աստիճանի... չէի պատկերացնում։

Պետրոս - Իսկ մենք, տեսնո՞ւմ եք, մի զանգով լուծում ենք, չէ՞, ընկեր Արամյան։

Մայիլյան - Մենք... Վարում էինք... վարատեղից... իրեն մեջ գցեց... Դո՞ւ ինչ կապ ունես, Պետրոս տղա։

Արամյան - Ինչպես թե... Սա մեր հանձնաժողովի անդամը չէ՞:

Մայիլյան - Ի՞նչ հանձնաժողով։

Պետրոս - Վիճաբանական գլխավոր հանձնաժողովի։

Արամյան - Պատկերացրեք, հիանալի կլիներ, եթե նման հանձնաժողով լիներ։

Պետրոս - Ոնց թե լիներ... Հենա կա, էլի... ի՞նչ պակաս հանձնաժողով ենք... Դե թող լուծեին, է՛, Սամսոնի բնակարանի հարցը, էն երեխու հարցը, ճիշտ չե՞մ ասում, ընկեր Մայիլյան։

Մայիլյան - Ճիշտը որ խոստովանենք, մեր արածը իրավաբանական որոշ օրենքների խախտում է, բայց ես ավելի ազնիվ խախտում դեռ չէի տեսել։

Արամյան - Երևի սա այն դեպքն է, երբ կարելի է ասել, թե արդյունքը արդարացնում է միջոցները։

Պետրոս - Դե ես էլ էդ եմ ասում, էլի, ընկեր Արամյան։ Ուրեմն ասում եմ դուք եղեք մեր նախագահը, իսկ ես և ընկեր Մայիլյանը ձեր հանձնաժողովի անդամները դառնանք։

Արամյան - Պատկերացրեք, որ այս դերն ինձ դուր է գալիս։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պետրոս - Ուրեմն կեցցե մեր հանձնաժողովը, ուռա՛: Վահ, դու էլ ձեն հանի, է, ընկեր Մայիլյան:

Արամյան - Կարծես թե այս ամենը այնքան էլ ընկեր Մայիլյանի սրտովը չէ:

Մայիլյան - Այո, վարպետ:

Պետրոս - Ինչի՞, է:

Մայիլյան - Ի վերջո սա անօրինական բան է, ընկերներ, ես կարող եմ ասել, նույնիսկ, որ սա ըստ էության խաբեություն է:

Պետրոս - Ինչ է, ինչ է՞... մեր արածներից ո՞րն է խաբեություն, կարո՞ղ ես ասել: Սամսոնի երեխաներին բնակարան չէր հասնում, Հա՞... Մանկամսուրում տեղ չկար, Հա՞... մե՞ր արածն է խաբեություն, թե նրանցը, մենք ի՞նչ արեցինք... Օգնեցինք, որ հարցը շուտ լուծվեր, էդ չէ՞ր:

Մայիլյան - Ինչ ես տաքանում, այ մարդ, զա՞ռ բռնեցի:

Պետրոս - Քո արածը զառ բռնելուց էլ վատ է, ընկեր Մայիլյան: Հազիվ մի բան էինք ուզում անել, ուզում ես մեջքներս կոտրես:

Մայիլյան - Ինչ դեմագոգն ես, հա:

Պետրոս - Ինչ ե՞մ:

Մայիլյան - Լավ, էլի... Դու լուծեցիր քո բոլոր հարցերը: Սահակի երեխային էլ մանկամսուր ընդունեցիր: Բավական չէ՞: Գնա գյուղ, կարգի գցիր հայրական տունդ: Պոմիդոր աճեցրու...

Պետրոս - Գնալու եմ, հա, գնալու եմ, մի օր էլ չեմ մնա...

Արամյան - Վերջ, վերջ, վերջ...

Մայիլյան - Ախր, ընկեր Արամյան:

Արամյան - Առանց առարկության: Եթե հանձնաժողովի երկու անդամ այդպես են գտնում, երրորդի կարծիքը կարևոր չէ: Մենք ամուր կարգապահություն պետք է ունենանք:

Պետրոս - Այո, ընկեր Մայիլյան:

Արամյան - Եվ գաղտնապահություն, բարեկամներ, խստագույն գաղտնապահություն: Եթե գործ ենք անում, եկեք գործ անենք, ոչ ոքի ոչ մի խոսք: Նույնիսկ տիկին Անուշին, որից, ինչպես երևում է, հարգելի Պետրոս, դուք որևէ գաղտնիք չեք պահում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մայիլյան - Էդ էլ քեզ, ընկեր Պետրոս։

Արամյան - Ուրեմն կեցցե մեր հանձնաժողովը... ուռա՛…

Երեքը միասին - Ուռա՛...

(Հայտնվում է Խելունցը, զարմացած լսում է):

Վարագույր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

(Երեք հարևանները հավաքվում են ծառի տակ):

Արամյան - *(Մայիլյանին, բարձր):* Բարի լույս, հարևան... *(ցածր)*, ուրեմն ուղիղ տրամվայ-տրոլեյբուսի պարկ, զբաղվեք չվացուցակով:

Մայիլյան - *(Ցածր):* Լսում եմ: *(Բարձր):* Բարի լույս, ընկեր Արամյան:

Արամյան - *(Պետրոսին, բարձր):* Տիկին Անուշն ինչպե՞ս է: *(Ցածր):* Աշխատիր ճշտել, թե որտեղից են գալիս մատակարարման խափանումները... Աստիճան առ աստիճան վեր բարձրացիր:

Պետրոս - *(Բարձր):* Ախր ինչքան բարձրանում եմ, գլուխս պտտվում է: *(Ցածր):* Շնորհակալություն, Անուշս լավ է: Բարև ձեզ:

Արամյան - Կզանգահարեք ժամը մեկ: Ես կլինեմ ղեկավարման վահանի մոտ:

Պետրոս - Վահանն ո՞վ է:

Մայիլյան - Էլի մոռացա՞ ր: Հեռախոսն է:

Պետրոս - Դե հեռախոսն է, ասեք հեռախոս, էլի... Վահան... չէ մի Բագրատ:

Արամյան - Ուղիղ ժամը երեքին կլինեք երկրորդ հարկում:

Մայիլյան - Հանգիստ, մի վազիր, Տաթևիկ ջան:

Տաթևիկ - Ինչո՞ւ:

Մայիլյան - Կընկնես, քաղցր ջան:

Տաթևիկ - Ինչո՞ւ:

Մայիլյան - Ինչո՞ւ... ինչո՞ւ... ինչու... Փողոցում վազելն արգելված է: Այ, մանկապարտեզում կվազվզես ինչքան սիրտդ կուզի:

Տաթևիկ - Չէ, պապի ջան, ընկեր Վարսիկը կպատմի:

Մայիլյան - Ո՞նց թե:

Տաթևիկ - Որ վազվզում ենք, ընկեր Վարսիկը ծեծում է, ասում է՝ հանգիստ նստեք, ինձ մի խանգարեք:

Մայիլյան - Ո՞նց թե ծեծում է: Ինչո՞վ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Տաթևիկ - Ձեռքերով, պապի ջան։

Մայիլյան - Քեզ է՞լ է ծեծում,

Տաթևիկ - Էդ էր պակաս... Ես չեմ վազվզում, դրա համար էլ ինձ չի ծեծում։

Մայիլյան - Այ քեզ բան։ Տեր Թոդի՞կն է, ինչ է... ապա մի արագ-արագ արի։

Տաթևիկ - Մի վազիր, պապի, փողոցում վազելն արգելված է։

(Գևորգ, Ադա)։

Գևորգ - *(Կանչում է)։* Ադա, Ադա, ցած իջիր, կարևոր գործ ունեմ ։

Ադա - Ի՞նչ է պատահել։

Գևորգ - Ինձ հետևում են։

Ադա - Ինչի՞ց ես ենթադրում։

Գևորգ - Ինձ զանգահարեցին։

Ադա - Ո՞վ։

Գևորգ - Չգիտեմ, բանն էլ այն է, որ չգիտեմ։

Ադա - Չգիտես, թե ո՞վ է զանգահարում։ Իսկ ի՞նչ են ասում։

Գևորգ - Ամեն ինչ սկսվեց մի քանի օր առաջ։ Ճապոնական հովանոցներ էի ստացել։

Ադա - Բա ինչո՞ւ ինձ չուղարկեցիր։

Գևորգ - Սպասիր, տես ինչ եմ ասում։ Նոր էի պահեստ մուտք արել, երբ զանգահարեցին։ «Ճապոնական հովանոցները ստացա՞ք, - հարցնում են։ «Ո՞վ է», - հարցնում եմ։ «Դա կարևոր չէ», - ասում են։ «Ի՞նչ հովանոց, ի՞նչ բան»։ «Դուք ստացել եք 242 հատ հովանոց, անմիջապես վաճառքի հանեք, ձեզ հետևում են»։

Ադա - Հետո՞։

Գևորգ - Ի՞նչ պետք է անեի, վաճառքի հանեցի։

Ադա - Էրի՞վ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գևորգ - Չէ մի... 20 հատ վաճառեցինք, հետևում եմ, ամեն ինչ հանգիստ է, Վերադարձա առանձնասենյակ: Ու մեկ էլ՝ զընգ: «Դա՞ ինչ աչքակապություն է, - ասում են, - անմիջապես վաճառքի հանեք մնացած 222 հատը.»:

Ադա - Անգլուխ ձիավո՞րն է... Կնո՞ջ ձայն էր, թե տղամարդու:

Գևորգ - Տղամարդու:

Ադա - Ուրեմն քո աշխատողներից մեկն է: Ոչ մեկի ձայնին չե՞ս նմանեցնում:

Գևորգ - Չէ: Բայց որ խոսում է, մարմինս փշաքաղվում է: Շատ ազդեցիկ ձայն է: Մի տեսակ քթի մեջ է խոսում:

Ադա - Լավ, բայց հո հրաշք չէ, նա որտեղի՞ց է իմանում, թե ինչ ես ստանում և ինչքան ես վաճառում:

Գևորգ - Վառեց ինձ, վառեց... ամեն ինչ անգիր դիտի, տեսնում է... Չեմ կարողանում շարժվել, չեմ կարողանում ռեստորան մտնել, ինձ թվում է, թե ինչ-որ մեկի աչքերը անընդհատ թիկունքիս են նայում: Շրջվում եմ, ոչ ոք չկա, էլի եմ շրջվում՝ ոչ ոք չկա:

Ադա - Մարդ կխելագարվի:

Գևորգ - Քանդվեցի: Անցած շաբաթ ինչ ստացել եմ, վաճառքի եմ հանել: Բա մարդ 50 հատ «ԶԻԼ» սառնարան բերի ու ոչ մի օգուտ չունենա՞: Ութ հազար մետր անգլիական չիթ, 300 զույգ ֆիննական կոշիկներ...

Ադա - Վախ, վախ...

Գևորգ - Ինչ ստանում եմ, անմիջապես զանգ է տալիս սրիկան, նույնիսկ ապրանքագրի համարն է ասում, սպառնում է, թե միլիցիա կզանգահարի: Ի՞նչ անեմ, Ադա, ես նրան ո՞նց բացատրեմ, որ այդ ապրանքները ինձ ձրի չեն տալիս, որ ես էլ բազայում եմ տալիս, վերևներին եմ տալիս:

Ադա - Գուցե հենց բազայի աշխատողներից է, էնքան թշնամիներ ունես:

Գևորգ - Է, բազայի աշխատողը որտեղի՞ց է տեսնում, թե ես քանի զույգ կոշիկ եմ վաճառքի հանում: Ասում ես, էլի:

Ադա - Դե լավ, հո իսկապես անտեսանելի մարդ չէ՞:

Գևորգ - Ադա, Ադա, դու ինձ պետք է օգնես: Ասում են՝ կնոջ խելքը սատանայի խելք է: Մի բան մտածիր:

Ադա - Սատանան դու ես: Էդ էլ կոմպլիմենտ էր, հա՞:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գևորգ - Ես կգժվեմ։

Ադա - Ուզո՞ւմ ես Նազարին ասեմ։

Գևորգ - Նազարն ի՞նչ պետք է անի։ Դիմացս մարդ չկա, մարդ լիներ, ես էլ կիմանայի ինչ եմ անում։

Ադա - Գուցե շանտաժ է, փող են ուզում։

Գևորգ - Ո՞ւր էր թե ուզեին... ուզեցի հասկացնեմ, ասաց... Վիճակդ ավելի մի բարդացրու, ազնիվ աշխատիր։ Կարծում է հեշտ է ազնիվ աշխատելը... գիշերները չեմ քնում։

Ադա - Գուցե Ազիզյանի՞ն ասես։

Գևորգ - Էհ, Ազիզյանը ի՞նչ պիտի անի։ Մարդ չկա դիմացս, մարդ։

Ադա - Լսիր, էդ հազվագյուտ ապրանքները ուղիղ մեր տուն բեր, առանց խանութ մտցնելու։

Գևորգ - Բա որ ասում եմ սատանայի խելք ունես... Իսկ տանը եղածները մաքրե՞լ ես։

Ադա - Վաղո՛ւց... Ինձ վերջերս ե՞րբ ես ապրանք տալիս։

Գևորգ - Է, թողնո՞ւմ է, որ տամ, կոկորդիցս բռնել է, խեղդում է։

Ադա - Լավ, էդպես էլ կանենք։

Գևորգ - Տնից դուրս չգաս, անգլիական կոշիկներ ենք ստանալու և ֆիննական կոստյումներ։

Ադա - Ապահով մնա, էնպես անհետացնեմ, որ քո էդ անտեսանելիի աչքերը բաց մնան։ Միայն թե հանկարծ դու չբերես, Մարզպետի հետ ուղարկի։

Գևորգ - Ես ե՞րբ եմ բերել, որ... դե ես գնացի... Ադա... Ադա... Նայիր, թիկունքումս մարդ չկա՞... ոչ ոք չկա՞...

Ադա - Մարդ չկա։

Գևորգ - Դեմս մարդ չկա, էհ, մարդ։

Ադա - Ավելի լավ, որ չկա... *(Գնում են)։*

(Մայիլյան, Պետրոս)։

Մայիլյան - Պետրոս, ո՞ւր ես։

Պետրոս - Ցեմենտը գալիս է։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մայիլյան - Կանոնավո՞ր։

Պետրոս - Էն էլ ոնց... Տղերքը զարմացած են մնացել, ասում են՝ էսպիսի մատակարարում դեռ չէինք տեսել։ Հանձնաժողով եմ ասել է։

Մայիլյան - Կամաց, Պետրոս։

Պետրոս - Հիմա տեսնենք խողովակների հարցը ի՞նչ է լինում։ Եթե էս տարի էդ շենքը պատրաստ չլինի, ամոթ մեզ։

Մայիլյան - Նախագահը քեզ էր հարցնում։

Պետրոս - Գիտեմ, գիտեմ, բայց, այ մարդ, ես հո մեջտեղից երկու կես չեմ լինելու։ Համ ասում է՝ շենքից տեղեկություններ բեր, համ էլ իմացիր, թե կաթսայատան վերանորոգումն ո՞վ է ուշացնում։ Մարդուն էսպես էլ ծանրաբեռնել կլինի։

Մայիլյան - Հա, բայց իր վիճակը չե՞ս տեսնում, ինչ է...

Պետրոս - Տեսնում եմ, բայց ես ի՞նչ անեմ, չեմ հասցնում։ Թող մի շտատ էլ բացի։

Մայիլյան - Վայ, Պետրոս, Պետրոս... Մինիստրների խորհուրդ է, ի՞նչ է։ Ի՞նչ ես փնթփնթում... իմ գործը քի՞չ է։

Պետրոս - Հա, բայց դու ամբողջ կյանքում ստուգումներ ես կատարել, իսկ ես իսկի մեր փոխառությունը ստուգած չկամ։ Սա ինձ համար, եթե կուզես իմանալ, երկրորդ արհեստ է։

Մայիլյան - Գնանք, գնանք, ուշացանք, ժամը 3 -ին նախագահի մոտ պետք է լինենք։

Արամյան - Չեղավ, խորհրդակցությունից ուշանում եք։ Երևում է մեղմ եմ վարվում ձեզ հետ։ Այդպես չի կարելի, վիճաբանական գլխավոր հանձնաժողովի ընկեր անդամներ։ Այդպես չի կարելի։

Նունե - *(Հեռախոսով, ներսից):* Ալո, լսում եմ... ի՞նչ հանձնաժողով։ Այստեղ ոչ մի հանձնաժողով էլ չկա…Սխալվում եք, սա բնակարան է։

Արամյան - Ո՞ւմ էին հարցնում։

Նունե - Սխալվում էին, ինչ-որ վիճաբանական հանձնաժողով էին փնտրում։

Արամյան - Նունե, գիտես ինչ, եթե նորից հարցնեն, դու ոչինչ մի պատասխանիր, ուղղակի ինձ տուր լսափողը։

Նունե - Ինչո՞ւ, դո՞ւ ինչ գործ ունես այդ հանձնա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Հեռախոսի զանգ):

Արամյան - Լսում եմ, սիրելի ընկեր, ես եմ խնդրել, որ զանգահարեք ինձ: Ամենապարզ տրամաբանությամբ «Հացաբուլկեղենի» խանութը և նրան կից սրճարանը պետք է բաց լինեն այն ժամանակ, երբ մոտակա նախագծային ինստիտուտում ընդմիջման ժամ է: Եվ ոչ թե հակառակը: Այո: Ասացեք, որ վիճաբանական գլխավոր հանձնաժողովը այդպես է գտնում: Վերջացրինք:

Նունե - Հայրիկ, այդ ի՞նչ հանձնաժողով է, չեմ հասկանում:

Արամյան - Ի՞նչ հանձնաժողով, ո՞վ ասաց հանձնաժողով, ախ հա... մի՞թե քեզ համար նորություն է, որ ես թատրոնի վեճեր լուծող հանձնաժողովի անդամ եմ:

Նունե - Առաջին անգամ եմ լսում:

Արամյան - Ուրեմն այսուհետև իմացիր:

Նունե - Ենթադրենք թե նույնիսկ այդպես է... Իսկ այդ ո՞ր օրվանից է թատրոնի վեճեր լուծող հանձնաժողովը զբաղվում հացի ու բուլկեղենի վաճառքով:

Արամյան - Ի՞նչ հացաբուլկեղեն, ախ հա... Ուրեմն ճիշտ չի արել, որ մինչև հիմա չի զբաղվել... Եվ հետո, ի՞նչ ես ուզում ինձանից, ինձ հանգիստ թող:

Նունե - Հայրիկ, քեզ չի՞ թվում, որ վերջերս ես մեր տանը բոլորովին ավելորդ եմ դարձել: Իմ շուրջը ինչ-որ բաներ են կատարվում: Հենց ես տանից դուրս եմ գալիս, դուք անմիջապես հավաքվում եք, իսկ երբ հայտնվում եմ՝ լռում եք... ոնց որ դավադիրներ լինեք: Ընդհատա՞կ եք անցել, ի՞նչ է: Այդ ի՞նչ հարցերով եք զբաղվում: Քեզ հեռուստատեսություն են հրավիրում՝ հրաժարվում ես, կինո են հրավիրում՝ հրաժարվում ես, ի՞նչ ընդհանուր բան կարող է լինել քո, վարպետ Պետրոսի և նախկին միլպետի միջև:

Արամյան - Մենք թոշակառուներ ենք:

Նունե - Հետո՞:

Արամյան - Հետո այն, որ թոշակառուների հանրապետական խորհուրդը մեզ մի պատասխանատու հանձնարարություն է տվել: Նունե, ի՞նչ է, դու մտածում ես, որ ես կարող եմ անազնիվ գործո՞վ զբաղվել:

Նունե - Ի՞նչ ես ասում, հայրիկ... Ուղղակի նույն տան մեջ կարոտում եմ քեզ: Դու ինձ հետ այլևս չես խոսում, դու ինձ չես գրկում, չես համբուրում, դու այլևս առաջվա նման չես բղավում. «Ես թոռնիկ եմ ուզում, Նունե, ես թոռնիկ եմ ուզում...»: Քեզ ի՞նչ է պատահել, հայրիկ,

Արամյան - Ի՞նչ է, թոռնիկի գծով որևէ առաջընթա՞ց կա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նունե - Ոչ մի բան էլ չկա։

Արամյան - Դե որ այդպես է, ես քեզ հետ գործ չունեմ։

Նունե - Երկու օր է, ես նոր կոշիկներ եմ գնել։ Տեղի-անտեղի կտկտացնելով անցնում եմ քո առջևով, իսկ դու չես էլ նկատում։

Արամյան - Օհ, ինչ հրաշալի կոշիկներ են, ինչ էլ սազում են քեզ, բարով մաշես, աղջիկս։

Նունե - Սրա՞նք։ Սրանք վաղուց բարով մաշված հողաթափեր են, անուղղելի մարդ։

Արամյան - Իսկապե՞ս, չի կարող պատահել... հա, էլի...

Նունե - Իսկ նոր կոշիկները... *(Բերում է տնից։ Դուրս են գալիս Մայիլյանն ու Պետրոսը)։* Ահա... *(հագնում է)։*

Արամյան - Օհ, ինչ նուրբ կոշիկներ են *(համբուրում է աղջկան)։*

Նունե - Այ այդպես։

Մայիլյան - Հանրախանութի՞ց եք գնել, Նունե։

Նունե - Չէ մի... Երևանում էլ նման կոշիկներ կգտնես... անգլիական են ու այնքան թեթև, այնքան թեթև...

Մայիլյան - Շնորհավորում եմ, Նունե, հրաշալի կոշիկներ են, թեև, իհարկե, բավականին թանկ արժեն, 55 ռուբլի։

Նունե - Որքա՞ն։

Մայիլյան - Հիսունհինգ ռուբլի։

Նունե - *(Ծիծաղելով)։* Սխալվում եք, ընկեր գնդապետ, այս կոշիկների պետական գինն է իննսունհինգ ռուբլի։

Մայիլյան - Խիղճ ունեցիր, Նունե, մի՞թե ես այդպիսի հարցերում կսխալվեմ։

Նունե - Պատկերացրեք, որ այս անգամ սխալվում եք։

Մայիլյան - Որտեղի՞ց եք գնել, եթե գաղտնիք չէ։

Նունե - Ի՞նչ գաղտնիք։ Մեր հարևանուհիներից մեկին են Մոսկվայից ուղարկել։ Ոտքին չեն եղել, ինձ տվեց։

Մայիլյան - Ո՞վ է այդ հարևանուհին։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նունե - Ի՞նչ է, սա հարցաքննությո՞ւն է։

Մայիլյան - Միայն և միայն հետաքրքրասիրություն։

Նունե - Ադելաիդա է անունը, շատ համակրելի կին է։

Մայիլյան - Ադա՞ն... Շնորհակալություն։

Արամյան - Նրանցի՞ց է։

Մայիլյան - Կոշիկի ներբանին դաջված համարը 4418 չէ՞։

Նունե - 4418, այ քեզ բան, որտեղի՞ց իմացաք։

Մայիլյան - Նրանցից է։ Արդեն վճարե՞լ եք գումարը։

Նունե - Ոչ, համաձայնվեց, որ աշխատավարձի օրը տամ։

Մայիլյան - Կվճարեք ուղիղ 55 ռուբլի, որովհետև այդ կոշիկները այդքան արժեն և վաճառվել են մեր հանրախանութում։

Պետրոս - Էս երկու օրը ունիվերմագում կոշիկ չի վաճառվել։

Մայիլյան - Հա՞, ուրեմն շատ ավելի հետաքրքիր է։

Նունե - Ասում եք 55 ռուբլի՞... ինչ ստորություն, իննսունհինգ ռուբլուց բացի հինգ ռուբլի էլ փոստային ծախսերի արժեքն ուզեց։ Իսկ որ դեմքին նայում ես, ասես գթության քույր լինի... Ես հենց հիմա կոշիկները ետ կտանեմ ։

Մայիլյան - Իզուր, պետք է արժեքը վճարել և վերջ։

Նունե - Ձեր կարծիքով, այդքանից հետո ես կարող եմ հագնե՞լ այս կոշիկները։

Մայիլյան - Այդ դեպքում խնդրում եմ մեր խոսակցության մասին ոչ մի խոսք։ Ասա, որ ուրիշ տեղից ես իմացել։

Նունե - Ես գիտեմ, թե ինչ կասեմ։ *(Գնում է)։*

Մայիլյան - Գնաց... չձախողի՞ մեր գործը։

Արամյան - Ես Նունեի համար չեմ անհանգստանում, սիրելի Բաբկեն, ինձ անհանգստացնողը ուրիշ մարդ է… ինձ անհանգստացնողը, ցավոք սրտի, մեր հանձնաժողովի անդամներից մեկի աններելի վարքագիծն է։

Պետրոս - Ի՞նչ եմ արել, է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արամյան - Դրա համար ձեզ պետք էր անմիջապես հեռացնել աշխատան... հանձնաժողովից։ Ո՞վ է ձեզ իրավունք ավել իմ հեռախոսի համարը տալ հացառի դիրեկտորի տեղակալին։

Պետրոս - Բա ի՞նչ անեի, ընկեր Արամյան, մի գլուխ կրկնում էր, թե էդպիսի հանձնաժողով չկա։

Արամյան - Է, կա՞...

Պետրոս - Բա մենք ի՞նչ ենք։

Մայիլյան - Այ վարպետ Պետրոս, մոռացա՞ր, թե ոնց ստեղծվեց մեր հանձնաժողովը։ Հետաքրքիր մարդ ես։ Խնդրում էիր, թե ախ, մի հատ զանգ լիներ վերևից... չէ որ մեր գործունեությունը փաստորեն գաղտնի է։

Պետրոս - Ես էլ հենց դա եմ ասում։ Մենք ամաչելու ի՞նչ ունենք։ Ինչո՞ւ է գաղտնի։ Ի՞նչ վատ բան ենք անում։ Ինչո՞ւ ենք թաքնվում։ Կինոյի հարցը կարգավորեցի՞նք, կարգավորեցինք, էլ դրսում տոմս վաճառողներ չկան։ Տուպիկն ասֆալտեցի՞նք, ասֆալտեցինք, հին բոլշևիկ Նալբանդյանի տանիքը ծածկեցի՞ն, ծածկեցին, պտուղ-բանջարեղենի խանութում հոտած ապրանքն առանձնացնո՞ւմ են, առանձնացնում են... փոխանակ էդ անգործ անիրավները թաքնվեն, մենք ենք թաքնվում։

Նունե - *(Բջնելով)։* Ասացի փոքր են ոտքիս։

Սահակ - Բժշկուհի, Լուսիկը լաց է լինում, ձեզ է ուզում։

Նունե - Գալիս եմ։

Արամյան - Լավ, հաշվետվության ժամանակ չէ։ Եթե մի անգամ էլ որևէ մեկին տվել եք իմ հեռախոսի համարը, հանձնաժողովից կհեռացնեմ։

Մայիլյան - *(Նկատելով Տաթևիկին)։* Տաթևիկ, էս ե՞րբ ես եկել։

Տաթևիկ - Վաղուց...

Մայիլյան - Էլի փախել է մանկապարտեզից, դե լավ, խաղա, խաղա։

Արամյան - Ընկեր Մայիլյան, հիմա դուք ինչո՞վ եք զբաղված։

Մայիլյան - Հանրախանութով։

Արամյան - Եղավ։ Ճշտեք նաև, թե նախագծային ինստիտուտում աշխատանքից հետո լույսերն ինչու են վառվում։ Էլեկտրաէներգիայի խնայողությամբ կարծես թե ոչ ոք չի զբաղվում այնտեղ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մայիլյան - Լսում եմ։

Արամյան - Հետո, փոստարկղերը պետք է դատարկվեն օրական երեք անգամ, այնինչ մեկ անգամ են դատարկվում։ Իմացեք, թե ո՞ւմ պետք է զանգահարեմ։

Մայիլյան - Գրեցի։

Արամյան - Նրբանցքի ծորակից ջուրը հոսում է գիշեր-ցերեկ, ճշտեք, թե չի՞ կարելի արդյոք փականով ծորակ տեղադրել և ո՞վ պետք է անի։

Մայիլյան - Իհարկե, ջրմուղը, ստուգելու հարկ չկա։

Արամյան - Եղավ։ Ուրեմն ինքս զանգ կտամ։ Ընկեր Պետրոսյան, շենքի շինարարությունը ի՞նչ վիճակում է։

Պետրոս - Բարձրացան երրորդ հարկ։

Արամյան - Ուշադիր հետևեք։ Այնուհետև՝ № 5 շենքի բակում երկու ավտոտնակ են տեղադրել, այնինչ երեխաները խաղալու տեղ չունեն։ Իմացեք, իրավունք ունեն, թե ոչ։

Պետրոս - Լավ։

Արամյան - Հետո, հետևեք, թե արդյոք մեր նոր բացած ծաղկի խանութում գները հո չեն խախտում։

Պետրոս - Այ ես ձեր հոգուն մեռնեմ, ես ծաղիկներից ի՞նչ եմ հասկանում... Ես հոտ չեմ առնում... Ես մեխակից ու ավելից նույն հոտն եմ առնում։

Արամյան - Գնացեք, սովորեք։ Առայժմ այսքանը։

Պետրոս - Գնացինք, ընկեր Մայիլյան։ Կրակն ենք ընկել ձեռքը։ Մարդուն պաշտոն չտան։

(Սահակ, Նունե)։

Սահակ - Ես անչափ շնորհակալ եմ, բժշկուհի։

Նունե - Խնդրեմ։ Բայց անկեղծորեն ասած, Լուսիկի վիճակը անհանգստացնում է ինձ, Սահակ։ Նա ինչո՞ւ պետք է ջերմություն ունենա։ Ճիշտ է, շատ փոքր է ջերմությունը, բայց... մրսո՞ւմ է մանկամսուրում, թե ինչ, չեմ հասկանում։

Սահակ - Ոչ, ինչ եք ասում, ձեր այցելությունից հետո շատ ուշադիր են Լուսիկի նկատմամբ։

Նունե - Գուցե մեր հիվանդանոցի պրոֆեսորին խնդրեմ, քննի երեխային։

Սահակ - Ոչ, ոչ, կարիք չկա, կանցնի։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նունե - Կանցնի... իրեն-իրեն ոչ մի բան չի գալիս ու չի անցնում։ Կանցնի... Այ, հենց այդպես ասում եք կանցնի, ուշացնում եք, իսկ հետո արցունքոտ աչքերով նայում եք մեզ ու ասում. «Փրկիր, բժշկուհի»։ Կարծես թե բժշկուհին Քրիստոսն է, որ մատի մի հպումով հիվանդներ բուժի։

Սահակ - Ես պարզապես անհարմար եմ զգում, որ...

Նունե - Իսկ ես ձեզ համար չեմ անում, ես Լուսիկի համար եմ անում... Լսեք, հանկարծ ձեր մտքով չանցնի, թե ես նույնիսկ փոքր-ինչ չափով աշխատում եմ դուր գալ ձեզ։

Սահակ - Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում։

Նունե - Հենց այն, ինչ լսում եք։ Ես ամեն անգամ խուսափում եմ հանդիպել ձեզ, որպեսզի չլսեմ ձեր քաղցր-մաղցր հաճոյախոսությունները։

Սահակ - Ե՞ս եմ հաճոյախոսում։ Դե գիտե՞ք ինչ...

Նունե - Գիտեմ, ամեն անգամ դուք պատահաբար եք հայտնվում մեր հիվանդանոցի մոտ՝ ձեր այդ խփված ժիգուլիով...

Սահակ - Արդեն սարքելու եմ տվել։ Բայց դա ի՞նչ կապ ունի։ Ես մեղավո՞ր եմ, որ իմ ճանապարհը ձեր հիվանդանոցի կողքով է անցնում։

Նունե - Ես արդեն հոգնել եմ մեր բժիշկների անընդհատ ժպիտներից։

Սահակ - Իսկ ինչո՞ւ են անընդհատ ժպտում, հո դեբիլ չե՞ն... Եվ վերջապես ինչո՞ւ եք ինձ հետ այդ տոնով խոսում, ես ձեր ամուսինը չեմ։

Նունե - Աստված մի արասցե... Շատ մեծ պատիվ կլիներ։

Սահակ - Ես դա գիտեմ... Ներեցեք, բժշկուհի, դուք ձեր բոլո՞ր փոքրիկ հիվանդների հետ եք այդպես կապված։

Նունե - Ոչ, միայն Լուսիկի հետ։

Սահակ - Իսկապե՞ս... Ուրեմն ասացեք, ինչո՞ւ։

Նունե - Որովհետև ես մեծահասակների բժիշկ եմ, և Լուսիկը իմ միակ փոքրիկ հիվանդն է։ Բավարարվա՞ծ եք։

Սահակ - Ոչ։ Եթե այդպես է, խնդրում եմ այլևս չզբաղվել իմ երեխայով։

Նունե - Ինչո՞ւ։

Սահակ - Ես իսկական մանկաբույժ կհրավիրեմ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նունե - Իսկ ես նրան ձեզ չեմ տա։

Սահակ - Ինչպես թե չեք տա, ես նրա հայրն եմ։

Նունե - Իսկ ես նրա բժիշկն եմ և քանի դեռ նա անառողջ է, իմն է, ես պետք է հետևեմ նրան։

Սահակ - Իսկ էս չեմ ուզում։

Նունե - Ձեզ ոչ ոք էլ չի հարցնում։ Իբր թե դուք կարողանում եք երեխա պահել... ամբողջ օրերով սրա-նրա ձեռքին է։ Որպեսզի գիշերը ձեզ չխանգարի, խեղճ երեխային կոնյակ եք տալիս։ Դրա համար ձեզ պետք է զրկել ծնողական իրավունքից։

Սահակ - Անուշ մայրի՞կն է ասել... դե տեր աստված... ընդամենը մեկ անգամ...

Նունե - Մեկ անգամ... Այդ էր պակաս, որ ամեն օր լիներ... Եվ վերջապես ձեր ներկայությունը տհաճ է ինձ, հեռացեք։

Սահակ - Ես կհեռանամ, իսկ դուք Լուսիկին չմոտենաք, բավական է... Ես ասացի, որ մեկ ուրիշ... ավելի բարեկիրթ բժիշկ կհրավիրեմ։

Նունե - Իսկ գուցե բժշկուհի՞։

Սահակ - Թեկուզ բժշկուհի։

Նունե - Իսկ Լուսիկին հարցրե՞լ եք։ Նա ուրիշ բժշկուհու մոտ կգնա՞։

Սահակ - Ինչո՞ւ չի գնա։

Նունե - Եկ գրազ գանք։

Սահակ - Եկ։

Նունե - Ես նրան կգրկեմ, իսկ դու փորձիր նրան կանչել իմ գրկից։

Սահակ - Խնդրեմ։

Նունե - Դե հիմա կտեսնենք։

Սահակ - Կտեսնենք։ *(Ներս են գնում)։*

(Արամյան, Պետրոս)։

Պետրոս - Ընկեր Արամյան։

Արամյան - Ինձ որևէ բա՞ն ունեք ասելու, վարպետ Պետրոս։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պետրոս - Չեմ էլ իմանում որտեղից սկսեմ։

Արամյան - Սկզբից։

Պետրոս - Ընկեր Արամյան, Անուշս ասում է՝ մեր տղեն մեղք է, հալումաշ է լինում։

Արամյան - Ի՞նչ տղա։

Պետրոս - Մեր Սահակը։

Արամյան - Ինչո՞ւ է հալումաշ լինում, հիվա՞նդ է, ի՞նչ է։

Պետրոս - Չէ, համա հիվանդի պես բան է, էլի… Անուշս ասում է՝ գիշերները չի քնում, անընդհատ ման է գալիս։

Արամյան - Ի՞նչ ես ասում... լուսնո՞տ է։

Պետրոս - Չէ... համա լուսնոտի պես բան է, էլի։

Արամյան - Սիրելի Պետրոս, բան ասա, բան հասկանանք, եղբայր։

Պետրոս - Դե ախր ո՞նց ասեմ, Անուշս ասում է՝ Սահակի սիրտը տաքացել է ձեր Նունեի վրա։

Արամյան - Ինչ է արե՞լ... Նունեն ի՞նչ կապ ունի... Ախ, հա... բայց դա ի՞մ ինչ գործն է... Ինչպե՞ս թե... Նունե՞ն... Իսկ Նունեն գիտե՞... Նա որևէ բան ասե՞լ է Նունեին...

Պետրոս - Չէ... ասում եմ, ո՞վ գիտի, գուցե դուք մի թեթև զանգ տայիք, վերևից...

Արամյան - Ո՞ւմ։

Պետրոս - Նունեին։

Արամյան - Ոչ մի դեպքում։

Պետրոս - Դե, չես ուզում, մի ուզի։ *(Նկատելով Նունեին ու Սահակին, մեկ-մեկ գրկում ու համբուրում է։ Արամյանին)։* Դե դու մի ուզի։

(Գևորգ, Ադա)։

Գևորգ - Չորս կողմդ նայիր, հո մարդ չի երևում։

Ադա - Ոչ ոք չկա, ասա։

Գևորգ - Մենք կորած ենք։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ագա - Էլի ի՞նչ է պատահել։

Գևորգ - Զանգահարեց։

Ադա - Ո՞վ,

Գևորգ - Տաիլանդի դեսպանը։ Էլի նա, ո՞վ։

Ադա - Բավական է դողաս։ Խոսիր։

Գևորգ - Ադա, դու հո գիտես, որ ես վախկոտներից չեմ, բայց այդ ձայնը որ լսես, դու էլ կդողաս։ Մեկ ասես թե կողքիդ լինի, մեկ ասես թիկունքումդ է, մեկ ասես ծակում, սիրտդ է մտնում։

Ադա - Տաքություն հո չունե՞ս։

Գևորգ - Զառանցում եմ, հա, զառանցում եմ... Գուցե հենց զառանցում եմ, բա ի՞նչ անեմ։ «Լսիր, Ծատինյան, - ասաց, - 200 զույգ անգլիական կոշիկները ինչո՞ւ վաճառքի չես հանում»։ «Ի՞նչ եք ուզում ինձանից, այ ընկեր, ես անգլիական կոշիկներ չեմ ստացել, գնացեք բազայում հետաքրքրվեք»։ «Հետաքրքրվել եմ, - ասում է, - ուղիղ կոշիկառից եք բերել, ապրանքագրի համարը 21 - 224, արտիկուլ 4418...»։ Բա որ հետաքրքրվել եք, ասում եմ, ինձ 200 զույգ կոշի՞կ են տվել։ Կամ ե՞րբ են լրիվ տալիս։ 50 զույգի փողը տվեցին ու ստիպեցին, որ ստորագրեմ 200 զույգի տակ։

Ադա - Ինչ ես հիմար-հիմար դուրս տվել... որ իմանան...

Գևորգ - Ադա ջան, կարծում ես ես ուզո՞ւմ էի ասել։ «Իսկ 150 զույգը, ասում է»։ «Վաճառել եմ, ասում եմ, եկեք պահեստս ստուգեք»։ Ու մեկ էլ որ չասաց, որ չասաց...

Ադա - Ի՞նչ...

Գևորգ - Ասաց. «Իսկ Ադելաիդա Խելունցի տունը ևս ստուգենք»։

Ադա - Ի՞նչ, հենց այդպես էլ ասա՞ց։ Ասաց Ադելաիդա Խելունցի՞։

Գևորգ - Հա... դե մի դողա։

Ադա - Բայց նա ինձ որտեղի՞ց գիտի։

Գևորգ - Իսկ ի՞նձ որտեղից գիտի։ Երևի ամեն ինչ էլ գիտի, էլի, անիծածը։

Ադա - Իսկ դու չասացի՞ր, որ ես ոչ մի կապ չունեմ քեզ հետ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գևորգ - Ի՞նչ է, հարցնողը Նազար ամուսի՞նդ էր... որ հավատար... Չե՞ս տեսնում, որ նա ամեն ինչ էլ անգիր գիտի։ Էլ մի ուշացրու, վազիր տուն, գոնե ապրանքը փրկենք, թե չէ մեկ էլ տեսար վրա տվեցին։

Ադա - Հայ-հայ... մեր տանն էլ ապրանք գտան։

Գևորգ - Կգտնեն, Ադա, որ մտնեն՝ շատ բան կգտնեն։

Ադա - Հանգիստ մնա, ասում եմ, մեր տանը ոչ մի ապրանք չկա։

Գևորգ - Ինչպե՞ս թե չկա։ Բա որտե՞ղ են կոշիկները։

Ադա - Ինձ մոտ ոչ մի կոշիկ էլ չկա։

Գևորգ - 150 զույգ կոշիկ եմ տվել։

Ադա - Դե լավ, լավ, հանգստացիր, մի քանի զույգն այստեղ վաճառեցի, իսկ մնացածն էլ ուղարկեցի Թիֆլիս։

Գևորգ - Խելագարվե՞լ ես, ինչ է, ո՞վ է տարել։

Ադա - Ապահով մնա, Նազարը փորձի փոխանակման էր գնում, տարավ հետը։

Գևորգ - Ի՞նչ փորձի փոխանակում։

Ադա - Թանկ գնով կոշիկ վաճառելու... իրենց գործով... շատ գիտեմ... էնտեղ ես մի ընկերուհի ունեմ, մի օրում կվաճառի։

Գևորգ - Խելագարվե՞լ ես, ի՞նչ է, եթե վաղը կոշիկները չլինեն, ես կորած եմ։

Ադա - Դե, ուրեմն համարիր, որ կորած ես... ես որտեղի՞ց կոշիկները հավաքեմ։

Ձայն - «Հին շոր, հին կոշիկ, փոխեմ պոպոքով»։

Գևորգ - Էն ո՞վ էր, ո՞վ էր կոշիկ կանչողը...

Ադա - Լսիր, բավական է, հավաքիր քեզ, դու տղամա՞րդ ես, թե... հին շոր, հին կոշիկ էր կանչում։

Գևորգ - Մեկ է, մի կապ կլինի... ո՞վ էր լսել, որ մեր թաղամասում հին շոր, հին կոշիկ կանչեին... Դե շուտ արա, Ադա, ժամանակ մի կորցրու, գնա փողը բեր, գոնե փակեմ հաշիվը։

Ադա - Ի՞նչ փող։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գևորգ - Կոշիկների փողը։

Ադա - Ես ստացե՞լ եմ, որ քեզ տամ։

Գևորգ - Տնից բեր։

Ադա - Ասում եմ՝ Նազարը էստեղ չի... Դեռ չի եկել...

Գևորգ - Քո փողերից բեր, հետո տեղը կդնես։

Ադա - Ինձ փող որտեղի՞ց, այ տղա։

Գևորգ - Ոնց թե, էդքան ապրանք եմ տվել։

Ադա - Ոնց որ եկել է, էնպես էլ գնացել է, հիմա փո՞ղ է դիմանում. իսկ ինչո՞ւ դու չես բերում...

Գևորգ - Ես փո՞ղ եմ աշխատում, թողնո՞ւմ են... ոնց որ հասարակական կարգով ծառայող լինեմ։

Ադա - Լաց մի լինի, դու կունենաս։

Գևորգ - Ադա, ինչ նողկալի կին ես...

Ադա - Իսկ դու ժլատությունից դեղնել ես։

Զայն - «Հին շոր, հին կոշիկ, փոխեմ պոպոքով»։

Ադա - Արի, ախպեր ջան, հին շոր, հին կոշիկ ես ուզում, չէ՞:

(Ցույց է տալիս Գևորգին): Արի տար, ըհը, փալաս..

(Մարդը ծիծաղում է):

Գևորգ - Զահրումար։

Զայն - «Հին շոր, հին կոշիկ, փոխեմ պոպոքով»։...

(Արամյան, Մայիլյան, Պետրոս):

Արամյան - Ո՞ւր ես, այ տղա։

Պետրոս - Մտա տուն մի կտոր հաց ուտեմ։

Արամյան - Ավտոտնակի գործը գլուխ եկա՞վ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պետրոս - Հա... համա հոգիս էլ հետը դուրս եկավ։

Արամյան - Անմիջապես մեկնիր լվացքատուն։

Պետրոս - Հիմա էլ լվացք եմ անելո՞ւ...

Արամյան - Կատակի ժամանակ չէ։ Բողոքներ կան։ Չորս մեքենաներից միայն մեկն է աշխատում։

Պետրոս - ժամանակ չունեմ։

Արամյան - Ի՞նչ։

Պետրոս - Ասում եմ՝ ժամանակ չունեմ։

Մայիլյան - Այսինքն ինչպե՞ս թե ժամանակ չունես։

Պետրոս - Մի խոսքով՝ էդ գործերով զբաղվել չեմ ուզում։

Արամյան - Ինչպես թե, վարպետ Պետրոս, ուրեմն դուք հրաժարվում եք կատարել հանձնաժողովի որոշո՞ւմը։

Պետրոս - Հա։

Մայիլյան - Ոչինչ չեմ հասկանում։

Պետրոս - Այսինքն ինչի՞ չեք հասկանում, ընկեր Մայիլյան, կամ դո՞ւք ինչի չեք հասկանում, ընկեր Արամյան։ Մեկդ ինտելիգենտ, մեկդ օրենքի մարդ... Երկուսդ էլ բարձրագույն կրթություն ունեք։

Արամյան - Բայց ի՞նչ է պատահել, վերջապես, եղբայր։

Պետրոս - Էն է պատահել, որ դուք տարբերություն եք դնում, մանր-մունր գործերը ինձ եք հանձնարարում, իսկ մեծ ու պատվավոր գործերը դուք եք անում։ Ինչի՞։ Ես ձեր սնագործ բանվո՞րն եմ։ Հա՞։

Մայիլյան - Ի՞նչ գործ, Պետրոս։

Պետրոս - Վարպետ Պետրոս, դուք ցեմենտի հարցով զբաղվեք, գազի ու հազար ու մի զիբիլի հարցով, իսկ դուք ինձնից թաքուն Սուեզի ջրանցքի հարցն եք լուծում, հա՞։

Արամյան - Ի՞նչ Սուեզ, հո երազ չե՞ք տեսել, վարպետ Պետրոս։

Պետրոս - Երազ չեմ տեսել, ընկեր Արամյան, բայց երեկվա «Վրեմյան» տեսել եմ։ Եվ ոչ թե միայն տեսել եմ, այլև էս իմ ականջներով լսեցի, որ վիճաբանական գլխավոր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հանձնաժողովը որոշել է տուգանել Եգիպտոսի կառավարությանը՝ Սուեզի ջրանցքի հատակը չմաքրելու համար: Իսկ ես՝ բեխաբար: Դուք որոշում եք կայացնում, իսկ ես՝ անտեղյակ: Ինչի՞: Վախենում էիք դեմ լինեի՞: Ուրեմն ես էդքան հետամնաց եմ, էլի: Իսկ եթե ճիշտը կուզեք իմանալ, ես վաղուց էի մտածում, որ մենք պետք է մեծ հարցերով էլ զբաղվենք: Հա, ինչի՞ չէ: Ինչի, օրինակ, մենք էլ մեր վերաբերմունքը չունենանք Սալվադորի և կամ էլ Իրանի-Իրաքի դեպքերին, հը՞, չխառնվենք, ում որ պետք է, չօգնենք:

Մայիլյան - Ես կմեռնեմ... Վայ... Պետրոս, Պետրոս:

Արամյան - Սուե՞զ... Սուե՞զ...

Պետրոս - Չհասկացանք, իմ ասածի ծիծաղի տեղը ո՞րն էր:

Մայիլյան - Այ մարդ, «Վրեմյայում» խոսքը ՄԱԿ - ի հանձնաժողովի մասին է եղել, Պետրոս տղա... մենք ի՞նչ գործ ունենք Սուեզի հետ, հեր օրհնած...

Պետրոս - Ճի՞շտ...

Արամյան - Իհարկե, սիրելի Պետրոս: Եթե մենք նման կարևոր որոշում ընդունեինք, ինչպե՞ս կարող էինք չհարցնել ձեր կարծիքը:

Մայիլյան - Վայ, Պետրոս, Պետրոս... Եղբայր, մենք ի՞նչ գործ ունենք Սուեզի ու Իրանի հետ:

Պետրոս - Իբրև թե լավ է, որ չունենք... Դե բոլորդ մի կողմ քաշվեք, տեսնենք ի՞նչ է լինելու էս աշխարհի հալը... Ես գնացի լվացքատուն: *(Գնում է):*

Մայիլյան - Հը՞, ի՞նչ եք ասում, ընկեր Արամյան: Մի օյին չխաղա՞նք:

Արամյան - Ո՞ւմ գլխին:

Մայիլյան - *(Ծիծաղում է):* Նարդի եմ ասում, նարդի...

Գևորգ - Բարև ձեզ... Ինչպե՞ս եք, ընկեր Արամյան, մեր սիրելի վարպետ:

Արամյան - *(Խզված ձայնով):* Մերսի...

Գևորգ - Ի՞նչ է պատահել, վարպետ:

Արամյան - Ըհը, ըհը… ձայնալարերս... մրսել եմ:

Գևորգ - Դերասանի համար ձայնալարերը... Սոդայով կաթը օգնում է:

Արամյան - Գնամ պառկեմ: *(Գնում է):*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գևորգ - Մի օյին չխաղա՞նք, ընկեր Մայիլյան...

Մայիլյան - Նստիր։

Գևորգ - Էդ ի՞նչ բնավորություն է, ընկեր Մայիլյան, հենց ինձ տեսնում եք՝ ուզում եք նստեցնել։

Մայիլյան - Չեմ թաքցնի, Գևորգ, միշտ էլ սրտանց ուզեցել եմ նստեցնել քեզ, բայց զարմանալի ճարպկությամբ փախել ես ձեռքիցս։

Գևորգ - Էհ, ձեր պատճառով էլ շրջան չմնաց որ չտեղափոխվեի... Լավ էր վերջը...

Մայիլյան - Որ ինձ թոշակի ուղարկեցին, չէ՞։

Գևորգ - Լավ, ինչ եղել, եղել է, անցածն անցած է։ Ինչի՞ չեք երևում, ընկեր Մայիլյան... Հարևան մարդիկ ենք... Բա դուք ոչ մի բանի կարիք չեք ունենո՞ւմ, հազար տեսակ ապրանք ենք ստանում... քույրիկին ուղարկեք...

Մայիլյան - Ես ոչ մի բանի կարիք չունեմ, Գևորգ։ Ասա տեսնեմ, դո՞ւ ինչի կարիք ունես, որ եկել ես ինձ մոտ։

Գևորգ - Չէ, բան չկա, հենց էնպես, տեսա, ասացի մի քիչ զրույց անենք, նարդի խաղանք... Հա՞, ընկեր Մայիլյան, ուզում եմ մի խորհուրդ հարցնել, կարելի՞ է։

Մայիլյան - Խնդրեմ։

Գևորգ - Եթե նամակով կամ հեռախոսով... քեզ սպառնում են, հալածում են, չեն թողնում հանգիստ աշխատես, էդպիսի մարդկանց հոդված չի հասնում։

Մայիլյան - Իսկ ինչպե՞ս են հալածում, ի՞նչ են ասում։

Գևորգ - Ի՞նչ են ասում... Բայց դա ի՞նչ կարևոր է։

Մայիլյան - Ինչպե՞ս թե կարևոր չէ... Այդ մարդիկ ինչ են ուզում քեզանից, դրա՞մ։

Գևորգ - Չէ, փող չեն ուզում, էհ, և հենց դա է զարմանալին։

Մայիլյան - Իսկ ի՞նչ են ուզում... Գուցե ուզում են, որ դու հովանավորե՞ս որևէ հանցագործի։

Գևորգ - Ինչպե՞ս... Սպասեք մտածեմ... Չէ, ընկեր Մայիլյան, այդպիսի բան չեն ասում։

Մայիլյան - Ուրեմն ի՞նչ են ուզում։ Գուցե նրանց նպատակն է, որ դու հեռանաս աշխատանքից և քո փոխարեն իրենց ուզած մարդուն տեղավորեն։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գևորգ - Հենց դա կլինի: Շատ շնորհակալություն, ես ինչպե՞ս մինչև հիմա գլխի չէի ընկել... դե, իհարկե... ոնց բացեցիք աչքերս... Թե չէ ես էլ տանջվում եմ, գիշերները չեմ քնում... ընկեր Մայիլյան, որ այսքանն արեցիք, մի բան էլ պիտի խնդրեմ:

Մայիլյան - Ասա, Գևորգ:

Գևորգ - Դուք պիտի ինձ օգնեք, որ բռնենք այդ մարդուն:

Մայիլյան - Ես ինչո՞վ կարող եմ օգնել... ես հիմա միլպետ չեմ:

Գևորգ - Հենց դրա համար եմ ասում... Ոնց ձեզ էլ գործից հանեցին, չէ:

Մայիլյան - Ինձ ոչ ոք էլ չի հանել, Գևորգ, ե՛ս թոշակի անցա:

Գևորգ - Հա, հիմա դրա անունն այդպես է... համաձայն իր դիմումի... Դուք պիտի օգնեք ինձ... հայտնաբերեք այդ սրիկային ու բռնեք... Ու այդ ժամանակ, ես կիմանամ...

Մայիլյան - Լավ, բայց ինչպե՞ս բռնեմ:

Գևորգ - Դո՞ւք, դո՞ւք ինչպես բռնեք... ձեզ համար բռնելն ի՞նչ է: Դուք որ ուզենաք… մինչև հիմա ո՞վ է ձեր ձեռքից պրծել:

Մայիլյան - Դու, Գևորգ, դու:

Գևորգ - Է, ընկեր Մայիլյան... Ուրեմն պայմանավորվեցինք... կներեք, չկարծեք, թե հենց այնպես կխլեմ ձեր ժամանակը... չե՞մ հասկանում, ինչ է, որ թոշակով ապրող մարդ եք... թոշակով ապրե՞լ կլինի:.

Մայիլյան - Ուրեմն ուզում եք վարձել ինձ որպես մասնավոր խուզարկուի՞:

Գևորգ - Ինչո՞ւ եք այդպես ասում: Մարդ ենք, էլի, լավությանը պետք է լավությամբ պատասխանես, հայ ենք, չէ՞:

Մայիլյան - Հայ ենք, իհարկե, հայ ենք:

Գևորգ - Ուրեմն այսպես կանենք, դուք կգաք իմ առանձնասենյակը և հենց որ նորից զանգահարեն...

Մայիլյան - Ես քեզ երբեք չեմ օգնի, Գևորգ:

Գևորգ - Վայ, ինչո՞ւ:

Մայիլյան - Որովհետև դու իմ թշնամին ես: Որովհետև դու ամբողջ կյանքում խաբել ես մարդկանց, որովհետև ուր գնացել՝ ապականել ես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գևորգ - Դե լավ... ճառեր մի ասա... Միանգամից ասա, որ ձեռքդ չեմ ընկել, դրա համար էլ փրփրում ես... փառք աստծո հիմա ձեռքերդ կարճ են...

Մայիլյան - Ահա, փոխվեց լեզուդ, արդեն փրփրում եմ... Հա-հա, ես ափսոսում եմ, որ քեզ չեմ կարողացել բանտարկել, ափսոսում եմ ոչ միայն նրա համար, որ գողացել ես, խաբել ես, շորթել ես, այլև ամենակարևորը, ամենագլխավորը նրա համար, որ դեռ այն ժամանակ, պատերազմից անմիջապես հետո, երբ մարդիկ խելագարվում էին սովից, դու ձեռքերդ շփելով, ուրախ-ուրախ էիր նայում հերթերին: Հրճվում էիր, երբ մարդիկ աղաչանքով քեզ էին պարզում թղթադրամները, որպեսզի դու նրանց հաց տաս: Ազատ վաճառք կոչվող հացը: Ու մինչև հիմա էլ դու հերթ ես ստեղծում, հերթ ես երազում, որպեսզի ավելի հեշտ խաբես, ավելի շատ լինի շահդ, և դու քեզ ուրիշներից վեր զգաս: Դու հոդվածի մասին էիր հարցնում: Այ, նոր հոդված քեզ նմանների համար է պետք սահմանել:

Գևորգ - Պահ-պահ-պահ, իրենից բաներ է հնարում: Ուրեմն ես աշխատելու իրավունք չունեմ:

Մայիլյան - Չունես: Իհարկե, չունես: Եվ չես էլ ունենա: Չմտածես... Քանի տարի է, այս խանութից այն խանութն ես փախչում, հարյուր անգամ ուզեցել են հանել քեզ առևտրի ցանցից, էդ ինչո՞ւ չես հեռանում, հը՞:

Գևորգ - Հանեն, ո՞ւր գնամ, ձեզ նման տոմս չունեմ: Տոմսը հեշտ-հեշտ դրել եք ձեր գրպանը ու խոսում եք:

Մայիլյան - Շատ հեշտ էր... Կերչում... 42 թվականին:

Գևորգ - Մարդավարի մի բան խնդրեցի... կարծես թե առանց քեզ կորչելու ենք... չենք կորչի... մտքովդ չանցնի, ընկեր նախկին գնդապետ:

Մայիլյան - Նախկի՞ն... Գնդապետի կոչումը պաշտոն չէ, նախկին հացավաճառ, դիրեկտորություն ու պետ լինել չէ... Ես հիմա էլ գնդապետ եմ: Եվ գնդապետ էլ կմնամ մինչև վերջ:

Գևորգ - Դե լավ, անկեղծությանը պատասխանենք անկեղծությամբ: Դու՝ Մայիլյան, պետք է շատ շնորհակալ լինես քո բախտից ու ղեկավարությունից, որ ճիշտ ժամանակին քեզ թոշակի ուղարկեցին: Մի քիչ որ ուշացնեին, քեզ ոչ թե թոշակի, այլ բոլորովին ուրիշ տեղ կուղարկեին, որտեղ ժամանակին դու ես շատերին ուղարկել: Եվ այսօր դու ոչ թե նախկին գնդապետ կլինեիր, այլ աստիճանազրկված միլաշխատող:

Մայիլյան - Այ, դա արդեն նորություն է:

Գևորգ - Այո, հարգելի ընկեր, երբ դուք աշխատում էիք՝ մենք էլ քնած չէինք: Եվ ոչ թե ես պրծա քո ձեռքից, այլ դու, դու պրծար մեր ձեռքից: Ու լավ պրծար..,

Մայիլյան - Իսկ կարելի՞ է իմանալ, թե այդ ո՞ր մեղքերիս համար էին ինձ աստիճանազրկելու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գևորգ - Լսիր, դու իսկապե՞ս կարծում ես, թե մաքուր ես եղել, սուրբ ես եղել, հա՞ , հրեշտակ ես եղել... ձեր բաժնից քանի գործ է կարճվեր:

Մայիլյան - Այդպես, էլ է պատահել: Դա վերադասի իրավունքն է:

Գևորգ - Եվ բոլորն էլ կարճվելու գործեր են եղել, հա՞: Իսկ ինչո՞ւ չէիր բողոքում... չգիտեի՞ր, թե ինչի համար են կարճվում, ազնիվ մարդ... Դե հիմի գնա ու նարդիդ խաղա... ընկերներդ սպասում են: *(Գնում է):*

(Գալիս է Սահակը):

Սահակ - Բարև ձեզ, ընկեր Մայիլյան:

Մայիլյան - Բարև, Սահակ, պստիկդ ինչպե՞ս է:

Սահակ - Հիանալի է, ընկեր Մայիլյան... վարպետը, դուք, ուղղակի փրկեցիք ինձ… իսկ դուք՝ արդեն երկրորդ անգամ:

Մայիլյան - Երկրո՞րդ... չեմ հիշում:

Սահակ - Տասնհինգ տարի տանջվել եմ, միշտ ուզեցել եմ խոսել ձեզ հետ, խոստովանել, բայց չեմ համարձակվել, վախեցել եմ ընկնել ձեր աչքից: Բայց այսքանից հետո...

Մայիլյան - Իսկ ի՞նչ է եղել:

Սահակ - Շատ հին պատմություն է, ընկեր Մայիլյան, դուք չեք հիշի: Դուք գիտեք, որ ես որբ եմ մեծացել, խորթ մոր ձեռքին... իսկական խորթ:

Մայիլյան - Հիշում եմ, ինչպես չէ, անխիղճ կին էր:

Սահակ - Չեմ երկարացնի... Մայրս մի մատանի ուներ, որ ամուսնանալու ժամանակ նրան նվիրել էր իմ տատը... տոհմական մատանի էր... մայրս երբեք չէր բաժանվում դրանից, գիշերն էլ ձեռքին էր քնում, նույնիսկ լվացք անելու ժամանակ չէր հանում և... երևի ինձ համար ամենամեծ ցավն այն էր, որ հայրս այդ մատանին տվեց իր նոր կնոջը:

Մայիլյան - Ու մի օր այդ մատանին անհետացավ:

Սահակ - Ուրեմն հիշո՞ւմ եք: Ասենք դե դուք պրոֆեսիոնալ հիշողություն պետք է ունենաք, ուրեմն կհիշեք նաև, որ ինձ էին կասկածել և... հայրս ու այդ կինը ինձ բերեցին ձեզ մոտ: Ես հետո իմացա, որ դուք բաժնի քրեական հետախուզության պետն էիք:

Մայիլյան - Այո, հիշում եմ, հիշում եմ:

Սահակ - Ես կկորչեի, եթե դուք կալանավորեիք ինձ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մայիլյան - Այդպես էլ է պատահում։

Սահակ - Բայց դուք ասացիք, ես չեմ հավատում, որ Սահակն այդպիսի բան կանի և որ այդ են ապացուցում նաև ստուգումները։ Հիշո՞ւմ եք։

Մայիլյան - Հիշում եմ, իհարկե։

Սահակ - Եվ ինձ ազատ արձակեցիք։

Մայիլյան - Այո։

Սահակ - Ահա այդ է, որ երկար տարիներ տանջել է ինձ։ Իրականում ես էի գողացել իմ մոր մատանին։

Մայիլյան - Եվ պահել էիր քո ընկերոջ՝ Անդրանիկի մոր մոտ։ Թագուհի էր անունը։

Սահակ - Ո՞նց թե... ուրեմն գիտեիք ու կարճեցի՞ք իմ գործը։

Մայիլյան - Այո, կարճեցի, Սահակ... Եթե ամեն ինչի համար մարդկանց կալանավորեին, աշխարհում շատ քիչ մարդ կմնար։

Սահակ - Ես ձեզ... ես ձեզ պարտական եմ մինչև կյանքիս վերջը։

Մայիլյան - Ես վարձատրված եմ, Սահակ։ Եթե այլ կերպ լիներ, մենք այսօր քեզ նման մի լավ ճարտարապետ չէինք ունենա։ Իսկ որպեսզի ավելի համոզվես, որ ձեր շրջապատում էլ կարող են որոշ չափով Շերլոկ Հոլմսեր լինել, կասեմ, որ ես քո մոր մատանին, այսինքն՝ Գնունիների տոհմական մատանին հենց հիմա տեսնում եմ աչքիս առաջ, քո ձախ ձեռքի ամենափոքր մատին։

Սահակ - Այո, այո, սա է։ Ես հիմա երբեք չեմ բաժանվում իմ մոր հիշատակից և երբեք չեմ բաժանվի։

Մայիլյան - Մի ասա, Սահակ։ Իսկ իմ ներքին զգացողությունն ինձ հուշում է, որ հավանաբար շուտով կբաժանվես այդ մատանուց, իհարկե, առանց տեսադաշտից բաց թողնելու։

Սահակ - Դե լավ, է, ընկեր Մայիլյան...

(Մայիլյանը գնում է։ Սահակի տնից դուրս է գալիս Տաթևիկը)։

Սահակ - Տաթևիկ, էդ ի՞նչ ես անում։

Տաթևիկ - Գործ եմ անում։

Սահակ - Տաթևիկ ջան, մի քանի րոպե էլ մնա Լուսիկի մոտ, հիմա գալիս եմ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Տաթևիկ - Լավ: *(Մտնում է ներս: Սահակը բարձրանում է վեր, թակում է Նունեի տան դուռը):*

Ձայն - *(Ներսից):* Ո՞վ է:

Սահակ - Ես եմ, բժշկուհի, Սահակն եմ:

Նունե - *(Բացում է դուռը):* Սահա՞կ: Ի՞նչ է պատահել, Լուսիկը վա՞տ է զգում:

Սահակ - Ոչ, ոչ, ընդհակառակը, բժշկուհի... ներողություն, որ այս ուշ ժամին անհանգստացնում եմ: Գիտեմ, որ իմ արարքը տարօրինակ կթվա... Բայց այլ կերպ չէի կարող... չեմ կարող քնել, ուզում եմ խնդրել, ուզում եմ...

Նունե - Ի՞նչ եք ուզում, ճարտարապետ:

Սահակ - Հիմար բան ստացվեց... եթե Անուշ մայրիկը քնած չլիներ:

Նունե - Անուշ մայրիկը ի՞նչ կապ ունի այստեղ:

Սահակ - Ախր... ինչպես ասեմ... Անուշ մայրիկն է միշտ Լուսիկի ճաշը պատրաստում: Իսկ հիմա քնած է: Իսկ Լուսիկը վեր է կացել և...

Նունե - Ուտե՞լ է ուզում:

Սահակ - Այո... մեր տանը տուփով փոշի կա: Բայց ես չգիտեմ ինչպես բացել, սկզբից ջրի մեջ գցեմ, նո՞ր եռացնեմ, թե՞ սկզբից եռացնեմ, նոր տուփի մեջ լցնեմ... այսինքն, սկզբից ջրի մեջ լցնեմ...

Նունե - Սկզբից կարդա, թե ինչ է գրված տուփի վրա:

Սահակ - Իսկ ի՞նչ է գրված:

Նունե - Գրված է, թե սկզբից պետք է եռացնել, նո՞ր ջրի մեջ լցնել, թե՞ սկզբից ջրի մեջ լցնել, նոր եռացնել:

Սահակ - Ճի՞շտ: Այդպես էլ գրված է... Շնորհակալություն, ներողություն, բժշկուհի... Նունե...

Նունե - Ի՞նչ...

Սահակ - Բարի գիշեր... Ախ, Նունե...

Նունե - *(Ինքնիրեն):* Նունե... *(Սահակի ետևից):* Սահակ...

Սահակ - Լսում եմ...

Նունե - Հիմար բան ստացվեց, Սահակ... Տուփը մոռացաք... *(Նետում է ցած):*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Պետրոս, Խելունց):

Խելունց - Բնակիչ Պետրոսյա՞ն:

Պետրոս - Այ մարդ, սա էլի բուսնեց: Արևս վկա, սա սատանա է:

Խելունց - Ո՞նց եք, բնակիչ Պետրոսյան:

Պետրոս - Լավ եմ, Նազար, լավ եմ, լավ եմ, լավ եմ:

Խելունց - Ինչո՞ւ եք ջղայնանում: Գործի մեջ անախորժություններ հո չկա՞ն:

Պետրոս - Գո՞րծ... Իբրև թե չգիտես, որ ես չեմ աշխատում:

Խելունց - Ինչպես թե... ուրեմն հանձնաժողովում աշխատելը գործ չէ՞:

Պետրոս - Ի՞նչ հանձնաժողով:

Խելունց - Վիճաբանական: Եվ՝ գլխավոր...

Պետրոս - Ի՞նչ... Գալիս եմ, Անուշ ջան:

Խելունց - Ո՞ւր, ո՞ւր... Շուտով ինքը Անուշը կգա այնտեղ, ուր հարկն է՝ քեզ նախաճաշիկ բերելու: Եթե ես թույլ տամ :

Պետրոս - Վահ, ինչի՞, ես ի՞նչ եմ արել, այ Նազար:

Խելունց - Ընդհատակյա կազմակերպություն եք ստեղծել, հա՞: Դավադրություն եք կազմակերպում, չէ՞... բարեգործներ եք դարձել, հա՞... ես էլ ասում եմ, էս ի՞նչ է ամեն օր քչփչում նախկին միլպետի հետ… էն դերասանին էլ ձեր խելքին եք գցել ու հալածում եք մարդկանց, հա՞:

Պետրոս - Վահ, ի՞նչ կազմակերպություն, ի՞նչ հանձնաժողով, բաներ ես հնարում, հա... Ես ո՞ւր, հանձնաժողովն ուր...

Խելունց - Իսկ էդ ի՞նչ հեռախոսի համար էիր տալիս Հացառի դիրեկտորին, հը՞... էդ ի՞նչ հանձնաժողովի անունից էիր վախեցնում, հը՞ ... Անշուն գյուղ եք գտել, հա՞:

Պետրոս - Ի՞նչ ես ասում, այ Նազար... Ո՞վ է ասել անշուն: Ինչի մենք չգիտեի՞նք, որ դու կաս:

Խելունց - Չգիտեիք... Իսկ հիմա կիմանաք... Ես Նազարը չլինեմ, թե աշխարհով մեկ չխայտառակեմ ձեզ: Ես տուն էի գնում, տիկնոջս մոտ, բայց չեմ գնա: Հիմա գնում եմ միլիցիա, օրդեր բերեմ ու ձեր բոլորի տները խուզարկեմ... էն ժամանակ կխոսենք...

Պետրոս - Այ Նազար, մի բոպե...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նազար - Վերջ... Մարմին եմ, չէ՞:

(Սահակ, Պետրոս, Արամյան):

Պետրոս - Ընկեր Արամյան, դժբախտություն...

Արամյան - Ի՞նչ է պատահել:

Պետրոս - Դժբախտություն, շուտ արա, դուրս արի:

Արամյան - Սպասիր հագնվեմ:

Պետրոս - Ես Մայիլյանի մոտ եմ:

Արամյան - Գնա, գալիս եմ: *(Պետրոսը բարձրանում է վեր):*

Սահակ - Դուք դո՞ւրս էիք գալիս, վարպետ... ափսոս, շատ ափսոս, որ անժամանակ եկա:

Արամյան - Ոչինչ, ոչինչ, լսում եմ, Սահակ:

Սահակ - Այսինքն երկար խոսելու բան էլ չէ:

Արամյան - Իսկապե՞ս:

Սահակ - Այսօր ինձ համար մեծ ուրախություն է, ես ուզում եմ ամենայն հանդիսավորությամբ խնդրել ձեզ... ես ուզում եմ, որ դուք համաձայնվեք...

Արամյան - Սիրելիս, ես սրտանց ողջունում եմ քեզ, ես համաձայն եմ: Եվ իմ կարծիքով Նունեն էլ դեմ չէ... միայն մի քիչ համառություն... աղջիկներն այդ սիրում են... Գնա, Նունեն քեզ է սպասում, հաջողություն: *(Գնում է վերև):*

Սահակ - *(Արամյանի ետևից):* Ես ուզում էի ձեզ հրավիրել իմ «Ծիածան» շատրվանի բացմանը... Տարօրինակ մարդ է, չթողեց էլ, որ խոսքս ավարտեմ... Սպասիր, սպասիր, բայց նա բոլորովին ուրիշ բան էր ասում... Ուրեմն դա հնարավո՞ր է... Նունե... Նունե...

Նունե - Սահա՞կ...

Սահակ - Նունե, հայրիկդ համաձայն է... Հենց նոր ասաց, որ համաձայն է...

Նունե - Սպասիր, սպասիր, ինչի՞ն է համաձայն:

Սահակ - Որ ես հին ասպետների պես ծունկ չոքեմ քո առաջ և... համառեմ... աղջիկներն այդ սիրում են:

Նունե - Խելագար... Այս ի՞նչ շրջապատում եմ ապրում: Իբր թե հայրս քիչ էր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սահակ - Հայրիկին բան չասես։ Հայրիկդ ասաց համառիր՝ ես էլ համառում եմ։

(Գրկախառնվում են: Մոտենում է Տաթևիկը):

Տաթևիկ - Էս ի՞նչ եք անում։ Լուսիկը էնտեղ լաց է լինում։

(Գնում են):

* * *

(Արամյանը, Պետրոսը, Մայիլյանը, Տաթևիկը դուրս են գալիս Մայիլյանի սենյակից: Դանդաղ իջնում են բակ: Նստում իրար կողքի):

Մայիլյան - Հիմա ի՞նչ ենք անելու։

Տաթևիկ - Չգիտեմ։

Պետրոս - Հիմի ի՞նչ պիտի անենք։

Արամյան - Չգիտեմ։

Պետրոս - Ընկեր Մայիլյան, գոնե դու մի բան ասա, սիրտս ճաքում է: Չէ՞ որ դու օրենքի մարդ ես։

Մայիլյան - Օրենքն էստեղ ի՞նչ գործ ունի, Պետրոս։

Արամյան - Ափսոս, դեռ ինչքան գործ կարող էինք անել։

Մայիլյան - Ոչինչ, քիչ չարեցինք, վարպետ։

Պետրոս - Ասում եմ, ընկեր Արամյան, գուցե թե իզուր անջատեցինք հեռախոսը, հը՞։

Արամյան - Մնար ի՞նչ աներ, Պետրոս։

Պետրոս - Ասում եմ... մինչև Նազարը գնար, մարդ բերեր, գուցե մենք մի քանի գործ էլ անեինք, էլի... Ախր էն թոշակառու բժշկի հեռախոսի հարցը մնաց...

Մայիլյան - Իսկական ֆենոմեն ես, այ մարդ...

Պետրոս - Ինչ ե՞մ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մայիլյան - Ապշելու մարդ ես... միամիտ երեխայի նման, բերանբացությամբ մեր աշխատանքը տապալեցիր, մեզ դրեցիր ամենահիմար դրության մեջ, իսկ քո պետքն էլ չէ... նոր հարցեր ես մշակում... Բավական է, էլի...

Արամյան - Պետք չէ, Բաբկեն, պետք չէ... միևնույն է, այսպես թե այնպես մի օր բացվելու էր ամեն ինչ: Ամեն ինչ իր վախճանն ունի: Միայն ափսոս, որ մերը շուտ եկավ... Այնպես որ հեռախոսն արդեն ավարտված է:

Պետրոս - Ես ընկեր Մայիլյանի վրա չեմ նեղանում, չէ... Ու որ խոսում եմ էսպես, սրտնեղությունից է... ամեն ինչ ախր էնքան լավ էր, որ... Բայց ես ի՞նչ անեմ, ախր ճիշտը էսպես ապրելն էր... Ախր առաջվա նման դատարկ էլ չեմ կարողանա ապրել... Ասեք. ի՞նչ անեմ... Մեռնեմ, պրծնե՞մ:

Մայիլյան - Ներիր ինձ, Պետրոս, տաքացա: Ուրեմն, այսպես... դու մորաքույր Անուշին վերցնում ես ու անմիջապես գնում ես գյուղ, դու այստեղ չես եղել, հասկացա՞ր:

Պետրոս - Ո՞նց թե այստեղ չեմ եղել:

Մայիլյան - Չես եղել... Վերջ... Դու մեզ հետ գործ չունես:

Արամյան - Իրավացի է Բաբկենը, վարպետ, միանգամայն իրավացի: Մենք կասենք, որ Պետրոս Պետրոսյանը մեր հանձնաժողովի հետ որևէ առնչություն չի ունեցել... իսկ մենք...

Մայիլյան - Ներեցեք, ընկեր Արամյան, բայց նույնն էլ ձեզ է վերաբերում:

Արամյան - Ի՞նձ: Ի՞նչ իմաստով:

Մայիլյան - Դուք ճանաչված մարդ եք, և ոչ մի իմաստ չունի այս սկանդալային պատմության մեջ ձեր երևալը: Ես ամեն ինչ կվերցնեմ ինձ վրա: Ես իրավաբան եմ և գիտեմ, թե ինչ կասեմ:

Արամյան - Ի՞նչ եք խոսում, սիրելի Բաբկեն: Իմ երկար ու ձիգ կյանքում հազիվ մի անգամ իմ իսկական դերն եմ խաղացել: Եվ հիմա հրաժարվե՞մ դրանից: Երբեք: Ընդհակառակը, դուք պետք է մի կողմ քաշվեք, որովհետև նախ նախագահը ես եմ, և ապա՝ բոլոր զանգերը վերևից ես եմ տվել:

Պետրոս - Եղավ, էլի, ձեզ պատժեն, մենք էլ հանգիստ նստենք ու նայենք:

Արամյան - Բեմից ասված խոսք չընդունեք, սիրելի Պետրոս ու սիրելի Բաբկեն, բայց ես հանգիստ կկրեմ իմ պատիժը, և դա կլինի առաջին անգամ, երբ կիմանամ, թե ինչի համար եմ պատժվում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Պետրոս - Իսկ իմ կարծիքով երկուսդ էլ մի կողմ պիտի քաշվեք ու պատիժ է թե ինչ է, թողնեք ինձ: Ինձ ի՞նչ պիտի անեն, այ ախպեր, ասեք, ինձ ի՞նչ պիտի անեն: Իմ ունեցած - չունեցածը մի չաքուճ է եղել, էն էլ առել են ձեռքիցս:

Մայիլյան - Էլի մեջ ընկա՞ր, Պետրոս:

Արամյան - Սպասեք, բարեկամներ, սպասեք:

Պետրոս - Ուրեմն, եթե ես բանվոր եմ...

Մայիլյան - Դեմագոգիան սկսեց:

Պետրոս - Ի՞նչը:

Արամյան - Վերջ, վերջ, վերջ...

(Բոլորը լռում են: Լռություն: Եվ հանկարծ լսվում է աղբատարի զանգի ձայնը: Առաջին պատկերը կրկնվում է նույնությամբ: Շենքը աղմկում է ու լռում միանգամից):

(Առաջին պլանում լուռ ու տխուր նստած են մեր հերոսները):

Տաթևիկ - Ձեզ ի՞նչ է պատահել: *(Իր խաղալիք-հեռախոսը դնում է նրանց առջև):* Դե աշխատեք:

(Հանձնաժողովի անդամները իրար են նայում, ծիծաղում են: Մայիլյանը գրկում է Տաթևիկին):

Վարագույր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՇԱՏ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կատակերգություն երկու մասից

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Շավարշ Խանոյան - Միկրոշրջանի հեղինակ, ճարտարապետ, 45 տարեկան
Մարիամ - Նրա կինը, ուսուցչուհի, 40 տարեկան
Արգամ - Նրանց որդին, ուսանող, 20 տարեկան
Վահե Մարջանյան - Դպրոցի դիրեկտոր, 40 տարեկան
Մագդա - Տրիկոտաժի արտադրամասի պետ, 35 տարեկան
Արմեն Ջալալյան - Ճարտարապետի տեղակալ, 32 տարեկան
Մարտիրոս Բովունց - Շավարշի համագյուղացին, 55 տարեկան
Նելլի Սարիբեկյան - Գանձապահ, 26 տարեկան
Սոկրատ - Խանոյանի վարորդը, 28 տարեկան
Հ ա կ ո բ Սաթյան - Դատախազության քննիչ, 40 տարեկան
Ցոլակ Աբելյան - Քրեական հետախուզության պետ, 50 տարեկան

Գործողությունը տեղի է ունենում մեր օրերում, քաղաքում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է գերեզմանատան մի անկյունը: Երևում են տարբեր շիրմաքարեր և հուշարձաններ: Դրանց մեջ իր վեհությամբ աչքի է ընկնում մարմարակերտ մի արձան: Մարդը՝ ձեռքը ճակատին: Թվում է, թե փիլիսոփայի արձան է, սակայն մակագրությանը ազդարարում է. «Անբախտ Վաղո»:

Շիրմաքարերին, ճաղերի վրա, անցուղիներում նստած ու կանգնած են թափորի մասնակիցները: Նրանք շշուկով զրուցում են իրար հետ, ժպտում ու ծիծաղում են թաքուն և, ինչպես երևում է՝ խոսում են թաղման հետ որևէ կապ չունեցող առօրյա հարցերի մասին:

Առաջին պլանում, ինչ-որ թմբի վրա դրված է գրեթե քառակուսի մի դագաղ, դագաղի կողքին մի մեծ կապոց կա: Ծաղիկներով երիզված սև շրջանակի մեջ հանգուցյալի խոշոր լուսանկարն է: Նկարում Խանոյանը ժպտուն և զարմացած տեսք ունի:

Դագաղի շուրջը սգավոր դեմքերով կանգնած են ներկայացման գրեթե բոլոր գործող անձինք: Մի կողմում առանձին կանգնած է քրեական հետախուզության բաժանմունքի պետ Ցոլակ Աբելյանը:

Տխուր հնչում է փողային նվագախմբի նվագը:

Մարտիրոս քեռին շարժվում է տեղից, հառաչում է աղմուկով՝ է՜հ, մոտենում է թմբին, քանդում է կապոցը և հանում մի բաճկոն, ակամա ստուգում է գրպանները և դնում արկղ-դագաղի մեջ: Տիկին Մարիամը ցնցվում է, ձեռքերով ծածկում է աչքերը և թեքվելով հենվում է Մարջանյանի ուսին: Մարտիրոս քեռին կապոցից հանում է նաև անդրավարտիքը, վերնաշապիկը, փողկապը, մայկան և ցուցադրելուց հետո տեղավորում արկղի մեջ: Հետո թափ է տալիս փալասը, այսինքն թե էլ ոչինչ չկա, ու մի քիչ տատանվելուց հետո փալասն էլ է դնում արկղի մեջ:

Մագդա - Վայ - վայ - վայ - վայ… Վայ – վայ, վայ, վա՜յ... Մայկան, մայկա՜ն...

Մարտիրոս - *(Սոկրատին):* Օգնի, այ տղա...

(Սոկրատը ետ է քաշվում):

Սոկրատը - Չէ', չէ՛, ես... վախենում եմ...

Մարտիրոս - Ինչի՞ց... մեջը հո մարդ չկա... փակի...

(Սոկրատը վերցնում է կափարիչը, ծածկում է արկղը: Մարտիրոսը մեխում է):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ետ քաշվեք…

(Տիկին Մարիամը ուշագնաց է լինում: Մարջանյանը նրան գրկած տանում է դեպի նստարանը):

Արգամ - *(Հեկեկում է):* Ախր ինչո՞ւ, ինչո՞ւ, հայրիկ...

(Բոլորը միանգամից խառնվում են իրար: Դահլիճից թիկունքներով ծածկում են գերեզմանը: Լսվում են միայն հևոցներ, թափվող քարերի ձայն: Նվագախմբի թմբուկը սկսում է որոտալ: Երբ մարդիկ ետ են քաշվում, տեղում միայն մի թումբ կա և նկարը գրված է թմբի վրա):

Մագդա - *(Մոտենալով Մարտիրոսին):* Հիմա ի՞նչ ես ասում, սեղանը բացե՞նք... Ամեն ինչ բերել ենք...

Մարտիրոս - Թող խոսեն պրծնեն, նոր...

Մագդա - Եղավ, ցավդ տանեմ:

Մարիամ - *(Ուշքի է եկել: Մարջանյանին):* Ղեկավարիր, Վահե...

Մարջանյան - Ես քեզ ինչպե՞ս թողնեմ:

Մարիամ - Ես ինձ արիությամբ կպահեմ... Գնա, բարեկամս...

(Մարջանյանը մոտենում է թմբին):

Մարջանյան - Բարեկամներ, քիչ առաջ... *(Մարտիրոսին):* Ինձ կոնյակ լցրեք: Ի՞նչ... Այո, քիչ առաջ մենք հողին հանձնեցինք, թող թույլ տրվի ասել, մասունքները մի զարմանալի մարդու, որն, ըստ էության, բարձր ու վեհ անձնավորություն էր և իր գոյությամբ նոր շող էր ավելացնում աշխարհի լույսին: Նա հեռացավ մեզանից իր ուժերի ծաղկման շրջանում, հեռացավ բառիս բուն և փոխաբերական իմաստներով, բայց հեռացավ պսակված փառքի լուսապսակով, գնաց դեպի դարերը, վսեմ ապագան...

Մագդա - *(Մոտենալով Մարտիրոսին):* Սեղանը բացեմ, հա՞...

Մարտիրոս - Շուտ է, շուտ է...

Մագդա - Ո՞նց է շուտ, մարդը կոնյակ է ուզում... դե, լավ, լավ, ցավդ տանեմ...

Մարջանյան - Նա հեռացավ մեզանից, բայց մեզ թողեց իր շենշող աշխարհը, արգասիքը իր բազում անքուն գիշերների և տքնության և եթե ըստ ամենայնի այսօր մենք ըմբոշխնում ենք...

Մարտիրոս - Ինչ ենք անո՞ւմ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոկրատ - Ըմբոշխնում ենք, այսինքն՝ վայելում ենք, էլի...

Մարջանյան - Այո, այո, Մարտիրոս քեռի, եթե մենք այսօր ըմբոշխնում ենք մեր նոր կենցաղը, եթե ի հեճուկս նրա ստեղծագործական ոխերիմ հակառակորդների, մենք արդեն այսօր բնակվում ենք «Ապագայի քաղաքում», ապա դրա համար պարտք ենք Շավարշ Խանոյանի վառ երևակայությանը, անհողդողդ աջին, հայրենասեր ոգուն, առինքնող հանճարին: Այսօր դեռևս մթության քողով վարագուրված է այն հարցը, թե դժբախտ պատահա՞ռն էր արդյոք պատճառը , որ նրա բազմաչարչար մարմինը հայտնվեց Հրազդան գետի սև կոհակներում, թե աշխարհից հոգնած նա ինքն է նետվել դժխեմ ալյակների մեջ: Սակայն էականը դա չէ: Նրա մարմինը ոչ ևս է, բայց մեզ հետ է հոգին, որն անտարակույս սավառնում է ապագայի քաղաքի երախտապարտ և սգավոր բնակիչների գլխավերևում:

Սոկրատ - Ա՜խ, ինչ լեզու ունի...

Մարտիրոս - Հա, քար կծակի:

Մարջանյան - Ոմանք, որ խարխափում են տգիտության խավարում, կարող են ասել, թե եթե նա ինքնասպան է եղել, ուրեմն այր էր երկչոտ ու անարի: Սին մտածելակերպ: Ո՞վ գիտե, թերևս խորհել ու համոզվել է, որ անկարող է ստեղծել «Ապագայի քաղաքից» առավել գեղանի ու պաճույճ մի կառույց և այդ պատճառով է հրաժեշտ տվել աշխարհին: Ահա տրամաբանությունը: Նա գլոբալ մտածողության տեր անհատ էր և այլ կերպ գոյատևել չէր կարող: Արդ ես բարձրացնում եմ իմ գավաթը, կոնյակն ի՞նչ եղավ, Մարտիրոս քեռի, և լռելյայն ըմպելով հարգում հիշատակը ժամանակակից ճարտարապետության մեծ երախտավորի, մեր սիրելի և անմոռանալի Շավարշ Խանոյանի:

Սոկրատ - Ա՜խ, ափսոս ծափ տալ չի կարելի:

Մագդա - Սեղանը բացե՞նք...

Մարտիրոս - Իմ խոսելուց հետո:

Մարջանյան - *(Մարիամին):* Տիկին, ընդունեք խորին ցավակցություններս...

Մարիամ - Շնորհակալություն, ազնիվ բարեկամ:

(Մոտ է գալիս Ջալալյանը):

Ջալալյան - Ես բախտ եմ ունեցել... լինելու Շավարշ Խանոյանի աշակերտն ու զինակիցը: Այո, այո, բարեկամներ, զինակիցը, որովհետև այն, ինչ անում էր իմ ուսուցիչն ու բարեկամը, կռիվ էր, մենամարտ հնի և հնացածի դեմ, քարացած մտածողության դեմ, միջակության դեմ, հանուն նոր կյանքի, նոր կենցաղի: Նրա «Ապագայի քաղաքը», որտեղ բնակվում ենք մենք, և որն, ավա՜ղ, անավարտ մնաց, նոր և համարձակ խոսք է ժամանակակից ճարտարապետության մեջ: Ուշադրություն դարձրեք, թե մեծ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ճարտարապետը ինչ հմտությամբ է օգտագործել տեղանքը, ինչպես է նոր քաղաքը ձուլել բնությանը և լույսի ու ստվերի հանճարեղ զուգակցումով հասել մի զարմանալի ներդաշնակության: Եվ հիմա նա չկա: Հանգիստ ննջիր, մեր մեծ բարեկամ և ընկեր, ու հավատա, որ քո աշակերտները կշարունակեն քո գործը: Թող հողը թեթև լինի քո մասունքների վրա:

Մարիամ - Ապրես, ապրես, Արմեն...

Մագդա - Ընկեր Ջալալյան, հիմա դուք եք շարունակելու ընկեր Խանոյանի գործը, չէ՞: Այսինքն ձեզ են գլխավոր ճարտարապետ նշանակելու, հա՞:

Ջալալյան - Թերևս, թերևս, տեսնենք:

Մագդա - Հա, ցավդ տանեմ, բա ո՞ւմ պիտի նշանակեն: Մութ հո չի՞: Հիմա մեքենաները ո՞րտեղ դնենք:

Ջալալյան - Հետո, հետո... այստեղ դնելու... այսինքն խոսելու տեղը չէ:

Մագդա - Հա, ցավդ տանեմ, հետո կխոսենք... Թող հողը թեթև լինի ընկեր Խանոյանի վրա:

(Մարտիրոս քեռին հագում է):

Մարտիրոս - Ես անգրագետ մարդ եմ: Սիրուն խոսքեր չեմ կարող ասել: Ինչ որ ուզում եմ ասել, իմ սրտի մեջ է, այ էստեղ ու էստեղ էլ կմնա: Հարևան, հարևան, բա քո արածն արա՞ծ էր: Ո՞ւր էիր գնում, հարևան, ասեիր, ես էլ քեզ հետ գայի, հարևան: Էդ ինչի, որ շուկա էիր գնում, ասում էիր միասին գնանք, հարևան: Բա հիմա ես ո՞նց ապրեմ, հարևան, որ գյուղ գնամ, ի՞նչ պատասխան տամ քո սիրած սարերին, դաշտերին, քո քանդած եկեղեցուն, հարևան...

Սոկրատ - Եկեղեցին ինչո՞ւ էր քանդում, հարևան, ըմմ... Մարտիրոս քեռի:

Մարտիրոս - Քանդում էր, որ սովորի, թե ինչպես պետք է սարքել, տղա ջան: Փոքր ժամանակ էլ էդպես էր, քանդում էր ամեն ինչ: Բա հիմա քո փոխարեն ո՞վ պետք է քանդի, հարևան... լույս իջնի գերեզմանիդ...

Մագդա - Սեղանը բացե՞նք...

Մարտիրոս - Դեռ խոսում եմ, այ աղջի: Մխիթարություն, Մարիամ քույրիկ, աստուծով մխիթարվեք, նրա չապրած տարիները քեզ, Արգամ, մեծ հոր արժանավոր զավակ...

Արգամ - Հայրիկ, հայրիկ...

Սոկրատ - Հարյուր անգամ ասացի՝ կլառնետս բերեմ... հիմա իսկը տեղն էր, էլի...

Մարջանյան - Կլառնետ, այստե՞ղ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սոկրատ - Ինչի՞, ընկեր Մարջանյան, շատ էլ սիրում էր, իրա համար էնքան եմ նվագել...

Մագդա - Սեղանը բացե՞նք...

Մարտիրոս - Բաց արա... ինչ որ կա, դիր... Ձեյթուն էլ կա, ես տեսել եմ...

Մագդա - Վայ, հո տուն չե՞մ տանելու, ցավդ տանեմ...

(Բացում է մի այլ կապոց, արագ-արագ դասավորում օղու, կոնյակի շշերը, բաժակները, ուտելիքները):

Մարջանյան - Հարկ է, որ դուք խոսեք, տիկին Մարիամ...

Մարիամ - Այդպե՞ս եք կարծում, բարեկամս...

(Գլուխը բարձր մոտենում է գերեզմանին):

> Հարգելի բարեկամներ, հարևաններ, շնորհակալություն ձեզ, որ մեզ հետ եք մեր ընտանիքին հասած մեծ դժբախտության այս ծանր պահին: Ես խնդրում եմ, որ մեզ հետ լինեք միշտ: Այո, չկա իմ պաշտելի ամուսինը, ձեր ուսուցիչը, բարեկամը, հարևանն ու ընկերը, բայց նրա ընտանիքը կա: Մի լքեք մեզ, խոստացեք, որ հաճախ կայցելեք մեր տուն... այն տունը, որտեղ իր կյանքի վերջին տարիներն է անցկացրել մեծ ճարտարապետն ու քաղաքացին:
>
> Ես գիտեմ, մի առանձին հաճույք չէ այցելել այրի և անմխիթար մի կնոջ: Բայց եթե իմ սիրելի ամուսինը հնարավորություն ունենար ձեզ հայտնելու իր վերջին կամքը... Խոսիր, անխիղճ, մի բան ասա... քեզ ի՞նչ պատահեց... չէ՞ որ առաջ չէիր թողնում, որ ես մի բառ ասեմ... Բայց նա լուռ է... Այո, եթե իմ սիրելի ամուսինը հնարավորություն ունենար ձեզ հայտնելու իր վերջին կամքը, նա հենց այդպես էլ կասեր... Միայնակ մի թողեք իմ կնոջը... Լսո՞ւմ եք, քեռի Մարտիրոս, ընկեր Ջալալյան և հատկապես դուք, սիրելի Վահե, իմ ազնիվ բարեկամ: Հանգուցյալը շատ բարձր էր գնահատում ձեզ...

Մարտիրոս - Դա էլ խո՞սք է, Մարիամ քույրիկ:

Ջալալյան - Լույսի պես պարզ է, տիկին:

Մարջանյան - Ես երբեք, երբեք ձեզ մենակ չեմ թողնի, Մարիամ...

Մագդա - Բաժակները լցնե՞մ...

Մարտիրոս - Լցրու, լցրու, մոտեցեք, մոտեցեք, արաղ լցրու, Մագդա... Դե, ժողովուրդ, աստծու կարգ է, ամեն մեկս մի-մի բաժակ... ողորմի խմենք...

Մարջանյան - Ինձ կոնյակ, եթե կարելի է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մարտիրոս - Խաշլամա էլ դիր, այ աղջի... Հրեն ամանը... բեր, բեր, դեռ տաք կլինի...

Աբելյան - *(Միայնակ ու լուռ կանգնած է մի կողմում: Ասում է ատամների տակից):* Ո՜նց կերան մարդուն...

Մարիամ - Այո, այո, կերեք, կերեք, թանկագին բարեկամներ, եթե հարգում եք ինձ, եթե հարգում եք իմ պաշտելի ամուսնու հիշատակը, կերեք...

(Նորից լսվում է փողային նվագախմբի նվագը: Բարձր ու զիլ հնչում են ծնծղաները):

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

(Քննիչ Հակոբ Սաթյանի առանձնասենյակը: Նա և Յոլակ Աբելյանը):

Սաթյան - Զեկուցիր:

Աբելյան - Գործի տվյալները հետևյալն են: «Ապագայի քաղաքի» գլխավոր ճարտարապետ Շավարշ Խանոյանը սույն թվականի մայիսի 18-ին սովորականի պես գնացել է աշխատանքի: Օրվա վերջում վարորդին ազատ է արձակել, ասելով, թե ուզում է ոտքով տուն գնալ... Սակայն տուն չի հասել: Նրա կինը, ըստ իր հայտարարության, դպրոցում երեկույթի մասնակցելուց հետո, տուն է վերադարձել երեկոյան ժամը 21 - ի սահմաններում: Եվ խիստ զարմացել է՝ տեսնելով, որ ամուսինը դեռևս չկա: Հոր վերաբերյալ որևէ տեղեկություն չի ունեցել նաև Արգամը, որը հայտնվել է գիշերվա ժամը 2-ին: Առավոտյան մի քանի ծանոթների ու բարեկամների զանգահարելուց հետո Մարիամ Խանոյանը հայտարարություն է տվել մեր ներքին գործերի բաժնին, իր ամուսնու՝ Շավարշ Խանոյանի, անհետանալու կապակցությամբ: Դեպքից երեք օր անց, մայիսի 21-ին քրեական հետախուզության բաժանմունքի մեր աշխատողները Հրազդանի կիրճում, գետի ձախ ափին, բացօթյա ռեստորանի դիմաց, թփերի մեջ հայտնաբերել են տղամարդու հագուստներ: Դեպքի վայրը հրավիրված Մարիամ Խանոյանը, նրա որդին՝ Արգամը, վարորդ Սոկրատը ընթերակաների ներկայությամբ վճռականորեն պնդել են, որ այդ հագուստները՝ այսինքն մուգ կապույտ գույնի կոստյումը... «Մասիս» ֆիրմայի...

Սաթյան - Մանրամասները պետք չեն:

Աբելյան - Մի խոսքով հայտարարել են, որ այդ իրերը պատկանում են Շավարշ Խանոյանին և անհետանալու օրը նրա հագին են եղել:

Սաթյան - Փաստաթղթե՞ր:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աբելյան - Բոլոր փաստաթղթերը եղել են բաճկոնի գրպաններում, ինչպես նաև քսանութ ռուբլի դրամ և կինոյի երկու տոմս՝ հենց նույն մայիսի 18-ի երեկոյան ժամը ութի սեանսի համար։

Սաթյան - Օգտագործվա՞ծ են։

Աբելյան - Ոչ։

Սաթյան - Իսկ ո՞ւմ հետ նա պետք է կինո գնար։

Աբելյան - Չի պարզվել։ Մարիամ Խանոյանը հայտարարել է, որ այդ տոմսերից տեղեկություն չունի։

Սաթյան - Սիրուհի՞...

Աբելյան - Բացառված է։ Ճարտարապետը շատ պարկեշտ մարդու համբավ ուներ։

Սաթյան - Հը՛ըմ... Ձեր մեկնակերպե՞րը...

Աբելյան - Վերսիայի՞ իմաստով... Հնարավոր է և ինքնասպանությունը, և՛ սպանությունը, և՛ դժբախտ պատահարը...

Սաթյան - Դժբախտ պատահա՞ր... ենթադրում եք, թե նա ցանկություն կունենար լողալու գարնանային այդ եղանակին և կարող էր խեղդվել այդ մի բուռ ջրո՞ւմ...

Աբելյան - Մարդիկ կան, որ ձմեռն էլ են լողանում սառույցի մեջ բացված անցքերի մեջ։ Ինչ վերաբերում է խեղդվելուն, ապա նախ՝ վարարումներ են եղել, և ապա հնարավոր է, որ գլուխը դիպել է քարին, կամ սառը ջրի մեջ կանգ է առել սիրտը։

Սաթյան - Այո, հնարավոր է, բայց դիա՞կն ուր է, դիակը, ինձ դիակը բերեք։

Աբելյան - Որտեղի՞ց, ընկեր Սաթյան...

Սաթյան - Հը՛ըմ... Իսկ ինքնասպանության համար ի՞նչ հիմքեր կան...

Աբելյան - Եթե դուք հոգեհացին ներկա լինեիք, կհամոզվեիք, որ այդպիսի շրջապատում հնարավոր չէ ապրել և չմտածել ինքնասպանության մասին։

Սաթյան - Փաստերը։

Աբելյան - Ինքնասպանության վերսիան ստուգելու համար, նախ՝ մեզ անհրաժեշտ էր իմանալ, թե ով կամ ինչը կարող էր ճանաչված ճարտարապետին, պատկառելի դիրքի հասած ու հարգանք վայելող անձնավորությանը ինքնասպանության մղել։ Այդ նպատակով, ես սկսեցի մանրակրկիտ ուսումնասիրել նրա շրջապատը և ծանոթացա

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

բոլոր այն ստորագրված և անստորագիր նամակներին, որ վերջին հինգ տարում գրվել են նրա մասին:

Սաթյան - Իսկ ինչպե՞ս կռահեցիք, որ նրա վերաբերյալ նամակներ կան:

Աբելյան - Իսկ ո՞ւմ մասին չկան: Ձեր դեմ չե՞ն գրում, ի՞նչ է: Անձամբ ես քիչ առաջ վարչությունից եկա. քրքրում էին երկու ժամ:

Սաթյան - Հը՛մ... Իսկ որտե՞ղ գտաք այդ նամակները:

Աբելյան - Մի մասը հենց իր առանձնասենյակի չհրկիզվող պահարանում էր: Այդ իմաստով ինձ մեր դրվածքը շատ է դուր գալիս, ընկեր Սաթյան: Ում մասին բողոքում են, նամակներն էլի նրան են ուղարկում: Հեշտ է լինում գտնելը: Մի քանի նամակ էլ տան գրասեղանի դարակներում գտա: Իսկ հիմնական մասը ժողովրդական վերահսկողության կոմիտեում ընթացքի մեջ էր:

Սաթյան - Հետո՞...

Աբելյան - Բոլորն ուղարկեցի դակտիլոսկոպիկ և ձեռագրային փորձաքննության, ներկայացնելով նաև կասկածյալ հեղինակների ձեռագրերն ու մատնահետքերը:

Սաթյան - Աբելյան, իսկ ինչո՞ւ հատկապես ուսումնասիրեցիք հինգ տարվա նամակները և ոչ թե, ասենք, վեց...

Աբելյան - Որովհետև ընդամենը հինգ տարի է, ինչ մրցանակի է արժանացել նրա «Ապագայի քաղաք» կոչվող նախագիծը:

Սաթյան - Իսկ ավելի վաղ չէի՞ն գրում, ինչ է...

Աբելյան - Դե մինչ այդ նա որևէ խոշոր, աչքի ընկնող գործ չէր արել, ինչո՞ւ պետք է գրեին...

Սաթյան - Չհասկացա...

Աբելյան - Բարձրացած ճյուղերն են կտրում, ընկեր Սաթյան...

Սաթյան - Նախա՞նձ:

Աբելյան - Հայ ենք, չէ՞...

Սաթյան - Ավելորդ բաներ եք ասում, Աբելյան: Վկաներին դեռ չե՞ք հարցաքննել:

Աբելյան - Սպասում էի ձեր կարգադրությանը:

Սաթյան - Անձամբ ո՞ւմ եք կասկածում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աբելյան - Բոլորին միասին և ամեն մեկին՝ առանձին-առանձին:

Սաթյան - Եվ կարող եք մեղադրանք առաջադրել ինքնասպանության հասցնելու համա՞ր...

Աբելյան - Համաձայն հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի: Եթե իհարկե բացառվի սպանության վերսիան:

Սաթյան - Ուրեմն հնարավոր է նաև, որ տեղի է ունեցել սպանությո՞ւն...

Աբելյան - Նույնքան հավաստի է, որքան ինքնասպանության վերսիան: Նրանցից յուրաքանչյուրը կուզենար, որ Շավարշ Խանոյանը վերացվեր ասպարեզից: Այդ են ապացուցում մատնագրերն ու զրպարտագրերը:

Սաթյան - Գրողը տանի, յուրատեսակ մաֆիա է, ինչ է...

Աբելյան - Չեմ ուզում ավելորդ բաներ ասել, ընկեր Սաթյան...

Սաթյան - Հը՛մ... Ուրեմն դուք գտնում եք, որ հարցը պտտվում է «Ապագայի քաղաքի» շուրջը՞: Այդ դեպքում կարծում եմ, որ առաջինը պետք է լսել Շավարշ Խանոյանի տեղակալին: Ինչպես էր ազգանո՞ւնը:

Աբելյան - Արմեն Ջալալյանը... *(Նայում է ժամացույցին):* Հենց հիմա մտավ ընդունարան...

Սաթյան - *(Ծիծաղում է):* Ապրեք, Աբելյան... Թող սպասի... Իսկ դուք ինձ բերեք այդ... այդ բոլոր նյութերը...

Աբելյան - Ձեր սեղանին են, ընկեր Սաթյան... այս թղթապանակի մեջ...

Սաթյան - Հը՛մ... Եվ դուք զարմանում եք, որ ձեր մասին է՞լ են գրում...

Աբելյան - Նկատի ունեք բարձրացած ճյուղե՞րը...

(Երկուսն էլ ծիծաղում են):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

(Հակոբ Սաթյան: Ներս է մտնում Արմեն Ջալալյանը):

Ջալալյան - Բարև ձեզ:

Սաթյան - Բարև ձեզ, նստեցեք:

Ջալալյան - Շնորհակալություն: Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

Սաթյան - Նախ և առաջ ինձ հետաքրքրում է մի հարց. ի՞նչ է իրենից ներկայացնում «Ապագայի քաղաքը»:

Ջալալյան - «Ապագայի քաղաքը»... մի նախադասությամբ եթե ասեմ, դա ինքնատիպ մտածողության տեսակետից համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցներից մեկը կարող է համարվել:

Սաթյան - Իսկ եթե ավելի կոնկրետ:

Ջալալյան - Գիտեք ինչ, կոնկրետ հնարավոր չէ: Ամբողջ հարցն այն է, թե ինչ տեսանկյունով ենք դիտում նախագիծը: Դա նոր խոսք է, նոր հայեցակետ: Հանգուցյալ Շավարշ Տիգրանիչը գտնում էր, որ քաղաքաշինության ապագան հենց «Ապագայի քաղաքն է»: Նա գտնում էր, որ եթե մեր ընդհանուր նպատակն այն է, որպեսզի մարդիկ ապրեն համերաշխ, խաղաղ ու սիրով, ուրեմն անհրաժեշտ է, որ նրանք շատ շփվեն իրար հետ և ոչ թե թաքնվեն հաստ պատերի ետևում:

Սաթյան - Հետաքրքիր է:

Ջալալյան - Այո: Նույնիսկ հարազատները, երբ երկար ժամանակ չեն տեսնում միմյանց, օտարանում են, ասում էր նա: Իմ քաղաքում մարդիկ միշտ պետք է տեսնեն իրար, նրանք մեկմեկու պետք է հանդիպեն և՛ շենքում, և' ընդհանուր ճաշարանում, և՛ միկրոքաղաքի կինոթատրոնում, և' լվացքատանը: Ինչո՞ւ պետք է, ասում էր նա, ամեն մեկը իր նեղլիկ խոհանոցում ճաշ եփի իր համար: Ճաշարանի կերակուրները քեզ չե՞ն բավարարում, ինքդ եփիր հենց ճաշարանի ընդարձակ խոհանոցում և տես, թե ուրիշները ինչ և ինչպես են եփում, սովորիր...

Սաթյան - Իսկապես ինքնատիպ է:

Ջալալյան - Այո: Բայց ամենակարևորը բնակարաններն են: Շավարշ Տիգրանիչը այնպես է նախագծել, որ ննջարաններից բացի մնացած բոլոր սենյակները գտնվեն հարևանների աչքի առաջ: Մարդիկ բնականաբար քաշվում են իրարից, ասում էր նա, ուրիշների ներկայությամբ իրենց զուսպ ու ձիգ են պահում, ավելի կիրթ են վարվում ընտանիքի մյուս անդամների հետ, ավելի համբերատար են դառնում, սիրալիր և հոգատար...

Սաթյան - Սակայն ավելի հաճախ ձևացնում են...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ջալալյան - Ոչինչ, ասում էր Շավարշ Տիգրանիչը, թող ձևացնեն: Սկզբում կձևացնեն, կձևացնեն, իսկ հետո արդեն սովորություն կդառնա: Իսկ ո՞վ չգիտե, որ սովորությունը վերածվում է բնավորության:

Սաթյան - Մի քիչ միամիտ չէ՞: Եթե ընտանիքում վեճ ծագի, ամուսինները ննջարանում չե՞ն կարող վիճել, ինչ է...

Ջալալյան - Հենց այդ նկատառումով ննջարանները փոքրիկ են նախագծված և հետո, ասում էր Շավարշ Տիգրանիչը, ննջարանն այնուամենայնիվ այլ զգացումներ է առաջացնում մարդկանց մեջ, տրամադրում է անդորրի, խաղաղության և միասնության...

Սաթյան - Հըմ... Եթե չեմ սխալվում, դուք հենց «Ապագայի քաղաքում» եք բնակվում:

Ջալալյան - Դա բնական է: Շավարշ Տիգրանիչն ասում էր, որ կամուրջ կառուցողն առաջինը պետք է անցնի իր կամրջի վրայով: Այդ նկատառումով էլ հենց առաջին մասնաշենքում նա բնակեցրել է հիմնականում մեզ՝ ճարտարապետներին և շինարարներին... և մի քանի այլ ընտանիքների՝ փորձի համար...

Սաթյան - Եվ արդյունքը գոհացուցի՞չ է:

Ջալալյան - «Ապագայի քաղաքի» շինարարությունը դեռ ավարտված չէ, սակայն արդեն զգացվում է նոր կենցաղի բարերար ազդեցությունը:

Սաթյան - Փոխադարձ սիրո և համերաշխությա՞ն առումով:

Ջալալյան - Այո, նաև այդ առումով: Ափսոս, որ դուք ներկա չէիք գերեզմանատանը և հոգեհացի արարողությանը: Այդ պայմանական, ես նույնիսկ կասեի՝ սիմվոլիկ թաղումը «Ապագայի քաղաքի բնակիչների համերաշխության, փոխադարձ հարգանքի և սիրո վառ դրսևորումն էր: Այո, այո, ես կասեի հոյակապ, օրինակելի և նախանձելի թաղում էր...

Սաթյան - Այո, ինչ ճիշտ է ճիշտ՝ մենք հիանալի թաղել գիտենք...

Ջալալյան - «Ապագայի քաղաքում» առավել ևս...

Սաթյան - Ընկեր Ջալալյան, ես ուշադրություն դարձրի, որ դուք ամեն անգամ նշում էիք, թե Շավարշ Տիգրանիչն այսպես ասաց, Շավարշ Տիգրանիչն այսպես էր ասում: Ինչպե՞ս հասկանանք դա: Դուք ուրի՞շ կերպ կասեիք, այսինքն ձեր կարծիքն ա՞յլ է:

Ջալալյան - Շավարշ Խանոյանն իմ ուսուցիչն է:

Սաթյան - Եվ դրանով ամեն ինչ ասվա՞ծ է:

Ջալալյան - Այո: «Ապագայի քաղաքի» նախագծի համար մրցանակ ստացած հեղինակների ցուցակում իմ ազգանունը երկրորդն է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սաթյան - Եվ դուք երբեք նրա հետ տարաձայնությունների մեջ չե՞ք եղել։

Ջալալյան - Ստեղծագործական վեճեր շատ են եղել, բայց հարցը տարաձայնության չի հասել։

Սաթյան - Իսկ որպես մարդ, քաղաքացի, հիմնարկի պետ, գործընկեր...

Ջալալյան - Մենք իդեալական փոխհարաբերություններ մեջ էինք։

Սաթյան - Հըմ... Վերջին անգամ ե՞րբ եք տեսել նրան։

Ջալալյան - Վերջին անգա՞մ... Վերջին անգամ... Ինչ տարօրինակ է հնչում, չէ՞... Վերջին անգամ ես նրան տեսել եմ մայիսի 18-ին, այո, այո, հենց այդ դժբախտ օրը։

Սաթյան - Երբ և ինչ հանգամանքներում։

Ջալալյան - Հիմա ասեմ... առավոտյան... նա հենց որ աշխատանքի էր գալիս, առաջինն ինձ էր զանգահարում և հրավիրում իր առանձնասենյակը՝ օրվա խնդիրները քննարկելու...

Սաթյան - Եվ ի՞նչ խնդիրներ էիք քննարկում այդ օրը...

Ջալալյան - Հիմա ասեմ... սովորական, ամենասովորական... չեմ էլ հիշում։

Սաթյան - Հիշեք, հիշեք, խնդրում եմ, դա շատ կարևոր է։

Ջալալյան - Իսկապե՞ս... Հա, մեր ճարտարապետներից մեկը ուզում էր արձակուրդ գնալ, Շավարշ Տիգրանիչը համաձայն չէր, համոզեցի։

Սաթյան - Ուրի՞շ...

Ջալալյան - Ուրի՞շ... հիմա ասեմ... հա, նա խնդրեց, որ իր փոխարեն ես մասնակցեմ շրջսովետի գործկոմի նիստին։

Սաթյան - Ինչո՞ւ։

Ջալալյան - Անտրամադիր էր, թե զբաղված, հիմա չեմ հիշում։ Այդպես հաճախ էր պատահում։

Սաթյան - Որ անտրամադի՞ր էր լինում։

Ջալալյան - Ոչ, որ նրա փոխարեն ես էի մասնակցում զանազան նիստերի և խորհրդակցությունների։ Դե, տեղակալը հենց դրա համար է։

Սաթյան - Իսկ այդ օրն ինչպե՞ս էր նրա տրամադրությունը։ Մտազբաղ չէ՞ր։ Որևէ վիշտ կամ, հոգս չունե՞ր։ Որևէ տարօրինակ, արտասովոր բան չնկատեցի՞ք նրա խոսակցության կամ պահվածքի մեջ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ջալալյան - Հիմա ասեմ... ո՛չ, ոչ, ոչ մի տարօրինակ բան...

Սաթյան - Եվ դուք բաժանվեցիք հաշտ ու խաղա՞ղ...

Ջալալյան - Ինչպե՞ս... Այո, իհարկե, ինչպես միշտ... Սպասեցեք, դուք ենթադրում եք, թե ե՞ս եմ նրան հասցրել ինքնասպանության...

Սաթյան - Իսկ ձեզ ո՞վ է ասել, թե դա ինքնասպանություն է:

Ջալալյան - Ուրեմն սպանությո՞ւն է:

Սաթյան - Այդ բոլորը կպարզի քննությունը: Ուրեմն բաժանվեցիք հաշտ ու խաղաղ:

Ջալալյան - Այո:

Սաթյան - Իսկ Շավարշ Խանոյանի քարտուղարուհին ցուցմունք է տվել, որ ձեր հեռանալուց հետո գլխավոր ճարտարապետը փակվել է իր առանձնասենյակում և գրեթե մեկ ժամ ոչ ոքի չի ընդունել: Ի՞նչ կասեք այդ մասին... Ըստ որում, երբ բացել է դուռը, անանուխի կաթիլների հոտ է տարածված եղել սենյակում...

Ջալալյան - Ո՞վ է ասել... Մանի՞կը... Չի կարող պատահել... Այսինքն... Շավարշ Տիգրանիչը հաճախ էր բողոքում սրտից... Գուցե...

Սաթյան - Ուրեմն դուք դրա համար առիթ չե՞ք տվել:

Ջալալյան - Ի՜նչ եք ասում: Ձեզ ծանոթ չեն մեր փոխհարաբերությունները: Նա իմ ուսուցիչն էր, և ես... ես աստվածացնում էի նրան: Ես ամենուրեք տարածում էի նրա փառքը:

Սաթյան - Եվ այդ փառքը տարածելո՞ւ նպատակով էիք անստորագիր նամակներ ուղարկում վերադաս կազմակերպություններին...

Ջալալյան - Ե՞ս... ինչպե՞ս եք համարձակվում... Սա՞ ինչ քննության ձև է... Դա զրպարտություն է... Ես կգրեմ, կբողոքեմ ուր հարկն է...

Սաթյան - Կասկած չունեմ: Բայց երբ գրեք, մեքենագրելու համար այլևս չփորձեք օգտվել ձեր հարևանուհու գրամեքենայից: Նախ այդ գրամեքենան հիմա մեզ մոտ է՝ իբրև իրեղեն ապացույց, և ապա որոշ տառեր փչացած են... ինչի է նման, որ ամենուրեք «թ» տառի փոխարեն հարցական նշան եք դնում:

Ջալալյան - Ի՞նչ գրամեքենա, ի՞նչ գրամեքենա... Գուցե հենց այդ հարևանուհին է գրել, նա էլ է մեզ մոտ աշխատում... հնարավոր չէ՞, ինչ է...

Սաթյան - Հնարավոր է, իհարկե, բայց չգիտենք ինչ անել ձեր մատնահետքերը... Գուցե ծանոթանա՞ք փորձագետի եզրակացությանը, անսխալ է մեքենագրված...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Լռություն) :

Ջալալյան - Պետք չէ:

Սաթյան - Ուրեմն գուցե պատմե՞ք, թե իրականում ինչ է տեղի ունեցել սույն թվականի մայիսի 18-ին, ձեր հանդիպման ժամանակ: Ըստ որում հարկ եմ համարում պաշտոնապես զգուշացնել ակնհայտ սուտ ցուցմունք տալու համար, որը քրեապես հետապնդելի արարք է և պատժվում է օրենքով:

Ջալալյան - Ծխել կարելի՞ է:

Սաթյան - Խնդրեմ: Դետեկտիվ գրքերից և կինոնկարներից ձեզ հայտնի պետք է լինի, որ նման իրադրության մեջ թե հարցաքննողը և թե հարցաքննվողը պարտադիր կերպով պետք է ծխեն:

Ջալալյան - Լավ: Պետք չէ: Կպատմեմ... Ուրեմն մայիսի 18-ի առավոտյան ուղիղ ժամը իններին ներքին հեռախոսով ինձ զանգահարեց գլխավոր ճարտարապետը և կանչից իր առանձնասենյակը:

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

(Գլխավոր ճարտարապետ Շավարշ Խանոյանի առանձնասենյակը: Գրասեղան, հեռախոսներ, բազկաթոռներ, անկյունում ցածրիկ մի սեղան՝ հեռախոսի մեկ սարքով: Արմավենի, գրապահարաններ, թանձր վարագույրներ, պատերին զանազան գծագրեր, փոքրիկ վարագույր, որի տակ թաքնված է «Ապագայի քաղաքի» նախագիծը: Սենյակում հուզված ետ ու առաջ է քայլում Շավարշ Խանոյանը: Ներս է մտնում նրա տեղակալ Արմեն Ջալալյանը):

Ջալալյան - Բարի լույս, Շավարշ Տիգրանիչ...

(Խանոյանը շրջվում, ձեռքերը մեջքին ծալած նայում է նրան, նայում է սևեռուն, կկոցում է աչքերը, մոտենում, թեքվում է, նայում է կոշիկներին, շրջանցում է, նայում թիկունքին, նորից կանգնում է նրա դիմաց: Ջալալյանը նրա հայացքի ուղղությամբ զարմացած դիտում է իրեն. հո որևէ բան սխալ չի՞ հագել):

Խանոյան - *(Խաչակնքում է):* Մայրս ասում էր՝ եթե սատանայի ես հանդիպում, խաչակնքիր, անմիջապես կանհետանա: Ինչո՞ւ չես անհետանում, Արմեն Ջալալյան: Դու պարտավոր ես անհետանալ...

Ջալալյան - *(Ժպտալով):* Լավ տրամադրության մեջ եք, Շավարշ Տիգրանիչ: Ուրեմն օգտվենք առիթից, թույլ տվեք, որ ճարտարապետ Սանթրոսյանը արձակուրդ ստանա... Մի մերժեք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խանոյան - Ես ինչպե՞ս կարող եմ մերժել քեզ, սիրելի Արմեն, ես երբևիցե մերժե՞լ եմ քեզ...

Ջալալյան - Շնորհակալություն, Շավարշ Տիգրանիչ...

Խանոյան - Այ, նայում եմ քեզ, և ակամա շեքսպիրյան տրամադրություն է պատում ինձ: Այ, որ այսպես նայում եմ... կարծես թե մարդ ես դու, սովորական մարդ... գլուխ ունես, մարմին, աչքեր ունես, ականջներ և նույնիսկ քիթ ունես...

Ջալալյան - Ուրեմն դուք չե՞ք կատակում: Ի՞նչ է պատահել, Շավարշ Տիգրանիչ:

Խանոյան - Երբ ներս մտար, որոշեցի ստուգել: Ասացի անպայման պոչ կունենա, որ խնամքով թաքցրել է, և փոքրիկ, ա՛յ այսքան պոզեր կունենա, որ խիտ մազերի մեջ չեն երևում և ոտքերի փոխարեն էլ, իհարկե, կճղակներ կլինեն... Բայց՝ չէ, ոչ պոզ ունես, ոչ պոչ և ոչ էլ կճղակ: Որքան էլ տարօրինակ լինի, մարդ ես դու, Արմեն Ջալալյան:

Ջալալյան - Ես արդեն սկսում եմ վիրավորվել: Ի՞նչ է պատահել, Շավարշ Տիգրանիչ, բամբասե՞լ են, ո՞ւմ եք հանդիպել առավոտ վաղ, թե՞ դարձյալ իմ մասին նամակ եք ստացել որևէ բարի կամեցողից:

Խանոյան - Կռահեցիր, ընկեր Ջալալյան, նամակ եմ ստացել: Բայց ոչ թե քո մասին «բարի կամեցողից», այլ իմ մասին, չարակամից, որը կոչվում է Արմեն Ջալալյան:

Ջալալյան - Նամա՞կ, ձե՞զ, ի՞նչ եք ասում...

Խանոյան - Ես ամբողջ գիշեր չեմ քնել, մարդ, ես ամբողջ գիշեր միջանցքի մի անկյունից մյուսն եմ քայլել...

Ջալալյան - Շավարշ Տիգրանիչ, ներեցեք, բայց ես սպասում եմ բացատրության...

Խանոյան - Ուրեմն ես ողջ գիշեր միջանցքի մի անկյունից մյուսն էի քայլում ու մտածում, թե ի՞նչ եմ արել ես, որ Արմեն Ջալալյանը իմ կործանումն է ուզում... Հետո հասկացա, որ դու բոլոր հիմքերն ունեցել ես: Չէ՞ որ ես դեռ ինստիտուտում, հակառակ ոմանց, քո դիպլոմային աշխատանքի ղեկավարը դարձա, ե՛ս քեզ ընդունեցի աշխատանքի նախագծային բյուրոյում, ե՛ս քեզ իմ տեղակալը դարձրի և ապահովեցի բնակարանով, ե՛ս քեզ ներկայացրեցի մրցանակի...

Ջալալյան - Շավարշ Տիգրանիչ...

Խանոյան - Ինձ համար շատ տհաճ է այս բոլորը քեզ հիշեցնելը, բայց ես ինձ թույլ եմ տալիս, որովհետև քեզ հետ խոսում եմ վերջին անգամ...

Ջալալյան - Ինչպե՞ս թե... Եվ... և նախքան ինձ աշխատանքից հեռացնելը, չե՞ք ուզում ասել, թե որն է իմ մեղքը...

Խանոյան - Վերցրու:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Նրան է մեկնում պատճենահան թուղթը):

Ջալալյան - Սա, սա ի՞նչ է...

Խանոյան - Պահիր, պահիր լույսի դեմ ու անմիջապես կհիշես, թե դա ինչ է... Եվ սրանից հետո, երբ նման բաներ ես մեքենագրում, մի մոռացիր ոչնչացնել պատճենահան թղթերը...

Ջալալյան - *(Նայում է, օրորվում է տեղում):* Բայց, բայց... սա թյուրիմա...

Խանոյան - Ավելի մի ընկնիր, քան կաս... Ջուր խմիր, խմիր ու ասա ինձ. իսկապե՞ս ես ճահճացել եմ, ննջում եմ դափնիների վրա, իսկապե՞ս «Ապագայի քաղաքի» իմ նախագիծը պլագիատ է, ճի՞շտ է, որ ես հանուն շահի եմ բնակարան տվել մեր հիմնարկության հետ կապ չունեցող տասնվեց ընտանիքների...

Ջալալյան - *(Գլուխը խոնարհած):* Մե... մեծահոգի եղեք, Շավարշ Տիգրանիչ, թույլ տվեք, որ ես հեռանամ...

Խանոյան - Եվ դու կարո՞ղ ես հեռանալ: Առանց պատասխան տալո՞ւ:

Ջալալյան - Իսկ ի՞նչ կարող եմ ասել. ինչ էլ ասեմ, ավելի ցած չե՞մ ընկնի: Մի՞թե դուք կարող եք ներել իմ ստորությունը: Հիմա ես ինքս ամաչում եմ ինձնից, ատում եմ ինձ... Չգիտեմ, թե ինչպես եղավ, ինչ պատահեց ինձ, ուղեղի մթագնում էր, թե...

Խանոյան - Ուրեմն սա առաջի՞ն դեպքն է, որ գրել ես իմ դեմ:

Ջալալյան - Իհարկե:

Խանոյան - Բայց քո բարձրացրած, այսպես ասած, հույժ հրատապ հարցերի առթիվ երեք անգամ արդեն հանձնաժողով է եկել մեզ մոտ՝ փաստերն ստուգելու... Երեք անգամ ես բացատրագիր եմ գրել, երիցս նվաստացել եմ...

Ջալալյան - Երևի ուրիշներն են գրել, Շավարշ Տիգրանիչ... Իմ մասին քի՞չ են գրել:

Խանոյան - Նույն գրամեքենայո՞վ... Ես այդ նամակներն ամենայն խնամքով պահում եմ ինձ մոտ... ցույց տա՞մ: Դե խոսիր, մարդ աստծո, մի բան ասա, արդարացիր, չէ՞ որ աշխարհում ոչ մի բան աննպատակ չի լինում: Ասա, որ քեզ համոզել են, ստիպել են, ասա, որ պատճառ ունեիր ինձ ատելու: Որևէ բան ասա... թե չէ մի՞թե հնարավոր է հենց այնպես, առանց որևէ շարժառիթի, տարիներ շարունակ թիկունքից հարվածել մարդու...

Ջալալյան - Թող այդպես լինի: Այլևս միևնույն է, ինչ ուզում եք մտածեք, բայց ես կասեմ:

Խանոյան - Դե ասա, ասա, ի՞նչն է եղել պատճառը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ջալալյան - Նախանձը:

Խանոյան - Նախա՞նձը:

Ջալալյան - Նախանձը: Մի զարմացեք, ես ամբողջ կյանքում նախանձել եմ ձեզ...

Խանոյան - Սպասեցեք, բայց ես ե՞րբ եմ առիթ տվել...

Ջալալյան - Իսկ դրա համար ի՞նչ առիթ է պետք: Ես նախանձել եմ ձեզ դեռ վաղուց, դեռ այն ժամանակ, երբ դուք իմ մասին տեղեկություն չունեիք, նախանձել եմ ձեր տաղանդին, նախանձել եմ, որ ընդամենը երեք տարում ավարտեցիք ինստիտուտը, նախանձից թունավորվել եմ, երբ թեկնածուական դիսերտացիայի համար ձեզ միանգամից դոկտորի կոչում շնորհեցին.... խելագարվել եմ, երբ ձեր նախագիծը պետական մրցանակի արժանացավ...

Խանոյան - Բայց ես փառքի չեմ ձգտել, ես չեմ մտածել արդյունքների մասին, ես աշխատել եմ...

Ջալալյան - Ես էլ եմ աշխատել, բայց ոչ մի բան հեշտությամբ չի տրվել ինձ, ինչպես ձեզ: Ես փող տալով եմ բարձրացել, ես անընդհատ թիկունքներ եմ փնտրել, հաճոյացել, սողացել ու գալարվել եմ: Ինչո՞ւ: Ինչո՞ւ: Եվ համոզվել եմ, որ եթե չլինեիք դուք, բոլորովին այլ կերպ կդասավորվեր իմ կյանքը: Ե՛ս կգնայի առջևից, ի՛մ նախագիծը մրցանակի կարժանանար, ի՛նձ դեպուտատ կառաջադրեին, ե՛ս կլինեի գլխավոր ճարտարապետը, ի՛նձ կփնտրեին իբրև թիկունք...

Խանոյան - Բայց... բայց դա զարհուրելի է, դա... դա հրեշավոր մտածողություն է... Այդ մտածողությամբ կարելի է նույնիսկ մարդ սպանել...

Ջալալյան - Դուք ուզում էիք պատճառն իմանալ, ահա՛ պատճառը: Եվ ինչո՞ւ եք այդքան զարմանում: Մի՞թե ես նախանձողներից առաջինն եմ: Հիշեք «Մոցարտն ու Սալյերին»: Ո՞րն էր Սալյերիի մեղքը: Որ նախանձը նրանից վե՞ր էր...

Խանոյան - Իսկ Մոցարտի՞ մեղքը որն էր:

Ջալալյան - Նրա հանճարը: Բոլորն էլ համոզված են, որ եթե իրենց առջևից գնացողը չլիներ, իրենք կլինեին առաջինը: Բոլորն էլ այդպես են մտածում, միայն թե ոչ բոլորը կարող են խոստովանել այդ...

Խանոյան - Եվ դու իմ ուսանողն ես եղել...

Ջալալյան - Այո:

Խանոյան - Եվ դու իմ ուսանողն ես եղել...

Ջալալյան - Այո:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խանոյան - Հին, ազնիվ ժամանակներում քեզ նման աշակերտ ունեցող ուսուցիչը ինքնասպանություն կգործեր: Գնա:

(Պաուզա):

Գնա՛...

Ջալալյան - Դիմո՞ւմ գրեմ... թե մտադիր եք ինձ հանձնել քննչական մարմիններին:

Խանոյան - Գնա...

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Հակոբ Սաթյանի առանձնասենյակը: Քննիչը խոսում է հեռախոսով: Ներս է մտնում Ցոլակ Աբելյանը):

Սաթյան - Դժբախտաբար ոչինչ չեմ կարող ասել: Որոնումները շարունակվում են: Այո: Սիրելի ընկեր, եթե ասեղ լիներ, հավանաբար արդեն գտած կլինեինք, մարդկանց հետ ավելի դժվար է: Գիտեմ, գիտեմ, որ պատասխանը ես եմ տալու, առաջին անգամը չէ: Հարգանքներս:

Աբելյան - Ճարտարապետի համա՞ր էին հետաքրքրվում:

Սաթյան - Հա: Տեր աստված, ինչ հեշտ է վերևից կարգադրելը... Ի՞նչ եղավ... չգտա՞ք...

Աբելյան - Իհարկե, հեշտ է...

Սաթյան - Ի՞նչն է հեշտ...

Աբելյան - Վերևից կարգադրելը...

Սաթյան - *(Ծիծաղում է):* Ինչ ճիշտ է՝ ճիշտ է:

Աբելյան - Չկա, ընկեր Սաթյան, ի՞նչ անենք: Կամակոր կնոջ անեկդոտի նման, նույնիսկ հոսանքն ի վեր էլ ենք փնտրել:

Սաթյան - Համամիութենական հետախուզումի՞ց ինչ լուր:

Աբելյան - Տաշքենդում ու Աստրախանում բռնել են երկու կասկածելի մարդու, բայց արտաքին տվյալները չեն համապատասխանում:

(Ներս է մտնում Մագդան, դուռը մնում է բաց):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մագդա - Բարև ձեզ, գա՞մ։

Աբելյան - Դուռը փակիր, Մագդա։

Մագդա - Փակեմ, ցավդ տանեմ։

Սաթյան - Նստեք։ Տիկին Մագդա, մեզ հետաքրքրում է, թե ինչ փոխհարաբերությունների մեջ եք եղել «Ապագայի քաղաքի» գլխավոր ճարտարապետ Շավարշ Խանոյանի հետ։

Մագդա - Վայ, գետինը մտնեմ, թե ես նրա հետ հարաբերությունների մեջ եմ եղել։ Հարևան մարդ էր. բարև էինք տալիս, բարև առնում։

(Աբելյանը ժպտում է)։

Սաթյան - Հըմ... Երբևէ բողոք կամ նամակ գրե՞լ եք նրա դեմ։

Մագդա - Գրել եմ, ո՞նց չեմ գրեր Դուք լինեիք, չէի՞ք գրի։ Մի տարի է, ինչ պարապ-սարապ ման եմ գալիս, ինչքան ետ գցած փող ունեի՝ հանեցի։ Մենք էլ մարդ ենք, չէ՞, մենք էլ ենք տուն պահում... Աբելյան ջան, դու հո լավ գիտես...

Աբելյան - Ընկեր Սաթյանին դիմիր, Մագդա...

Մագդա - Դիմեմ, ցավդ տանեմ... Ընկեր Սաթյան ջան, իբրև թե «Ապագայի քաղաքը» սարքելուց առաջ ես էնտեղ մի փոքրիկ տրիկոտաժի ցեխ ունեի։ Չորս մեքենա։ Իվանովո-Վոզնեսենսկի քաղաքից էի բերել։

Աբելյան - Դո՞ւ էիր բերել։

Մագդա - Բա ո՞վ, ցավդ տանեմ։

Սաթյան - Սպասեցեք, իսկ ձեր այդ... ցեխը պետական չէ՞ր։

Մագդա - Չէ, կենցաղինն էր։

(Աբելյանը թեքվում, շշնջում է Սաթյանի ականջին)։

Սաթյան - Եթե կենցաղ-սպասարկման վարչությանն էր, ինչո՞ւ մեքենաները վարչությունը չէր տրամադրում...

Մագդա - Տո, նրանք բան են տալի՞ս, ընկեր Սաթյան ջան, մի հատ երաշխավորագիր են տվել ու վերջ, շենքն էլ ենք մենք գտնում, ռեմոնտն էլ ենք մենք անում, մեքենաներն էլ ենք մենք ճարում, թելն էլ ենք մենք բերում... ինչքան փող ունեինք, գործի մեջ դրեցինք... Քանդվեցինք...

Սաթյան - Հետո՞։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մագդա - Էլ հետո՞ մնաց, ընկեր Սաթյան ջան, Շավարշ Խանոյանը իմ ցեխը գցեց պլանի տակ ու քանդեց։ Հարյուր անգամ ասացի՝ ընկեր Խանոյան ջան, էդ քո ապագայի քաղաքում մարդիկ հո տկլո՞ր չեն ման գալու, մի անկյուն էլ ինձ տուր՝ մեքենաներս դնեմ։ Չէ ու չէ, ասաց, իմ նախագծում տրիկոտաժի արտադրամաս նախատեսված չէ։ Ես էլ սկսեցի գրել։ Ու իրեն էլ ասացի. ինձ Մագդա կասեն, էնքան կգրեմ՝ հոգիդ դուրս կգա։ Ոնց որ ինձ ես տանջում, էնպես էլ ես քեզ կտանջեմ, էնքան կոմիսիա կբերեմ, որ անիծես նախագիծդ գծելու օրը։ Հո մութ չի՞։ Բանվորի երկիր է։ Էն օրն էլ թերթում էր գրված՝ ամեն մի նամակի ետևում մարդ է կանգնած։

Աբելյան - Ա՛յ Մագդա, բա որ էդպես ատում էիր, ինչո՞ւ էիր հոնգուր-հոնգուր լաց լինում։

Մագդա - Որտե՞ղ, ցավդ տանեմ։

Աբելյան - Գերեզմանատանը։

Մագդա - Հա... Դե դա գրելու հետ ի՞նչ կապ ունի։ Մարդ էր, էլի, հարևան էր։ Հետո, որ ճիշտն ասեմ, շորերը որ թաղում էին, ավելի շատ մայկայի վրա լացս եկավ։ Ախր էդ մարդը մի կարգին մայկա էլ չուներ...

(Աբելյանը ծիծաղում է)։

Սաթյան - Հըմ... Դուք նրա հետ հանդիպե՞լ եք սույն թվականի մայիսի 18-ին, որտեղ և ինչ հանգամանքներում...

Մագդա - Էդ ո՞ր օրն է, ցավդ տանեմ։

Սաթյան - Շավարշ Խանոյանի անհետանալու օրը։

Մագդա - Հա, բայց ոչ մի հանգամանք էլ չի եղել, ցավդ տանեմ, ընդամենը մի րոպեով նրա առանձնասենյակն եմ մտել, մի բան եմ ասել ու դուրս եմ թռել... Առանձնասենյակում ի՞նչ հանգամանք պիտի լիներ...

Աբելյան - Շտապում ես, Մագդա, քեզանից առաջ ինչ-որ ուրիշ բան է դուրս թռել...

Մագդա - Ի՞նչ, Աբելյան ջան...

Աբելյան - Ավելի ճիշտ կլինի, եթե ինքդ պատմես...

Մագդա - Է՞դ ով է հասցրել... Ա՛յ մարդ, էսպես էլ երկի՞ր կլինի... Բա մարդ չկարողանա՞ մի գործ բռնել, մի բան անել, որ ուրիշ մարդ չտեսնի, չխոսի... Ամբողջ աշխարհն «Ապագայի քաղաք» է դառել, տանդ մեջ էլ չես կարողանում հանգիստ հաց ուտել, ոնց որ կայարանում նստած լինես... Մի հարևան ունեինք, շատ փող ուներ, չէր կարողանում հանգիստ ծախսել։ Որ հարևանները չնախանձեն ու մատերիալ չգրեն, նուբար ձմերուկը ննջարանում էր ուտում, վերմակի տակ, խորովածը վաննայում էր անում։ Չդիմացավ, դարդից մեռավ... խեղճ մարդը մեռնելուց առաջ իր համար մի շքեղ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

դագաղ էր պատվիրել պղնձից ու կարմիր փայտից, ատլասով ու ծոպերով... Կինն ու երեխաները վախեցան օրը ցերեկով էդ դագաղը փողոց դուրս բերել, գիշերը թաղեցին մարդուն...

Սաթյան - Եվ ուրեմն մայիսի 18-ին...

Աբելյան - 119 հոդվածը գիտես, չէ՞, սուտ ցուցմունք տալու մասին։

Մագդա - Գիտեմ, գիտեմ, ցավդ տանեմ, առաջին անգամ չի, բոլոր հոդվածներն էլ գիտեմ... Հիմա անգրագետ մարդ չկա...

Աբելյան - *(Մեկուսի):* Մեր դժբախտությունն էլ դա է...

Մագդա - Ի՞նչ... հա, պատմեմ, պատմեմ...

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

(Շավարշ Խանոյանի առանձնասենյակը: Գլխավոր ճարտարապետը ետ ընկած, գրեթե կիսապառկած է աթոռին: Աղմուկով ու վիճելով ներս է ընկնում Մագդան):

Մագդա - *(Դռան կողմը):* Վայ, սպասիր, քուր ջան, ասում եմ՝ լրիվ անձնական գործ է: Վայ... բարև ձեզ, ընկեր Խանոյան... *(հոտ է քաշում):* Էս ի՞նչ է պատահել... *(Տեսնում է սրվակը)* կորվալոլ եք խմել, հա՞... քոռանամ ես, վալոկորդին չե՞ք ճարում: Բա ինչի՞ ինձ մի բերան բան չէիք ասում... Իրիկունը կուղարկեմ, ցավդ տանեմ... Իսկ պերսանտին չե՞ք ուզում...

Խանոյան - Ձեզ ի՞նչ է պետք, Մագդա։

Մագդա - Ինձ ոչինչ էլ պետք չի, ընկեր Խանոյան ջան, ժողովրդին է պետք: Բա դուք չե՞ք տեսնում, որ էս ժողովրդի հագին արդեն բան չկա: Իսկ իմ մեքենաները ժանգոտում են: Որ ի՞նչ: Կոմիսիոն խանութներում մարդիկ իրար գլուխ են ջարդում արտասահմանյան մի քոսոտ փալասի, մի մայկայի համար: Վրան մի նկար են տպում, կամ գրում «Այ լավ յու» ու հիսուն ռուբլով վաճառում: Բա եղա՞վ: Բա մեր ժողովուրդը մեղք չի՞: Բա մեր նամուսն ո՞ւր մնաց: Ճիշտ էր ասում ընկեր Սուքիասյանը: Ե՞րբ պետք է մենք էլ պետական մտածողություն ունենանք:

Խանոյան - Ընկեր Սուքիասյա՞նն ով է:

Մագդա - Իմ դատապաշտպանն էր, ցավդ տանեմ: Հիմա էլ դո՛ւք եղեք իմ դատապաշտպանը: Մի տեղ տվեք, թողեք, որ աշխատեցնեմ իմ մեքենաները, ափսոս են, չէ: Չորս մեքենա է, մեխանիկն էլ հետը հաշված հինգ մարդ հիմա չի աշխատում: Էդպես եք անում, որ արտասահմանում ասեն, թե մե՞զ մոտ էլ գործազուրկներ կան: Ե՞րբ պետք է մենք էլ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պետական մտածողություն ունենանք: Թողեք աշխատեցնեմ, ցավդ տանեմ, գործեմ, կարեմ, հագցնեմ մարդկանց, գետինը մտնեմ, թե սուտ եմ ասում, մայկաների վրա ձեր նկարը կտպեմ, մենակ թե մի անկյուն տվեք...

Խանոյան - Ի՞նչ եք ուզում ինձանից, Մագդա, սկզբում դուք էիք խնդրում, թե մի բան արեք, որ իմ տունն էլ պլանի տակ ընկնի: Չէի՞ք խնդրում:

Մագդա - Խնդրում էի, ցավդ տանեմ...

Խանոյան - Դե մենք էլ քանդեցինք, հողաշեն, խարխուլ մի սենյակի փոխարեն ձեզ երեք սենյականոց բնակարան ենք հատկացրել...

Մագդա - Բա մեքենանե՞րս: Ես կարծում էի, որ եթե քանդեք, իմ մեքենաների համար էլ մի սիրուն շենք կսարքեք... թե չէ կթողնեի՞ քանդեիք տունս, սպանեիք էլ՝ դուրս չէի գա: Ինձ բուլդոզերով էլ իմ տնից չէիք հանի: Ինձ Մագդա կասեն: Ես բանվոր եմ, է՛, բանվոր, իսկ էս երկիրը բանվորի երկիր է, ձեզ ոչ մեկը չի թողնի, որ նեղացնեք բանվոր դասակարգին: Ես ուզում եմ արտադրանք տալ, իսկ...

Խանոյան - Բավական է, բավական է, ընկեր Խաչատրյան, ձեր դատողությունները հայրենական տեքստիլ արդյունաբերության զարգացման հեռանկարների մասին ինձ վաղուց հայտնի են ձեր բազմաթիվ բողոք նամակներից...

Մագդա - Եվ էլի կգրեմ: Մի քանիսը դեռ ճանապարհին են: Կարծում եք լռելո՞ւ եմ, ցավդ տանեմ, հա՛ գրելու եմ...

Խանոյան - Ոչնչով օգնել չեմ կարող...

Մագդա - Կարող եք, ցավդ տանեմ, կարող եք, հետո ախր ինչի՞ գրեմ, դուք էլ մեղք եք, չէ՞: Ինչի ես չգիտե՞մ, թե ինչքան դժվար է էդ ստուգողներին ճանապարհ դնելը: Մեզ մոտ էլ էին գալիս, չէ՞: Ես չեմ ուզում գրել, ինձ ինչի՞ եք ստիպում... Ախր ձեր ձեռքին է, չէ՞: Գիծն էսպես մի տարեք, էնպես տարեք…

Խանոյան - Լսեք, տիկին, քանի՞ անգամ ասեմ՝ դա հնարավոր չէ:

Մագդա - Ինչի՞, ցավդ տանեմ...

Խանոյան - Տե՛ր աստված... հենց թեկուզ միայն նրա համար, որ մեր «Ապագայի քաղաքի» կողքին տրիկոտաժի հսկա գործարան է կառուցվելու:

Մագդա - Վայ, բա դուք նրանց արտադրանքը չե՞ք տեսել, ընկեր Խանոյան ջան, բա նրանց ապրանքը կարելի՞ է համեմատել մեր ցեխերի արտադրանքի հետ...

Խանոյան - Լսեք, Մագդա, տիկին, ընկեր Խաչատրյան, ես ձեզ հայերեն եմ ասում…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մագդա - Հայերեն մի ասեք, ցավդ տանեմ, ռուսերեն ասեք, ասեք՝ դա, ինձ հերիք է: Մենակ ասեք՝ դա:

Խանոյան - *(Իրեն կորցրած):* Նետ... չի լինի, անհնարին է, նեվազմոժնո... Ի՞նչ եք ուզում ինձանից... նախագիծը ընդունված է, հաստատված է վերևներում... Ես ի՞նչ կարող եմ անել...

Մագդա - Ասեմ, ասեմ, ցավդ տանեմ... Դե ինչ ասեմ, ես կին եմ, Վասակս էլ խանդոտ է, շատ խանդոտ է, ես չեմ կարողանա ձեզ հետ սեղան նստել...

Խանոյան - Ի՞նչ սեղան...

Մագդա - Ասեմ, ասեմ, ցավդ տանեմ, էդպես վեր-վեր մի թռեք, ձեր սիրտը լավ չի, չէ՞, հանգիստ... ասում եմ՝ սա վերցրեք, էն վերևինների հետ սեղան կնստեք, կուտեք, կխմեք, կխոսեք ու մի երկու բառ էլ իմ մասին կխոսեք, իմ մեքենաների մասին, ժողովրդի մասին, ախր ժողովուրդը մեղք է, չէ :

(Դիմացն է դնում կապոցը):

Խանոյան - Սա ի՞նչ է:

Մագդա - Փող է, փող...

Խանոյան - Ի՞նչ...

Մագդա - Վայ, փող է, ասում եմ... փող չե՞ք տեսել...

Խանոյան - *(Բռնում է սիրտը, ընդոստ վեր է թռչում, սեղանից վերցնում է կորվալոլի սրվակը, ուղղակի բերանն է տանում):* Մա - մա... Մանիկ... *(քարտուղարուհուն փորձում է կանչել):*

Մագդա - Վա՛յ, ջրով խմեք, էդ ի՞նչ եք անում, ցավդ տանեմ... ջուր բերե՞մ...

Խանոյան - *(Սեղանից վերցնում է կապոցը, բռնում է՝ ասես կարիճ է բռնում, արագ - արագ տանում, բացում է դուռը, նետում է):* Դ - դուրս... դուրս... սրիկաներ, սրիկաներ...

Մագդա - *(Նետվում է դեպի դուռը):* Վա՛յ... փողերս... փողերս...

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

(Հակոբ Սաթյանի առանձնասենյակը: Մագդան հենց նոր դուրս է եկել: Ցոլակ Աբելյանը ծիծաղում է ինքնիրեն: Սաթյանը խոժոռված նայում է դռանը):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սաթյան - Չեմ հասկանում, Աբելյան, ծիծաղելու ի՞նչ կա:

Աբելյան - *(Չկարողանալով զսպել ծիծաղը):* Ներեցեք, ընկեր Սաթյան, գիտե՞ք ինչու հանկարծ ծիծաղս եկավ: Որ այս Մազգա կոչվածը իր մեղքը չի հասկանում:

Սաթյան - Չի՛ հասկանում...

Աբելյան - Հաստատ չի հասկանում: Եթե հասկանար, ինչո՞ւ պետք է բացեիբաց պատմեր, թե ոնց է ապօրինի ճանապարհով մեքենաներ ու թել ձեռք բերել: Ինչպես է փորձել կաշառել գլխավոր ճարտարապետին: Ամբողջ հարցն այն է, որ նա համոզված է, թե իր արարքների մեջ ոչ մի կրիմինալ չկա: Ընդհակառակը, չզգացի՞ք, նա խորապես զարմացած է, որ Շավարշ Խանոյանը դրամ չի ընդունել: Ինչո՞ւ: Որովհետև ուրիշները վերցնում են: Որովհետև ուրիշները կանխիկ զումարով պետական մեքենաներ են վաճառում : Որովհետև ուրիշները գործարանից թելն այնպես հանգիստ են դուրս բերում, ասես իրենց տնից են տանում: Որովհետև Մազդայի հիմնարկի պետը նրան ոչ մեքենա է տալիս, ոչ էլ թել, բայց փոխարենը արտադրանք է պահանջում և ոչ միայն արտադրանք, այլև շահույթի մի մասը: Եվ Մազդա Խաչատրյանին այս ամենը չի զարմացնում, որովհետև նրա համար սովորականը, բնականը, նորմալը դա է:

Սաթյան - Բայց դա սարսափելի է:

Աբելյան - Այո, սարսափելին հենց դա է: Դե ես գնացի, ընկեր Սաթյան:

Սաթյան - Ո՞ւր:

Աբելյան - Այնուամենայնիվ ուզում եմ ստուգել հանգուցյալի... ներեցեք, գլխավոր ճարտարապետի մեքենան:

Սաթյան - Ինչո՞ւ:

Աբելյան - Մայիսի 18-ից հետո ավտոմեքենան աշխատանքի դուրս չի եկել: Իմիջիայլոց հարցրեցի վարորդին, կմկմաց, սկզբում ասաց, թե հիվանդ էր... իսկ հետո էլ, թե մի թեթև վթարի մեջ է ընկել և ավտոմեքենայի դիմապակին ջարդվել է: Նորը չի գտնում:

Սաթյան - Հետաքրքիր է: Ուրեմն ենթադրում եք... Սոկրա՞տն է:

Աբելյան - *(Տարածում է ձեռքերը):* Ի՞նչ իմանաս, ընկեր Սաթյան: Մի՞թե հնարավոր չէ: Որ հան... Շավարշ Խանոյանը աշխատանքից հետո ոտքով է գնացել տուն, այդ մասին վկայություն է տալիս միայն Սոկրատը: Իսկ գուցե ուրի՞շ կերպ է եղել: Գուցե աշխատանքից հետո, բարկացած և հուզված գլխավոր ճարտարապետը մտադրվել է զբոսնել ավտոմեքենայով, հանգստացնել նյարդերը...

Սաթյան - Եվ ճանապարհին անակնկալ վթար: Շավարշ Խանոյանը զոհվում է տեղն ու տեղը: Վարորդ Սոկրատը գլուխը կորցրած ելք է փնտրում: Հետո ձեռքը խփում է ճակատին, ավտոմեքենան քշում է Հրազդանի ձորը, մեքենայից հանում է գլխավոր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ճարտարապետի դիակը, մերկացնում է, ամոթխածությունից ելնելով թողնում միայն վարտիքը, թեթևակի ճոճելով դիակը գետն է նետում, իսկ հագուստները ափին թողնելով, սլանում տուն: Այո՞:

Աբելյան - Այո: Մի՞թե չէր կարող հենց այդպես էլ լինել, ընկեր Սաթյան:

Սաթյան - Դետեկտիվներ շա՞տ եք սիրում, Աբելյան...

Աբելյան - Խելագարվում եմ, ընկեր Սաթյան, նույնիսկ միլիցիայի տեղամասային տեսուչների մասին գրված ամենահիմար ակնարկներն եմ կարդում:

Սաթյան - Հըմ... Կներեք, Աբելյան, բայց երևում է: *(Ծիծաղում է):*

Աբելյան - Իզուր եք ծիծաղում, ընկեր Սաթյան, մեր գործի մեջ ամեն ինչ էլ հնարավոր է: Առիթներ շատ եմ ունեցել, երբ վերջում ծիծաղել եմ ես...

Սաթյան - Դե, լավ, լավ, մի նեղացեք, սիրելի Աբելյան, ինձ հունից հանեց այդ Մագդան: Միայն թե հիմա մի հեռացեք, լա՞վ, ես չեմ ուզում մենակ զրուցել Արգամ Խանոյանի հետ: Նրան էլ լսենք, հետո...

Աբելյան - Եղավ:

Սաթյան - *(Սելեկտորով):* Արգամ Խանոյանը եկե՞լ է: Հրավիրեք ներս:

(Դուռը բացվում է, ներս է մտնում Արգամ Խանոյանը: Լուռ մոտենում է սեղանին, նստում բազկաթոռին, ետ ընկնում, ոտքը , դնում ոտքին):

Սաթյան - Բարև ձեզ, Արգամ Խանոյան:

Արգամ - Բարև:

Աբելյան - Ահա՛ հանցագործը:

Վարագույր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

(Սաթյանի առանձնասենյակը: Սաթյան, Աբելյան, Արգամ):

Աբելյան - Ահա՛ հանցագործը:

Արգամ - Ե՞ս... Դուք հո չե՞ք խելագարվել:

Սաթյան - Հանգիստ, հանգիստ, Աբելյան... Ես ուզում եմ, որ մենք անկեղծ խոսենք իրար հետ, Արգամ: Ի՞նչ եք մտածում ձեր հոր հետ կապված այդ... դժբախտության մասին: Ի՞նչ կարող է պատահած լինել:

Արգամ - Ես շա՞տ գիտեմ:

Սաթյան - Ո՞վ կարող է ավելի լավ ճանաչել Շավարշ Խանոյանին, քան նրա միակ որդին: Եթե նա ինքնասպան է եղել, ո՞վ կարող էր նրան հանել հավասարակշռությունից, եթե նրան սպանել են, ո՞վ կարող էր ձեռք բարձրացնել նրա վրա:

Արգամ - Բա ասում են խեղդվե՞լ է:

Սաթյան - Իսկ ձեր հայրը լողալ չգիտե՞ր:

Արգամ - Ես շա՞տ գիտեմ:

Սաթյան - Երբևէ միասին ծովափում չե՞ք եղել, Սևանում չե՞ք լողացել:

Արգամ - Ինչի՞, ընկեր չունե՞մ, որ հորս հետ ծովափ գնայի:

Աբելյան - Քննիչի հարցերին կարգին պատասխանիր, ա՛յ տղա:

Արգամ - Պատասխանում եմ, էլի, հանցագործն էլ ո՞նց պիտի պատասխանի:

Սաթյան - Շա՞տ էիք սիրում ձեր հորը...

Արգամ - Իր հորն ո՞վ չի սիրում:

Աբելյան - *(Տեղից վեր կենալով):* Դո՛ւ... դու չես սիրում քո հորը, դու, հենց դու ես նրա կործանման պատճառը: Եթե ես քեզ նման լակոտ ունենայի, կգնդակահարեի իմ ձեռքով:

Արգամ - Նա ինձ հետ էդպես խոսելու իրավունք ունի՞, ընկեր քննիչ:

Աբելյան - Ե՞ս իրավունք չունեմ:

Սաթյան - Ընկեր Աբելյան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աբելյան - Ե՞ս իրավունք չունեմ: Եթե ես չլինեի, դու հիմա վաղուց բանտում կլինեիր, տղա: Հանուն հորդ, հանուն այդ մեծ ու պատվավոր մարդու տասն անգամ քեզ բաց եմ թողել:

Արգամ - Ջահել եմ եղել, սխալվել եմ: Ո՞վ չի սխալվում: Բա ձեր գործը մեզ ուղղելը չէ՞: Բա ձեզ ինչի՞ համար են աշխատավարձ տալիս: Բա էլ պրոֆիլակտիկան ո՞ւր մնաց:

Սաթյան - Եվ հիմա ինչ, ուղղվե՞լ եք:

Արգամ - Ուսանող եմ, էլ ի՞նչ եք ուզում:

Սաթյան - Բանաստեղծություններ գրո՞ւմ եք:

Արգամ - *(Փոքր - ինչ շփոթվելով):* Փոքր ժամանակ ո՞վ չի գրել:

Սաթյան - Իսկ հիմա չե՞ք գրում:

Արգամ - Փորձում եմ, բայց չի ստացվում: Իսկ, ի՞նչ է, ինձ կանչել եք, որ ստեղծագործական խորհուրդներ տա՞ք: Չգիտեի, որ գրողների միությունը դատախազությունում էլ է գրական կոնսուլտանտ պահում:

Աբելյան - Ա՛յ տղա...

Սաթյան - Չեք սխալվում, Արգամ: Իրոք ես ուզում եմ խորհուրդ տալ ձեզ: Մի թողեք գրելը: Ձեզ մոտ ակնհայտորեն ստացվում է: Իհարկե, զգացվում է փորձի և կրթության պակասը: Հանգերը տեղ-տեղ շինծու և բռնազբոսիկ են, բայց դուք շնորհք ունեք: Ձեզ հաջողվում են հատկապես երգիծական ոճի գործերը...

Արգամ - Դուք իմ գրածները ե՞րբ եք կարդացել, որ...

Սաթյան - Եղա՞վ: Դեռևս ոչ մի քննադատ ձեր ստեղծագործությունները այնքան ուշիուշով չի ուսումնասիրել, որքան ես: Կարդացել եմ մատիտը ձեռքիս, ընդգծելով: Ես կարող եմ նույնիսկ անգիր արտասանել որոշ կտորներ: Դուք շատ վատ կարծիք ունեք ձեր ընթերցողների մասին, եթե սկզբից վերնագիրը դնում եք. «Մոդեռն նախագծի արխաիկ հեղինակը», իսկ հետո ջնջում ու դարձնում «Նորառճ քաղաքի հնառճ ճարտարապետը»:

Արգամ - *(Ասես փորձելով փախչել):* Ո՞վ է ասում, ո՞վ է ասում...

Սաթյան - Իսկ ինչ վերաբերում է բուն բանաստեղծությանը, ապա լավ կլինի, եթե ընկեր Աբելյանը արտասանի, նա ասմունքողի որոշակի տվյալներ ունի: Խնդրեմ, Աբելյան...

Աբելյան - *(Մաքրում է կոկորդը):* Ո՞վ է այս դեսպոտն ու նորաթուխ խանը: Հարցրեք և կասեն՝ Շավարշ Խանոյանը: Շա՛ն լակոտ...

Արգամ - *(Խուճապի մեջ):* Մի վիրավորեք: Ինչեր եք հնարում: Ինչ ուզեք, կասեք, էլի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սաթյան - Սա ձե՞ր ձեռագիրն է... *(մեկնում է մի թուղթ):*

Արգամ - Ոչ, ոչ, ոչ...

Աբելյան - Այ տղա, նայիր, նոր ասա...

Արգամ - Սա ի՞նչ է: «Խնդրում եմ հաշվի առնել իմ ջահելությունը, ներել և քրեական գործ չհարուցել»...

Աբելյան - Հիշո՞ւմ ես, երբ ես գրել...

Արգամ - Հա, որ կռվել էինք... Հետո... դուք թելադրեցիք, ես էլ գրեցի... բայց սա ի՞նչ կապ ունի...

Սաթյան - *(Մեկնում է մի ուրիշ թուղթ):* Իսկ սա՞ ում ձեռագիրն է:

Արգամ - Ես ի՞նչ գիտեմ:

Սաթյան - Իսկ դուք համեմատեք, տեսեք: Ինչքան էլ փորձել եք կեղծել ձեռագիրը, բայց որոշ տառեր ուղղակի նույնն են, նայեք, մենք ընդգծել ենք... Բայց քանի որ մասնագետ չենք, խնդրել ենք, որ ձեռագրային փորձագետը տա իր պաշտոնական եզրակացությունը:

(Մեկնում է երրորդ թուղթը):

Աբելյան - Կարդա, կարդա, նորաթուխ բանաստեղծ...

Արգամ - *(Վերցնում է եզրակացությունը, բայց ոչ թե կարդում, այլ ժամանակը օգտագործում է իր պատասխանը մտածելու համար: Եվ հանկարծ ասում է երեխայի նման):* Լավ եմ արել:

Աբելյան - Ի՞նչ:

Արգամ - Լավ եմ արել:

Սաթյան - Զրպարտել եք ձեր հորը, վարկաբեկել եք նրան և դեռ գտնում եք, որ լա՞վ եք արել:

Արգամ - Իսկ նա ե՞րբ է ինձ համար հայր եղել, է՛... Հայրեր չե՞նք տեսել, ինչ է: Ուրիշներն էլ ասեն հայր ունեն, ես է՞լ... Լողալու մասին էիք հարցնում, մի անգամ ինձ ծովափ չի տարել, մի անգամ որսի կամ ձկնորսության չի տարել, մի անգամ ռեստորան չի տարել: Հենց խնդրել եմ, ասել է՝ աշխատում եմ: Աշխատո՛ւմ է: Ուրիշները չեն աշխատում: Կամ նրա աշխատանքից ի՞նչ օգուտ. մայրս որ չլիներ, ես վաղուց տնից փախած կլինեի...

Աբելյան - Բանտում կլինեիր, բանտում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արգամ - Իսկ բանտում ավելի լավ չի՞: Կամ ի՞նչ տարբերություն: Իմ դասընկերները բոլորը ջինսեր են հագնում, ֆիրմա վերխեր, ֆիրմա մայկաներ, կաշվե կուրտկաներ...

Աբելյան - Այ տղա, ո՞րտեղից առնենք, մենք ինչքա՞ն ենք ստանում...

Արգամ - Իսկ ուրիշներն ինչքա՞ն են ստանում, ընկեր Աբելյան: Գարեջուր վաճառողն ինչքա՞ն է ստանում, կամ հենց իմ հոր տեղակալը ինչքան է ստանում, որ նրա տղան ոտքից գլուխ կաշի է հագնում: Ի՞նչ է, գլխավոր ճարտարապետը մի գարեջրավաճառի չափ է՞լ չի ստանում...

Աբելյան - Հետո՞ ինչ, նրանք գողանում են...

Արգամ - Իսկ դուք ինչո՞ւ այդ գողերին չեք բռնում:

Աբելյան - *(Մեկուսի):* Որին բռնենք...

Սաթյան - Եվ այդ բոլորը ձեզ հիմք են տվել, որպեսզի ձեր հոր մասին զրպարտագրե՞ր ուղարկեք վերադաս մարմիններին...

Արգամ - Այդ մի նամակն է եղել, ընկեր Սաթյան, այդ մի նամակը... հարբած էի, շատ էի ջղայնացած, գցեցի փոստարկղն ու անմիջապես փոշմանեցի: Ուզեցի հանեմ նորից, չկարողացա:

Սաթյան - Իսկ ի՞նչն էր այդպես բարկացրել ձեզ...

Արգամ - Նորից կտրվել էի ընդունելության քննությունների ժամանակ: Դասախոսը հայրիկիս ընկերն էր, հարյուր անգամ խնդրեցի, որ զանգ տա, հրաժարվեց...

Աբելյան - Հա, դրա համար է հնառճ...

Սաթյան - Վերջին անգամ ձեզ միլիցիայի բաժին են բերել թղթախաղով զբաղվելու համար...

Արգամ - Վերջ, վերջ, էլ չեմ խաղում, վերջ...

Աբելյան - Խաբում ես, խաբում ես, Արգամ: «Նորքի Գրիշ» մականունով, Գրիգոր Մաղաքյանը, որին երեք օր առաջ ձերբակալել ենք հենց թղթախաղի պահին, ցուցմունք է տվել, որ մայիսի 17 - ին ամբողջ գիշեր խաղացել է քեզ հետ, և դու նրան պարտք ես մնացել հինգ հարյուր ռուբլի, որը ըստ պայմանի հանձնել ես հաջորդ օրը, մայիսի 18 - ին:

Արգամ - Սուտ է ասում, սուտ է ասում...

Սաթյան - Ինչո՞ւ էիք մայիսի 18 - ին գնացել նախագծային ինստիտուտ, ձեր հոր մոտ...

Արգամ - Ե՞ս... ե՞ս...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

(Շավարշ Խանոյանի առանձնասենյակը: Խանոյանը խոսում է հեռախոսով):

Խանոյան - Ընկեր Մարտիրոսյան, եթե ես գրել եմ մարմար, ուրեմն բոլոր տեսակետներից և հատկապես ընդհանուր կոմպոզիցիայի համար հատակը պետք է մարմար լինի: Ես գիտեմ, որ կարելի է փոխարինել գրանիտով, բազալտով էլ կարելի է փոխարինել, կարելի է նույնիսկ անհարթ տախտակներ խփել... Ամեն ինչն էլ կարելի է մի ուրիշ բանով փոխարինեք, ձեզ և ինձ էլ կարելի է փոխարինել մեկ ուրիշով, բայց դա արդեն ուրիշ կլինի... Ոչ մեր ուզածը... Ես չեմ կատակում, ի՞նչ կատակ, երանի կատակի տրամադրություն ունենայի: Մենք հայտերը դեռևս երկու տարի առաջ ենք ներկայացրել: Եվ մարմարն էլ հեռու չէ. Արզականից պետք է բերվի... Դա ինձ չի հետաքրքրում: Ինձ մարմար է պետք: Շատ լավ, ես էլ կգրեմ Մինիստրների խորհուրդ... Խնդրեմ...

(Խոսակցության կեսին ներս է մտել Արգամը, պատերի գծագրերն է դիտում):

Արգամ - Ուրեմն դու է՞լ ես գրում, պապ:

Խանոյան - Ի՞նչ... Ախ, հա, Մինիստրների խորհո՞ւրդ... առայժմ վախեցնում եմ... ի՞նչ կա, Արգամ, ինչո՞ւ ես այստեղ եկել...

Արգամ - Մեծ փորձանքի մեջ եմ ընկել, պապ:

Խանոյան - Էլի՞ ինչ է պատահել: Գոնե կյանքում մի անգամ դու ինձ ասելո՞ւ ես ուրախացնող որևէ բան: Որևէ բան, տղաս:

Արգամ - Ես քեզանից մի բան եմ խնդրելու և խնդրելու եմ վերջին անգամ, պապ: Միայն թե հենց սկզբից ասեմ, չհուզվես ու խրատներ չկարդաս: Մենակ թե քարոզ չլինի... որովհետև ինձ թվում է, թե ես ամեն ինչ արդեն հասկացել եմ:

Խանոյան - Ի՞նչ է պատահել, Արգամ, ասա:

Արգամ - Ինձ փող է պետք:

Խանոյան - Ինչի՞ համար...

Արգամ - Տարվել եմ, հայրիկ...

Խանոյան - Ի՞նչ: Ուրեմն դու դարձյա՞լ խաղում ես: Բա դու գետինը չե՞ս մտնում: Ի՞նչ մարդ ես դու, այ տղա, քո տարիքի տղաներն արդեն ընտանիք են պահում, աշխա...

Արգամ - Հայրիկ, աղաչում եմ քեզ, խրատ մի կարդա... խրատ մի կարդա, հայրիկ ջան, խնդրում եմ, հավատա, ազնիվ խոսք... Ես ամբողջ գիշեր չեմ քնել, մտածել եմ, ես այսօր առավոտ շուտ հանդիպել եմ իմ բոլոր ընկերներին, փորձել եմ, համոզվել եմ, թե ովքեր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

են դրանք: Ես կարող էի էլի ինչ-որ տեղից ինչ-որ ձևով ճարել այդ դրամը, բայց որոշեցի քեզ մոտ գալ՝ հենց խեղճանալու համար, հենց նվաստանալու համար... որ այլևս երբեք, երբեք նման բան չանեմ, որ այլևս երբեք, երբեք... քո արև...

Խանոյան - Եթե քո բոլոր երդումները գումարեի իրար, Արգամ, ծայրը երկինք կհասներ: Ես ամբողջ կյանքում քեզանից կամ գռեհիկ խոսքեր եմ լսել, կամ երդումներ... ուրիշ ոչինչ: Ուրիշ ոչինչ:

Արգամ - Հայրիկ, սա ուրիշ է, հավատա... Ես ելք չունեմ... Եթե այսօր մինչև ժամը երեքը փողը չհանձնեմ...

Խանոյան - Իսկ ինչո՞ւ միլիցիա չես դիմում: Ուզո՞ւմ ես, զանգահարեմ: Այսինքն ի՞նչ զանգահարեմ, քեզ այնտեղ հո անգիր գիտեն: Գնա ուղիղ կապիտան Աբելյանի մոտ, գնա ու խոստովանիր ազնվորեն, անպայման հաշվի կառնեն, տղաս…

Արգամ - Դու ուզում ես, որ ես կորցնե՞մ պատիվս...

Խանոյան - Խնդրեմ, հիմա էլ մի կտոր «Պատվի համար» ողբերգությունից: Այդ պատիվը կոչվածը կորցնելու համար նախ պիտի ունենալ: Սա մեկ: Եվ հետո ենթադրենք, թե ունես, ո՞ւմ մոտ պիտի կորցնես: Ովքե՞ր են նրանք: Նրանք պատիվ ունե՞ն: Այդ պատվի՞ վրա են խաղում, թե կանխիկ գումարի...

Արգամ - Հայրիկ...

Խանոյան - Ես մի դժբախտ մարդ եմ, Արգամ: Եվ հոգնած եմ, շատ եմ հոգնած: Ես զարմանում եմ, որ դեռևս կարողանում եմ հուզվել ու բարկանալ...Ինչքա՞ն ես տարվել...

Արգամ - Հինգ հարյուր ռուբլի:

Խանոյան - Որքա՞ն: Հինգ հարյո՞ւր: Հի՞ն փողով, թե... Դու հո չես խելագարվել, այ տղա, դա իմ երկու ամսվա աշխատավարձն է: Ես քեզ համար որտեղի՞ց այդքան գումար գտնեմ: Կողոպտե՞մ գանձարկղը, ինչ է...

Արգամ - Մաման ասաց, որ ունենք: Ասաց, որ պապադ թողնի...

Խանոյան - Ի՞նչ ունենք: Բայց դա ննջարանի կահույքի համար հավաքած դրամն է...

Արգամ - Եթե մինչև ժամը երեքը ես այդ գումարը չհանձնեմ, ինձ հետ ամեն ինչ էլ կարող է պատահել... Վերջին անգամ եմ խնդրում, հայրիկ:

Խանոյան - Գնա վերցրու այդ դրամը, Արգամ: Գնա վերցրու: Ճիշտը որ խոստովանենք, մեզ ննջարան ինչի՞ է պետք: Գնա վերցրու, Արգամ: Եվ հետո... դու ի՞նչ մեղավոր ես, դու ի՞նչ մեղավոր ես, որ մարդ չդարձար: Քո ծնողները պետք է քեզ մարդ դարձնեին: Բայց նրանք ժամանակ չունեցան: Մեղավորը ես եմ: Ես էլ պետք է վճարեմ: Գնա վերցրու, Արգամ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արգամ - *(Ժամացույցին նայելով ու դեպի դուռը շտապելով):* Հայրիկ, այ կտեսնես... երդվում եմ...

(Շավարշ Խանոյանը խոնարհվում է ու գլուխն առնում ափերի մեջ):

ՊԱՏԿԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ

(Հակոբ Սաթյանի առանձնասենյակը: Սաթյանը ինչ-որ բան է գրում արագ-արագ: Հնչում է հեռախոսի զանգը: Վերցնում է և բարձրանում տեղից):

Սաթյան - Լսում եմ, ընկեր դատախազ: Այո, քննում ենք: Ցավոք սրտի, դեռևս որոշակի ոչինչ չեմ կարող ասել: Շնորհակալություն, որ քննության ժամկետը երկարացրիք մինչև վեց ամիս... Ես հասկանում եմ, բայց... Կի՞նն է գրել: Մարիամ Խանոյա՞նը: Ես հենց հիմա պատրաստվում եմ լսել նրան: Վաղը ժամը իննին ձեզ մո՞տ: Լսում եմ, ընկեր Թաշչյան:

(Ցած է դնում լսափողը, թաշկինակով սրբում է ճակատի քրտինքը և հառաչելով ուղղակի ընկնում աթոռին: Ներս է մտնում Ցոլակ Աբելյանը՝ թղթապանակով):

Աբելյան - *(Ժպտալով):* Շնորհավորում եմ, կարող եք ուրախանալ, ընկեր Սաթյան:

Սաթյան - *(Կրկին վեր է թռչում):* Ի՞նչ... դիակը հայտնաբերվե՞լ է:

Աբելյան - Դիակն էլ եղավ ուրախանալու բա՞ն: Սոկրատը բացարձակ ալիբի ունի:

Սաթյան - Սոկրատն ո՞վ է: Ախ, վարորդը՞...

Աբելյան - Կարող եք սրտանց ծիծաղել: Աշխատանքի վերջում Շավարշ Խանոյանը հրաժարվում է ավտոմեքենա նստել, և հիմնարկի աշխատողները Սոկրատին խնդրում են տուն տանել իրենց: Ճանապարհին, դիմացից ընթացող բեռնատարի անիվի տակից մի քար է թռչում և ուղիղ «Վոլգայի» դիմապակուն: Ստուգեցի, բոլորը նույնն են ասում:

Սաթյան - Իսկ նամա՞կը:

Աբելյան - Ես չհարցրի, ինքը պատմեց: Եվ նույնիսկ լաց եղավ: Իսկական երեխա է:

Սաթյան - Լա՜վ երեխա է: Նրա նամակի հիման վրա երկու ամիս տանջել են գլխավոր ճարտարապետին կիրովականյան հնարովի առանձնատան, հինգ սենյականոց բնակարանի և բանակից իբր խուսափելու համար:

Աբելյան - Խոստովանեց, որ Ջալալյանն է համոզել իրեն գրելու այդ նամակը... Ասել է, Խանոյանին հանեն թե չէ, ես քեզ թույլ կտամ, որ ավտոտնակ տեղադրես: Եվ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

կբարձրացնե մ աշխատավարձդ... Եվ թելադրել է, թե ինչ գրել... Բացատրագրերն այստեղ են։

Սաթյան - Որքան հեշտ է դարձել մարդկանց վարկաբեկելը... Ես կասեմ նա գայլ է, իսկ նա թող ապացուցի, որ ոչ թե գայլ է, այլ ընդամենը նապաստակ։

Աբելյան - Եթե լսող չլինի, ասող էլ չի լինի, ընկեր Սաթյան։ Իսկ որ մենք սիրում ենք լսել, դա փաստ է, եթե կուզեք իմանալ, ազգային առանձնահատկություն է։ Շատ ենք սիրում ականջ դնել բամբասանքներին... Երբ մեզ մոտ վարկաբեկում, ստորացնում են ուրիշներին, մեզ թվում է, թե մենք բարձրանում ենք նրանցից։

Սաթյան - Ազգն ի՞նչ կապ ունի, Աբելյան... Ամեն ազգի մեջ էլ լսողներ եղել են ու կան։

Աբելյան - Հա, բայց մենք հին ազգ ենք, չէ՞: Ու մեր ականջ դնելն էլ է հին, գրելն էլ է հին։ Ասում են մեր սեպագիր արձանագրությունների մի մասն էլ անստորագիր է եղել...

Սաթյան - Լսեք, Աբելյան, դուք հո հարբած չե՞ք...

Աբելյան - *(Խեղճացած):* Երևաց, հա՞, ընկեր Սաթյան։ Է՛, ուրեմն ծերացել եմ։ Շատ-շատ ներողություն եմ խնդրում, բայց չդիմացա, մի երկու բաժակ խմեցի։

Սաթյան - Սպասեցեք, ուրեմն իսկապե՞ս հարբած եք։ Սա՞ ինչ խայտառակություն է։

Աբելյան - Շատ-շատ ներողություն, ընկեր Սաթյան, չդիմացա։ Դե, հո ամեն օր երեխա չի ծնվում։ Թոռնիկ եմ ունեցել, թոռնիկ։ Հետո, որ ճիշտն ասեմ, Սոկրատի համար էլ շատ ուրախացա... որ մարդասպան դուրս չեկավ... շատ դուրեկան տղա է։ Ոնց որ երեխա լինի...

Սաթյան - *(Ակամա ժպտում է):* Թոռնիկիդ համար շնորհավորում եմ, Աբելյան, բայց անմիջապես գնացեք տուն։ Լսո՞ւմ եք։ Անմիջապես տուն։

Աբելյան - Չէ, կներեք, բայց նախ հիվանդանոց պիտի գնամ, ծաղիկներ եմ տանելու հարսիս... շատ կներեք, ընկեր Սաթյան... (նկատելով ներս մտած Մարիամ Խանոյանին, Աբելյանը ձգվում է)։ Ցտեսություն, ընկեր Սաթյան, ձեզ չխանգարեմ։

(Հեռանում է։ Մարիամ Խանոյանը տարակուսանքով նայում է նրա ետևից):

Սաթյան - Համեցեք, նստեք։

Մարիամ - Կարո՞ղ եմ իմանալ, թե ինչու եք կանչել ինձ։ Կամ գուցե որևէ նորությո՞ւն կա։

Սաթյան - *(Տարածում է ձեռքերը):* Ավա՛ղ, տիկին... Ուղղակի հանրապետության դատախազը ինձ կարգադրել է զրուցել ձեզ հետ։ Դուք հարկ եք համարել բողո՞ք ուղարկել նրան։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մարիամ - Գրել եմ, այո։ Դրանում ի՞նչ տարօրինակ բան կա։ Ավելի տարօրինակ չէ՞, որ մինչև այժմ դուք քիչ թե շատ հավաստի որևէ տեղեկություն չեք կարողանում հայտնել իմ ամուսնու անհետանալու վերաբերյալ։ Ասացեք, ես ինչպե՞ս հանգստանամ։ Անհետացողը սովորական մարդ չէ, նա «Ապագայի քաղաքի» ճարտարապետն է, նշանավոր գիտնական, դափնեկիր, դեպուտատ...

Սաթյան - Իսկ եթե ձեր ամուսինը շարքային աշխատող լիներ, դուք նրա համար չէի՞ք անհանգստանա։

Մարիամ - Խոսքը ձե՛ր մասին է։

Սաթյան - Մեզ համար ոչ մի տարբերություն չկա, տիկին Մարիամ, մարդ է անհետացել։ Կարևորն ու ցավալին դա է։ Մենք ջանում ենք...

Մարիամ - Ձեր ջանքերն ամենևին չեն երևում։

Սաթյան - Մենք ցուցադրելու համար չէ, որ անում ենք։ Ափսոս, սակայն, որ որևէ արդյունքի դեռևս չենք հասել։

Մարիամ - Եվ դուք դեռ զարմանում եք, որ ես այդ մասին նամակ եմ գրել հանրապետության դատախազի՞ն։

Սաթյան - Ոչ, ոչ, հանրապետության դատախազին ուղարկած ձեր նամակը ինձ բոլորովին չի զարմացնում։ Ինձ զարմացնում են ձեր այն նամակները, որ դուք ուղարկել եք Մինիստրների խորհուրդ և ներքին գործերի մինիստրությանը։

Մարիամ - Ինչե՞ր եք հորինում…

Սաթյան - Մենք չենք հորինում, մենք քննություն ենք կատարում, տիկին Մարիամ։ Եվ իսկապես սրտանց ջանում ենք լուծել ձեր ամուսնու անհետանալու առեղծվածը, ամենևին նպատակ չունենալով, որ մեր ջանքերը երևան ձեզ։

Մարիամ - Բայց դուք ի՞նչ նամակների մասին եք խոսում։ Դա ի՞նչ պրովոկացիա է։ Ես ե՞րբ եմ նամակ գրել։

Սաթյան - Ես չասացի, որ դուք եք գրել։ Ես ասացի, որ դուք ուղարկել եք։ Իսկ գրել է ձեր ազնիվ բարեկամը, ինչպես սովորաբար կոչում եք նրան։ Գրել է ձեր դպրոցի դիրեկտոր Վահե Մարջանյանը։

Մարիամ - Չի կարող պատահել, ո՞վ է ասում...

Սաթյան - Ասում է Վահե Մարջանյանի մարգարտաշար ձեռագիրը, նրա ավելի քան պերճախոս լեզուն, նրա «ըմբոշխնումներն» ու «դիցուք թե»-երը... և ի վերջո ձեռագրային փորձագետը։ Ուզո՞ւմ եք ծանոթանալ նրա եզրակացությանը։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մարիամ - Ենթադրենք... ենթադրենք նույնիսկ, որ Վահե Մարջանյանը, թեև ես չեմ ուզում հավատալ, բայց ինչ-որ նպատակով նամակներ է գրել, աշխատել է վարկաբեկել իմ ամուսնուն: Իսկ ե՞ս ինչ կապ ունեմ նրա հետ: Ե՞ս ինչ կապ ունեմ այդ նամակների հետ:

Սաթյան - Դպրոցի դիրեկտորի հետ ձեր կապի մասին, տիկին, հավանաբար ձեր ամուսնուց բացի, իմացել են բոլորը: Մի մոռացեք, թե որտեղ եք ապրում և որտեղ եք աշխատում; Ինչ վերաբերում է նամակների պատմության հետ ունեցած ձեր կապին, ապա թող ձեզ հայտնի լինի, որ Վահե Մարջանյանի գրած բոլոր նամակների ծրարների վրա դուք թողել եք ձեր մատնահետքերը: Դրանք լիովին համապատասխանում են այն բաժակի վրա թողած ձեր մատնահետքերին, որով դուք խմում էիք ձեր պաշտելի ամուսնու հոգու հանգստության համար: Այդ բաժակը հիմա որպես իրեղեն ապացույց կցված է գործին: Այն փորձաքննությանը ներկայացնելու նպատակով վերցրել է կապիտան Աբելյանը: Հուսով եմ, որ կներեք նրան: Դա արվել է հանուն գործի:

Մարիամ - Դուք... դուք... դուք նույնիսկ կարող եք ասել, որ մենք ենք անհետացրեք նրան:

Սաթյան - Եթե համոզված լինեի, հենց հիմա կկալանավորեի ձեզ, տիկին: Առանց խղճի խայթի: Եվ ոչ միայն ձեզ:

Մարիամ - Ի՜նչ անհեթեթություն, ի՜նչ անհեթեթություն... Այդ նամակները... ոչ մի կապ չունեն, հավատացնում եմ... Նա ինձ ստիպում էր դուրս գալ աշխատանքից, նա ինձ չէր թողնում աշխատել դպրոցում, դրա համար էլ հարկադրված...

Սաթյան - Ուրեմն նա է՞լ է իմացել: Դժբախտ մարդ: Իսկ ես կարծում էի, թե գոնե ձեր կապակցությամբ ապահով է եղել: Ուրեմն դա՞ է եղել պատճառը, որ մայիսի 18-ին, ցերեկվա ժամը երեքին նա անսպասելի հայտնվել է տանը:

Մարիամ - Դուք դա՞ էլ գիտեք, ինչ է... Ո՞վ է ասել, Սոկրատը...

Սաթյան - Դա ի՞նչ նշանակություն ունի...

Մարիամ - *(Շփոթված):* Այո, այո, չունի, իհարկե, չունի... Բայց նա մինչ այդ թերևս միայն կասկածում էր: Իսկ այդ օրը, այդ օրը...

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆԵՐՈՒԴ

(Շավարշ Խանոյանի բնակարանը: Ճաշասենյակում միայն Մարիամն է: Նա ռադիոընդունիչից հնչող իսպանական տանգոյի հնչյունների ներքո գրեթե պարելով հարդարում է փոքրիկ սեղանը: Երկու հոգու համար ափսեներ ու բաժակներ է բերում: Սեղանին է դնում մի շիշ կոնյակ, ուտելիքներ: Պատուհանի գոգից վերցնում է ծաղիկներով սափորը և դա էլ է դնում սեղանին: Լսվում է փականի բացվելու ձայնը, տիկին Մարիամը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

պայծառացած դեմքը դեպի դուռն է դարձնում: Եվ ժպիտը սառչում է նրա դեմքին: Ներս է մտնում Շավարշ Խանոյանը):

Մարիամ - Դո՞ւ:

(Խանոյանը հանում է բաճկոնը, գցում է աթոռին, քանդում է փողկապը, ընկնում է աթոռին, ծանր շունչ է քաշում, փականի ձայնը: Ոտնաձայն):

Խանոյան - Այն ո՞վ է, Արգա՞մն է...

Մարջանյան - *(Ձայնը գալիս է միջանցքից):* Մարիամիկ... փիսիկ... ես եմ... Եկա... *(Դռների մեջ հայտնվում է Մարջանյանը՝ երջանիկ դեմքով):* Եկա, աստվածային էակ... ես եմ...

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

(Դատախազության քննիչ Հակոբ Սաթյանի առանձնասենյակը: Սաթյանը ինչ-որ փաստաթղթեր է նայում: Սելեկտորի մեջ հնչում է քարտուղարուհու ձայնը):

Ձայն - Ընկեր Սաթյան, մի... մի աղջիկ ուզում է ձեզ մոտ գալ,

Սաթյան - Խնդրեմ, հրավիրեք ներս:

(Ներս է մտնում Նելլի Սարիբեկյանը՝ ջահել, գեղեցիկ, երկչոտ մի աղջիկ է, նստում է աթոռի ծայրին, ձեռքի մեջ տրորում է թաշկինակը):

Նելլի - Բարև ձեզ:

Սաթյան - Բարև ձեզ: Լսում եմ:

Նելլի - Ես... ես Շավարշ Տիգրանիչի... մեր գլխավոր ճարտարապետի գործի առթիվ եմ եկել:

Սաթյան - Այո: Իսկ դուք ո՞վ եք, ներեցեք:

Նելլի - Գանձապահ եմ: Նելլի Սարիբեկյան:

Սաթյան - Եվ Ի՞նչ կարող եք ասել այդ գործի կապակցությամբ, Նելլի, կարելի՞ է ձեզ այդպես դիմել:

Նելլի - Իհարկե:

Սաթյան - Ուրեմն, լսում եմ: *(Սելեկտորի մեջ):* Ինձ մոտ ոչ ոքի ներս չթողնել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նելլի - Ընկեր Սաթյան... Ես ուզում եմ ասել... Ես եկել եմ ասելու ձեզ, որ ես եմ Շավարշ Տիգրանիչի կործանման պատճառը: Ես եմ:

(Փղձկում է, թաշկինակը տանում է աչքերին):

Սաթյան - Ինչպես թե... Դո՞ւք եք սպանել նրան:

Նելլի - *(Թաշկինակը իջեցնելով):* Սպանե՞լ, ինչեր եք ասում...

Սաթյան - Ուրեմն ֆինանսական խախտումնե՞ր են: Գանձարկղում պակասո՞րդ կա:

Նելլի - Ոչ, ոչ, ի՞նչ պակասորդ...

Սաթյան - Հըմ, գրողը տանի... *(Հանգստացած):* Ջուր խմեք, նման դեպքերում օգնում է: *(Ինքն էլ է խմում):* Ջուր խմեք և հանգիստ պատմեք ինձ, թե ինչից ելնելով եք հայտարարում, որ դուք եք Շավարշ Խանոյանի կործանման պատճառը:

Նելլի - Հիմա կպատմեմ: Ուրեմն այդ օրը, այսինքն մայիսի 18-ին...

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

(Շավարշ Խանոյանի առանձնասենյակը: Խանոյանը գրասեղանի մոտ նստած, սևեռուն, բայց բութ հայացքով նայում է պատին: Թեքվում, գրասեղանի տակից հանում է շիշը, կոնյակ է լցնում, թաքցնում է շիշը, խմում է ու դարձյալ բութ հայացքով նայում պատին: Հետո հանում է շիշը, նորից է խմում: Թաքցնում է: Ներս է մտնում Նելլին):

Նելլի - Կներեք, Շավարշ Տիգրանիչ, ես ձեր աշխատավարձն եմ բերել:

Խանոյան - Լավ ես արել, բեր, բեր:

(Ստորագրում է թղթերի վրա, վերցնում դրամները):

Էս ինչո՞ւ է այսքան շատ:

Նելլի - Շատ չէ, Շավարշ Տիգրանիչ, պարգևատրումն էլ հետն է:

Խանոյան - Հրաշալի է: Իսկ ինչի՞ համար են պարգևատրել, չգիտե՞ս:

Նելլի - Չգիտեմ, Շավարշ Տիգրանիչ, երևի պլանների կատարման համար...

Խանոյան - Հա, երևի, երևի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նելլի - Դե ես գնամ, չխանգարեմ ձեզ...

(Խանոյանը սևեռուն նրան է նայում: Աղջիկը ճնշված է զգում իրեն և զարմացած):

Խանոյան - Սպասիր... Քո անունն ի՞նչ է:

Նելլի - Նելլի: Մոռացե՞լ եք, Շավարշ Տիգրանիչ:

Խանոյան - Հա, չէ, իհարկե, ինչպե՞ս կարող էի մոռանալ: Նելլի, Նելլի...

Նելլի - Ես գնամ, Շավարշ Տիգրանիչ...

Խանոյան - Սպասիր: Նստիր, Նելլի: Նստիր և ասա ինձ, Նելլի, դու ի՞նչ կարծիք ունես իմ մասին:

Նելլի - Ե՞ս:

Խանոյան - Դու, Նելլի...

Նելլի - *(Ժպտում է):* Ես ձեր մասին հրաշալի կարծիք ունեմ, Շավարշ Տիգրանիչ:

Խանոյան - Մանրամասն, մանրամասն, Նելլի... մանրամասն...

Նելլի - *(Խաղի մեջ):* Դուք ազնիվ ու բարի մարդ եք, Շավարշ Տիգրանիչ, և հիանալի ղեկավար: Եվ պահանջկոտ եք, և ներողամիտ: Հետո դուք մեծ գիտնական եք, բոլորը խոնարհվում են ձեր առաջ: Հետո ձեր «Ապագայի քաղաքը» հանճարեղ մտահղացում է, ես այս տարի ավարտում եմ ճարտարապետական ֆակուլտետի երեկոյան բաժինը և արդեն հասկանում եմ: Երանի նրանց, ովքեր այդ քաղաքում կապրեն:

Խանոյան - Դուք սխալվում եք, Նելլի:

Նելլի - Սխալվո՞ւմ եմ: Ո՞ր հարցում:

Խանոյան - Որ ես ազնիվ ու բարի մարդ եմ, Նելլի, որ ես ազնիվ ու բարի մարդ եմ:

Նելլի - Ի՜նչ եք ասում, Շավարշ Տիգրանիչ:

Խանոյան - Ես հրեշ եմ, Նելլի: Դուք մինչև հիմա հրեշ չէի՞ք տեսել: Տեսեք, ես իսկական հրեշ եմ, Նելլի:

Նելլի - *(Սրտանց ծիծաղում է):* Վայ, ես ձեզ երբեք այսպես չէի տեսել, Շավարշ Տիգրանիչ: Ում պատմեմ՝ չի հավատա: Ախր դուք երբեք չեք կատակում:

Խանոյան - Ես հիմա էլ չեմ կատակում, Նելլի: Հասկանո՞ւմ ես, ես մի շատ տարօրինակ դրության մեջ եմ ընկել: Դու «Սատանի փոս» խաղացե՞լ ես, Նելլի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Նելլի - Չէ, Շավարշ Տիգրանիչ:

Խանոյան - Հա, հիմա չեն խաղում: Իսկ ես խաղացել եմ, Նելլի: Ես մանուկ ժամանակ խաղացել եմ «Սատանի փոս»: Ուրեմն ինչպե՞ս էր, հա՛: Խաղացողներից ամեն մեկն իր փոսն ուներ: Տղաները կանգնում էին իրար կողքի և հերթով գլորում էին գնդակը, աշխատում էին, որ գնդակը ուրիշի փոսն ընկնի: Ում փոսն ընկնում էր, այդ փոսի մեջ մի փոքրիկ քար էին գցում: Հա, հենց այդպես էր: Երբ որևէ փոսի մեջ քարերի թիվը հասնում էր հինգի, փոսի տիրոջը կանգնեցնում էին պատի տակ և ամեն մեկը հինգ անգամ գնդակով խփում եր նրա թիկունքին: Ու այնպես էր խփում, որ ցավ պատճառի: Հիմա ես այդ փոսի տերն եմ, Նելլի: Իմ փոսը քարերով լի է, ու ինձ խփում են, Նելլի: Ով ասես խփում է ինձ, եթե բացեմ թիկունքս, գնդակների հետքերը կերևան... Բացե՞մ...

Նելլի - *(Անհանգստացած):* Դուք ձեզ վա՞տ եք զգում Շավարշ Տիգրանիչ...

Խանոյան - Ոչ, ոչ, Նելլի, ես ինձ հիանալի եմ զգում, նույնիսկ ծիծաղս գալիս է: Հասկանո՞ւմ ես, պարզվում է, որ ես սխալ եմ ապրել: Իմ ամենամտերիմ մարդն այս աշխարհում ինձ ասաց, որ ես սպիտակ ագռավ եմ: Սպիտակ ագռավ, Նելլի: Որովհետև, գիտե՞ս ինչ, այնպես չեմ ապրում, ինչպես բոլորը: Ինձ խաբում են, ես չեմ նկատում, ինձ փող են առաջարկում, ես հրաժարվում եմ: Իմ մասին գրում են, ես ուրիշների մասին չեմ գրում: Ուրիշները դավաճանում են իրենց կանանց, ես չեմ դավաճանում: Ինչո՞ւ, որովհետև ես սպիտակ ագռավ եմ, Նելլի: Եվ ես որոշեցի, հա՛, բավական է: Այլևս չեմ ուզում սպիտակ ագռավ լինել, ուզում եմ սովորական սև ագռավ լինել, սովորական, որովհետև այլևս չեմ դիմանում, թիկունքս ցավում է, Նելլի...

Նելլի - *(Արցունքոտ աչքերով):* Շավարշ Տիգրանիչ, բայց դուք իսկապես հիվանդ եք: Երևի ջերմություն ունեք: Թույլ տվեք բժիշկ կանչել, խնդրում եմ: Դե, իհարկե, ջերմություն ունեք:

Խանոյան - Ոչ, ոչ, Նելլի: Ուրեմն սկսում ենք: Ես քեզ առաջարկում եմ ռեստորան գնալ ինձ հետ:

Նելլի - *(Զարմացած և ուրախ):* Ի՞նչ եք ասում...

Խանոյան - Չէ, սկզբից կինո, կինոյում ես մի քիչ կգրկեմ քեզ... Հետո նոր կգնանք ռեստորան, կդիտենք ջրերի խաղը ու շամպայն կխմենք... Հա՞... Չէ, բայց սկզբից կինո, տե՛ս, ես արդեն տոմսերը գնել եմ, ես գիտեի, որ հանդիպելու եմ քեզ: Ինչո՞ւ: Չէ՞ որ այսօր աշխատավարձի օրն է, Նելլի... Տես ինչքան փող ունենք... Վեր կաց, գնացինք, կեցցեն սև ագռավները, Նելլի...

Նելլի - Դուք, դուք հարբա՞ծ եք, Շավարշ Տիգրանիչ...

Խանոյան - Ինչո՞ւ: Մի՞թե ուրիշները հենց այսպես չեն անում: Հենց այսպես էլ անում են, Նելլի: Ուրեմն ինչո՞ւ, գրողը տանի, նրանց մոտ ստացվում է, իսկ ինձ մոտ ոչ:

Նելլի - Տեր աստված, ի՞նչ անեմ ես...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խանոյան - Դե լավ, հիմա ուրիշ կողմից մոտենանք, Նելլի։ Ուրիշ կողմից։ Մի՛ մերժիր ինձ, մի՛ մերժիր, որովհետև ես դժբախտ ու միայնակ եմ, ես ոչ ոք չունեմ։ Ոչ մի կարեկից հոգի։ Բարի եղիր ինձ հետ, հասկացիր ու մարդկայնորեն խղճա ինձ... Մի՞թե այս աշխարհում ոչ մի բարեգութ մարդ ինձ չի հանդիպելու, Նելլի։

Նելլի - Ինչե՛ր եք խոսում, դուք կին ունեք, դուք որդի ունեք...

Խանոյան - Նրանք իմը չեն, նրանք երբեք իմը չեն եղել, և ես այդ մասին միայն այսօր իմացա։ Եթե մերժես, ես չգիտեմ, թե ինչ կպատահի ինձ հետ, ես այլևս չեմ կարողանա ապրել։ Չեմ ապրի։ Այ, վաղը կլսես ու կզղջաս։ Այո, այո, հավատա ինձ, վաղը շատ ուշ կլինի և այլևս ոչինչ-ոչինչ հնարավոր չի լինի վերադարձնել, սիրելի աղջիկ...

Նելլի - Ես այլևս չեմ ուզում լսել ձեզ։ Իմացեք, որ ես խորապես զարմացած ու վիրավորված եմ, Շավարշ Տիգրանիչ։ Երբեք, երբեք չէի սպասի... երբեք...

(Նետվում է, դեպի դուռը։ Ետ է նայում։ Շավարշ Խանոյանը կանգնած է տխուր ու ասես թե զգաստ)։

Խանոյան - Դե, տեսնո՞ւմ եք, ես ամեն ինչ փորձեցի, Նելլի։ Եվ ոչինչ չստացվեց։ Երևի դրա համար առանձնահատուկ մարդ պետք է լինել, ուրիշ տեսակի մարդ։ Իսկ ես ընդամենը մի սովորական սպիտակ ագռավ եմ։ Մնաք բարով։ Եվ ներեցեք ինձ, եթե կարող եք, Նելլի։

(Աղջիկն արագորեն դուրս է գալիս)։

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

(Հակոբ Սաթյանի առանձնասենյակը։ Սաթյանը չկա։ Ներկա են հոգեհացի գրեթե բոլոր մասնակիցները։ Ներս են մտնում նորերը, բարևում են իրար, տեղավորվում աթոռներին, բազմոցներին)։

Սոկրատ - Ի՞նչ եք կարծում, որևէ նոր տեղեկութո՞ւն կա։

Մագդա - Սրանց ո՞վ կհասկանա, ցավդ տանեմ։

Մարիամ - *(Մարջանյանին)։* Մոտ եկ, Վահե, իմ կողքին նստիր, բարեկամս...

Մարջանյան - Չարժե, տիկին, այստեղ ավելի հարմար է, քանզի մոխրաման կա։

Արգամ - Օ՛, ինչ ընտիր հասարակություն է, հարգանքներս, լեդիներ և ջենտլմեններ, գուդ մորնինգ։ Քեռի Մարտիրո՞ս, դո՞ւք այստեղ ինչ եք անում։ Ձեզ է՞լ են բերման

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ենթարկել... Բա եղա՞վ, հարևան, ձեր մեղքը ո՞րն է, հարևան, թե՞ համատեղության կարգով այստեղ էլ եք աշխատում, հարևան։

Մարտիրոս - Սրտովս գնա, ա՛յ լակոտ։

Արգամ - Համոզեցիր, հարևան։ Հարևան, հարևան, հարևա՛ն...

Ջալալյան - Բարև ձեզ։ *(Մարիամին):* Կարելի՞ է ձեզ մոտ նստել։ Ինչպե՞ս եք։

Մարիամ - Եվ դուք դեռ համարձակվում եք նստել իմ կողքի՞ն։

Ջալալյան - Օրենքի առաջ բոլորս էլ հավասար ենք, տիկին։ (Նստում է)։

Նելլի - Բարև ձեզ։ *(Սոկրատին):* Չգիտե՞ս ինչու են կանչել, Սոկրատ։ Երբ ծանուցագիրն ստացա, ուղղակի կորցրեցի ինձ։ Շավարշ Տիգրանիչի... մարմինը հո չի հայտնաբերվել... խեղճ մարդ, խեղճ մարդ...

Սոկրատ - Չգիտեմ, Նելլի ջան, ոչինչ չգիտեմ...

Մարիամ - *(Սոկրատին):* Դա ո՞վ է։

Սոկրատ - Մեր աշխատողներից է, տիկին Մարիամ։

Մարիամ - Իսկապե՞ս։ *(Զննում է):* Ես համոզված էի, որ այս պատմության մեջ մի կին կհայտնվի։ Շերշե լյա ֆամ, ինչպես ասում են ֆրանսիացիները։ Փնտրիր կնոջը... Ես այդպես էլ կարծում էի...

Սոկրատ - Եվ շատ էլ իզուր էիք կարծում, տիկին Մարիամ...

(Ներս է մտնում Հակոբ Սաթյանը։ Նա համազգեստով է):

Սաթյան - *(Նստում է, հերթով նայում է, բոլորին):* Ներեցեք, որ ուշացա։ Իմ կամքից կախված չէր։ Բոլոր ծանուցվածներն էլ այստե՞ղ են։ Այո։ Ուրեմն, սկսենք։ Ահա թե ինչու եմ ձեզ հրավիրել, ընկերներ...

Մարտիրոս - *(Արգամին):* Որ ընկեր է ասում, ուրեմն չի նստեցնի։ Ես գիտեմ։

Արգամ - Լռեք, հարևան...

Սաթյան - Մենք ավարտել ենք «Ապագայի քաղաքի» գլխավոր ճարտարապետ Շավարշ Խանոյանի անհետանալու կապակցությամբ հարուցված քրեական գործի քննությունը։ Դժբախտաբար մեզ չհաջողվեց հայտնաբերել Շավարշ Խանոյանին, եթե նա ողջ է, և ոչ էլ նրա դիակը, եթե նա սպանության կամ ինքնասպանության զոհ է դարձել։

Մարիամ - *(Ինքնիրեն):* Թե էլ վեց ամսում նրանց արածն ինչ է, չեմ հասկանում։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սաթյան - Դուք ուզում եք հայտարարությամբ հանդե՞ս գալ, տիկին։

Մարիամ - Առայժմ ոչ։

Սաթյան - Ըստ քրեական դատավարության օրենսգրքի 187 հոդվածի մենք ստիպված ենք կասեցնել Շավարշ Խանոյանի կորստյան առիթով հարուցված քրեական գործը, քանի որ պարզված չէ, թե ում պետք է քրեական պատասխանատվության կանչել։ Եվ, ուրեմն, այս կապակցությամբ որևէ մեկի նկատմամբ մեղադրանք չի առաջադրվելու։

(Բոլորը թեթևացած շունչ են քաշում)։

Նելլի - Ուրեմն մարդը չկա և ոչ ոք մեղավոր չէ՞, ընկեր Սաթյան։

Մարջանյան - Ձեր միջամտությունն ավելորդ է, օրիորդ, և ոչ հավուր պատշաճի։ Այնպես չէ՞, ընկեր Սաթյան։

Սաթյան - Եվ, այնուամենայնիվ, վճռվել է միջնորդագրեր կազմել քրեական գործի հետ առնչվող մի քանի անձանց վերաբերյալ։ Սակայն, նախքան միջնորդագրերի բուն բովանդակությանն անդրադառնալը, ես ուզում մի քանի խոսք ասել ձեզ։

Արգամ - *(Շշուկով)։* Վահե Արամիչ, իսկը ձեզ նման է խոսում։ Հրաշալի լեզու է, բայց ոչինչ չեմ հասկանում։

Մարջանյան - Մի շտապիր, սիրելիս, հիմա կհասկանաս.... Ես կարծես թե սկսում եմ հասկանալ։

Սաթյան - Դուք, ընկերներ, բացի այստեղ գտնվող Նելլի Սարիբեկյանից, ըստ էության բոլորդ էլ հանցագործներ եք։ Այո, այո, աղջիկս, այս ամբողջ նողկալի պատմության մեջ դուք միակ լուսավոր կետն եք, դուք միակն եք, որ անմեղ եք։

Ջալալյան - Բայց սա պաշտոնական դիրքի բացարձակ չարաշահում է։ Ձեզ ո՞վ է թույլ տվել։

Մարիամ - Դուք միանգամայն իրավացի եք, Արմեն, ես այսպես չեմ թողնի, ես կգրեմ...

Սաթյան - Ձե՞ր ձեռագրով, տիկին, թե դարձյալ հանձնարարելու եք Վահե Մարջանյանին։

Մարջանյան - Ընկեր Սաթյան, չէ՞ որ երեկ մենք պայմանավորվեցինք... Դուք ըստ իս ըմբռնեցիք իմ վիճակը...

Մարիամ - Ի՜նչ... դու արդեն իմ թիկունքո՞ւմ ես գործում, բարեկամս...

Մարջանյան - Տիկին, մի մոռացեք, թե որտեղ ենք գտնվում...

Մարիամ - Եվ դու տղամարդ ես...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մագդա - Էդ մե՞նք ինչի հանցագործ դարձանք, այ ձեր, ցավը տանեմ։

Մարտիրոս - Համբերեք, մարդը որ մի բան չիմանա, չի ասի... դատախազ է, է՛...

Արգամ - Դատախազ, դատախազ, դատախազ...

(Սաթյանը բարձրանում է տեղից, բոլորը մեկեն լռում են)։

Սաթյան - Կրկնում եմ, դուք բոլորդ էլ հանցագործներ եք։ Եվ այն մարդը, որ իր ողջ կյանքում միայն բարություն ու լավություն է արել ձեզ, և որին կործանել եք դուք, իր անհետանալով անգամ շարունակում է բարություն անել ձեզ։ Եթե նա, կամ նրա մարմինը հայտնվեր, ձեզանից մեկին արդեն ձերբակալած կլինեին, և ես այս խոսքերը կասեի ոչ թե իմ առանձնասենյակում, այլ դատարանի ամբիոնից։

Մագդա - Վայ, ինչի՞, մենք հո մարդ չե՞նք սպանել, ընկեր Սաթյան ջան։

Սաթյան - Դուք բոլորդ էլ կարող էիք և՛ սպանել նրան, և՛ հասցնել ինքնասպանության։ Ես ձեզ ընդունել եմ առանձին-առանձին, և ձեր ցուցմունքներն ինձ մոտ են։ Ես ուզում եմ հիմա հրապարակել դրանք, որպեսզի դուք մեկ անգամ ևս ճանաչեք ձեզ և ճանաչեք իրար։ Եվ հայտնեք ինձ, եթե որևէ լրացում կամ լրացուցիչ հայտարարություն ունեք։

Մարջանյան - Ի սեր աստծո, ամեն ինչ պարզ է՝ հրապարակելու հարկ չկա։

Մագդա - Էդ բանը մի արա, ցավդ տանեմ։

Մարիամ - Իսկ իմ կարծիքով դրանք ընդհանրապես հրապարակման ենթակա չեն։

Մարջանյան - Հարկ կա՞ գազազեցնելու, տիկին... խոհեմություն, խոհեմություն...

Ջալալյան - Պարզ է, պարզ է...

Մարտիրոս - Ընդհանուր ասեք, ընկեր Սաթյան, ընդհանուր, որ ոչ մեկը իր վրա չվերցնի։

Սոկրատ - Ա՛խ, ճիշտ է, Մարտիրոս քեռի, ես ամոթից գետինը կմտնեմ...

Սաթյան - Թող այդպես լինի, թող լինի ընդհանուր։ Մագդա Խաչատրյան, դո՞ւք հարցրեցիք, թե մենք հո մարդ չե՞նք սպանել...

Մագդա - Ես հարցրեցի, ցավդ տանեմ...

Սաթյան - Սպանել եք։ Երբ մեկը կամ մի քանիսը մեկ ուրիշին զրկում են կյանքից, դա սպանություն է։ Դուք չեք օգտագործել ոչ դանակ, ոչ հրազեն, ոչ թույն։ Բայց Շավարշ Խանոյանը չկա։ Դուք կատարել եք անարյուն սպանություն։ Եվ ձեր զենքը եղել է զրպարտությունը։ Ձեր զենքը եղել է գրիչը, որը դուք օգտագործել եք մի ազնիվ ու տաղանդավոր մարդու վարկաբեկելու, պատվազրկելու, անաշխատունակ դարձնելու,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

հոգեկան հավասարակշռությունից հանելու, բարոյապես և ֆիզիկապես ոչնչացնելու Համար: Դուք ընտրել եք ամենահեշտ ձեռք բերվող ամենաժամանակակից և անվրեպ զենքը: Եվ ձեր մեթոդը թերևս ամենասարսափելին է: Որովհետև դուք միանգամից չեք սպանում: Տանջամահ եք անում: Ահա հենց այդ մեթոդով էլ դուք սպանել եք Շավարշ Խանոյանին: Ինչի՞ համար: Սա ամենակարևոր հարցն է: Ինչի՞ համար: Ձեզանից յուրաքանչյուրն իր պատճառներն ունի: Մեկը նախանձել է նրան, մյուսը խաբել ու դավաճանել է և վախեցել է բացահայտվելուց, երրորդին նա խանգարել է, որպեսզի ապօրինություններ գործի, չորրորդին արգելք է եղել, որ նա շնանա, հինգերորդին չի թողել, որ ապրի իր ուզածի պես՝ հասարակության կոնակին նստած: Նա ուզեցել է, որ դուք մարդ մնաք և դրա համար էլ դուք նրան ոչնչացրել եք: Այնպես որ ժամանակակից սպանության ձեր մոտիվները հայտնի են մեզ: Սակայն ձեր մեջ կա մեկը, որի արարքները հանելուկ են մնացել մեզ համար: Խոսքը ձեզ է վերաբերում, Մարտիրոս Բովունց: Մեր ստուգումներն ու ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Շավարշ Խանոյանը որևէ առնչություն չի ունեցել ձեզ հետ... նույնիսկ բնակարան է տվել ձեզ, մի խոսքով ոչ մի վատ բան չի արել, ոչնչով չի խանգարել ձեզ, դո՞ւք ինչու եք նրա մասին զրպարտագրեր ուղարկել, դո՞ւք ինչու եք հալածել նրան:

Արգամ - Հարևա՞ն...

Մարտիրոս - Օ՜ֆ, առանձին կկանչեիք, կխոսեինք, էլի: Ինչի՞ հիմա հարցրիք...

Սաթյան - Որովհետև շատ անհավատալի է: Գուցե, որը բացառված է, փորձագետն է սխալվել...

Մարտիրոս - Չէ, ոչ մեկն էլ չի սխալվել: Ես եմ գրել: Եվ ոչ մի պատճառ էլ չեմ ունեցել...

Սաթյան - Ուրեմն ինչո՞ւ էիք գրում, ինչո՞ւ...

Մարտիրոս - Դե որ բանը էստեղ հասավ, կասեմ, ես ճիշտ խոսող մարդ եմ: Կասեմ:

Սաթյան - Ինչո՞ւ:

Մարտիրոս - Որովհետև մինչև հիմա էլ չեմ հավատում, որ նա մեծ գիտնական է ու շատ էլ ազնիվ մարդ: Մենք, քաղաքացի Սաթյան, մի գյուղում ենք մեծացել: Նրա պապը մեր գյուղի ամենահարուստ մարդն էր: Քարե տուն ուներ: Իսկ մենք տուն չունեինք, իրենց տված ցախանոցում էինք ապրում: Նրա հերը երկրորդ հարկն էլ սարքեց՝ տուֆից, իսկ մենք էլի էդ ցախանոցում էինք ապրում: Ես գյուղը թողեցի, քաղաք եկա, իսկ Շավարշ Խանոյանը արդեն քաղաքի տերն էր, տներ էր բաժանում:

Սաթյան - Բայց չէ՞ որ ձեզ էլ է տվել:

Մարտիրոս - Իսկ ինչի՞ պիտի ինքն ինձ տար: Ի՞նչն է փոխվել: Մի խոսքով սկսեցի գրել: Կներեք:

Արգամ - Կախելու կենդանի ես, հա՜, Մարտիրոս քեռի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մարտիրոս - Մի ծառից, մի ծառից, բոլորիդ հետ...

Սաթյան - Հիմա արդեն ամեն ինչ պարզ է: Ուրեմն այս գործի կապակցությամբ ես մանրամասն ծանոթացա Շավարշ Խանոյանի «Ապագայի քաղաքի» նախագծին: Փառահեղ նախագիծ է: Բայց ես չուրախացա, ես տխրեցի, այդ նախագիծը շատ շուտ է մեզ համար: Այդ նախագծին մենք դեռևս պատրաստ չենք: Ու մտածեցի, թե համեմատաբար ինչքան հեշտ է նոր շենքեր կառուցելը, հաշվիչ ու խոսող մեքենաներ հավաքելը, մետրո բացելն ու տիեզերանավ ստեղծելը, քան թե մի քիչ, մի փոքր փոխելը մարդու հոգին: Ահա այն ամենը, ինչ ես ուզում էի ասել ձեզ: Ինչ վերաբերում է միջնորդագրերին, ապա ձեզանից յուրաքանչյուրի արարքների մասին առանձին - առանձին, ըստ օրենքի, կազմվել են միջնորդագրեր, որոնք կուղարկվեն ձեր հիմնարկները կամ բնակ -շահագործման գրասենյակները՝ տեղում քննարկելու և միջոցներ ձեռնարկելու համար... Այսքանը...

(Բոլորը կրկին անհանգստացած են):

Արգամ - Լավ պրծանք:

Մարիամ - Ի՞նչ ես խոսում, դրանում ի՞նչ լավ բան կա: Խայտառակ եղանք:

Ջալալյան - Բայց դա, բայց դա ապօրինություն է:

Մարջանյան - Չհասկացա, թե ինչ շահեցինք:

Սոկրատ - Իսկ որ չուղարկեն, ի՞նչ կլինի... Այսքանն էլ բավական էր, էլի...

Նելլի - Այդ քե՛զ համար, Սոկրատ ջան, նրանց չե՞ս տեսնում :

Մարտիրոս - Դե արի ու մեկ էլ անկեղծ խոսիր... էլի՛ դատարան...

Մագդա - Ինչի՞ եք իրար խառնվել, հիմա խոսելու տե՞ղն է: Ձևը չգիտե՞ք: Հետո առանձին - առանձին կմտնենք մոտը, կխոսենք: Հո մութ չի՞: Ճիշտ չե՞մ ասում, ցավդ տանեմ...

(Ներս է մտել Աբելյանը: Նա հուզված ու գրգռված է):

Աբելյան - Ընկեր Սաթյան, ընկեր Սաթյան, մի րոպե... մի րոպե այս կողմը եկեք:

Սաթյան - Ի՞նչ է պատահել, Աբելյան...

Աբելյան - Այդ անստորագիր նամակների մասին իզուր էլ այդքան խիստ խոսում եք:

Սաթյան - Դուք նորից հարբա՞ծ եք, ինչ է...

Աբելյան - Է՛, ինչ հարբած, ախր ինչպես երևում է մեզ փրկողն էլի անստորագիր նամակն է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Սաթյան - Ի՞նչ նամակ է դա։

Աբելյան - *(Շշնջում է ականջին)։*

Սաթյան - Արտաքին նշանները...

Աբելյան - Կարծես թե բռնում են։

Սաթյան - Թռեք, սիրելի Աբելյան, վաղը, չէ, հենց հիմա թռեք, հենց հիմա... Եթե ինքնաթիռ չլինի, ուղղաթիռ, պահանջեք...

Աբելյան - Ուղղաթիռ չեմ սիրում, սիրտս խառնում է։

Սաթյան - Ոչինչ, ոչինչ, Աբելյան, սիրելիս, թռեք...

(Աբելյանը դուրս է գնում)։

(Հավաքվածները լուռ աշխատում են լսել, թե իրե՞նց է վերաբերում արդյոք այդ խոսակցությունը)։

Սաթյան - Այսքանը։ Դուք ազատ եք։ Ո՞վ գիտե, գուցե շուտով կհանդիպենք։

Մագդա - Աստված չանի, ցավդ տանեմ։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

(Բացատ: Անտառային ձայներ: Ջրի մեղմ քչքչոց: Փոքրիկ ծղոտե հոլիկ: Հոլիկի առջև, քարերի վրա կրակ է արել Շավարշ Խանոյանը: Փոքրիկ կաթսան դրված է վրան: Քիչ այն կողմ, տախտակներից սարքած ցածրիկ սեղանին թղթեր են: Ինչ-որ փալասի ծնկած, սեղանին թեքվել է «Ապագայի քաղաքի» գլխավոր ճարտարապետը, գծում ու երգում է: Նա բեղեր ու երկար մորուք ունի: Հին շորեր են հագին):

Խանոյան - Սի՛րուն թիթեռ, ինձ ասա, թե ինչով ես դու ապրում... Նա - նա, նա - նա, նա - նա - նա, նա - նա - նա - նա, նա – նա - նա։

(Թփերի տակից զգուշորեն հայտնվում է Յոլակ Աբելյանը: Կանգ է առնում, դիտում շրջապատը, լսում երգը, ժպտում է) :

Աբելյան - Բարև ձեզ...

Խանոյան - Սի՛րուն, կանաչ դաշտերում, ես ապրում եմ համարձակ... Տարատիտի, տարա-տա, տարա տա-տա, տա, տատա։

Աբելյան - *(Ավելի բարձր):* Բարև ձեզ։

Խանոյան - Հա՞, ո՞վ է...

Աբելյան - Ես եմ, ընկեր Խանոյան, Յոլակ Աբելյանն եմ՝ քրեական հետախուզությունից։ Դուք ինձ լավ եք ճանաչում։

Խանոյան - Ի՞նչ Խանոյան, ի՞նչ հետախուզություն, դուք թյուրիմացության մեջ եք, ընկեր։

(Շրջվել է, նստել գծագրերի վրա):

Աբելյան - *(Ծիծաղում է):* Ես ձեզ անմիջապես ճանաչեցի, և այդ բեղերն ու մորուքն էլ իզուր եք կպցրել։ Ձեր աչքերը ով մի անգամ տեսել է, անմիջապես կճանաչի։ Էլ չեմ խոսում ձեր գծագրերի մասին։

Խանոյան - Իսկ ես ձեզ ասում եմ, որ դուք սխալվում եք։

Աբելյան - *(Ժպտալով):* Այդ դեպքում ցույց տվեք ձեր փաստաթղթերը։

Խանոյան - Չունեմ։

Աբելյան - Լավ, ասենք թե դուք Շավարշ Խանոյանը չեք։ Ո՞վ եք,

Խանոյան - Մարդ եմ, դա քի՞չ է։

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աբելյան - Չէ, պատկերացրեք, որ նույնիսկ շատ է: Դե լավ, ընկեր Խանոյան: Ոչ ձեզ է սազում, ոչ էլ ինձ: Եկեք վերջացնենք այս պատմությունը: Ամբողջ քաղաքն ու երկիրը իրար եք խառնել, իսկ դուք այստեղ ձեզ համար «Սիրուն թիթեռ» եք երգում: Եկեք, եկեք հանեք այդ մորուքն ու բեղերը...

Խանոյան - Դուք էլ ի՞նչ եք կպել իմ բեղերից... սա կեղծ չէ, իմն է:

Աբելյան - *(Ծիծաղում է քահ-քահ):* Այդ ե՞րբ հասցրիք, ընկեր Խանոյան:

Խանոյան - Բայց դա անհնարին է: Ինչպե՞ս գտաք ինձ, Ցոլակ:

Աբելյան - *(Հառաչելով):* Անստորագիր մի նամակի շնորհիվ:

Խանոյան - Դարձյա՞լ նամակ: Մի՞թե դա վերջ չունի: Ո՞վ է գրել, ա՜խ, հա... Բայց ո՞վ կարող է գրած լինել... Ես այստեղ գրեթե ոչ ոքի չեմ հանդիպում...

Աբելյան - Ուրեմն մեկը գտնվել է:

Խանոյան - Դե իհարկե, հիշեցի... նա գրած կլինի, իհարկե, միայն նա:

Աբելյան - Ո՞վ:

Խանոյան - Մի քանի օր առաջ վարար անձրև եկավ, հեղեղ էր, գետում խեղդվում էր մի մարդ, փրկեցի, մի կերպ հասցրի իմ հոլիկը, ուշքի բերեցի, թեյ տվեցի...

Աբելյան - Նա գրած կլինի:

Խանոյան - Ուրեմն ոչ մի տեղ փրկություն չկա՞:

Աբելյան - Չէ: *(Զմայլված դիտում է շուրջը, հոտ է քաշում):* Ի՜նչ էլ աննման տեղ եք գտել, Շավարշ Տիգրանիչ, դրա՜խտ... *(պառկում է):* Մարդ այսպես պառկեր խոտին, նայեր աստղերին, ականջ դներ թռչունների ձայնին և քներ գետի անուշ վշշոցի տակ: Ես քո հե՜րն եմ անիծել, քաղաք ստեղծող...

Խանոյան - Մենակ մի քիչ դժվար է ու ձանձրալի, Ցոլակ: Այ, եթե երկուսով լինեինք, ուրիշ կյանք կլիներ: Զուկ կբռնեինք գետում... գիտե՞ս ինչ ձուկ կա, կարմրախայտ, ձեռքդ որ քարի տակ մտցնես, ձկները խըլդ-բըլդում են մատներիդ մեջ: Զուկ կբռնեինք, կխաշեինք հենց իր ջրի մեջ... կուտեինք... Անմահական բան է: Իսկ անտառում այնքան վայրի մեղրի տեղ գիտեմ... Ու ի՜նչ մրգեր կան, ի՜նչ մրգեր, գիտե՞ս, էլ խնձոր, էլ տանձ, էլ կաղին, էլ ընկույզ, էլ մասուր... ու աղբյուրներն էլ սառը, սառն են... Գուցե մնաք, հա՞, Ցոլակ… Լավ մտածեք, գուցե մնաք, հա՞...

Աբելյան - Ինչե՜ր եք ասում, Շավարշ Տիգրանիչ, ո՞վ կթողնի... հազար շղթաներով կապված - կապկպված ենք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խանոյան - Դուք ազնիվ մարդ եք, Ցոլակ, ես ձեզ վաղուց գիտեմ։ Այդ դեպքում թույլ տվեք ուրիշ բան խնդրել։

Աբելյան - Լսում եմ։

Խանոյան - Ինձ մի գտեք։ Առայժմ ձեզանից բացի ոչ ոք չգիտի, չէ՞։ Ինձ մի գտեք, Ցոլակ։ Թողեք այստեղ մնամ, թողեք ապրեմ...

Աբելյան - Ինչքա՞ն մնաք։ Մինչև ցորենը դառնա ընկույզի չափ, իսկ գարին էլ լոբու չա՞փ...

Խանոյան - Ուզում եմ այստեղ մեռնել...

Աբելյան - Դուք մեռնեք այստեղ, իսկ նրանք ապրեն, հա՞... վայելեն կյանքը ու ապականեն աշխարհը, հա՞... Չէ, նրանք պետք է պատժվեն...

Խանոյան - Ուրեմն ոչ մի կերպ հնարավոր չէ, որ ես մնամ, հա՞... Ոչ մի կե՞րպ։

Աբելյան - Իհարկե, հնարավոր չէ։ Մի անգամ որ գրել են, էլի կգրեն։ Ես չէ, մի ուրիշը կգա կգտնի ձեզ։ Միամիտ բան է։

Խանոյան - Ուրեմն ուրիշ ելք չկա։ Դե լավ, թող այդպես լինի։ Դե լավ։ Ահա, ճաշն էլ եփել է արդեն։ Բանջար է։ Բանջար չե՞ք սիրում, ընկեր Աբելյան...

Աբելյան - Բանջա՞ր։ Շատ եմ սիրում, Շավարշ Տիգրանիչ, և անկեղծ որ ասեմ, գայլի նման քաղցած եմ։

Խանոյան - Հիանալի է։ Ուրեմն դուք կերեք, իսկ ես, եթե ելք չկա... ելք չկա՞, Ցոլակ...

Աբելյան - Չկա, ընկեր Խանոյան, պիտի գնանք։

Խանոյան - Դե եթե չկա, դուք կերեք, իսկ ես հավաքեմ ունեցած - չունեցածս։

(Ճաշ է լցնում)։

Կերեք, կերեք, ես արդեն հոյակապ խոհարար եմ դարձել։

Աբելյան - *(Ուտում է)։* Օ՜հ, ինչ համով է... Իսկ այդ ի՞նչ գծագրեր են, ինչե՞ր եք նախագծում, Շավարշ Տիգրանիչ։

Խանոյան - Սրա՞նք։ Սրանք փոքրիկ առանձնատներ են... փոքրիկ պարտեզներով ու բարձր ցանկապատերով...

Աբելյան - Է՜, չեղավ, Շավարշ Տիգրանիչ, «Ապագայի քաղաքի» հեղինակը... Չեք էլ հետաքրքրվում, թե ձեր նախագիծն ի՞նչ եղավ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Խանոյան - *(Եվ հավաքում է թղթերը, և խոսում է):* Ի՞նչ է, եղածն արդեն լրիվ քանդե՞լ են...

Աբելյան - Համարյա...

Խանոյան - Իսկ այնտեղ... մերո՞նք ինչպես են...

Աբելյան - Ինչ ասեմ, Շավարշ Տիգրանիչ, կան, էլի... Բայց ի՛նչ բանջար է...

(Խանոյանը թղթերն առած հոլիկն է մտնում):

Վաղուց այսպիսի համով բան չէի կերել:

Խանոյան - *(Զայնը հոլիկից):* Ի՞նչ...

Աբելյան - Ասում եմ, վաղուց այսպիսի համով բան չէի կերել:

Խանոյան - *(Զայնը հոլիկից):* Գուցե մնայիք, հը՞...

Աբելյան - Է՛, Շավարշ Տիգրանիչ... Հա, Շավարշ Տիգրանիչ, այստեղ սունկ էլ շատ կլինի, չէ՞... Շավարշ Տիգրանիչ...

(Վեր է թռչում, նետվում հոլիկը):

Ընկեր Խանոյան...

(Դահլիճից երևում է, թե ինչպես է Խանոյանը, հոլիկի ետևից դուրս գալով, շապիկ - վարտիքով նետվում դեպի անտառը):

Առանց կատակի, ընկեր Խանոյան: Դուրս եկեք...

(Հայտնվում է բեմում՝ ձեռքին Շավարշ Խանոյանի հագուստը և մի թուղթ: Կարդում է ապշած):

«Իմ մահվան համար խնդրում եմ ոչ ոքի չմեղադրել»:

(Մի պահ պոկվում է տեղից, հետո կանգ է առնում ու բղավում է ամբողջ ձայնով):

Բա քո արածն արա՞ծ է... Ուրեմն մենք տանջվենք, իսկ դու... *(Հանկարծ ծիծաղում է):* Ախր ո՞ւր պիտի փախչես: Դուրս արի, ասում եմ, դասալիք ես, ի՞նչ է... ա՛յ քեզ մազալու մարդ...

(Հանկարծ ճիչ է լսվում: Ցավից ու վախից աղավաղված դեմքով հայտնվում է Շավարշ Խանոյանը):

Խանոյան - Կծեց, կծեց, ես տեսա, մորմ էր... փրկիր, Աբելյան, առանց ավտոյի հո չե՞ս եկել, հիվանդանոց հասցրու... Զայն տուր մարդկանց, ի՞նչ ես կանգնել...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Աբելյան - Որտե՞ղ է, սպասիր, սպասիր տեսնեմ... Ի՞նչ ես իրար խառնվել, փուշ է, Շավարշ Տիգրանիչ, սպասիր հանեմ, ա՛յ մարդ...

(Ոտքից հանում է փուշը):

Ըհը…

Խանոյան - Ուրեմն փո՞ւշ էր, իսկապես փուշ էր, հա՞... ափսո՛ս...

Աբելյան - *(Ծաղրելով):* Հասե՛ք, փրկե՛ք, ձայն տուր մարդկանց...

Խանոյան - Վերջ տուր, Աբելյան, սրտովս գնա... շորերս տուր հագնեմ...

Աբելյան - Հագնվիր, հագնվիր... փախչողի՛ս տեսեք... մի փշի համար իրար խառնեց աշխարհը... Առանց մարդկանց ապրե՞լ կլինի, ա՛յ մարդ... երբ իսկի մարդկանց հետ հանգիստ ապրել չի լինում։

Վարագույր

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բ Ո Ւ Մ Ե Ր Ա Ն Գ 3

ԻՐԻԿՆԱՅԻՆ ՀԵՔԻԱԹ 60

ՔԱՆԻ ԴԵՌ ԿԱՄ 110

ՇԱՏ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ 164

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Արտաշես Փիրաղայի Քալանթարյան

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Арташес Пирагаевич Калактарян

КОМЕДИИ (на армянском языке)

Издательство «Советакан грох» Ереван, 1982

Խմբագիր՝ Մ. Է. Ծատուրյան

Նկարիչ՝ Լ. Հ. Մանասերյան

Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյումամիրյան

Տեխ. խմբագիր՝ Ա. Կ. Կովկասյան

Վերստուգող սրբագրիչ՝ Վ. Դ. Ազատյան

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org